

Լ Ո Ւ Մ Ե Յ

ԳՐԱԿԱՆ ՀԱՆԳԻՍԻ

1897 թ.

Բ. ԳՐԻԻ

Յ Ա Ի Ե Լ Ո Ի Ա Փ

Լ Ի Ն Հ Ա Ր Դ Ե Ի Գ Ե Ր Տ Ր Ո Ւ Դ

ՎԷՊ ՊԵՏԵԼԼՈՅՅՈՒ

(Վ Ե Ր Ջ)

Տես «Լուսնայ» 1896 թ. և 1897 ա.

Գերարուզի գալուց յետոյ Բուդին չգիտէր թէ ինչ
ասէր ու ինչ անէր. նա մի վայրկեան ձեռքերը հանգիստ
պահեց և մտածում էր ինքն իրեն. ինձ այնպէս է թւում,
որ եթէ այսպիսի ամուսին ունենայի, կարծես թէ երկըն-
քումը կ'լինէի: Երբ նա երեկոյեան իր երեխայոցը Գերար-
ուզի մօտ էր ուղարկում, երկար տարիներից յետոյ առա-
ջին անգամ նա ուշադրութիւն դարձրեց՝ թէ արդեօք նը-
րանց երեսն ու ձեռքերը մաքուր են, կամ թէ զգեստներն
ու մազերը կարգի՞ն են, այնպէս որ երեխաներն էլ զար-
մացան և դրացիները տեսնելով նրանց այնպէս մաքուր ու
կանոնաւոր տանից դուրս գնալիս՝ ասացին. երեւի թէ նա
նորից ուզում է ամուսնանալ:

Փոքրիկները Գերարուզի տուն հասնելով տեսան որ
նրա լոյրը երեխաներն աշխատում են. սրանք ուրախ ու
զուարթ ընդունեցին եկողներին, բայց միևնոյն ժամանակ
մի րոպէ անգամ իրենց գործը ձեռքից բաց չ'թողին: Այն-
պէս արէ՛ք, որ գործերդ վերջացնէք. յետոյ կարող էք սրանց
հետ խաղալ մինչև ժամի 6-ը, ասաց նրանց Գերարուզը:
Ուրեմն կշտապենք, մայրիկ, արևն ամուռուայ պէս է փայ-
լում, պատասխանեցին մանուկները: Բայց զգուշացէք, որ
ձեր մանուածը կոպիտ դուրս չգսյ, պատասխանեց մայրը:
Դու մանուածի համար մի կրոյցէր աւելի կստանաս քան
թէ պակաս, ասաց Լիզէն: Մեր մանուածների համար նոյն-
պէս, բղաւեցին ամեն անկիւններից և միւս մանուկները:
Շուտով կատենեմ, պարծենկոտներ, պատասխանեց մայրը:

Բուդիի երեխաները բերանաբաց ու աչքերը չուած նայ-
ում էին այդ սենեակի մէջ եղած սիրուն աշխատանքներին
ու զուարթութեանը: Դուք էլ մանեկ գիտէ՞ք, հարցրեց
Գերարուզը: Ա՛խ, ո՛չ, պատասխանեցին մանուկները: Ու-
րեմն պէտք է սովորէ՛ք, սիրելիներ, ասաց Գերարուզը. տե-
սէ՛ք սրանք մանուած են և շաբաթ օրերը շատ ուրախ են
լինում՝ իրենց աշխատանքի համար մի քանի արասիներ ստա-
նալով: Տարին երկար է, սիրելիներ, և եթէ ամեն շաբաթ
մի փոքր աշխատանք ունենանք, տարուայ վերջը բաւակա-
նին փող է հաւաքուում և մարդ չի էլ իմանում՝ թէ ինչ-
պէս:—Ա՛խ, խնդրում ենք, մեզ էլ սովորեցրու, ասացին
մանուկներն ու բռնեցին այդ բարի կնոջ ձեռքը: Սիրով կը-

սովորեցնեմ ձեզ, պատասխանեց Գերարուդը, միայն ամեն օր պէտք է գաք, որ շուտ սովորէք: Այդ միջոցին միւսներն աւարտեցին իրանց աշխատանքը, մանուածն ու ջահրէն պահեցին ու սկսեցին երգել. աւարտեցինք, աւարտեցինք, սիրելի մայրիկ, մեր այսօրուայ գործը. գիշերը հանդիսս կըքնենք և առաւօտն ամենքս ուրախ կգարթնենք:

Յետոյ Գերարուդի երեխաներն իրենց փաբրիկ հիւրերի ձեռքից բռնած՝ դուրս թռան մարգագետինն ու սկսեցին վազվզել և շրջան անել մացառների ու ծառերի չորս կողմը: Բայց Գերարուդի երեխաներն Բուդիի մանուկներից աւելի էին զգուշանում ճանապարհի վրայ եղած աղբից, մացառների փշերից ու հոգացողութեամբ էին վերաբերում իրենց զգեստներին: Նրանք կապում էին իրենց գուլպաներն ու կիսակոշիկների թելերը, երբ սրանք բացւում էին և երբ Բուդիի երեխաներն այդպիսի բաների վրայ ուշագրութիւն չէին դարձնում, ասում էին դրանց, դու կ'կորցնես կոշիկդ թելը, գուլպայիդ ծօպը, կամ թէ՛ շորերդ աշտտում ես, զգեստդ փշի վրայ կպատուես և այլն: Սակայն Բուդիի երեխաները ծիծաղում էին սրանց բոլոր ասածների վրայ ու ծնողների պատուէրից աւելի շուտ կատարում, որովհետև տեսնում էին, որ նրանք ինչ որ իրենց ասում են, իրենք էլ կատարում են և չարութեամբ ու մեծամտութեամբ չէին ասում: Հէնց որ վեց ժամը խփեց, Գերարուդի երեխաները արագ վազեցին դէպի տուն, ինչպէս որ թռչուններն արևը մայր մանելուց յետոյ շտապում են իրենց բունը: Ուզո՞ւմ էք մեզ հետ գալ, ասացին նրանք Բուդիի մանուկներին, մենք այժմ աղօթելու ենք գնում: Այո՛, ուզում ենք, պատասխանեցին սրանք, բո մայրիկին էլ մնաս բարով պէտք է ասենք: Շատ լաւ, ասացին առաջիններն ու միմեանց ետևից շարուելով—«կատուապոչիկ» խաղալով—անցան մարգագետնով և տուն հասնելով նստեցին սեղանի շուրջն՝ աղօթելու:—Գուք էլ ժամի Յին տուն շպէտք է գնաք աղօթելու, սիրելիներ, հարցրեց Գերարուդը Բուդիի մանուկներին:—Մենք անկողին մանելուց յետոյ ենք աղօթում, ասաց ամենից մեծը:—Ե՞րբ էք անկողին մանում, ասաց Գերարուդը.—Ի՞նչ գիտեմ, պատասխանեց նա, իսկ միւսը թէ՛ երբ սկսում է մթնել:—Ուրեմն դեռ կարող էք

մեզ հետ աղօթել, բայց յետոյ տուն գնալու ժամանակը կլինի, ասաց Գերարուզը: Եթէ մթնի էլ՝ ո՛չինչ, մենք չենք վախենում, պատասխանեց ամենից մեծը. մենք բոլորս էլ միասին ենք, շարունակեց մէկ ուրիշը: Գերարուզի երեխաներն ըստ իրենց սովորութեան աղօթեցին մօր հետ միասին. յետոյ Գերարուզը Բուդիի երեխաներին էլ իրենց գիտեցած աղօթքն ասել տուեց և ճանապարհ ձգեց նրանց մինչև իրենց տան ցանկապատը: Զգուշացէք, որ չընկնէք, սիրելիներ, բարևեցէք իմ կողմից հայրիկին և էլի շուտ շուտ եկէք մեզ մօտ: Միևս անգամ ձեզ համար մի ջահրակապտրաստեմ, եթէ ուզում էք մանել սովորել: Այսպէս ասաց Գերարուզը բաժանուելիս և նրանց ետևից նայում էր, մինչև որ փողոցի անկիւնում ծռուելով՝ անյայտացան: Բայց մանուկները յետ էին նայում հեռուից ու ձայն տալիս, «մնաս բարև», «չնորհակալ ենք», «հանգիստ քուն», սիրելի տիկին»:

110.

ՄԱՐԴՈՒ ԲԵՐԱՆԸ ԲԱՆԱԼՈՒ ԱՄԵՆԱԼԱՒ ՄԻՋՈՑԸ ՆՐԱ
ՍԻՐՏԸ ԹԵԹԵՒԱՑՆԵԼՆ Է

Տանուտէրին տարան կրկին Բօնալի բանալը. քահանան մի առ ժամանակ նրան մենակ թողեց, բայց մի երկու ժամից յետոյ նորից գնաց նրա մօտ: «Ես մի խեղճ, ողորմելի, կորած և անպէտք մարդ եմ». այս եղաւ տանուտէրի առաջին խօսքը քահանային:

Քահանան: Այդպէս չպէտք է ասես երբէք, երբ մարդ կամենայ՝ միշտ կարող է բանի պէտք գալ:

Տանուտէր: Ա՛խ,.... ես պէտք է բոլոր մարդկանցից թագնուեմ և մի անկիւն ընկած՝ պէտք է հառաչեմ ու աղօթեմ յաւիտենական փրկութեան համար:

Քահանան: Քանի որ ապրում ենք, պատկանում ենք հասարակութեան և լաւ վարուած չենք լինի, եթէ մարդկանցից առանձնանանք: Մեզ մարդկանցից բաժանելու և թագցնելու գործը Աստուծոյ կամքն է. նա կառանձնացնի մեզ երբ կամենայ և նա անում է այդ՝ երբ մեզ գերեզման է իջեցնում:

Տանուտէր: Ա՛խ, երանի՜ թէ շուտով գերեզման իջնէի:

Քահանան: Կրկին բանտարկուելդ մե՞ծ հոգս է պատ-
ճառում քեզ:

Տանուտէր: Ես չգիտեմ թէ գլուխս ո՞րտեղ է:

Քահանան: Այդ բնական է. բայց ի՞նչ ես կարծում,
եթէ քեզ տանը թողնէին, աւելի լաւ կլինէի՞ր:

Տանուտէր: Եթէ կարողանայի տուն գնալ, ինչ՞ո՞ւ ա-
ւելի լաւ չպէտք է լինէի:

Քահանան: Գուցէ մի վայրկեան լաւ լինէիր, բայց
ամեն տեղ լաւ լինելու և ապագայ կեանքդ կարգի բերելու
համար՝ այս տասն և չորս օրը քեզ համար օգտակար կա-
րող է լինել, եթէ իսկապէս օգտուես հանգամանքից:

Տանուտէր: Ա՛խ, ես բանտարկուած եմ:

Քահանան: Բայց ինչ՞ո՞ւ համար:

Տանուտէր: Հա՛, ես ի՞նչ գիտեմ:

Քահանան: Եթէ դու չգիտես, ե՛ս գիտեմ. միմիայն
նրա համար, որ կրկին ուղիղ ճանապարհի վրայ կանգնես
և արդար լինես:

Եւ այդպէս քահանան սկսեց այդ ողորմելի մարդուն
խելացի կերպով հասկացնել իր բանտարկութեան հանգա-
մանքն և այդ տասնուչորս օրուայ ընթացքում համա-
րեա թէ նրա հետ լինելով՝ այնքան մտերմացան, որ նրանք
եղբոր պէս էին միմեանց հետ խօսում: Բայց ձանձրալի կը-
լինի, եթէ ես այդ բոլոր խօսակցութիւնը բառացի պատ-
մեմ, պատմութեանս շարունակութեան մէջ արդէն կերևան
գլխաւոր կէտերը:

Քահանան պատմել տուեց նրան իր պատանեկական
կեանքը, այրական հասակի գործերը՝ պանդոկապետ ու տա-
նուտէր եղած ժամանակամիջոցին: Նա յիշեցրեց նրան ինչ
որ վաղուց մոռացել էր և այդպիսով ցերեկուայ պարզ լու-
սի պէս տեսաւ, որ տանուտէրը պէտք է դառնար այն, ինչ
որ դարձել էր: Այդ մարդու կեանքի պատմութիւնը լսելով՝
քահանան տեղեկացաւ և բոլոր գիւղացիների կեանքի
մասին և նրանց ընտանեկան կեանքը հայելու պէս պարզ
ներկայացաւ նրան: Այժմ պարզուեցան հարիւրաւոր աը-
խուր հանգամանքներ ու իրողութիւններ, որոնց լուծելու
համար ամեն տեսակ խորհուրդ և օժանդակութիւն իղուր
էին անցնում:

Տանուտէրը սկզբում հարկաւ չէր ուզում ամեն բան ասել, մանաւանդ երբ ուրիշ մարդիկ էլ մասնակից էին իր յանցանքներին. մի այդպիսի դէպքի առիթով մի անգամ նա ասաց քահանային, արդէն յայտնի եղած յանցանքներս չեմ ուզում բազմապատկել և այնպէս անել, որ գիւղի բոլոր երիտասարդներն ու ծերերն ինձ անիծեն: Բայց որովհետև քահանան սրտանց ու պարզ կերպով հասկացրեց նրան, թէ ընդհակառակը դրանով մեծ ծառայութիւն է անում նրանցը, տանուտէրն առանց կասկածի սկսեց պատմել ամեն բան, ինչ որ գիտէր:

111.

ՉԱՐ ԽՂՃՄՏԱՆՔԻ ՏԱՐՕՐԻՆԱԿ ԻՆԵՐԳՈՐԾՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Այն լուրը՝ թէ տանուտէրը քահանային պատմում է այն ամենը, ինչ որ գիտէ իւրաքանչիւրի մասին, գիւղում սարսափելի ազդեցութիւն ունեցաւ: Բոլոր փոզոցներում մարդիկ էին խոնւում ու գլուխներն այս ու այն կողմէ էին շարժում. շատ մարդիկ ու կանայք էլ գունատուել էին. ծանր շունչ քաշողներից ու հառաչողներից շատերն իրենց առաջուանից աւելի վատ էին զգում և շատ տներում էլ զարմանալի տեսարաններ էին տեղի ունենում: Շատ չար կանայք միանգամից իրենց ամուսինների հետ հաշտուեցան և շատ համարձակ ու վայրենի զաւակներ էլ այնպէս մեղմացան, որ կարելի էր նրանց պար ածել: Ամուսնացած մարդիկ սկսեցին միմեանց աջակցի բաներ հարցնել ու պատմել, որ իրենք էլ զարմանում էին թէ՛ ինչո՞ւ են այժմ այդ մասին մտածում ու խօսում: Երեւի տանուտէրը կպատմէ քահանային, որ ես նրան ծախեցի բո գողացուած վերարկուն, ասաց ծարաւ Լաօֆէլին իրենց տանու բարեկամ Եօսէլիին: Ե՛հ, դու սկսեցիր էլի՛ այն վերարկուի մասին խօսել, որ ինձ այնքան վիշտ պատճառեց, պատասխանեց Եօսէլին:

Այո՛, միշտ պէտք է վախենալ, այդպիսի մարդը ուրիշներին էլ կթշուառացնէ. ես առաջուայ նման զգում եմ, որ մի բան կպատահի, ասաց կինը:

Եօսէլին պատասխանեց, դու գիտե՛ս թէ՛ ո՞րքան ժամանակ ես հաւատում էի քեզ՝ ես խոստացայ այդ մասին

այլ ևս ոչինչ չխօսել, բայց այժմ դձև ես սկսում խօսել, կարծես թէ քո խիղճը մաքուր չէ:

Կինն սկսեց ողբալ ու ասաց. քեզ յայանի է, որ վերարկուդ կորչելու ժամանակ մեր տանը մուրացկաններ էին իջեանել:

Դձև սկսեցիր այդ մասին խօսել, ես հօ չէ, ասաց Եօսեփն:

Եթէ մի որևէ բան ասել ես ուրիշին, քոռ բու կը դարձնեմ քեզ, ասաց սնապաշտ Բարբէլն իր աղախնին, որի հետ ծածուկ ամեն գիշեր գինի էր խմում. գինին մթնելու ժամանակ աղախինն էր բերում տանուտէրի պանդոկից:

Բաններս բուրդ կլինի, եթէ տանուտէրը քահանային պատմէ, որ ինքն ամեն շաբաթ մեզնից մանած թել էր ստանում, ասաց Քրիստոֆի Լիզան իր քոյր Կլարային:

Միջատի պէս լռենք, ասաց Կլարան, և վհուկի նման ժխտենք, պատասխանեց միւսը:

Գիւղի ամեն անկիւններում այսպիսի խօսակցութիւններ էին տեղի ունենում և մկրտութեան աւաղանի վրայ տանուտէրին խոստացած սէրն ու ներողամտութիւնն ամեն տեղ քամու պէս անյայտացել էր: «Այնտեղ նա սրբի պէս վարուեց մեզ հետ, իսկ այժմ սատանայի պէս է վարուում». այս ամենալաւ խօսքերն էին, որ արտասանում էին գիւղում տանուտէրի մասին: Բայց ով դողում է իր կաշուի համար՝ նա ամենից հեշտութեամբ է սէրն ու ներողամտութիւնը մոռանում. շատերն այնքան վախենում էին, որ պարկի մէջ եղած կատուի վիճակը նրանց դրութիւնից լաւ էր:

112.

ՉԱՐ ԽՂՃՄՏԱՆՔԻ ԱՆՀԱՒԱՍԱՐ ԱԶԴԵՑՈՒԹԻՒՆԸ ՓՈՐՉՈՒԱԾ ՄԱՐԴԿԱՆՑ ՎՐԱՅ

Ամենամեծ երկիւղի մէջ էին գիւղի իշխանները. սըրանք հետզհետէ սկսեցին այդ մասին խօսել, բայց ուրիշ կերպ:

Ցանուտէրի նման հերետիկոսը կարող է ամբողջ գիւղն անբաղդացնել, ասաց Կինհօլցն իր դրացի Կալբերլէդէրին:

Կալբերլէդէր: Գիւղում ո՛չ մի մարդ չի վնի, որի հետ տանուտէրն իր բռնամեայ պաշտօնավարութեան ժամանակ

մի ծուռը բան բռնած չլինի և նրա պատճառով հօ ամբողջ
գիւղը նրա հետ կախաղանի տակ չպէտքէ՛ կանգնի:

Կլինհօլց: Խեհնթ, մեր օգուան է, որ նա կախաղանի
տակ կանգնեց:

Մօօսըաուէր: Այո՛, Աստուած է վկայ, որ ճիշտ է
ասածդ. մենք պարտական չենք նրա հետ յարաբերութիւն
ունենալու:

Այդ խօսքը կարծես գիւղացիների սիրաը հանգստաց-
րեց. միանգամից նրանց բերանները բացուեցան և ամենքն
էլ այն կարծիքի էին և բարձրաձայն պնդում էին թէ՛ որով-
հետև տանուտէրը դահճի ձեռքն ընկաւ, իրենք այլ ևս
պարտական չեն նրա հետ յարաբերութիւն ունենալու, նա
կարող է իրենց մասին ասել, ինչ որ կամենայ:

Բայց Հիւգին, որ յիմար չէ եղել երբէք, մի բանի
վայրկեանից յետոյ ասաց. դուք իրաւունք ունիք այդ երգն
երգելու և ես էլ սիրով ձեզ հետ կերգեմ, բայց աւելի
լաւ կլինէր՝ եթէ կարողանայինք այնպէս անել, որ նա իր
բերանը փակէր:

Այդ յիմարն էլ կարող է ասել, պատասխանեց Կալ-
բէրլէդէրը, ուրիշ բան է, եթէ ասէիր՝ թէ ի՛նչպէս փա-
կէինք: — Իմ կարծիքով՝ հացով, ասաց Հիւգին:

Եւ մի վայրկեանում շատերն էլ նոյն կարծիքի էին.
այժ, պէտք է աշխատել նրա բերանը փողով ու հացով
լցնել՝ որ լռի: Թէև մի բանիսը հակառակ էին և ժլատ Ռաբ-
զէրաուէրը բղաւում էր բարձրաձայն, որ ինքը համաձայն
չէ. բայց Կինհօլցն և ուրիշները պատասխանեցին. դու ստի-
պուած կլինես համաձայնելու: Եւ Կինհօլցի սենեակում շու-
տով բոլորը համաձայնեցին, որ գիւղի իշխանների և հարուստ-
ների հետ շուտով խորհուրդ կազմեն: Կինհօլցը փողոցային
երգիչ Քրիստէնին, որ բերանաբաց պարսպ կանգնած էր
պատուհանի առաջ, պատուիրեց, որ պտէ գիւղում և բո-
լոր փոքր ի շատէ նշանակութիւն ունեցող գիւղացիներին
հրաւիրէ. մի ժամից յետոյ դրանք բոլորն էլ եկան:

113.

ԳԻՒՂԱՑԻՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ

Երբ գիւղացիները հաւաքուեցան՝ Կինհօլցը տեղեկաց-

րեց նրանց վերոյիշեալ առաջարկութեան մասին. բայց որովհետեւ խնդիրը փողի մասին էր՝ իսկոյն համաձայնութիւն չկայացաւ: Մէկն աղաղակում էր. հոգիս է վկայ, որ մի կուպէկ էլ չեմ տայ դրա համար: Ռաբբէրն ասաց պարզ. եթէ տանուաւորին սովից մեռնելիս էլ տեսնեմ՝ մի կտոր հաց չեմ տայ: Բայց Հիւզին նրա խօսքը կտրեց. խենթ, այդ մի կտոր հացը քեզ ես տալիս և ոչ թէ նրան. ԿինՏօյցն էլ աւելացրեց. յիմարներ, գիտէ՞ք թէ մեզ ի՞նչ է սպասում, եթէ նրա բերանը չփակենք:

Բոլորիս էլ հօ չեն կախելու, պատասխանեց ձիւնի նրման սպիտակ ալիքով ծածկուած Մօօսբաուէրը, որ Ռաբբէրի կողմն էր:

Եթէ մենակ լինէիք, կարող էիք փորձել. բայց մենք չենք ուղում ձեզ հետ միանալ, ասացին միւսները:

Ուրիշ կերպ անկարելի է, ասաց Հիւզին. եթէ այդպէս չանենք՝ ամենից առաջ այդ մեծ մեծ խօսողներն իրենց մազերը կփեռեն:

Այո՛, այո՛, ասաց ծեր Մայէրը, որ ամենից ազնիւն էր, բայց սաօտիկ վախկոտ, աւելի սիրով զգեստս կհանէի ու կտայի, քան թէ պատասխանատուութեան տակ ընկնէի:

Պատասխանատուութիւնից չէի բաշուի, եթէ ապացոյցներ չլինէին, ասաց Շպէկմօլերը:

Այդ վայրկեանին կրկին սկսեց խօսել Մօօսբաուէրն ու ասաց. ապացուցանելու դեռ ևս կարիք չկայ: Կալքերլէդէր, դեռ մի ժամ առաջ ինքդ էիր ասում՝ թէ տանուաւորի նրման մարդու ասածն ու շան հաջոցը մէկ է:

Կալքերլէդէր. ձիշտ չէ, ես այդպիսի բան չեմ ասել: Մօօսբաուէր. Դու խաբեբայ ես՝ եթէ ասածդ ժըլտում ես:

Հիւզի. Խաբեբայ անուանեցէք միմեանց՝ երբ մենակ էք:

Միւսներից շատերն սկսեցին ալ ու ձախ կողմից շշնջալ. մարդագլուխ երեք գրոշ է ընկնում. դրանով ոչ մէկի տունը չի բանդուի:

Այդպէս կլինէր, եթէ նա արդէն շատերի տունը քանդած չլինէր, ասաց Ռաբբէրը:

Ի՞նչ անենք. դեռ ևս մենք նրա ճանկերու մէջ ենք, ասաց ԿինՏօյցը:

Վամակորները կամաց կամաց լռեցին և վերջապէս բոլորը համաձայնեցին՝ որ եթէ կարելի լինի լռեցնել տալ նրան, իրենցից ամեն մէկը պատրաստ է երեք գրոշ դրոշել նրա համար—ւմինչև որ նա սատակի:

114,

ԳԻՒՂԱՑԻՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆԸ

Բայց ի՞նչպէս պէտքէ պս բանը շուտ յայտնէին տա նուտէրին, ահա՛ պս մասին նոր խորհուրդ կազմուեց և շատ կարծիքներ յայտնուեցան: Ոմանք Հարստկոպիին էին առաջարկում, միւսներն ասում էին, նա շատ աղմուկ կհանի. մի այնպիսի մարդ պէտք է ընտրենք, որ եթէ բանը չյաջողուի՝ կարճ պատասխանէ և ոչ թէ երկար քարոզներ ասէ: Անմորուսի մէկն էլ խորհուրդ էր տալիս Արիստերին ուղարկել՝ որովհետև նա ամենից հեշտուածեամբ կարող է մտնել քահանայի տունը. բայց ոչ ոք նրան համակարծիք չեղաւ. նա փողերը ստանալուց յետոյ մեզ բոլորիս տանուտէրի հետ ի միասին տաճիկներին կվաճառէ, ասացին պս ու այն կողմից շատերը: Վերջապէս տեղից վեր կացաւ Վալբէրլէդէրը և խորհուրդ տուեց իր աղային յանձնել այդ գործը: Գիւղացիները զարմացան և ռեխները բաց էին արել, որովհետև չէին հասկանում թէ դա առանձնապէս ի՞նչ պէտք է անէր:

Ի՞նչ էք ռեխներդ բաց նայում, կարծում էք ես չգիտեմ թէ ինչ եմ ասում, նկատեց Վալբէրլէդէրը: Տեսէք, իմ արօտատեղում մի ընկուզենի կայ քահանայի տան ճիշտ այն կողմը, ուր բանտարկուած է տանուտէրը. իմ աղային կուղարկեմ որ ընկուզենին կտրտէ. նա այդպիսով առիթ կունենայ այնտեղ մտնու և դէպքից օգտուելու. նա ճանաչում է Հանսին և խոհարարուհուն. նա կամ տանուտէրին դէպի պատուհանը կգրակէ կամ թէ կմտնի քահանայի տուն: Գիւղացիները հաւանութիւն տուին և խնդրեցին Վալբէրլէդէրին, որ այդպէս անէ: Սա էլ մի առ ժամանակ պարծեցաւ իր մատուցած ծառայութեան առիթով. յետոյ իրենց միջից ամենաճարպիկները, Հիւզին ու Վինհօյցը, միացան նրա հետ և նրա տուն գնացին, որ աղային լաւ դաս տան թէ նա ի՞նչպէս պէտք անէ և ի՞նչ ասէ տանուտէրին:

ԿԱԼԻԲՐԻԷԴԵՐԻ ՓՈՐՁԸ ԵՒ ԱՆՅԱԶՈՂ ԵԼԲԸ

Նրանք գնացին տուն և ամեն բան արին, ինչ որ կարևոր էր. Կալբերլեդերի որդին շուտ գնաց ընկուզենու մօտ և իրեն կէս հարբած ձեւացնելով՝ սկսեց երգել. այդ բանը բահանային զուարճալի թուաց: Նա պատուհանի տակ պառկած՝ լսում էր նրա երգը: Ցանուտերն էլ վարագոյրի ետեւից դուրս նայեց՝ տեսնելու թէ ո՞վ է այդ. և իսկոյն նկատեց, որ իսկապէս Կալբերլեդերի նպատակն ընկուզենին կըտրտելը չէ, այլ մի ուրիշ բան:

Շատ ժամանակ չանցած՝ բահանայի Հանսը երևաց պարտիզի մի անկիւնում ու ասաց Կալբերլեդերին. ափսոս չէ՞, որ այդ ծառը կտրտում ես. ամեն տարի բաւականին ընկոյղ է տալիս.

Կալբերլեդեր: Այս փայտից շատ լաւ հրացանի կոթեր են շինուում. բացի դրանից ընկուզենու արմատները շատ հեռու են տարածուում և աւելի շատ են վնասում խոտի աճմանը, քան թէ օգուտ են տալիս իրենց տուած ընկոյղներով:

Հանս: Ընդհանրապէս ձիշտ է ասածդ. բայց այս ծառի արմատները ձեր ջանքով դէպի մեր կողմն է տարածուում և ոչ թէ դէպի ձեր արօտը:

Կալբերլեդեր: Ի՞նչպէս:

Հանս: Ձէ՞ որ դուք ամեն տարի այս ծառի ձեր կողմն եղած արմատները գետնից հանում էք ու կտրում:

Կալբերլեդեր: Այդ ես չգիտէի՛:

Հանս: Ի՞նչպէս անմեղ էք ձեւանում:

Կալբերլեդեր: Հաւատա՛, որ ես այդ մասին ոչինչ չը գիտեմ. բայց ասա՛ խնդրեմ, արդեօք կարելի չէ՞ որ ես տանուաւորին ողջունեմ:

Հանս: Ի՞նչու չէ:

Կալբերլեդեր: Մի՞թէ նա երբէք պատուհանին չէ մօտենում:

Հանս: Դու կարող ես նրա սենեակը գնալ, բահանան չի արգելի:

Կալբերլեդեր: Բայց նա կցանկանայ իմանալ՝ թէ ես ի՞նչ գործ ունեմ նրա հետ:

Հանս: Դու էլ ի՞նչ գաղտնիք պէտք է ունենաս նրա
Տես:

Կալքէրլէդէր: Հարկաւ, գաղտնիքի բան չկայ:

Հանս: Քահանան պատուհանի տակն է. եթէ ես քո
տեղը լինէի, ինքս կերթայի նրա մօտ և թոյլտուութիւն
կինդրէի:

Իրաւունք ունես, ասաց Կալքէրլէդէրը, բրիչը ցած դը-
րեց, գլխարկը ձեռքն առաւ, գնաց պատուհանի տակ, խո-
նարհ գլուխ տուեց քահանային և ասաց. բարև ձեզ, ար-
ժանապատիւ հայր, ի՞նչպէս էք:

Քահանան: Շնորհակալ եմ:

Կալքէրլէդէր: Դուք ևս չէք բարկանում, որ հայրս
պատուիրեց ինձ այս ընկուզենին կտրել:

Քահանան: Ես ինչո՞ւ պէտք է բարկանամ:

Կալքէրլէդէր: Ես մտածեցի՝ թէ մի գուցէ այդ ծա-
ռը հովանի է ձգում ձեր բակի վրայ:

Քահանան: Ոչ, ընդհակառակը ես շատ ուրախ կլի-
նեմ եթէ կտրէք, որովհետև մեր պարտիզի արևը կխոսվ
չափ խլում է առաւօտները:

Կալքէրլէդէր: Եթէ երբ և իցէ հօրս մտքովն անգամ
անցած լինէր, որ այդ ծառը արգելք է լինում ձեզ, վա-
ղուց արդէն կտրել տուած կլինէր:

Քահանան: Նա շատ լաւ տեսնում էր այդ. բայց մի-
և նոյն է, կտրիք չկար:

Կալքէրլէդէր: Ինչո՞ւ չէ, տէր հայր, չէք կարող հա-
ւատալ, թէ դուք ո՞րքան սիրելի էք գիւղացիներին և թէ
հայրս ո՞րքան ուրախ է, որ դուք այդպէս լաւ էք վարում
ձեզ մօտ բանտարկուած ողորմելի տանուտէրի հետ:

Քահանան: Բացի իմ պարտականութիւնը կատարելուց՝
ես ոչինչ չեմ անում:

Կալքէրլէդէր: Իհարկէ, տէր հայր, բայց խնդրեմ
ներէք, ի՞նչպէս է նա, արդեօք իրեն այնպէ՞ս է պահում,
որ դուք գոհ մնաք նրանից:

Քահանան: Փա՛ռք Աստուծոյ. մինչև այժմ ես նրա-
նից շատ գոհ եմ:

Կալքէրլէդէր: Հայրս ասաց, որ եթէ նրան պատու-
հանում տեսնեմ, իր կողմից ողջունեմ և ասեմ, որ չլուսա-

Հատուի. եթէ Աստուած կամենայ՝ մի կտոր Հաց միշտ անպակաս կլինի նրա Համար:

Քահանան: Ինչքան որ ես նկատում եմ, նա այժմ Հացի մասին չէ մտածում:

Շատ ուրախ եմ, ասաց Վալբերլէդէրը և մի վայրկեանից յետոյ աւելացրեց. տէր Հայր, քանի որ սյսպէս մօտիկ եմ նրանից, կցանկայի մի րոպէ տեսնել նրան, եթէ թող կտաք: Կարող էք, պատասխանեց քահանան:

Վալբերլէդէրի ցանկութիւնը կատարուեց. նա քահանայի Հետ ամուստեի սենեակը մտաւ և մի քանի րոպէ կողմակի խօսակցութեամբ զբաղուեց, մինչև որ քահանան մի կողմը քաշուեց. նա օգուտ քաղեց այդ վայրկեանից և ամուստեիին ասաց. քանի մենակ ենք, պէտք է շուտ ասեմ քեզ, որ եթէ լուռ մնաս և ոչ որի չանբաղդացնես, դիւղի իշխանները քեզ կօգնեն և քանի կենդանի ես՝ ապահով ապրուստ կունենաս: Իսկ եթէ խօսես ու ամեն բան ասելով նրանց էլ գործի մէջ կխառնես՝ կարող ես Հաւատացած լինել, որ գիւղում մի մարդ անգամ չի գտնուի, որ քեզ մի կտոր Հաց տայ, եթէ նոյն իսկ սովամահ լինես: Ահա՛ այս բանի Համար եմ քեզ մօտ եկել:

Տանուտէրին ապշեցրեց այս յանկարծակի առաջարկութիւնն ու մի վայրկեան չգիտէր թէ ի՞նչ պատասխանէ. յետոյ թախծալի կերպով ասաց Վալբերլէդէրին. ես կարծում էի թէ բարեկամութեան Համար ես ինձ այցելել:

Այժմ ես ասածիս Համար եմ այստեղ և պատասխանի եմ սպասում, ասաց Վալբերլէդէրը և թափանցող Հայեացք ձգեց նրա վրայ:

Տանուտէր: Չեմ կարող օգնել, ինչպէս կամենաք այնպէս վարուեցէք Հետս:

Վալբերլէդէր: Արդէն ամեն բան ասել ես:

Տանուտէր: Այո՛, չեմ կարող ժխտել:

Վալբերլէդէր: Բայց եթէ կամենաս՝ կարող ես խօսքդ յետ առնել և ծռմռել:

Տանուտէր: Ո՛չ, չեմ անի:

Վալբերլէդէր: Ճի՛շտ:

Տանուտէր: Շատ ցաւում եմ, բայց աւելի լաւ է այդպէս, անկարգութիւնները...

Կալբերլէդէր: Գոնէ լռի՛ր անկարգութիւնների մա-
սին, բոլորը հօ քո գործն է:

Տանուտէր: Յաւուամ եմ, որ այդպէս է:

Կալբերլէդէր: Ասածդ յե՛տ առ, չես զղջալ:

Տանուտէր: Չեմ կարող:

Կալբերլէդէր: Գու չե՛ս կամենում:

Տանուտէր: Չեմ կարող, և ճիշտն ասեմ, չեմ էլ ու-
ղում. բայց դու կտեսնես, որ ես դրանով ոչ դքի չեմ
փնասի:

Կալբերլէդէր: Խելքդ կորցրածի պէս ես խօսում:

Տանուտէր: Հասկանում եմ, որ քեզ այդպէս է թը-
ւում, տասն և չորս օր առաջ ինձ էլ այդպէս կ'ընար:

Կալբերլէդէր: Պառաւ ու կեղծ բարեպաշտ կնոջ նը-
ման մի՛ խօսի այժմ. քո բազդը կ'ստուճե՛ ունի այս վայր-
կեանից և քո խօսքերից:

Տանուտէր: Զուր տեղը յոյսեր մի տածիր, ոչինչ էի
դուրս գայ:

Կալբերլէդէր: Հաւատա՛ ինձ, որ վարձատրութիւն կը-
ստանաս:

Այդ միջոցին քահանան կրկին սենեակը մտաւ և Կալ-
բերլէդէրը հրաժեշտ տուեց շուտով՝ նախապէս քահանային
ասելով թէ երևի ինքը լաւ չէ հասկացել հօր միտքը, ե-
րևի նա այդ ընկուզենու համար չէ ասել իրեն:

Կարող է պատահել, ասաց քահանան:

Կալբերլէդէր: Ծառն ամբողջովին կտրելուց առաջ
ուղում եմ կրկին հարցնել հօրս:

Լա՛ւ կանես, ասաց քահանան, բայց նկատեց, որ մի
խարդախութիւն կայ այդտեղ:

Գիւղի իշխաններն անհամբրութեամբ սպասում էին
իրենց աների և ցանկապատերի ետևում, որտեղից երևում
էր քահանայի տունը: Շպէտով լսելով մինչև անգամ իր հաստ-
փորով բարձրացաւ որաների ու խոտի դէզերի վրայ ու մը-
տաւ վերնատան տակն եղող ծակը՝ այնտեղից ցած նայելու
և տեսնելու համար թէ ի՞նչ դրութեան մէջ է Կալբերլէ-
դէրն ու ե՞րբ պէտք է վերադառնայ: Սակայն թէ ցանկա-
պատերի ետևում և թէ վերնատան ծակերում եղողներն
էլ բիթները կ'ախ արին՝ տեսնելով որ Կալբերլէդէրը քա-

Հանայի տնից դուրս եկաւ գլուխը խոնարհած ու ձեռքերը թուլացած՝ կախ ընկած: Նրանք շտապեցին նրա հօր մօտ՝ ճիշտն իմանալու համար. սա սկզբունքն ուղում էր պարծե- նալ և նախապէս գովել իր որդու արածը, բայց նրանք խցեցին նրա բերանը և նախապէս երդուեցին, որ նրա բե- րած համբաւն անյաջող կլինի:

Դուք չէք կարող իմանալ, քանի որ նա դեռ չի եկել, ասաց հայրը:

Իհարկէ, ասացին գիւղացիներն ու այդ ընկերն էլ եկաւ տղան: Նա այնպիսի ուժով դէն ձգեց իր ձեռքի փայ- տեսյ անօթը, որ սենեակը դղրաց, միայն այն ժամանակ ներս մտաւ սենեակը, երբ հայրն երկու անգամ կանչել տուեց, կանգնեց մի անկիւնում, ոչ որի չբարեւեց ու ասաց. ոչինչ դուրս չեկաւ:

Բայց գիւղացիներն ուղում էին աւելի իմանալ և նա ակամայ ստիպուած էր ամեն բան մանրամասնաբար պատմել: Երբ վերջացրեց իր պատմութիւնը, մի առ ժամանակ էլ տանջեցին նրան իրենց հարցերով ու հետզհետէ մէկ մէկու ետևից գնացին իրենց աները՝ ծանրաբեռնուած երկիւղից առաջացած, բայց դեռ ևս չհասունացած մտքերով ու խոր- հուրդներով:

Ծեր Կալբերլէդերն ամենից շատ փոսոսաց իր ընկու- զներն. համարեա լացս գալիս է, որ այնպէս թեթեամբ- տութեամբ կարել տուի ընկուզներն, ասաց նա իր որդուն, հէնց որ գիւղացիները դուրս գնացին:

Ես այդքան էլ յիմար չէի, պատասխանեց տղան, ես միայն արմատները փորփրեցի ու թողի. նա դեռ հարիւր տարի կանգուն կարող է մնալ:

Շատ լաւ ես արել, որդի, ասաց հայրը, ինչ որ ու- րիշին չենք տուել, դեռ ևս մերն է. երևի քահանան ու- րախ կլինէր՝ եթէ ազատուէր մեր ընկուզներուց, այնպէս չէ՞: Որդին: Իհարկէ. նա ու իր Հանսն ասացին, որ ըն- կուզներն իրենց հողին է միայն սնունդ ստանում:

Հայրը: Յուսով եմ, որ ընկուզներն դեռ աւելի սը- նունդ կստանայ նրանց հողից, քան իրենք երկուսը միասին:

Որդին: Ես երբ տեսայ, որ տանուտերից ոչինչ չի դուրս գալիս, քահանային ասացի. թէ գուցէ բեզլաւ չեմ

հասկացել և երևի դու մի ուրիշ ծառի համար ես ինձ պատուէր տուել:

116.

ԳԻՒՂԻ ԻՇԽԱՆՆԵՐՆ ԵՐԿԻՒՂԻՑ ՍԱՏԱՆԱԹԻ ՕԳԵՈՒԹԵԱՆ
ԵՆ ԳԻՄՈՒՄ

Վախեցած գիւղացիները մաքերովը զարմանալի բաներ էին անցնում: Նրանցից շատերը մտածում էին. եթէ քահանան ու Արները, կամ թէ երկուսից միայն մէկը մեռնէր, իրենց սպառնացող վտանգը բոլորովին կանցնէր: Բայց այդ իբրև մտածմունք էլ մնաց. նրանցից ոչ ոք չգնաց նրանց մեռցնելու. նրանք վճռեցին ըստ կարելոյն շատ աշխատանք և տհաճութիւն պատճառել նրանց, որովհետև կարծում էին թէ այդպիսով նրանք զբաղուած լինելով Հովմէլի ասածները կմոռանան: Արդէն կիրակի օրից լուրեր էին պըտըտում թէ համայնքի վերջին ժողովին անբնական բաներ են եղել և հաւ ծախողն իր սատանայական արուեստով գիւղացիներին կուրացրել է: Մինչև այժմ բոլոր քիչ թէ շատ խելացիներն ու մանաւանդ իշխանները ծիծաղում էին այդ խենթութիւնների վրայ, բայց հիմա տեսնելով, որ այդ կարող է իրենց գործին ծառայել, սկսեցին լրջօրէն խօսել այդ մասին և ամեն մի պատահող յիմարի գլուխը դդում էին դարձնում՝ հարկւրակոր հարցմունքներ ապով: Նրանք բարձրաձայն գովում էին Հարակնոպֆին, որ նա անյողդողդէ է և ասում է ինչ որ ճշմարիտ է, թէև ամեն կողմից, նոյն իսկ բեմի վրայից նրան ծաղրում են: Սա լսելով այդ գովասանքը, այնպէս էր ժպտում, կարծես թէ բերանում շաքար ունենար և առաւօտուանից մինչև երեկոյ առանց հանգստանալու՝ եռանդով աշխատում էր տարածել իր կարծիքը՝ հաւ ծախողի մասին: Իր այժմեան պաշտօնների շնորհիւ նա շատ հաւատացողներ գտաւ, որովհետև գիւղի իշխաններն այնպէս արին, որ դրա նման խօսակցութիւնները զբաղեցնեն ամենքին՝ թէ ծերին ու թէ երիտասարդին:

Նրանք մինչև անգամ այդ գործի մէջ խառնեցին Արնհոյմի ծեր վարպետի թու գոկտոր Յրոյֆանգին և նրան հասկացրին, թէ իր պրոստըր կախումն ունի այն հանգամանքից, որ այսպիսի սատանայական պատմութիւններն ա-

ւելի շատ հաւատացողներ ունենան և թէ սյժմ ամենա-
յարմար ժամանակն է այդ մասին խօսելու: Սա թոյլ չտուեց,
որ այդ բանն երկրորդ անգամ ասեն իրեն և որտեղ մի շա-
տախօս ու դատարկագլուխ մարդ էր գտնոււմ, մի պողունց
քթախոտ էր առաջարկոււմ և սկսոււմ իր պատմութիւնը:

Ի՞նչ էք կարծոււմ, ասոււմ էր նա, ես ի՞նչպէս կարող
էի տուն ու տեղ սարքել ու այսքան հաստ փոր ունենալ,
եթէ շար մարդիկ գոյութիւն չունենային: Այո՛, եթէ ես
կարողանայի խօսել... որտեղ ամենից շատ են ժխտոււմ այդ-
պիսի բաներ, այնտեղ ես ավելի աշխատանք ունեմ: Ես չեմ
ուզոււմ ամեն բան պատմել, բայց եթէ դուք գիտենաք թէ
ի՞նչ բաներ են պատահոււմ պալատներու ու քահանաների
տներու, ուխտերդ ու աչքերդ բաց կ'մնայ: Դեռ ութ օր
առաջ մի պալատական իշխան գլխարկը կռնատակին և քը-
սակը ձեռքին խնդրոււմ էր ինձ այնպէս անել, որ ինքը կա-
րողանայ հանգստանալ: Երիտասարդ իշխանադնը շատ տա-
րիներ առաջ մի անգամ թղթեայ կառքով էր տուն եկել...
բայց մեզ նման մարդիկ պէտք է լռեն, որովհետեւ դուք կա-
րող էք գլխի ընկնել թէ ո՞վ է նա:

Առանց որոշ կերպով արտայայտելու՝ նա հասկացրեց
գիւղացիներին, որ նոյն իսկ Արները դիմոււմ է իրեն,
որովհետեւ ծեր իշխանի մահուանից յետոյ պալատի գործե-
րը լաւ չեն գնոււմ:

Այսպիսի միջոցներով ու ճանապարհներով այդ խաբե-
բաների խումբը բերանաբաց թողեց տեսիլներ հաւատացող
խենթերին: Նորից սկսեցին յաճախ պատմել Հօօրլախէրի-
նին պատկանող հրեշաւոր տան մասին, որ երկար տարիներ
ոչ ոք չէր բնակոււմ, մինչև որ վերջապէս տանուտէրը գը-
նեց շատ չնչին գնով և յետոյ Մուսխթալի ձեռքով սատա-
նային հալածեց դէպի կաղնու անտառի ետեւը գտնուող լեռ-
ների կիրճը: Դարբնոցի մօտ գտնուող ժանտ ընկուղենու
պատմութիւնը նոյնպէս նորից երևան եկաւ. խօսոււմ էին
թէ ի՞նչպէս աստ տարուց հետեւ ամեն դժբաղդութիւն պա-
տահոււմ է այդ տանը. դարբինն ամեն առաւօտ այդ
ծառի տակը նստելով տեսնոււմ է, որ երբ թռչունը նստոււմ
է ծառի ձախ և ածխանման սև ձիւղի վրայ—որ իր սևու-
թեան պատճառով կոչոււմ էր նոյնպէս սատանայի ձիւղ—

առաջուց արդէն ապահով էր, որ արեւը մայր մտնելուց առաջ մի դժբաղդուութիւն կ'ապաստաճի տանը: Այդ դէպքում ոչ աղօթքն էր օգնում, ոչ բարեպաշտութիւնը և ոչ էլ արդար վարժունքը: Երբ անօթի ագուան առաւօտը ձայն էր հանում այդ ճիւղի վրայ, դժբաղդուութիւնն արդէն վճռուած բան էր և մինչև երեկոյ անպատճառ տեղի էր ունենում այդ տանը: Տասը տարի շարունակ այդպէս էր լինում, մինչև որ դարբինն այդ ծառը կտրել տուեց: Այդ ժամանակից սկսած այլ ևս ոչ մի տարաբաղդուութիւն չէ տեղի ունեցել այդ տանը, բայց դարբինը խելագարուեց, ձեռքն ու ոտքը կ'ապած էին պահում նրան: Եւ այդ օրից բաղդը կարծես թէ անձրևի նման էր տեղում այդ ընտանիքի վրայ:

Այդպիսի պատմութիւններն այժմ առօրեայ խօսակցութեան նիւթ դարձան գիւղում: Լաւ ու վատ մայրերն էլ սկսեցին իրենց երեխաների հետ նորից խօսել այն սև մարդու մասին, որ իրենց կտանի՝ եթէ լաւ չվարուեն և այլն:

Երիտասարդ Կինճօցի կինը, որ սնտառութիւնից վաղուց արդէն անհաւատ էր և իր երեխաների հետ ծաղր ու կատակի առարկայ էր դարձրել տեսիլների ու վհուկների զրոյցները՝ նորից շուռ եկաւ և ամեն առաւօտ ու երեկոյ սկսեց մանուկների հետ միասին աղօթել՝ գիշերային տեսիլների, չար ոգիների ու վհուկների դէմ:

Մանուկներն առաջին երեկոյին ասացին, մայրիկ, ինչո՞ւ պէտք է նորից այս աղօթքն ասենք. չէ՞ որ անցեալ օրն ասում էիր՝ թէ այդ աղօթքն ասողները յիմար են:

Մայր: Այժմ ուրիշ է. պէտք է նորից այդ աղօթքն էլ հաւատամքի ու հայր մերի նման եռանդով ասէք:

Մանուկներ: Այժմ կրկին սատանաներ կան, մայրիկ:

Մայր: Թող Աստուած գթայ մեզ, իհարկէ, աշխարհը լիքն է գրանցով:

Մանուկներ: Ո՞րտեղից իմացար այժմ, որ ամբողջ աշխարհը լի է գրանցով:

Մայր: Ա՛խ, բարի զաւակներս, մեր գիւղում սարսփելի բաներ են պատահում: Եռանդով աղօթեցէք և զգուշացէք՝ երբ տանից դուրս էք գնում, որևէ պառաւ կնոջ ձեռքից ոչինչ մի՛ առնէք՝ լինի այդ պտուղ, հաց և կամ ուրիշ բան:

Որմնադրի և Բուզիի երեխաների «կատուապոչիկ» խաղն էլ կասկած յարուցեց. Հարսկնոպֆն ամեն տեղ ասում էր, որ դա սատանայական խաղ է: Եպեքմօլի կինը, որ ստեղծուած էր մեղրից թղյն հանելու և մոծակը փիղ դարձնելու համար, տարաբաղդաբար փողոցում պատահեց Բուզիի Գրիաէին և կամեցաւ ճիշտն իմանալ՝ թէ ի՞նչ բան է այն «կատուապոչիկ» խաղը, որի մասին կասկածում են, նա մտերմաբար ձեռք տուեց երեխային ու ասաց. երէկ որմնադրի տանն ուրախ ժամանակ անցկացրիք:

Մանուկը: Այո՛:

Կինը: Սենեակումը մի սիրուն կատու կար, այնպէս չէ՞:

Մանուկը: Այո՛, այո՛:

Կինը: Սե՛ւ:

Մանուկը: Ածխանման սև:

Կինը: Նա կրակոտ աչքեր ունէր:

Մանուկը: Այո՛, երբ նստարանի տակն էր:

Կինը: Ի՞նչ էր անում կատուն:

Մանուկը: Ո՛չինչ:

Կինը: Եարունակ հանդարտ նստած էր:

Մանուկը: Ո՛չ, նա շոյում էր մեր ոտքերը, մի անգամ՝ էլ համարեա՛ թէ գիրկս ընկաւ:

Կինը: Աղօթելո՞ւ ժամանակ:

Մանուկը: Մի՛թէ կարծում էք, որ կատուներն իմանում են, թէ երբ ենք աղօթո՞ւմ:

Կինը: Դիպչում էք նրան:

Մանուկը: Այո՛:

Կինը: Աղօթելու ժամանակ:

Մանուկը: Այո՛, եթէ շատ է մօտենում մեզ:

Կինը: Աղօթքի ժամանակ ձեռքներդ չէ՞ք կցում:

Մանուկը Իհարկէ, կցում ենք:

Կինը: Բաս ի՞նչպէս կարող էիք դիպչել նրան:

Մանուկը: Սեղանի տակ, ոտքերով:

Կինը: Նա ածխանման սև էր, այնպէս չէ՞:

Մանուկը: Ո՛չ բոլոր մասերը:

Կինը: Բայց համարա՛ թէ բոլորը, այնպէս չէ՞, շատ սև:

Մանուկը: Այո՛:

Կինը: Եւ կրակոտ աչքե՞ր ունէր:

Մանուկը: Ասացի, էլի, երբ նստարանի տակն էր:

Ըպէքմօլիսի կնոջ աջ ու ձախ և յաւելուածներով տարածած այս խօսակցութիւնից յիմարները մի քանի ժամուայ ընթացքում դուրս բերին, որ այդ կատուն մի իսկական, բնական կատու չպէտք է լինի: Լրոյ ճարակի նման արագ տարածուեց ամբողջ գիւղում՝ թէ որմնագրի տանը սատանայական բաներ են պատահում, և մի քանի օր բոլոր գիւղացիները շարունակ այդ մասին էին խօսում:

Բայց ո՛չ որմնագրին և ո՛չ էլ Բուդիին երկար ժամանակ մի խօսք անգամ չէին ասել այդ բոլորի մասին: Նրանք նկատում էին միայն, որ ամեն անգի իրենց վրայ զարմանքով էին նայում և իրենց երեխաներն էլ տուն գալով յաճախ լաց էին լինում ու դանդաղում: Թէ ուր որ իրենք գնում են՝ կարծես իրենցից փախուստ են տալիս, մինչև անգամ իրենց սիրելի ընկերակիցները, որոնց հետ միշտ լաւ են եղել, յարաբերութիւն չեն ուզում ունենալ իրենց հետ և թէ՛ պատուհաններից ու ցանկապատերի ետևից իրենց տեսնելիս ասում են, ահա՛ Վատուպոչիկները:

117.

ԴՐՕՇԸ ՇՐՋԻՈՒՄ Է

Սովորաբար, երբ յիմարութիւնն ու չարութիւնը չափազանցութեան են հասցնում, շատերը հասկանում են, որ դրա տակն ուրիշ բան կայ. այդպէս էլ եղաւ այժմ:

Գիւղի ելխաններից Բէնօլդը և մի քանի ուրիշ ազնիւ մարդիկ բարձրաձայն ասում էին՝ թէ այդպիսի բաների մասին խօսելը լաւ չէ և վատ. հետևանքներ կարող է ունենալ. թէ իրենք էլ երեխայ ժամանակը երբեմն կատուի պոչը քաշել են և զուարճացել՝ աղօթքից առաջ կամ յետոյ, ինչպէս որ անում են որմնագրի երեխաները, բայց իրենց ծնողների բանը լաւ չէր լինի, եթէ նրանք այդպիսի մանկական խաղերից ստայօդ զրոյցներ սարքէին:

Այս ազդեցութիւն ունեցաւ ու շատերն սկսեցին զգուշութեամբ խօսել: Կարճ ժամանակից յետոյ այդ բանը յայտնեցին որմնագրին իր բարեկամները, իսկ Լինհարդին նրա հօրաբոյրերն ու մօրաբոյրերը. Շնաբէլդրիտէին ատող դրացիներից մէկն էլ մատնեց որմնագրին, որ նա առաւօտից

մինչև երեկոյ ում որ պատահում է, այդ է պատմում Է Որմնադիրն այդ լսելով՝ մի վայրկեան մոռելի գոյն ստացաւ, բայց շնորհակալութիւն յայտնելով այդ կնոջը, արագ ու կատաղածի նման վազեց դէպի Շնաբէլգրիտէի տունը և իր ոտնաչափով պինդ բաղխեց պատուհանը, բայց նրա բաղդից ապակուն չդիպաւ, որ փշրտէր, այլ տախտակին: Ցանը ոչ որ չկար, որովհետև Գրիտէն փողոցում, աղբիւրի մօտ էր կանգնած: Որմնադիրը չտեսաւ նրան, բայց վերջինս տեսնելով որ նա պատուհանը ջարդում է՝ սաստիկ վախեցաւ և կանչեց. ի՞նչ կայ, ի՞նչ կայ, որմնադիր:

Որմնադիր: Դու այդտե՞ղ ես քո անաստուած ուխտով, դու այս և այն... ի՞նչ գործ ունիս իմ երեխաների հետ, որ սյնպիսի անիծեալ լուրեր ես տարածում նրանց մասին:

Գրիտէ: Ի՞նչ, ի՞նչ:

Որմնադիր: Ես բեզ ցոյց կտամ թէ ի՞նչ:

Շպէքմօլտի կինն էլ այնտեղ լինելով հրեց Գրիտէին ու ասաց. պէտք է ուրանաս, թէ չէ բանդ բուրդ է: Բայց միւս կանայքը, որ հէնց նոր էին լսել նրա սառանայական պատմութիւնները, չէին հաւատում թէ նա իր խօսքերը յետ կվերցնէ: Նա հէնց նոր էր անիծել ու երդուել, որ ինքն այն ողորմելի որմնադրի ու իր կնոջ երեսին կասէ ամեն բան: Բայց ի՞նչքան զարմացան, երբ այժմ յանկարծ նա սկսեց ժխտել և որմնադրին ասաց, որ ինքը նրա մասին երբեք ոչինչ չէ ասել և նրա ընտանիքի մասին էլ բացի լաւից ոչինչ չգիտէ:

Ո՛չ, այս անպիտան կինն այսպէս չպէտք է վարուի, ասաց այնտեղ կանգնած Բէնուլդի կինը միւս կանանց և մի վայրկեանից յետոյ ասաց Լինհարդին. որմնադիր, ճշմարիտ է, նա հէնց այժմ էլ այդ մասին էր պատմում:

Լո՛ր, ասացին միւս կանայքը, ինչո՞ւ ես խառնում, բե՞զ ինչ:

Ո՛չ, չեմ ուզում լռել, ասաց Բէնուլդի կինը, այսպիսի անպիտանը վաղը կարող է ինձ ու ամեն մէկիս հետ էլ այդպէս վարուել. եթէ Արնբրի մօտ էլ տանն, ես սրա երեսին կասեմ, որ ինքն ասաց:

Հէնց որ նա Արնբր խօսքն արտասանեց, Շպէքմօլտի

կինն իր գլխի բանը տեսաւ և բարձր ձայնով կանչեց, ես ոչինչ չեմ լսել և ասել, ես լուանում էի իմ բանջարը և ուշադրութիւն չդարձրի՝ թէ ի՞նչ տեղի ունեցաւ:

Ես էլ ոչինչ չեմ լսել ու ասել, ես էլ չեմ լսել, ասացին շուտով շատերը:

Ձեզ ոչ ոք էլ չէ հարցնում, ասաց որմնագիրը, և Արնբրի անուանով սպառնաց Շնարեղբորտէին:

Սա սկսեց ողբալ և խնդրում էր, որ բանի տեղ չգնէ իր ասածները:

Շատ լաւ, միայն այն պայմանով, որ դու այս կանանց առաջը խոստովանես, որ քո ասածները սեռալ ու սուտ են, պատասխանեց Լինհարդը:

Գրիտէն մրթմրթաց ու կակազելով ասաց. շատ ցաւում եմ, այդ բոլորը սուտ է:

Որմնաղիւր: Բարձր պէտք է ասես, այնպէ՛ս բարձր, որ պատուհաններից գլուխները դուրս հանած բոլոր մարդիկը հասկանան, որ դու սարսափելի ստախօս ես. բարկութիւնիցս չգիտեմ թէ ի՞նչ եմ ասում. դու, դու պէտք է այսօր բոլոր փողոցներով վազես և բոլոր աների առաջ աղաղակես, որ այդ ստայօդ պատմութիւնը քո հնարածն է:

Գրիտէ: Այդպէս մի անի, ես սիրով կանեմ ինչ որ կասես, շատ ցաւում եմ:

Որմնաղիւր: Ցաւում ես թէ չէ, այդ միւնոյն է ինձ համար, բայց որ այդ ամենը հնարած ու սուտ է, այդ պէտք է ասես բարձրաձայն:

Կամայ թէ ակամայ նա այժմ պէտք է ամենին հասկանալի ու բարձր ձայնով աղաղակէր ու խոստովանէր որ այն ամենը, ինչ որ ինքն ասել է որմնագրի երեխաների ու կատուի մասին՝ իր հնարածն է. բայց այդ անելն ա՛յնքան ծանր էր նրա համար, ա՛յնպիսի ցաւ էր պատճառում նրան, որ համարեա թէ շնչասպառ եղաւ:

118.

ԴԵՌՈՒ ՈՐՔԱՆ ԺԱՄԱՆԱԿ ԿԱՆԱՅՔ ՊԷՏՔ Է ՄՏԱԾԵՆ ՈՒ ԱՍԵՆ. ԻՄ ՄԱՐԴՈՒ ԱՆՈՒՆՆ Է ՆԱԲԱԼ, ՆԱ ԽԵՆԹ Է

Լինհարդը Հուսէլի ձեռքից աղատուելու օրից դեռ ևս երբէք այդպիսի դրութեամբ տուն չէր եկել. նա համարեա՞

շնչասպառ էր եղել և խոհանոցում եղող Գերարուդին ձայն
տակեց որ ջուր բերէ: Նրա աչքերը դուրս էին թափում
կոպերից ու կրակի պէս կարմրել էին: մաղերը թափուել
էին ճակատի վրայ. վերարկուն շքուել էր:

Գերարուդը խոհանոցից ջուր բերելիս՝ երբ այդ դը-
րութեան մէջ տեսաւ նրան, փոքր մնաց որ ջրի ամանը
ձեռքից վայր ձգէր: Ի սէր Ասածոյ, ի՞նչ է պատահել, ի՞նչ
կայ, ասաց նա և բարակող սրտով կանգնեց նրա առաջը:

Ա՛խ, ո՛չինչ, ո՛չինչ չի պատահել, պատասխանեց նա,
բայց համարեա՛ թէ չէր կարողանում խօսել, նրա ձեռքից
արագ խլեց ջրի ամանը և դատարկեց:

Գերտրուդ: Ի սէր Ասածոյ, մի բան պատահել է,
խօսիր, ի՞նչ է եղել:

Լինհարդ: Ո՛չինչ, Աստուած է վկայ ոչինչ, բացի շա-
ղակրատութիւնից. նա մեր երեխաների մասին գարշելի բա-
ներ է ասել:

Գերտրուդ: Ո՞վ, ի՞նչ, ի՞նչ շաղակրատութիւն:

Լինհարդ: Շնաբէլգրիտէն:

Գերտրուդ: Բացի նրա շաղակրատութիւնից ոչինչ չէ
պատահել և դու այդ օրումն ես:

Լինհարդ: Հաւատա՛, որ ուրիշ ոչինչ:

Գերտրուդ: Ինձ այնպէս է թւում՝ թէ երազումն եմ.
գիտե՛ս, որ վերնազգեստդ շրջած ունիս հագած:

Լինհարդն ինքն իրեն նայեց ու ասաց. ճիշտ որ զգեստ-
ներս կարգին չեն:

Գերտրուդ: Ուզում եմ շուտ իմանալ՝ թէ ի՞նչ է պա-
տահել, եթէ հարբած չես:

Մի կաթիլ էլ չեմ խմել, պատասխանեց Լինհարդն ու
յետոյ պատմեց նրան ամբողջ պատմութիւնը, բայց ջերմի
մէջ եղողի նման էր խօսում շարունակ և պատմելու ժամա-
նակ երկու անգամ խոհանոց մտաւ ջուր խմելու:

Գերտրուդն ականջ դրեց նրա մանրամասն պատմու-
թեանն, առանց նրան ընդհատելու, բայց հէնց որ վերջաց-
րեց, ասաց նրան. բո վարմունքի եղանակը հաւանելի չէ.
ես աւելի էի սպասում բեզնից:

Լինհարդ: Ուրիշ ի՞նչ էիր սպասում:

Գերտրուդէ: Ես սպասում էի, որ դու մի այսպիսի ան-
նշան գործում կարող կլինէիր քեզ զսպել:

Լինհարդէ: Ի՞նչ, մի՞թէ այդ աննշան բան է:

Գերտրուդէ: Նոյն իսկ եթէ ենթադրենք, որ բոլորովին
աննշան բան չէ, այնուամենայնիւ քո վարմունքը ներքին չէ:

Լինհարդէ: Ինչո՞ւ համար:

Գերտրուդէ: Քո թոյլ և անառողջ վիճակում այդպէս
վարուելով դու քո կամքով ուզում ես գերեզման իջնել:

Լինհարդէ: Այդ տեսակէտից իրաւունք ունիս. դեռ
այժմ էլ սիրտս սաստիկ բարակում է և ձեռքն ու ոտքը
ջարդուած մարդու պէս եմ զգում ինձ:

Գերտրուդէ: Ա՛խ, ես վախենում եմ, շուտ անկողին
մտի՛ր, սիրելիս, և աշխատիր մի փոքր քնել:

Լինհարդէ: Այո՛, մի փոքր ժամանակ կքնեմ անկողնում:

Գերտրուդէ: Բայց ուրիշ անգամ աւելի զսպիր քեզ:

Լինհարդէ: Այո՛, եթէ կարողանամ միայն:

Գերտրուդէ: (արտասուքն աչքերին) Սիրելիս, այդպիսի
դէպքերում մտածիր գոնէ իմ և երեխայոցդ մասին. և ե-
թէ կարող ես, ի սէ՛ր Աստծոյ, ազատիր մեզ՝ ծերացած
հայր ունենալուց:

Լինհարդէ: (Նրա ձեռքերը բռնելով ու տխուր): Ո՛վ
սիրելիս, ես չգիտեմ թէ ի՞նչպէս պէտք է ինձ մոռանամ և
չմտածեմ թէ ո՞րքան պարտական եմ քեզ ու երեխայոցս:
Եթէ Աստուած կամենայ՝ ապագայում կաշխատեմ ինձ ա-
ւելի զսպել:

Այդպէս արա՛, սիրելիս, ասաց Գերտրուդէ:

Այս զրուցատրուութեան միջոցին Լինհարդն անկողին մը-
տաւ, իսկ Գերտրուդն արևի կողմն եղած պատուհանների
փեղկերը փակեց, որ մութը լինի և իր մոռութիւնն աւելի
հանգիստ քնի: Մի ժամից յետոյ Լինհարդը կրկին զարթեց
և նրանք դարձեալ խօսեցին Շնաբէլզբիտէի դէպքի մասին:

Գերտրուդէ: Արների վերաբերութեամբ նոյնպէս շատ
հեռու ես գնացել:

Լինհարդէ: Ինչո՞ւ համար:

Գերտրուդէ: Որովհետև դու Գրիտէին անձամբ պատիժ
ես նշանակել, կարծես թէ երկրի տէրը դու լինես:

Լինհարդէ: Իրաւունք ունես, այդ մասին էլ չէի մտածել:

Գերտրուդ: Արնբրի բնաւորութիւնն ի նկատի ունենալով, չեմ կարծում, որ բո արածը լսելով՝ բանի տեղ դնէ, բայց այնուամենայնիւ մարդ պէտք է մշտ այնպիսի բան ասէ, որի ճշտութիւնն ապահով լինի: Եթէ ես լինէի բո տեղը, կերթայի այդ կնոջ մօտ և յետ կվերցնէի բոլոր տաների առաջ բարձրաձայն կանչելու հրամանը:

Լինհարդ: Եթէ չամաչէի՝ ասածդ կանէի:

Գերտրուդ: Ամաչելու ի՞նչ կայ, երբ արդար ես վարուում:

Լինհարդ: Գնամ:

Գերտրուդ: Ինքդ էլ ասացիր:

Լինհարդ: Դու էլ հետս կգամ:

Գերտրուդ: Այո:

Լինհարդ: Մենակ ես ոչինչ չեմ կարող անել:

Գերտրուդ: Սիրելիս, բեղ զսպիր և ամբողջ պատմութեանը կատակի ձև տուր:

Լինհարդ: Եթէ այդպէս հեշտութեամբ կարողանայի:

Գերտրուդ: Գիտե՞ս ինչ կանես. վերցրու մեր փոքրիկ կատուներից մէկը և Գրիտէլին ընծայ տար, որ նա տեսնի թէ մեր պառաւ կատուն ոչ թէ սատանայ, այլ մի բաջ ու ազնիւ ընտանի կենդանի է:

Այդ շատ զուարճալի է և այդպէս էլ պէտք է լինի, ասաց որմնագիրն ու փոքրիկ կատուներից մէկը վերցնելով՝ գնաց կրկին Գրիտէի մօտ: Սա հեռուից տեսնելով եկողին՝ սաստիկ վախեցաւ, կարծելով թէ աւելի սարսափելի բան պէտք է լինի, որ նորից գալիս է իր մօտ և սենեակից դուրս թռչելով գնաց իր մարդու մօտ, որ տան ետևն էր և աւերորդ անունով կոչուում էր Մուրրբեր—մրթմրթող արջ—և ճակատով ասաց. որմնագիրը կրկին եկաւ:

Երանի՜ թէ ուխդ պղպեղի ցանքսերում լինէր, ասաց Մուրրբերը: Կինը թողեց նրան ու շապով բարձրացաւ խոտնոցի վրայ:

119.

ՉԱՓԱԶԱՆՑ ԲԱՐՈՒԹԻՒՆԸ ՅԻՄԱՐՈՒԹԻՒՆ Է

Մուրրբերը, ինչպէս որ Զիգրիստի ամբողջ ցեղը, մեծամիտ էր և սաստիկ վախեցում էր, որ չլինի թէ այդ յիմար բանի համար իր կինը բանտումը նստի—որ ի հարկէ

պատիւ չէր իրեն — այդ պատճառով սկզբում ըստ կարելոյն շողոքորթում էր որմնագրին:

Մուրրըէր: Որմնագիր վարպետ, մենք հօ միշտ միեանց բարեկամ ենք եղել. կինս հարկաւ սխալուել է. նա խոստովանում է այդ և քո բարի անունն ու պատիւը պէտք է վերականգնէ՝ քո ցանկութեան համեմատ: Բաւականացի դրանով, չարժէ որ մի այդպիսի կանացի շաղակրատութեան համար աւելի հեռու գնաս:

Որմնագիր: Ինչ որ ես էի ուզում ասել՝ բերանիցս խլեցիր. ինչպէս ասացիր՝ ճիշտ որ այդ կանացի շաղակրատութիւն էր, ուրիշ ոչինչ. այդ դէպքը պատահած չհամարենք և առաջուայ նման բարեկամ լինենք: Ես և կինս շատ մտածելուց յետոյ այն եզրակացութեան եկանք, որ հեռու ենք գնացել և կարիք չկայ, որ քո կինը գիւղում պտտե ու իր ասածները յետ վերցնէ:

Մուրրըէրը հէնց որ նկատեց՝ թէ Լինհարդից էլ վախենայու ոչինչ չունի, մի ըրոպէում քսմուռող քոթոթից կերպարանափոխուեց՝ հաջող ու ատամները ցոյց տուող գամփռի նա ասաց. Լինհարդ, լաւ որ խելքդ գլուխդ ես ժողովել կրկին, այժմ կարելի է հետդ խօսել:

Ազնիւ Լինհարդը պատասխանեց. ինքս էլ ցաւում եմ, որ չեմ կարողանում ինձ զսպել:

Մուրրըէր: Լաւ է, որ այդպիսի դէպքերում երկուսի մէջ մէկը խելքը գլխին է լինում: Եթէ մի երկու ժամ առաջ ես էլ քեզ պէս չկարողանայի ինձ զսպել, մարդասպանութիւն կարող էր պատահել. բայց մտածեցի, որ մէկն ու մէկը պէտք է աւելի խելօք լինի և թողլ տուի, որ կատաղութիւնդ դուրս թափես՝ մտածելով թէ՛ վաղն էլ ժամանակ կ'լինի տեսնելու թէ քո դատաւոր կինը կարող է իմ կնոջ մասին դատաւիճիւ տալ:

Լինհարդ: Լաւ որ ինքս անձամբ եկել եմ քեզ մօտ՝ կնոջդ այդ աշխատանքից ազատելու:

Մուրրըէր: Եթէ ես քո տեղը լինէի՝ ազատելու մասին բնաւ խօսք չէի բանսյ: Ամբողջ գիւղը, վերեկից մինչև ներքև, նոյնն էր ասում, ինչ որ իմ կինը: Ես գիտեմ ուղղեակի հետ լաւ յարաբերութիւններ ունես, բայց մտածիր

որ եթէ Արններն իմանայ թէ դու դատաւիճիւ ես արձակում,
բեզ հետ ո՛ւրիշ կերպ կխօսի:

Լինհարդ: Ես շատայեցի:

Մուրընէր: Եւ ամեն տեղ, որմնադիր, ամեն բանում,
դուք էք մեղաւորը: Եթէ այդ բոլոր պատմութեան մէջ,
ինչպէս դուք ասում էք, ճշմարիտը միայն այն է, որ երե-
կաները «կատուապոչիկը» շարունակել են մինչև իրենց ա-
ղօթելու սեղանի տակը, այդ էլ լաւ բան է և քո ամու-
սինը, որ ամեն բանում օրինակելի է ուղում լինել, աջքա-
թող չպետք է անէր այդ: Երբ մի անգամ առիթ էք տուել
շաղակրատութեան՝ շատ դժուար է մարդոց բերանները
խցել:

Այս խօսակցութեան ձևն անյակտ շփոթեց ազնիւ Լին-
հարդին, որ չգիտէր թէ ի՞նչ անէ իր բերած կատուն և
հաւանականօրէն կրկին տուն կտանէր նրան, առանց նրա
մասին մի խօսք անգամ ասելու, եթէ Մուրընէրն ինքը չը
հարցնէր:

Որմնադիրը պատասխանեց. այս փոքրիկ կատուն ամու-
սինս պարգև ուղարկեց կնոջդ, որ նա տեսնէ՝ թէ մեր պա-
ռաւ կատուն քաջ է և լաւ կատուներ է ծնում:

Ես բեզ խորհուրդ կամ՝ կատուն նորից տուն տանել
և կնոջդ ասել, որ մենք այդպիսի կատակներ չենք սիրում:
Այդ վերին աստիճանի անամօթութիւն է և կարծես թէ
դուք նորից կուռի պատճառ էք որոնում: Այս էր Մուրընէ-
րի վերջին խօսքը՝ որմնադրին ուղղուած:

Սա այժմ այսպիսի լեզու չպետք է բանեցնէր իմ դէմ,
փնթփնթաց Լինհարդը կատուն գրկին տուն վերադառնա-
լիս: Երբ նա ամբողջ խօսակցութիւնը Գերտրուդին հաղոր-
դեց, վերջինս դէմքը խոժորեց ու ասաց. դու երբէք չգի-
տես թէ ում հետ գործ ունես:

120.

ՀԱՒ ԾԱՒՈՂՆ ԱՅԼ ԵՒՍ ԾԱՒՈՒ ՀԱՒ ԵՒ ԱՂԱԻՆՒ 2Է
ԳՏՆՈՒՄ

«Կատուապոչիկի» պատմութիւնն աղբիւրի մօտ պատա-
հած արկածի շնորհիւ իր արժէքը կորցրեց և այն խաբե-
բանները, որ Արների, բահանայի և դրանց կողմնակիցների

վրայ կրակ էին թափում, ստիպուած էին ձեռքից թողնել պոչ զըրջը՝ թէև պոչ հաճելի չէր իրենց: Բայց դրա փոխարէն աւելի մեծ եռանդով տարածեցին հաւ ծախողի մասին եղած զըրջը. նրանք հաստատում էին՝ թէ նա շաբաթ օրը համայնքին կուրացրել է և իր սատանայական արուեստով մարդկանցը սուտ և չեղած բաներ է հաւատացրել: Եւ այդպիսով նրանք բանն այն տեղը հասցրին, որ երբ վարպետ Քրիստոֆն ուրբաթ օրը գիւղն եկաւ՝ հաւ, աղաւնի և ձու գնելու, ոչ ոք նրան մինչև անգամ ձուի կճեպ չծախեց և տուն ներս թողնել անգամ չէին ուզում: Նա տեղ տեղ իր ականջով լսեց՝ թէ իր պէս մարդիկ կարող են հաւերը փռացնել և բադերն ու աղաւնիները չգիտեմ էլ ինչ անել:

Հաւ ծախողը չէր կարողանում ըմբռնել՝ թէ ի՞նչ է պատահում իրեն: Նա զամբիւղը ցած դրեց ու նստեց իր հին ծանօթ Լեդպիի տան առաջն եղող նստարանի վրայ. Լեդպիի հետ նա շատ անգամ խաղաղութեամբ ու սիրով ժամանակ էր անցկացրել ու գինի խմել. այժմ նստեց նրա մօտ, գլուխը ձեռքերին կռնթեց ու վհատած ասաց. բարեկամ, իմ սատանայական գործն ու դրա համար ստացած պարգևը վրայ չեկաւ ինձ:

Ե՛հ, լաւ բան չէ, որ դու ընծայի համար այդպիսի յարաբերութիւն ես սկսել, ասաց Լեդպին և նստարանից վեր կացաւ, որ չլինի թէ երկար ժամանակ նրա մօտ նրստելով՝ իրեն էլ մի բան պատահի:

Ո՛ւմ հետ եմ յարաբերութիւն սկսել, ասաց հաւ ծախողը, բայց Լեդպին նրան անպատասխան թողեց:

Մի ժամուայ մէջ արդէն ամբողջ գիւղում յայտնի էր՝ թէ նա շատ մարդկանց ներկայութեամբ Լեդպիի տան առաջն եղած նստարանի վրայ անձամբ խոստովանել է, որ ինքը պարգևի համար սատանայի հետ յարաբերութեան մէջ է մտել:

Այս խօսքերը խարբաներին ա՛յնպիսի ծառայութիւն մատուցին, որ նրանցից մի քանիսի ասելով եթէ ոսկիներով էլ ձեռք բերած լինէին՝ դարձեալ թանկ չէր լինի: Ոմանք էլ ուրախ էին, որ հաւ ծախողն այժմ դատարկ զամբիւղով, առանց հաւերի ու ձուի պէտք է դղեակ գնայ:

Մի անգամ էլ թող գեանախնձոր ու ճակնդեղ ուտեն, ասում էին անպիտաններն իրենց սեղանի ճարպը վայելելով ու իրենց կանանց հետ սրտանց զուարճանալով:

Նա այժմ ո՛չ մի հաւեղէն չունի և բացի մեր գիւղից ուրիշ տեղ էլ չի կարող գտնել, ասաց թուխս դնելու արուեստն իմացող մի կին:

Հա, մեր աղաւնեակները նրանց ջգրու ինքներս կուտենք կիրակի օրը, ասաց որկրամուկ կանանցից մէկը:

Երանի՛ թէ այժմ նրանց մօտ այնքան հիւրեր դային, որ դղեակը լցուէր, ասաց մի կին, որին միայն մի օր և է տան այրուելը կարող էր ծիծաղ պատճառել:

Այն ժամանակ ես դղեակ կերթայի և կրկնակի գնով կվաճառէի, ասաց նրա բոլորը, որ հաւերից աւելի փող էր սիրում:

121.

ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆԸ ՄԻ ԲԱՆ ՅԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ԵՒ ՆՐԱՆ ՅԱՆ-
ԿԱՑԱԾ ՈՒՂՂՈՒԹԵԱՄԲ ՅՐԱՄԱԳՐԵԼՈՒ ԵՂԱՆԱԿՆ ՈՒ
ՁԵԻԸ

Գիւղի իշխաններն ու հարուստների գլխաւոր նպատակն էր՝ արօտի բաժան. բաժան անելու առաջն առնել: Հաւ ծախողի խոստովանութիւնը՝ թէ նա սատանայի հետ ընկերացել է, աւելի դժ տուեց նրանց մտադրութեանը և նրանք համարեա՛ թէ գիշեր ցերեկ խորհուրդ էին անում՝ թէ ի՞նչպէս անեն, որ գործը յաջողուի:

Նրանք ամենից սիրով հէնց ուղղակի Արներին կարող էին մերժել իրենց խոստացածը՝ գործի մէջ սատանայի խառնուելու պատճառով, բայց վախենում էին, թէ մի գուցէ նա այդ համբաւը տանողի ականջից ա՛յնպէս բռնէ ու քաշէ, որ միւսները գործին մասնակցելու ցանկութիւնն էլ կորցնեն: Նրանք բաւականացան միայն կողմնակի ճանապարհներ փնտռելով. մէկը խորհուրդ էր տալիս, որ այժմ ոչինչ չի կարելի անել և գործը պէտք է մինչև աշուն յետաձգել, այն ժամանակ կարելի կլինի նորից մտածել՝ թէ ինչ պէտք է անել: Նրա կարծիքով պէտք է Արներին հասկացնել, որ այժմ շատ անյարմար ժամանակ է արօտը բաժան բաժան անելու: Իրենք բաւականացուցիչ խոտ չունենն ապրանքի հա-

մար և չեն կարող առանց այդ արօտի ելա գնալ. իսկ անասուններին անկարելի է գոմերում բաղած պահել, Արնբըրը ինքն էլ չի ցանկանայ այդ:

Կարծիքներից մէկն էլ այն էր, որ փորձի համար վերցնեն վերին և ներքին անտառների անկիւնում եղած հողի կտորը, որ բարերով ու ճահիճներով լի է, և բաժանեն նրանք ի միջի պլոց ասում էին. այդ հողի կտորը ստացողները լաւ չեն մշակի և մենք այդ տեսնելով այնպէս կանենք, որ Արնբըրն անբաւական մնայ և էլ այնպէս եռանդով չցանկանայ այդ ծոյլ շներին բաժանել մնացած արօտը, քանի որ առաջին կտորը չկարողացան օրինաւոր մշակել:

Երկար վիճաբանելով թէ այս երկու կարծիքներից ո՞րն է աւելի իմաստունը, վերջապէս այն եզրակացուցեան եկան, որ երկուսն էլ լաւ են և վճռեցին երկուսն էլ միասին Արնբըրին ներկայացնել: Բայց այդ վճիռն իրագործելու համար նրանց կարևոր էր նոր տանուտէր Մայէրը, որովհետեւ իր պաշտօնի շնորհիւ՝ նա ամենից ազատ կերպով կարող էր խօսել Արնբըրի հետ: Նրանք գնացին նրա մօտ և առաջարկեցին իրենց վճիռը, բայց նա ասաց. ձեր ասածները բողբոջ էլ սոսկ ստեր են. դուք մի կարծէք թէ ես չգիտեմ, որ ձեր խօսողները դեռ խոտով լի են և անասունների տօնավաճառը դեռ ութ օրից յետոյ կլինի և այն անկիւնը, որ ուղղւմ էք բաժանել՝ մի ճահիճ է և ոչ ոք չի ցանկանայ սեպհականել զուր տեղը: Գիւղացիները պատասխանեցին. տանուտէր, մենք բեզմից աւելի լաւ գիտենք թէ քանի կենդանի ու որքան խոտ ունենք և թէ արօտի այն անկիւնն ինչ արժէք ունի: Բայց այն էլ գիտենք, ինչ որ կամենում ենք և ինչ որ դու պէտք է ասես Արնբըրին. դրա մասին երկար շաղակրատելու համար չենք եկել բեզմօտ:

Տանուտէրը պատասխանեց, բայց նա էլ երկու աչքով կոյր պիտի լինէր, որ չտեսնէր՝ թէ դուք ուզում էք նրան յիմարացնել:

Նրանք պատասխանեցին: Գուր կարծում ես, թէ որովհետեւ ինքը մօտաւորապէս գիտես գիւղի անասունների ու խոտի բանակուածիւնը, Արնբըրն էլ ճիշտ գիտէ: Իսկ ինչ

վերաբերում է երկու աչքով կայր լինելուն, նա իր պապից ու նախահորից ոչինչ չպէտք է ժառանգած լինէր, եթէ այդպէս չլինէր:

Տանուտէրը պատասխանեց. դուք լա՛ւ էք ծիծաղում, բայց ես վախենում եմ ձեր ցանկութիւնը կատարել:

Այդ խօսքի վրայ գիւղացիներն սկսեցին ծաղրել նրան ու ասել՝ որ նա թղլ ստամոքս ունի, բայց միւսնոյն ժամանակ նախագուշակում էին, որ եթէ մի տարի տանուտէր ձեայ՝ աւելի լաւ ստամոքս կունենայ և աւելի շատ կարող է մարսել:

Տանուտէրն ասաց ազնուութեամբ. ի՞նչ^օ էք ուզում ասել դրանով:

Հիւգին պատասխանեց. ան՛ս, տանուտէր, սրանք այսպէս են հասկանում. երբ բաժբակ մանողն ու երիտասարդ աղայքը փայտ են կտորում, նրանց ձեռքերը կոշտանում են ու ցաւում, բայց երբ նրանք շարունակում են այդ արհեստը, նրանց ձեռքերն էլ չեն կոշտանում ու ցաւում: Նրանց կարծիքով այդպէս կլինի և քեզ հետ, երբ քո նոր արհեստի մէջ էլ աշակերտ չես լինի: Նրանք իրաւունք ունին, հաւատա՛ ինձ, տանուտէր և արիացիր:

Այո՛, Հիւգին ճիշտ է ասում, անիծում էին միւսները: Մի տարուց յետոյ դու ա՛յնպիսի հաստ փոր կունենաս, որ ամեն բան մէջը կածես: Արա՛ ուրեմն՝ ինչ որ ասում ենք քեզ և կամենում:

Գիւղացիների համար միւսնոյնն էր՝ թէ արդեօք նա ուզո՞ւմ է այդ թէ ոչ, նրանք այնքան ժամանակ նրա ականջը տարան, մինչև որ խոստացաւ նրանց կամեցածը կատարել:

122.

ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԵՒ ՏՆԱՐԱՐՈՒԹԵԱՆ ՍԿՋՐՈՒՆԻՔՆԵՐ

Ամբողջ գիւղում միմիայն Գերարուդի խրճիթն էր, որ չէր մասնակցում յիմարների վարած կեանքի անհանգստութեանն ու դժուարութեանցը:

Այդ իրողութիւնը բացատրելու համար պէտք է ասեմ, որ այս կինը հին տատերի նման իր կարճ որոշումները կամ սկզբունքներն ունէր, որ կարևոր եղած ժամա-

նակն իսկոյն իր տեղը գործադրում էր, այն ինչ ուրիշներն այդպիսի դէպքերում ժամերով ու օրերով մտածում էին՝ թէ ի՞նչպէս անեն, թէ և իրենք իրենց Գերարուզից աւելի ճարտար էին համարում:

Գերարուզի գլխաւոր սկզբունքները հետեւեալներն էին.

Ուրիշի գործում չխառնուել:

Չհասկացած բանի մասին չխօսել:

Ուրիշներին՝ չափազանց բարձր կամ չափազանց ցածր խօսակցութիւնից հեռու փախչել:

Աշխատել՝ սովորել այն, ինչ որ ամենից կարեւորն է: Մտքով ու սրտով միշտ ձիշտ տեղը լինել և ոչ ամեն տեղ:

Ում որ պարտական ես և ում որ սիրում ես՝ հոգուով և մարմնով պէտք է ծառայես:

Այսպիսի փոքրիկ ասացուածներն էին այս կնոջն առաջնորդում դէպի ընտանեկան և քաղաքացիական իմաստութիւնը, որի մասին գրքեր կարելի կլինէր շարագրել՝ եթէ կարելի լինէր այդ իմաստութեան հետ միաժամանակ գրքեր շարագրելու կարողութիւնն ևս ունենալ:

Ամբողջ գիւղի մոլորուած ու զայրացած ամբոխի մէջ այս կնոջ բերանից մի խօսք անգամ չէր դուրս գալիս, որին կարելի լինէր չար մեկնութիւն տալ, ոչ մի խօսք, որով կարելի լինէր գործի մէջ խառնել, ատել կամ ծաղրել նրան:

Բուդիի երեխաներն այժմ համարեա՛ թէ ամեն օր նրա մօտ էին և օրէցօր սովորում էին իրենց և իրենց շուրջն եղածի վրայ աւելի ու աւելի ուշադրութիւն դարձնել: Մանելու և կարելու ժամանակ Գերարուզը նրանց սովորեցնում էր նոյնպէս համարել ու հաշուել: Համարելն ու հաշուելը մտքի կանոնաւորութեան հիմքն է—այս այն կարծիքներեց մեկն էր, որ Գերարուզն ամենից եռանդով հաստատում էր և որոնք նրա դաստիարակութեան վրայ մեծ ազդեցութիւն ունէին—նրա մեթոդը հետեւեալն էր. նա մանելու և կարելու ժամանակ երեխաներին համարել էր տալիս ասեղի ու թելի անցքերը յետ ու առաջ, պատուիրում էր աւելացնել ու պակասացնել:

Երեխաներն այս խաղի ժամանակ միմեանց հետ մըրուրց էին՝ թէ ո՞վ աւելի շուտ և ձիշտ կանէ. երբ հագ-

նում էին, սկսում էին երգել. իսկ երեկոներն ու առաւօ-
 ները Գերարուզը նրանց հետ կարճ աղօթքներ էր ասում
 նրա ամենասիրելի և ամենից առաջ սովորեցրած աղօթքը
 հետևեալն էր. «Ո՛վ Դու երկիւղած Աստուած, աղբիւր ամեն
 շնորհների. առանց Քրիստոսի ոչինչ չկայ: Քեզնից ենք ստա-
 ցել ամեն բան: Առողջ մարմին տուր ինձ և այդ մարմնի մէջ
 թող հոգին անապական, խիղճը մաքուր լինի»:

123.

ԴԱՄԲԱՆԱԿԱՆԻ ՄԻ ՀԱՏՈՒԱԾ

Ես շատ սիրով կցանկանայի այս կնոջ մասին շատ խօսել,
 բայց շատ բեռ բան գիտեմ նրա մասին ասելու. ընդհակա-
 ռակը շատ պէտք է խօսեմ ստահակների մասին:

Ուրիշ տեսակ էլ չի կարող լինել. որտեղ ամեն բան
 ծուռը և յիմար ընթացք է բռնում, այնտեղ ամեն ընդհակա-
 էլ մի բան է պատահում. իսկ որտեղ ընդհակառակը ամեն
 բան լաւ ու կանոնաւոր է, հինն երկար է շարունակուում
 և գոյութիւն ունենում: Ընթերցող, սյժմ յիշում եմ մի
 բարեպաշտ հոգևորականի այն խօսքերը, որ արտասանեց մի
 քաջ ու խաղաղ մարդու դամբարանի վրայ, շրջապատուած
 ամեն տեսակ մեծամիտ ու անհանգիստ մարդկանցով: Նա ասաց.

Երանի՛ այն մարդուն, որի մահուանից յետոյ վրան
 շատ չեն խօսում: Երանի՛ նրան, եթէ նրա ետևից աղքա-
 տի լուռ արտասուքն է թափուում. երանի՛ նրան, եթէ մա-
 հից յետոյ նրա կնոջ, որդու, բարեկամի, ծառայի սրտից
 արիւն է կաթում: Բայց եթէ նրա դագաղի ետևից հաղա-
 րաւոր բերաններ են բացուում և ամեն տեղ նրա վրայ խօ-
 սում, ես կասկածանքով հետազօտում եմ՝ թէ արդեօք նրա
 մահուանից յետոյ նրա կնոջ ու որդու սրտից էլ արիւն
 է կաթում. թէ արդեօք նրա բարեկամն ու ծառան էլ լա-
 լիս են՝ որ նա այլ ևս չկայ: Եւ հաղար անգամ դրանց
 բոլորի աչքերը ցամաք եմ տեսել:

124.

ԱՅՆ ԿՆՈՋ ՊԱՅԿԵՐԸ, ՈՐ ԸՆԴՀԱՆՈՒՐԻ ՑԻՊԱՐ ԶԻ ԿԱ-
 ՐՈՂ ԼԻՆԵԼ

Ընթերցող, ես ուզում եմ այնուամենայնիւ այս կնոջ
 նկարագիրը տալ բեզ, որ կենդանի կերպով ներկայանայ քո

աչքին և նրա խաղաղ ու հանգարտ գործունէութիւնն ընդ-
միշտ անմոռաց ձայն բեղ համարու Ինչ որ ասելու եմ՝ թէ և
չափազանց է, բայց չեմ քաշուում ասելու:

Աստուծոյ արևը առաւօտից մինչև երեկոյ իր ուղիով
է գնում: Բո աչքը նրա քայլերից ոչ մէկը չէ նկատում և
ականջդ էլ չէ լսում նրա ընթացքը. բայց նրա մայր մըտ-
նելու ժամանակ գիտես, որ կրկին կծագէ ու կներ-
գործէ շարունակ՝ երկիրը տաքացնելու, մինչև որ պտուղ-
ները հասունանան:

Ընթերցող չափազանց է, ինչ որ ասում եմ, բայց
չեմ քաշուում ասելու:

Երկրի վրայ ճանապարհորդող այս մեծ մօր պատկերը
Գերարուդի և այն ամեն կնոջ պատկերն է, որ իր բնակա-
րանը Աստուծոյ սրբութիւն է դարձնում և մարդուն ու
որդոցը երկնքի արքայութեան արժանացնում:

125.

ԱՐՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆԻԸ

Բայց նա միայնակ չէ. Արները նոյնպէս երկրի վրայ
պտտող սիրելի արևի ճանապարհով է գնում, այն կնոջ ճա-
նապարհով, որ իր մարդուն ու որդոցը երկնքի արքայու-
թեան է արժանացնում:

Այս օրերս նա համարեա՛ ամեն երեկոյ ձիով գալիս
էր համայնքի այն արօտատեղին, որ ուղում էր բաժանել.
Նա չհանգստացաւ, մինչև որ լաւ ուսումնասիրեց հողի այդ
կտորը. նա մինչև անգամ տանն էր թողնում իր սիրելի
շունը, որին ուրիշ ժամանակ միշտ հետն էր վերցնում, որ
իրեն չխանդարէ ու մի վայրկեան անգամ գործը յետաձգել
տայ:

Հարիւր անգամ նա կապել էր իր ձին ցանկապատերի
ու մացառների վրայ և ոտքով անցել ճահիճների ու փո-
սերի միջով՝ հողի այդ կտորը հիմնաւորապէս ճանաչելու
մտքով: Նա ամեն մի անկիւնը լաւ գիտում էր. և համեմա-
տում ամբողջի հետ: Եւ իզուր չարեց այդ: Սարի ստորո-
տում, արօտի այն մասում, ուր համարեա մարդու ոտք չէր
դիպել, նա ջրի երեք ակունք գտաւ: Այդ աղբիւրների
շուրջը բուսած էր ջրկոտիմ և վերոնիկէ. աղբիւրի շուրջը

գետինը սև աղմից էր և շատ հաստ ու մեծ բոյսեր կային վրան: Նա իր ձեռքով չափեց նրանց դիրքի բարձրութիւնն և այն ծանծաղուաները, որոնք կարող էին այդ ջրով որդգուել և կրկնակի ուրախութիւն զգաց: Նա շարունակ ամեն երեկոյ գալիս էր արօաը, մինչև որ ծրագրեց ու որոշեց՝ թէ ամեն մի անկիւն ինչպէս կարելի է արդիւնաւորել, մինչև ո՞ւր կարող են հասնել աղբիւրները, որոնցով կարելի կլինէր լաւ արօտատեղեր առաջացնել: Թէ ո՞ր հողը կձայ երկրագործութեան համար և որը պէտքական կլինի միմիայն եղէգն ու անտառ անկելու համար: Յետոյ իր ամենօրեայ որոշումները գրի էր անցնում, մինչև որ այդպիսով իր ծրագիրը վերջացրեց:

126.

ՆՐԱ ԱՇԽԱՑԱՆՔԻ ՎԱՐՉԱՑՐՈՒԹԻՒՆԸ

Այդպէս է հայրը պարտիզում իր որդոց համար մարգեր որոնում, որ նրանք այնտեղ ծաղիկներ, կաղամբ, բանջար ու ծառեր անկեն: Նա ցոյց է տալիս նրանց կակաչի ու շուշանի տեղը, հասարակ կաղամբի և ընդակաղամբի, տունկերի ու պտղատու ծառերի տեղը և հօգուով ուրախանում է այն բոլորի համար, որ միանգամ պէտք է այնտեղ անկեն ու ցանեն իր սիրելիները: Ա՛խ, նա ուրախանում է դեռ օրօրոցում պառկած մանկան, ծծկերի և դեռ ապագայում առաջ եկող սերնդի վրայ. և զգում է, որ իր մանուկները Աստուծոյ մանուկներն են, և որ այգին իրենը չէ, այլ ինքը հայր է, որ նրանց տայ, կատարելագործէ և իր ունեցածը թողնէ նրանցը և նրանցն էլ սովորեցնէ օգտուել և գործագրել ստացածը և ապա կրկին իրենց որդոցը թողնել:

Այս էր զգում այժմ Արները: Արտասուքի կաթիլները գլորունեցին նրա պտերի վրայից՝ երբ, երեկոյեան հովին, մի վշշացող ջրվէժի մօտ բուսած բարձրաբերձ կաղնիների տակ՝ նա զգաց գահերի վրայ բազմող և ամենաչքաւոր խըրձիթների հօր ուրախութիւնն ու պարտականութիւնները: Նա դանդաղ բռնում էր իր ձին հէնց նոր մայր մտնող արևի դիմացը. ձեռքն ու սանձը գոգն էր դրել, աչքն երկինք ձգել. նրա սիրտը մարդկանց Հօր մօտ էր:

Թէրէզան իրենց մեծ դրան առաջն եղող անտառակի

մէջ դիմաւորեց նրան և ամբողջ գիշերը խօսակցութեան նիւթ եղաւ իշխանների ու ազնուականների վիճակն ու կացութիւնը: Արնբերի՝ Թէրէզային ուղղած վերջին խօսքն այս էր.

Աստուծոյ տուած օրէնքն իշխանների ու ազնիւների համար հետևեալն է. նրանց հարստութիւնն ու պետութիւնն իրենցը չէ, այլ նրանք իշխաններ ու ազնիւներ են, որպէս զի իրենց ժողովրդին տան՝ ինչ որ կարող են տալ նրանց, ապահովացնեն ու կառարկագործեն և միևնոյն ժամանակ սովորեցնեն նրանց իրենց սաացածը գործագրել, օգտուել նրանից և որդոցը ժառանգութիւն թողնել:

Արնբերն ու Թէրէզան օրհնեցին իրենց վիճակը, գըրկեցին զաւակներին և Աստուծոն խնդրեցին, որ նրանք էլ մարդասէր լինին, իշխանների ու ազնիւների համար Աստուծոյ սահմանած օրէնքն ընդունեն և հետևեն դրան մանկութիւնից սկսած՝ մինչև իրենց մահը:

127.

ՏՐՏՄՈՒԹԻՒՆ ԵՒ ՈՒՐԱԽՈՒԹԻՒՆ ՄԻԵՒՆՈՅՆ ԺԱՄԻՆ

Այդ Գերարուդի և Արնբերի ուղիներն էին. բայց դրանցից պակաս ազնիւ ու գեղեցիկ չէր իրենց քահանայի շահիդը՝ նա դեռ շարունակ աշխատում էր խեղճ տանուակերի հոգեկան վերածնութեան վրայ:

Տանուակերն իր պաշտօնակից իշխանների խտտորտութիւնը կայրերդէդէրի պատմութիւնից իմանալով՝ առաջուանից աւելի կոտորած էր: Թէև քահանան յաճախ մխիթարում էր նրան, բայց այժմ նրա հոգու մէջ շատ խորն էր թափանցել այն միտքը, որ այլ ևս ոչոք ցաւակից չէ իրեն և ինքն արժանի էլ չէ, որ մարդիկ աւելի ցաւակցութիւն զգան դէպի ինքը: Այն օրուանից՝ նա շատ անգամ արտասուքն աչքին նստած էր լինում քահանայի սենեակում և յաճախ հրաժարում էր քահանայի առաջարկած գինին խմելուց: Այդպէս ախուր նստած էր նա քահանայի մօտ նա՛ մանաւանդ վերջին հինգշաբթի օրը. քահանան էլ ախուր ու մտածմանց մէջ էր ընկղմել՝ թէ ի՛նչպէս գոհացնէ նրան ու հանգստացնէ, բայց ինքն էլ չգիտէր ճիշտը թէ ի՛նչ պէտք է անէ: Հէնց այդ ժամանակ եկաւ Հիւրէլքուդին՝ քա

Հանային ասելու, որ ինքն էլ երկար չի կարող սպասել, պէտք է խօսէ տանուների հետ և նրան հաղորդէ, ինչ որ իր մեծ մայրը մահուան անկողնում իրեն հրամայել էր և ինքն այժմ կարող է և կամենում է նրան օգնել:

Քահանայի սիրտը թեթևութիւն զգաց՝ տեսնելով Հիւրէլրուդիին և նրա հետ խօսելուց յետոյ շնորհակալ եղաւ Աստուծոց, որ նրա Ամենակարող ձեռքն օգնութեան հասաւ իր սին խօսքերին և ապա Բուդիին ևս շնորհակալութիւն յայանեց, ասելով թէ ուրախ է, որ ինքը երբէք չզղջաց այն խոստմունքի համար, որ հէնց այժմ էլ արեց խեղճ տանուների վերաբերութեամբ:

Բուդի: Ո՛չ, Աստուած է վկայ ո՛չ, մի՛ վախենաք, հարկաւ ես չեմ զղջայ:

Քահանան: Այն ժամանակ ես էլ արգելք չեմ լինիքեզ:

Յետոյ երկուսն էլ միասին տանուների մօտ գնացին:

128.

ԲԱՐՈՒԹԵԱՄԲ ԵՒ ԵՐԿԻՒՂՈՎ ԱՒ ԽՕՍԱԿՑՈՒԹԻՒՆ

Տանուների արտաքինից արդէն երևում էր, որ նրա ներքին վրդովմունքն ու արտաքին թշուառութիւնն ազդել էին վրան: Նա նստած էր սյնտեղ՝ գլուխը ձախ ձեռքի վրայ յենած և միայն մի փոքր շարժում արաւ՝ տեսնելու թէ ո՛վ է գալիս:

Նա ամբողջ մարմնով սառածի նման էր. Հիւրէլրուդիին տեսնելով՝ նրա աչքերն ու բերանը մի առ ժամանակ անշարժ մնացին:

Աերջինս նկատեց այդ ու ասաց քահանային, ինձ տեսնելը նրա վրայ վատ ազդեցութիւն է անում, երանի չգայի կամ թէ առաջուց նրան իմաց տուած լինէի:

Ո՛չինչ, ո՛չինչ, ուրախ եմ, որ եկել ես, պատասխանեց տանուաէրը. բայց ամբողջ մարմնով դողաց և ուզում էր վեր կենալ:

Այժմ կերթամ և մի ուրիշ անգամ կգամ, ասաց Բուդիին:

Ո՛չ, ո՛չ, պատասխանեց տանուաէրը, մի՛ այստեղ, մի՛: Այս ասելու ժամանակ նա դողալով վեր կացաւ տեղից,

յանկարծ ընկաւ Բուդիի ոտքերն և համարեա՛ անհասկանալի կերպով կովմացնում էր. ի սէ՛ր Աստուծոյ, ի սէ՛ր Աստուծոյ, ների՛ր ինձ:

Ի սէ՛ր Աստուծոյ, ի՛նչ ես անում, խեղճ գլխիդ չէ՛, ասաց Բուդին և ուզում էր երկու ձեռքով բարձրացնել նրան, բայց իղճւր Ծանուտէրը չէր կամենում վեր կենալ և շարունակ ձեռքերը կցելով՝ ներողութիւն էր խնդրում:

Ի՛նչ անեմ, որ նա կրկին գիտակցութեան գայ և վեր կենայ, ասաց Բուդին բահանային.

Քահանան: Վեր կաց, տանուտէր, նա քեզ ներել է: Բուդի: Աստուած իմ, աւելի քան ներել եմ, ի սէ՛ր Աստուծոյ, վեր կաց:

Քահանայի և Բուդիի օգնութեամբ տանուտէրը ոտքի ելաւ:

Բուդի: Ցաւում եմ՝ քեզ անհանգստութիւն պատճառելու համար:

Տանուտէր: Մեղաւորը դու չես, իմ անհանգստութիւնն ինձնից է:

Բուդի: Ե՛ս եղայ պատճառը և սիրով կցանկանայի, որ այդպէս չլինէր:

Տանուտէր: Աստուած իմ, դու չես մեղաւորը, այլ միայն իմ չար խղճմանքը. երբ դուռը բաց արիր, կարծում էի թէ մայրդ էլ ետևիցդ գալիս է:

Բուդի: Դու գիտես, որ նա մեռաւ:

Տանուտէր: Ի հարկէ գիտեմ, բայց ես ուրիշ տեսակ էի կարող երևակայել և հէնց այժմ էլ ինձ այնպէս է թրւում, թէ նա աչքիս առաջն է կանգնած:

Բուդի: Նրան հանգիստ թողնենք. եթէ Աստուած կամենայ, այժմ նա լաւ վիճակի մէջ է:

Տանուտէր: Նրա համար հարկաւ լաւ էր, որ մեռաւ. բայց, Աստուած իմ, ինձ համար այդպէս չէ:—Նրանի՛ր թէ մի վայրկեան գոնէ կենդանի լինէր այժմ—Այնպէս չէ՛ Բուդի, նա մինչև իր վերջին շունչը գանգաւում էր Աստուծո՛ւ՝ իմ արարքի պատճառով:

Բուդի: Ձ՛մը ես այդպէս կարծում:

Տանուտէր: Ո՛չ, զուր չէ, հէնց այժմ էլ աչքովս տեսնում եմ, թէ ի՛նչպէս նա մահուան անկողնում Աստ-

ծուն գանգատուում է իմ մասին և վրէժխնդրութիւն աղաղակում: Ես անցնում եմ նրան՝ թէ ի՞նչպէս գանգատուելով ու վրէժխնդրութեան աղաղակներով էր գերեզման մտնում և մեռած ժամանակն էլ — մեռած ժամանակ — իր զգուանքն էր արտայայտում դէպի ինձ, որովհետեւ այդ զգուանքի արտայայտութեամբ փչեց նա իր վերջին շունչը:

Բահանան: Այ, տանուտէր, փառք և շնորհակալութիւն Ասածուն յաւիտեան. Կատարինայի մահուան անկողինը բո կարծածի նման չէր: Նա իր վերջին ժամերին քեզ համար էր աղօթում, քեզ ներում և հոգուդ ու մարմնիդ ամեն բարիք ցանկանում:

Տանուտէրը նայում էր նրան բաց, չուած աչքերով և առանց խօսելու ցոյց էր տալիս, որ հաւատ չէ ընծայում բահանայի ասածներին:

Քահանան նկատեց այդ ու ասաց կրկին. տանուտէր, ասածներիս մասին մի՛ կասկածիր. Բուդին իսկապէս միայն նրա համար է եկել, որ յայտնէ քեզ իր մօր՝ մահուան անկողնում տուած հրամանը:

Բուդի: Այո՛, տանուտէր, գիտեմ կուրախանաս՝ եթէ նոյն իսկ նրա խօսքերն ասեմ:

Տանուտէր: Ասա՛, ասա՛:

Բուդի: Նա ասաց. երբ մեռնեմ ու թաղուեմ, գնա՛ տանուտէրի մօտ և ասա նրան, որ ես հաշտուած սրտով եմ մեռնում և Ասածուն աղօթում եմ, որ նա լաւ լինի և մեռնելուց առաջ ինքնաճանաչողութեան գայ:

Տանուտէրը մի վայրկեան մնաց անխօս կանգնած, արտասուքը հոսում էր նրա աչքերից. յետոյ ասաց. թող Աստուած հատուցանէ նրան յաւիտեանկանութեան մէջ: Նա ինձ բարութիւն արեց, ես չարութեամբ պատասխանեցի:— Մի քանի վայրկեանից յետոյ աւելացրեց կրկին. Աստուած նրա աղօթքը լսեց և ինձ պնդպիսի հանգամանքների մէջ դրեց, որ ես ինքնաճանաչողութեան կգամ, եթէ ամենասնարգ մարդը չեմ ուզում լինել:— Մի վայրկեան կրկին լռութիւն տիրեց. տանուտէրն ընդհատեց այդ լռութիւնն ու ասաց. Բուդի, ես պէտք է էլի հարցնեմ. ճիշտ գիտե՞ս արդեօք, թէ ո՞ր օրն ասաց մայրդ այդ խօսքերը:

Բուդի: Իր մահուան օրը:

Տանուտէր: Իր մահուան օրը:

Բողոք: Այո՛:

Տանուտէր: Ի՞նչ առիթով յիշեց նա ինձ իր մահուան օրը:

Բողոք: Ճիշտ այն ժամանակն էր, երբ դու մեր տանը մօտենալով՝ յայտնեցիր ինձ թէ եկեղեցւոյ բակի շինութեան վրայ պիտի աշխատեմ:

Տանուտէր: (Նկատելի շարժումով ու բուռն կերպով) այն ժամանակն է՞ր:

Բողոք: Այո՛, բայց ինչո՞ւ ես այդպէս բուռն կերպով չարցնում:

Տանուտէր: Եթէ այն ժամանակն էր, նշանակում է որ նա իմ երկիւղիցն է վախճանուել:

Բողոք: Ո՛չ, այդպէս չէ՛:

Տանուտէր: Ասա՛, ինչ որ կամենաս, ես այնպէս լա՛ւ եմ յիշում, որ կարծես թէ այս ըոպէիս է պատահում: Ես դեռ այնտեղ էի կանգնած, երբ երեխադ դուրս եկաւ և բեզ ասաց թէ նա վախճանուեց:

Բողոք: Նրա սիրտը գնացել էր և շուտով կրկին յետ եկաւ:

Տանուտէր: Կրկին յետ եկա՞ւ:

Բողոք: Ճիշտ այդպէս:

Տանուտէր: Այն ժամանակ անշուշտ իմ գալն է եղել նրա ուշագնաց լինելու պատճառը:— Ճշմարիտն ասա՛, ես արդէն գիտեմ այդ:

Բուդին չգիտէր թէ ի՞նչ պատասխանէ և քահանային նայեց: Քահանան ասաց, որ միմիայն ճշմարիտն ասէ:

Բողոք: Աստուած է վկայ, որ ճշմարիտը կասեմ. այո՛, նա քո գալն իմանալով վախեցաւ, որովհետև կարծում էր թէ գալիս ես ինձնից փող պահանջելու. նա գիտէր, որ ես փող չունէի:

Տանուտէր: Այդ պատճառով նա ուշագնաց եղաւ, Աստուած իմ, Աստուած իմ, այն էլ իր մահուան օրը:

Բողոք: Այժմ մոռացութեան տուր այդ, տանուտէր, և միւսի վրայ մտածիր: Ես հազիւ թէ նրանից հեռացել էի՝ բեզ մօտ գալու, նա սկսեց ինքն իրեն քո մասին խօսել և պարզ ու հասկանալի կերպով ասաց. Աստուած այնպէս

է կարգադրել, որ դու իր մահուան ընդմէջ ել նրա պատուհանի տակը լինէիր, որպէս զի ինքը կարողանայ իր ուն ու բէնն էլ ճնշել և բեզ համար աղօթել:

Տանուտէր: Ո՞րտեղից գիտես այդ, քանի որ դու ինձ մօտ էիր:

Րուղի: Բուռէլին նրա մօտ էր, նա՛ ինձ ասաց:

Տանուտէր: Բայց ինչո՞ւ ուշագնաց եղաւ:

Րուղի: Նա լսեց թո՛ւ բարձրաձայն խօսակցութիւնն ու վախեցաւ:

Տանուտէր: Ո՞վ Աստուած իմ:

Րուղի: Նա արդէն մեռնելու չափ թղլ էր և գրեթէ մահուան տագնապի մէջ:

Տանուտէր: Իսկ այն, ինչ որ առաջ ասացիր՝ ուշագնաց լինելուց յետո՞յ ասաց:

Րուղի: Մօտ երեք ժամ յետոյ:

Տանուտէր: Եւ նա ուշագնաց լինելուց յետո՞յ էլ ինձ ներեց:

Րուղի: Այո՛, ի հարկէ, ամնուամբ:

Տանուտէր: Ինչ հրէ՛շ էի ես. երանի՛ր թէ թո՛ւ բոլոր մարդկանց առաջ գետինը մտնէի:

Րուղի: Այդ ի՞նչ է նշանակում:

Տանուտէր: Ել ինչո՞ւ ես հարցնում. ինքդ լսեցիր թէ ետեւիցդ ի՞նչ ասացի, երբ երեխան յայտնեց թէ նա մեռաւ և դու էլ տուն վազեցիր:

Րուղի: Ո՛չ, ես չլսեցի, և երկիւղից էլ չէի կարող հասկանալ ինչ էլ որ ասէիր:

Տանուտէր: Այժմ կասեմ բեզ:

Րուղի: Կարիք չկայ:

Տանուտէր: Ո՛չ Բուռի, ես կասեմ, պէտք է ասեմ: Գու պէտք է իմանաս թէ ի՞նչպիսի հրէ՛շ եմ ես և թէ հէնց այն վայրկեանին, երբ նա ինձ ներում ու ինձ համար աղօթում էր, ես ի՞նչ չար ու զզուելի բան արի:

Րուղի: Լռի՛ր, ինչ որ ասացիր՝ միւկնայն է, այժմ իմ և թո՛ւ սիրան էլ մի՛ ծանրացնի:

Տանուտէր: Չե՛մ կարող լռել և չե՛մ կամենում լռել. դու պէտք է իմանաս այդ. Այն վայրկեանին ես թո՛ւ ետեւից

աղաղակեցի. մնաս չէ, եթէ այդ ձեր պառաւ կախարդը մեռնէ:

Րուղի: Մի՞թէ կարողացար պոպոխի բան ասել:

Տանուտէր: Ասացի:

Բուզդի աչքից արտասուք կաթեց և մի վայրկեան ուզինչ չկարողացաւ ասել:

Իսկ տանուտէրը շարունակեց. ես արժանի չեմ, որ ինձ ցաւակցեն. և շատ էլ արդարացի է, որ ամբողջ գիւղում ինձ այլ ևս ոչ ոք մի կտոր հաց չէ տալիս և ոչ էլ ցանկանում են տալ:

Այժմ քահանան սկսեց խօսել ու ասաց. տանուտէր, երկնքումն ապրող էակը մեր կարծածից մեծ է: Աստուած մեզ մեր մեղքերով չէ դատում և մեր չարագործութեանց փոխարէն հատուցանում: Փառաքանիք Տիրոջ անունը: Նրա ողորմութիւնը մեծ է և նա օգնութիւն ուղարկեց քեզ քո անօգնական ժամերին: Բո շնորհիւ դժբաղդացածների ձեռքով է նա ծերութեանդ ապրուստը տալիս:— Աւեր կաց այժմ, տանուտէր, և լսիր թէ ի՞նչ եմ ասում քեզ: Այս մարդը, որի աչքերը դեռ ևս արտասուքով լի է իր մօր մահուան տագնապի միջոցին քո կողմից նրան ուղղած սարսափելի խօսքի պատճառով, բարի Բուզին, որին դու այնպէս թշուառացրիր, քո բարեկամն է ուզում լինել քանի որ կենդանի ես, և իր կարողութիւնը, որ այնքան երկար ժամանակ նրանից խել էիր, եղբայրաբար քեզ հետ բաժանել: Մտածիր, տանուտէր, նա իրաւունք է տալիս քեզ, որ քանի կենդանի ես, կարող ես նրա արօտից ամեն տարի մի կովի ամառուայ և ձմեռուայ պաշար խոտ վերցնել:

Բուզին հաստատեց քահանայի ասածն ու աւելացրեց. այդ իրաւունքը կարող են վայելել դրանք՝ քանի որ ինքն ու իր ամուսինը, կամ թէ երկուսից մէկը կենդանի է:

Տանուտէրը խօսել չէր կարողանում. այդ արդէն չափազանց էր նրա համար: Նա կմկմալով խօսքեր էր արտասանում. ո՛չ թէ շնորհակալութիւն յայանելու, այլ արտայայտելու համար թէ ի՞նչպէս անարժան է ինքը, և թէ ի՞նչ սարսափելի յանցանք է գործել ինքը նրանց դէմ. և այնպիսի դրութեան մէջ էր, որ քահանան և Բուզին սրբասնց ցաւակից էին նրան:

ԵՐԿՆԻՑ ԿԱԹՈՒՆԵՐՆ

Այնուամենայնիւ այս դէպքի վրայ նա իրան զօրացած ու թարմացած էր գգում. իսկ նրա ամուսինն ընդհակառակը բոլորովին ընկճուած էր՝ իրեն պատահած տխուր թիւնից ու երկիւղից և տարաբաղաբար Տրոյֆանգի ձեռքն ընկաւ:

Այս բժիշկը նրան տուեց իր «երկնից կաթիլներ»-ից, որ դեռ իր պապի ժամանակ «գահճի կաթիլներ» էին կոչուում: Բայց երբ իր հայրը պատուաւոր ձանաչուեց, նա այլ ևս այդ դեղը չէր կամենում նախկին անունով ծախել և անուանեց «երկնից կաթիլներ». այն ժամանակից սկսած այդ դեղը շատ գործածական էր մարդկանց ու անասունների համար: Երբ տանուտէրի կինը Տրոյֆանգին իր ցաւը յայանեց, նրա առաջին խօսքն եղաւ. կեռասաջուր տուր ինձ, այնպէս ծարաւ եմ, որ խօսելուց առաջ մի բան պէտք է խմեմ:

Նա տուեց ըմպելիքն ու ընդարձակ սկսեց պատմել իր կարիքը:

Բժիշկը պատասխանեց՝ երբ շիշը գրեթէ դատարկել էր. ինչ հարկաւոր է այդքան շաղակրատութիւնը. եթէ դու մի խօսք էլ չասէիր, ես դարձեալ կիմանայի թէ ինչք է ցաւում. եթէ կէս օր էլ խօսելու լինիս, նոյնը կլինի: Լեարդի հիւանդութիւն ունիս, ժամանակ է օգնելու, որովհետեւ լեարդդ կիսով չափ փթած է. եթէ շուտով միջոցներ ձեռք չառնենք հիւանդութեան առաջն առնելու, բերանդ այնպէս կփակուի, որ այլ ևս չի բացուի: Բայց քեզ մի այնպիսի բան կուղարկեմ, որ արդէն շատ իշխանների, հոգևորականների ու պարոնների լեարդեր է բժշկել, նոյն իսկ եթէ նրանց լեարդից կէս արասու չափ էլ առողջ տեղ մնացած լինէր. սառանան պէտք է խանգարէ, որ իմ դեղը քեզ էլ չօգնէ: Բայց այնպէս պէտք է խմես, ինչպէս որ կուղարկեմ և առաջուց էլ ասում եմ, որ անուշեղէն չէ, այնպէս կայրէ, որ կկարծես թէ դժոխքից է բերուած. բայց չարը չարով կհայածուի: Երկու ժամը մի անգամ մի գդալ խմիր՝ մինչև որ վերջանայ, յետոյ արդէն կլաւանաս:

Կաթիլները ներգործութիւն ունեցան և դժուարի սա-
տանայի նման տաքացրին նրա բերանը. նա այնպիսի տաքու-
թիւն զգաց, որ կարծես թէ սաստիկ ջերմ ունենար: Դեղը
գործածելու ժամանակից նրա շնչառութիւնն ակնյայտնի
կերպով հետզհետէ ծանրանում էր. նա առաջուայ նման այլ
ևս չէր կարողանում քնել և աւելի սաստիկ կրծքացաւ էր
զգում. առաջուայ պէս էլ չէր քրտնում: Բայց խեղճը բո-
լորովին մտքովն էլ չէր անցկացնում, որ այդ բոլորի պատ-
ճառն ճերմից կաթիլներն են, ընդհակառակը որքան աւելի
ծանրանում էր իր հիւանդութիւնը, նա աւելի ճշտու-
թեամբ էր կատարում «կաթիլներ տուող» պատուէրները:

130.

ԱՅՆ ԵՐԿՈՒ ՄԱՐԴԿԱՆՑ ԽՕՍԱԿՑՈՒԹԻՒՆԸ, ՈՐՈՆՔ ԻՐԵՆՑ
29-ԻՑԵՑԱԾ ԲԱՆԵՐԸ ՑԱՍՆ ՕՐՈՒԱՅ ՄԷՔ ՍՈՎՈՐԵՑԻՆ ԵՒ
ՓՈՐՉԵՑԻՆ

Տանուտէրը տեղեկութիւն ստանալով իր ամուսնու հի-
ւանդութեան մասին, բահանային խնդրեց, որ իրեն թող
տայ մի օրով տուն գնալու: Քահանան սիրով թող տուեց և
խոստացաւ Արների առաջ պատասխանաւորութիւնն իր վրայ
առնել:

Եթէ տանուտէրը մեռելներից յարութիւն առնէր՝ այն-
պէս յանկարծակի չէր կարող բերել իր կնոջը. նրան տես-
նելու ուրախութիւնն այնչափ մեծ էր, որ խեղճ կինը
սկզբումը չէր կարողանում խօսել: Մի վայրկեան երկուսն
էլ լալիս էին և երկար ժամանակ անցաւ, մինչև որ կարո-
ղացան մէկ մեկու հարցնել՝ թէ ի՞նչպէս են անցկացրել ի-
րենց օրերը: Բայց հետզհետէ հանգստանալով՝ համարեա
թէ ամբողջ գիշերը միմեանց պատմեցին բոլոր պատահա-
ները:

Տանուտէրն առաջ պատմեց թէ բահանան ինչպէս լաւ
է վարուում իր հետ և ինչպէս սիրով թող է տուել՝ այս
գիշեր տուն գալ. յետոյ հարցրեց. դու ի՞նչպէս ես, կին.
այս տան օրուայ մէջ դու շատ ես նիհարել:

Տանուտէրի կինը: Ի՞նչպէս կարող էր այլ կերպ լի-
նել: Եթէ Աստուծոյ կամքն այդպէս է, ես շուտ նրա մօտ
կլինեմ:

Տանուտէր: Այդ մի ցանկանար. եթէ Աստուած կամենայ, այսուհետեւ աւելի լաւ կլինի մեր բանը:

Տանուտէրի կինը: Ո՛հ ամուսինս, սրտով ցանկանում եմ, որ այդպէս լինի քեզ էլ ու ինձ էլ, բայց ինչ վերաբերում է նրան՝ թէ այսուհետեւ մեր բանը լաւ կլինի, լսել անգամ չեմ կարող: Մեր ժամանակն անց կացաւ. այսուհետեւ մեզ սպասում է միայն վիշտն ու թշուառութիւնը:

Տանուտէր: Գիտեմ, բայց յոյսներս Աստուծոյ վրայ դնենք և համբերութեամբ սանենք:

Տ. կինը: Միշտ մի կուրանա և մի հաւատա, որ դու երբ և իցէ համբերութեամբ կտանես ծանրը վիշտդ:

Տանուտէր: Գու կարծում ես թէ ես էլի այն հին Հուսէյն ե՛մ:

Տ. կինը: Հապա ուրիշ ի՞նչպէս կարծեմ:

Տանուտէր: Որ ես այլ ևս այն չե՛մ:

Տ. կինը: Գոնէ իմ սպասածից աւելի խաղաղ ու հանգիստ եկար սունն: Ես հաստատ համոզուած էի, որ երբ սունն դառնաս, կատաղած գազանի պէս կմոլեգնես:

Տանուտէր: Այն օրից, երբ քահանայի ձեռքի տակն եմ, հին կատաղութիւնս անցաւ:

Տ. կինը: Մի՛թէ կարելի է այդ:

Տանուտէր: Կի՛ն, ես մարդ չպէտք է լինէի, որ նրա ձեռքի տակ չսանձահարուէի: Նա թող է տալիս խօսել ինչ որ կամենաս և յետոյ ցոյց է տալիս որ սխալուում ես: Բայց նա ամենահաստատուն բաներն անգամ հանում է մարդու մաքից: Առաջ ես կարծում էի միշտ՝ թէ ինձ պատահած ամեն անյաջողութիւնների համար ուրիշներն են մեղաւոր և երբէք մաքովս չէր անցնում, որ ես ամենից շատ սխալներ եմ անում և այդ պատճառով հարիւր անգամ խենթի նման անմեղ մարդկանց վրայ եմ յարձակուել կատաղաբար:

Տ. կինը: Ա՛խ, դու միշտ այնպիսի մարդիկ ունէիր շուրջդ, որ իրենց խաղով էին պար ածում քեզ և չէին թող տալիս, որ ինքդ հանգիստ մտածես գործի մասին:

Տանուտէր: Այժմ էլ այդպէս չի լինի և ես հանգիստ ու խաղաղ կմնամ իմ սենեակում:

Տ. կինը: Այժմ այդ դժուար էլ չի լինի. բացի

գուժկաններից էլ ոչ որ ոտք չի կոխի մեր բնակարանը:

Տանուտէր: Այդ դժբաղդութիւն չե լինի մեզ համար:

Տ. կինը: Տա՛ Աստուած, որ դու միշտ այդպէս ասես:

Տանուտէր: Հաւատա՛ որ այդպէս կ'լինի:

Տ. կինը: Սիրով հաւատում եմ, բայց էլի վախենում եմ:

Տանուտէր: Ես չեմ պարսաւում բեզ:

Տ. կինը: Բայց գիտե՛ս թէ այս ժամանակի ընթացքում ո՞վ աւելի սիրով վարուեց ինձ հետ ու օգնեց ինձ:

Տանուտէր: Ո՛րտեղից պէտք է գիտենամ այդ:

Տ. կինը: Հասն Աիւսաը քո բանասարկուելու օրից ամենայն երեկոյ գալիս էր մօտս՝ մխիթարելու և օգնելու ինձ: Նա ինձ համար փայտ էր կոտրում, ջուր բերում և անում էր այն ամենը, ինչ որ կարող էր և ես կամենում էի: Նա շատ աշխոյժ էր և ասում էր, որ ինքն այժմ նսյում է արևին, լուսնին և ասողերին, որովհետև ամեն մարդ իր իրաւունքը ձեռք բերեց և ճշմարտութիւնը յայտնուեց: Նա հարիւր անգամ ձեռքերը կցել է ու ասել. Աստուած է վկայ, որ քո մարդու բանը վատ չի լինի, նրա համար էլ լաւ է, որ ամեն բան յայտնուեց և եթէ Աստուած կամենայ, նա այժմ կ'փոխուի, իսկ եթէ այդպէս չլինէր՝ նա երբէք չէր փոխուի: Յետոյ Հիւբէլլուդին ու Գերարուդն էլ շատ լաւութիւն արին ինձ: Գերարուդը չորս-հինգ անգամ մօտս է եղել, բայց այժմ՝ նա անբաւական է, որ ես Յրոյֆանգի ձեռքով եմ բժշկւում և երեսիս ասաց թէ ինքը լաւ գիտէ, որ նա իր ռազմի կաթիլներով արդէն շատերին թունաւորել է:

Տանուտէր: Այդ կաթիլների գործումն էլ մի խարախութիւն կայ. ես շատ տեսակ տեսակ պատմութիւններ եմ լսել այդ մասին և եթէ տանը լինէի, դու չէիր համարձակուի այդ կաթիլներն ընդունել:

Տ. կինը: Եթէ Աստուած կամենայ, այդպիսի չար բան չի պատահի:

Տանուտէր: Դեռ էլի շատ ունիս նրանից:

Տ. կինը: Ո՛չ, գրեթէ վերջացրել եմ:

Տանուտէր: Երկիւղ եմ կրում:

Տ. կինը: Լաւ, ինչ եղել, եղել է:

Տանուտէր: Ճիշտ ես ասում: Այժմ բեզ մի ուրախալի բան պատմեմ, որ ամենից առաջ պէտք է պատմէի:

Երևակայիր, Բուդին խոստացաւ, որ ամեն տարի, քանի որ մեզնից մէկն ու մէկը կենդանի է, այն տարաբաղդ արօտից, որ այժմ փառք Աստուծոյ կրկին իր ձեռքն է, մի կովի պաշար խոտ կապ մեզ:

Տ. կինը: Յէ՛ր Յիսուս, ի՛նչ ես ասում, մի՞թէ կարելի է այդ:

Տանուտէր: (արտասուքն աչքերին) Ես էլ բեզ նման զարմացայ՝ երբ լսեցի այդ: Ես գրեթէ չէի կարողանում հաւատալ և շնորհակալութիւն յայտնել նրան: Բացի դրանից նա եկաւ ինձ մօտ ասելով՝ որ իր մայրը մահուան անկողնում ինձ ներել է և հոգուս ու մամիս համար ամեն բարիք ցանկացել:

Տ. կինը: Ա՛խ, այդ ինձ համարեա թէ աւելի է ուրախացնում, քան նրա տուած խոտը, չնայելով որ մենք մեծ կարիք ունենք:

Տանուտէր: Ի՛մ ամենալաւ բարեկամներն ամենից անպիտան դուրս եկան, այնպէս չէ՛:

Տ. կինը: Համարեա թէ այդպէս է: Սկզբում ամենքն էլ լաւ էին, ամեն երեկոյ ծածուկ գալիս էին մօտս և ամեն բարիք խոստանում՝ եթէ ես այնպէս կարողանայի անել, որ դու նրանցից ոչ որի՛ գործի մէջ չխառնէիր: Բայց ես նրանց ուղիղ ասում էի՝ թէ ես ոչինչ չեմ կարող անել, դրանից յետոյ նրանք այլ ևս չեկան: Բայց յետոյ ինձ անյայտ մի լան պէտք է պատահած լինի. կարճ ասեմ նրանք բոլորն էլ մի անգամից կատաղեցան մեզ վրայ և ամենազրգուելի բաներն էին ապսպրում ինձ ու սպառնում՝ թէ մեզ բաղդից մեռցնել կաման, թէ բեզ մի կոճղի ետևից գնդակահար անել կաման և թէ մեր տունն ու տեղը մեզ հետ միատեղ կայրեն:

Տանուտէր: Մեծախօսութիւններ են դրանք, ուրիշ ոչինչ:

Տ. կինը: Այդպէս էլ ընդունեցի ես, բայց Շնաբէլզրիտէի վրայ կատաղութիւնս եկաւ:

Տանուտէր: Ի՛նչ արեց նա:

Տ. կինը: Նա իր անվերջ շաղակրատութեան համար որմնադրի հետ կռուի էր բռնուել և վերջինս էլ աղբիւրի մօտ, մի խումբ կանանց առաջ իրաւամբ խայտառակել էր նրան: Այդ խայտառակութիւնից յետոյ կատաղի կինը մօտս

վաղեց և պատահածի մասին անյայտի աղմուկ ու աղաղակ բարձրացրեց, որ կարծես թէ տէգի ծայրին լինէր անցկացրած: Նա մեզ էր մեղադրում ևս ում, որ մենք անհիճուած մարդիկ ենք, բոլոր գիւղացիներին դժբաղդացնում ենք և նրանց հոգին ու մարմինը կորստեան վտանգի ենթարկում: Ես տկար էի և կիսով չափ միայն գիտէի պատահածի մասին, բայց սյնքան տեղեկութիւն ունէի, որ պատասխանեցի թէ՛ եթէ նա իր ուխտը պահէր և չջաղակրտաէր, ոչինչ չէր պատահի: Բայց նա շարունակում էր՝ թէ ինք երբէք որմնագրի դէմ չէ՛ եղել և եթէ ինքն իր ասած մի երկու խօսքի պատճառով դժբաղդանայ, պատասխանատուն մենք պէտք է լինենք: Ես թոյլ տուի նրան, որ երկար խօսի, բայց վերջապէս ասացի. կարծում էի թէ դու իմ դրութիւնն ու հանգամանքները հասկանալով ինձ հետ չես կրճուուի այնպիսի բանի համար, որից ես ոչ մի տեղեկութիւն չունեմ և ուրեմն մեղաւոր էլ չեմ կարող լինել: Նա պատասխանեց թէ՛ շատ լաւ է, որ այդպիսի բան է պատահել ձեզ, դուք վաղուց արժանի էիք դրան, բայց արդարացի չէ, որ ես և ինձ հետ էլ ուրիշ մարդիկ՝ ձեզ հետ դժբաղդանանք: Այդ խօսքերի վրայ արդէն համբերութիւնս հատու ու ասացի. Գրիտէ, եթէ կռիւ ու վէճ ես ուզում, այնպիսի մարդ որոնէր, որ ինձնից աւելի կարողանայ համբերել. այդ ասելով ես հեռացայ նրանից ու խոհանոց մտայ: Այդ բանի վրայ նա անյայտ կատաղեց, որ նոյն իսկ փողոցում ետևիցս աղաղակում էր. անհիճուած մարդիկ էք դուք և ով որ ձեզ հետ գործ ունենայ, կդժբաղդանայ: Գուրս գնալիս էլ սենեակի դուռը նա այնպէս ուժով և պինդ յետ դրեց, որ կրնկահան եղաւ:

Տանուտէր: Բոլորովին չեմ զարմանում նրա վրայ. ես միշտ նրան այդպէս եմ ճանաչել:

Տ. Կինը: Ելմարիտ է. բայց քեզ յայանի է, թէ յորբան բարիք է վայելել մեր տանը և ամեն անգամ առանց կոպէկ վճարելու կշտացել է մեր խոհանոցում:

Տանուտէր: Այժմ դրանք անցած-գնացած բաներ են, որոնց համար մեզ ոչ ոք ճշնորհակալ եմ չի ասի:

Տ. Կին: Այդ հարկաւ այդպէս է: Երևակայիր, Կրիտէրն էլ իմ դէմ էր: Քեզ դժբաղդութիւն պատահելու

վարկեանից սկսած նա միշտ մեր տան առաջևից անցնելով ամեն մի պատուհանում նստողին կամ դրանք կանգնողին պատմում ու ծաղրում էր մեզ և մինչև անգամ, հրապարակով, աղբիւրի մօտ նա իր լեզուն հանեց իմ առաջ և բարձր ձայնով բողբոլի ներկայութեամբ ասաց. եթէ դուք ձեզ պատահած դժբաղդութեանն ուրիշ ոչնչով արժանի չլինէիք, մի միայն ինձ քահանայի մօտից հանելու համար արժանի էիք. բայց այժմ այն շաբաթական հացը, որ ուզում էիք հնարագիտութեամբ ինձնից յափշտակել՝ ինքնեդ կարող էք գործածել:

Տանուտէր: Հա՛. բայց վերջին չորեքշաբթի օրից սկսած նա էլ հօ այդպէս չի արել:

Տ. կինը: Ո՛չ, չորեքշաբթի օրուանից էլ նրան չեմ տեսել:

Տանուտէր: Ի հարկէ:

Տ. կինը: Ինչո՞ւ.

Տանուտէր: Որովհետև երեքշաբթի օրը նա իր վարձարութիւնը ստացաւ դրա համար:

Տ. կինը: Ո՞ւր մեից:

Տանուտէր: Քահանայից:

Տ. կինը: Նա արդէն իմացել է՞ր:

Տանուտէր: Կարծեմ դեռ մի ժամ էլ չէր անցել, որ նա իմացաւ այդ: Գու գիտես, որ երեքշաբթի օրերը քահանայի մօտ են գալիս շաբաթական հաց ստացողները և Կրիսէրը միշտ ուրիշին է ուղարկում իր փոխարէն. բայց քահանան այս անգամ նրան ոչինչ չտուեց ու ապսպրեց, որ ինքն անձամբ գայ: Նա չկամենալով գալ՝ երեխային ուղարկել էր ասելու թէ ինքը հիւանդ է և անկողնում պառկած. միևնոյն ժամանակ խնդրում էր ողորմութիւնը տալ, որովհետև ասնը մի պատահ հաց էլ չի մնացել: Բայց քահանան երեխային էլ առանց հացի յետ ուղարկեց ու ասաց. ես գիտեմ նրա հիւանդութիւնը, այդ նոր բան չէ և զբօսնե՛ն առողջարար է նրա համար, նա անպատճառ պէտք է գայ, ինքը գիտէ՝ թէ ինչո՞ւ համար: Եւ վերջապէս նա եկաւ միտանը, երբ ես մերձակայ սենեակումն էի. և կարծես թէ այժմ էլ լսում եմ՝ թէ ինչպէս քահանան բռունցքը սեղանին սաստիկ խփելով ասում էր նրան. Կրիսէր, դու

այսօր առաւօտ աղբիւրի մօտ այնպէս ես վարուել տանու-
տէրի կնոջ հետ, որ ոչ թէ քահանան պէտք է խօսի բեզ
հետ, այլ սրիկօյի մէկը՝ մտրակը ձեռքին: Ես հարիւր ան-
գամ աչքովս տեսել եմ թէ դու ի՛նչպէս եկեղեցում և
փողոցում շան նման խոնարհում ու քծնում էիր տանուտէ-
րի՛ առաջ, իսկ այժմ, երբ նա դժբաղդացաւ և ամուսինը
խորին արտուութեան մէջն է, հրապարակով լեզուդ հանում
ես նրա դէմ և ուէխդ բաց անելով՝ ամենամեծ ստերն
ու չարութիւնները խօսում նրան վիրաւորելու համար: Կրի-
խէրն ուզում էր արդարանալ և պատասխանեց, որ սուտ
են ասել իր մասին, ճիշտ չէ այդ, ինքը մի տարաբաղդ
մարդ է: Եթէ կախաղանից վայր ընկնողն էլ մի բան է ա-
սում իր մասին, ամենքն էլ հաւատում են: Այդ խօսքերի
վրայ քահանան այնպէս բարկացաւ, որ կեանքումս նրան
այդպէս չէի տեսել և այդպիսի խօսքեր չէի լսել նրա բե-
րանից: Նա ասաց. դու շո՛ւն անպիտան, ստահակ, դու
պէտք է իմանաս որ ես գիտեմ՝ թէ ինչ եմ խօսում: Դու
ոչ թէ միայն այդպէս ես արել, այլ և եկեղեցու շինութեան
մշակների առաջ ղուարճացել ես արածիդ վրայ: Այժմ կո-
րիւր, կորիւր աչքիցս, և շնորհակալ եղի՛ր Աստուծոց, որ իմ
պաշտօնն ու հասակն արգելում են ինձ ձեռքիս բռնած
փայտը ցանկութեանս համեմատ գործածելու: Կրիխէրը դուրս
գնալիս էլ շարունակ մրթմրթում էր այն մարդկանց մա-
սին, որ կախաղանից են ընկել, բայց իրենից աւելի սրիկե-
լի են քահանային: Բայց սանդուխթի վրայ նա լռեց, որով-
հետև մնակ մնալու հէնց առաջին վայրկեանին՝ այնչափ հաց
խցկեց բերանը, որ ամանով ջուրը ձեռքին սանդուխթով
բարձրացող Հանսի ճբարի երեկոյին՝ չկարողացաւ պատաս-
խանել:

131.

ՀԱՆ ՀԱՆԱՑԱՐՄՈՒԹԻՒՆՆ ԸՌԻԹ Ի ՏԱԼԻՍ ՄԱՐԴԿԱՅԻՆ
ԶԳԱՑՄԱՆ

Նրանք այդպէս խօսում էին ամբողջ գիշերը, բայց այդ
խօսակցութիւնը չլաւացրեց տանուտէրի կնոջը: Չպէտք է
մոռանամ պատմել և այն հանգամանքը, որ նրանց պառաւ
Թուրքը (շան անուն) ամբողջ գիշերը նրանց ոտքերի տակն

էր ընկած: Ցանուտէրի բանտարկութեան առաջին օրերը նա այնպէս սաստիկ ունում էր քահանայի տան առաջը, որ բոլոր դրացիներն երկիւղի մէջ էին: Թէև նրանցից ամեն մէկը գիտէր նրա ունալու պատճառը, բայց նրանց ականջներում այնպէս երկիւղալի և տարօրինակ էր թւում այդ հաջոցը, որ նրանք այդ չէին համարում իր տիրոջը փրկարող շան սովորական ամենօրեայ հաջոց, այլ գուշակութեամբ բացատրում էին թէ դժբաղդութիւն պէտք է պատահի Եկեղեցու լուսարարը երկրորդ գիշերը գիշերապահներին պատուիրեց շունը տանել տանուտէրի կնոջ մօտ՝ ասելով. եթէ շան ունալը դժբաղդութեան նշան է, աւելի լաւ է, որ իր տանը ունայ և աւելի լաւ է դժբաղդութիւնը պատահի նրան, ով արժանի է, քան թէ եկեղեցուն և քահանայի տանը, որի շէնքը բոլորս պէտք է կառուցանենք: Ցանուտէրի կինը ստիպուած էր գիշեր ցերեկ շունը կապած պահել, բայց նա էլ իր որջից չէր դուրս գալիս թէև իր տիրոջ մեծ ու փոքր թշնամիները նրա վրայ քարեր էին նետում և գրգռում նրան: Ութն օր՝ շարունակ նա շղթայուած մնաց և երբ այժմ տանուտէրը տուն եկաւ, նա կատաղածի նման իր ամբողջ որջը շղթայի հետ քաշ տուեց մինչև տան դուռը. երբ դուռը բաց արին ու շղթայից արձակեցին նրան, նա իր երկու թաթերով թռաւ տանուտէրի ուսերի վրայ և հազիւ կարողացան հեռացնել նրան. նա պառկեց տանուտէրի ոտքերի մօտ, աջ թաթը դրեց նրա ծնկան վրայ և աչքը չէր հեռացնում նրանից:

Ցանուտէրն ուրախացաւ՝ տեսնելով իր Թուրքի հաւատարմութիւնը. նա փաղաքեց նրան և թաթը ձեռքն առաւ. բայց միւսնոյն ժամանակ մտածում էր, որ ինքն էլ ո՛չ մի մարդու այնպէս հաւատարիմ չէ եղել՝ ինչպէս այս շանը և այդ պատճառով էլ ո՛չ մի մարդ իրեն այս շան պէս հաւատարիմ չէ մնացել: Այդ մտաբերելով՝ իր շան հաւատարմութեան վրայ զգացած ուրախութիւնը չբացաւ. նա հառաչեց և շան թաթը ձեռքից բաց թողեց:

132.

ԱՊՍ ՀԻՒՆԻ ՊԱՀԱՊԱՆԸ

Գիւղի խաբբաւներն արդէն երեկոյեան տեղեկացան,

որ քահանան այս գիշեր տանուտէրին տուն գնալու իրաւունք է տուել: Նրանք կարգադրեցին, որ տանուտէրի տան առաջը պահպան նշանակեն, որ յետոյ աւելի հաստատ կարողանան ասել թէ քահանան թոյլ է տալիս տանուտէրին իր ուղածն անելու՝ որպէս զի նա էլ քահանայի ուղածներն ասէ: Նրանք Լիպս Հիւնիին պահպան կարգեցին. նա էլ տանուտէրի տանից ամենից մօտ ապրող Կալբէրէդէրի վառարանի ետեւը, մինչև առաւօտեան ժամի երեքը օրի էր խմում: Երբ ժամի երեքը խփեց, նա թագնուեց տանուտէրի դրան մօտ եղած ցանկապատի ետեւը և մնաց մինչև տանուտէրի դուրս գալը, առաւօտեան ժամի հինգը: Յետոյ չորս ոտքի վրայ ցանկապատի ետեւից առաջ գնաց և թագնուեց ԼեոյաՏօլդէիին հնադարեան ընկուզենու ետեւը, որտեղից պէտք է անցնէր Հումէլը: Երբ տանուտէրը հասաւ ընկուզենուն, պահպանը յանկարծակի աղաղակեց համարեա թէ նրա ականջում. Աստուած փրկէ մեզ, Տէրն օրհնէ մեզ, այս ի՞նչ է. տանուտէրը մի վայրկեան յետ ու յետ գնաց, տեսաւ անպիտանին, որ գլուխը հանել էր ծառի ետեւից և ասաց. ի՞նչ կայ այդտեղ, ի՞նչ ես ուզում. Հիւնիին դուրս եկաւ ծառի ետեւից, անզգամ ու սուր հայեացք ձգեց տանուտէրի վրայ ու ասաց. դ՞ու ես, տանուտէր, թէ դու չես. ես կարծում էի թէ բանտուճն ես, այն ինչ դու փողոցուճն ես ման գալի:

Տանուտէրը նրա բերանից փչող հոտից նկատելով օղու ազդեցութիւնը և բոլոր նշաններից տեսնելով, որ նա ուրիշների պատուէրով է խօսում, ասաց. ինձ այստեղ հսկելու համար ռիչափ վարձ պէտք է ստանաս:

Այդ մի ուրիշ անգամ կասեմ, պատասխանեց Հիւնիին, բայց լսի՛ր, տանուտէ՛ր, եթէ դու ուրուական չես, ասա՛ ինձ, ի՞նչ ես շինում այստեղ. ինչպէս երևում է ուզում ես գիշերային թափառաշրջիկութեան վարժուել, որպէս զի ուզեցած ժամանակդ կարողանաս: Ես առաջուց գիտեմ քո գլխաւոր ուղին. դա սահմանագլխից դէպի կախաղան ու կախաղանից դէպի սահմանագլուխն է գնում:

Հիւնիին այսպիսի չարամիտ խօսքերով հետևեց տանուտէրին բոլոր փողոցներով՝ մինչև քահանայի տունը. ճանապարհի վրայ եղած տներում ապրող գիւղացիներից նրանք,

որոնք արթնացել էին, գլուխները պատուհաններից դուրս էին բերում՝ տեսնելու թէ ի՞նչ աղաղակ է փողոցում:

133.

ՆՐԱՆՑ ԱՍԱԾԸ ՃԻՇՑ Է, ԲԱՅՑ ԵՐԲ ՀՈՎԻՒՆԵՐԸ ՄԻ-
ՄԵԱՆՑ ԾԵԾՈՒՄ ԵՆ, ՈՉԽԱՐՆԵՐԸ ԳԱՅԼԵՐԻ ԿԵՐ ԵՆ
ԴԱՌՆՈՒՄ

Հէնց այդ էր գիւղի իշխանների ուզածը և Հիւնիին պահապան դնելու նպատակը. իսկապէս նրանք ցանկանում էին, որ գիւղում ամեն մարդ իմանայ՝ թէ տանուտէրին թոյլ են տուել գիշերով տուն գնալ՝ որպէս զի Մայէրին ստիպեն, որ այդ էլ մացնի քահանայի դէմ Արներին տուած բողոքի մէջ: Սա թէև ըստ սովորականին ընդիմադրեց նըրանց՝ ասելով թէ Արներն այդպիսի բան չի ընդունի և նշանակութիւն էլ չի ունենայ, բայց գիւղացիները, ինչպէս որ միշտ, այս անգամ էլ իրենց չկամեցածը լսելու համար ականջ չունէին:

Կինաստ: Սատանան միայն պէտք է խանգարէ, եթէ այդ բանը Արներին քահանայի դէմ չգրգռէ:

Կալըէրլէղէր: Ո՛չ, Աստուած է վկայ, կոխ կլինի. այսբան տարի ապրելով դեռ չեմ տեսել, որ քահանայի արած այսպիսի բանը կուռի պատճառ չբառնայ:

Մօօսըաուէր: Քահանան յայտնի կերպով Արների գործին է խառնուել:

Գիւղացիները պնդեցին, որ Մայէրն այդ էլ յայտնէ Արներին և բարի Մայէրն էլ վերջապէս համաձայնեց:

134.

ՅԱՆՑԱՒՈՐԸ ԿԱՐՈՂ Է ԲԱՐՈՅԱԿԱՆ ԲԱՐՁՐ ԱՍՏԻՃԱՆԻ
ՎՐԱՅ ՄՆԱԼ ԵՒ ՀԵՑԱՔՐՔՐԵԼ ԻՐ ՀՈԳԵՒՈՐ ԵՒ ՄԱՐՄՆԱ-
ԻՈՐ ՏԷՐԵՐԻՆ

Բայց քահանան ինքը գրեց այդ մասին Արներին: Նա Միխէլին, որ սկզբում տանուտէրի մտերիմն էր, իսկ այժմ՝ Լինհարդի բարեկամն էր դարձել, մի բարեխօսութեան գրութիւն տուեց, որ Արներին ասնի և այդ գրութեան մէջ ասում էր, որ եթէ ինքը մի կէս ժամ Միխէլի հետ խօսէ, իր բարեխօսութիւնն էլ աւելորդ կլինի:

Հէնց այդ նամակի մէջն էլ բաՏանան յայտնում էր Արներին, որ տանուտէրին այս գիշեր տուն գնալու թղլու-տուութիւն է տուել. յայտնում էր նմանապէս իր այդ վար-մունքի պատճառը:

Արները պատուիրեց Միխէլին սպասել և մինչև որ ժամանակ գտաւ նրա հետ խօսելու, համարեա թէ երկու ժամ անցաւ. այդ միջոցին Միխէլը ախոռում զբաղուած էր ձիերով: Նա վերջապէս եկաւ լուռնու տակ ու կանչեց նրան:

Արները ոտից մինչև գլուխ լրջօրէն զննեց Միխէլին. Միխէլը կանգնած էր ներքին հանգստութիւն և ոյժ ունեցող մարդու կերպարանքով: Նա ասաց թէ ինքը ներողամտութեան յոյս ունի և զգում է որ արժանի է ներողամտութեան: Արները հրամայեց նրան ամեն բան մանրամասն պատմել: Միխէլն առանց կասկածելու իսկոյն պատմեց՝ թէ ի՞նչպէս ինքը Արների պապի օրով՝ տանուտէրի և գիւղացիների համար դղեակից քսակներով լի ցորեն է ցած թողել՝ պարաններով կապած և պանդոկ տանելով՝ ամբարել այնտեղ. ի՞նչպէս ինքը հարիւր անգամից աւելի դղեակի նըշանը գիշերով ամենալաւ կաշնիներից ու եղևնիներից ցած բերելով՝ գիւղացիներին օգնել է՝ իբրև իրենց սեպհականը սղոցելու, ի՞նչպէս գիւղացիները դղեակի ծառաներից գործիքներ, պարաններ, քսակներ, զամբիւղներ և այլ իրեղէններ ստանալով քէֆ են արել պանդոկում: Յետոյ նա պատմեց թէ ի՞նչպէս դեռ այժմ էլ գիւղացիներից շատերն այդ գողացուած քսակներից կարած աստառով զգեստներ ունեն հագած, ի՞նչպէս մինչև այժմ էլ շատ գիւղացիների տներում կան բազմաթիւ անիւներ, կէս կառքեր, կէս արօրներ և մեծ բանակութեամբ միջնանիւներ, խփեր, մաճեր, սայլակներ, պատգարակներ, գինու և գարեջրի տակառներ, որոնք դղեակի դրոշմ են կրում կամ թէ պարզ երևում է, որ այդ նշանները ջնջուած կամ դուրս են փորուած. թէ այդ պատճառով և բոլոր արհեստաւորները տանուտէրի հետ լաւ յարաբերութեան մէջ են եղել և նրա համար դարձի, կառաչէնի, փականագործի, հիւանի, կարասիք շինողի, դերձակի և կօշկակարի աշխատանքը ձրի էր, որովհետև միշտ կարողանում էր այդպիսի գործիքներ բերել

աալ դղեակից և չնչին գնով վաճառել դրանց վրայ:

Միխէլի այս պարզ, ուղղամիտ էութիւնը և արիութիւնը, որով նա թէ իր և թէ ուրիշների չարութիւնն էր պատմում և նրա՝ գիւղացիների ու գիւղի բոլոր անկարգութիւնների պատճառներն իմանալն առիթ տուին Արներին նըրա հետ մտերմաբար խօսելու. հէնց այդ իրողութիւնն էլ կարող էր Միխէլին քաջ ու արիասիրտ դարձնել, եթէ արդէն այդպէս չլինէր:

Նա խօսակցութեան մէջ, ի միջի այլոց, հարցրեց Միխէլին՝ թէ ինչո՞ւ այդպէս դժուար է այդ մարդկանցը յետ կանգնեցնել իրենց վարած դժբաղդ կեանքից:

Միխէլը պատասխանեց. մարդս միշտ բազմաթիւ կապերով է կապուած կեանքի հետ. և շատ դժուար է նրա համար այնպիսի նոր կապեր գտնել, որ հների դժով կարողանան նրան հակառակ կողմը քաշել:

Այս պատասխանն անսպասելի էր Արների համար. նա մի վայրկեան երեսը մի ուրիշ կողմը շրջեց և բառ առ բառ նոյնը կրկնեց. յետոյ ինքն իրեն ասաց. ճշմարիտ է, յանցաւորին ուղղելու միակ միջոցն է՝ կտրաւել այն կապերը, որ նա ունի իր հին կեանքի հետ, և նոր կապեր հաստատել, որ նրան դէպի աւելի լաւ կեանք տանի. ճշմարիտ է, եթէ այս միջոցը չէ գործադրուում, բոլոր մնացած միջոցները մի կաթիլ ջուր են ծովի մէջ:

Նա դեռ մի ժամից աւելի խօսեց Միխէլի հետ և ընդարձակ պատմել տուեց մանաւանդ Հօօրլախերի տանը պատահած ուրուականի մասին:

Միխէլը հեռւեալ խօսքերով պատմեց այդ.

Հօօրլախէրն իր տունը գնել է 1767 թ. Վագնէր Լեդյպիից 450 Փլօրինով և 300 Փլօրինից աւելի էլ ծախսել է վերանորոգութեան համար. նրա կենդանութեան ժամանակ տանուտէրն ուզում էր գնել այդ տունը 600 Փլօրինով. բայց նրա մահուանից յետոյ էլ չուզեց առնել և իմ ու Ըտէնդիզէնգէրի միջոցով տարածել տուեց՝ թէ Հօօրլախէրը բնական մահով չէ մեռել և թէ նրա անկողնի ետեւը գտնուել է այն կտրած պարանը, որով նա խեղդուել է: Ութն օրուայ ընթացքում այս լուրն ամեն տեղ տարածուեց և դրա վրայ աւելացրին նաև՝ թէ նրա դրացի Վիրխ-

մայերն անձամբ այդ պարանը քահանայի տուն է տարել, բայց քահանան արգելել է այդ մասին խօսելու, որովհետև Հօօրլախերն այժմ արդէն թաղուած լինելով՝ այդ բանը միմիայն սրտտուգութիւն կառաջացնէ: Դրանից յետոյ ամեն ամիս մի երկու անգամ տանուտէրը մեր երկուսից մէկին ուղարկում էր այդ տունը՝ դրացիներին վախեցնելու՝ իբրև թէ այնտեղ ուրուական կայ: Նա մի տարուց աւել այդպէս արեց, մինչև որ ոչ մի մարդ նոյն իսկ ձրի այդ տունը չէր վերցնի և ապա Հօօրլախերի ամուսնուց տունը գրեց 200 Փլօրինով՝ այն էր ցաւակցութեան զգացմունքից դրդուած, ինչպէս ինքն էր ասում, և խոստացաւ գարշելի ուրուականին գիւղից հալածելու և հարիւր ժամուայ ճանապարհից աւելի հեռուից երկու կապուցիներ բերել տալու: Բայց նա Հարբաուի մի հարբան միայնակեացի հետ պայմանաւորուեց, պատուիրեց նրան ութ օր թագնուել այդ տանը և երբեմն երբեմն պատուհանից երևալ ու այլանդակ ձևեր անել: Այդ միջոցին մենք ամեն գիշեր ուտում ու խմում էինք միայնակեացի հետ և այնպիսի աղմուկ հանում, որ վերջը գիշերապահ ԼեդյաՅօլըը նկատեց: Նա պատուհանի առաջից ճանաչեց մեր երեքի ձայներն էլ և հետևեալ օրը տան առաջն եկաւ երդուեալ կարէրի՝ իր եղբոր և Հիւգիի հետ ժամի 12-ին, ճիշտ մեր քէֆի միջոցին: Հէնց որ նրանք դուռը բաղխեցին, միայնակեացը կայծակի արագութեամբ սողալով մի անկիւնում թագնուեց. ես կտուրը թռայ և այնտեղից տանձենու վրայ ցած թռչելով՝ փախայ: Տանուտէրը վառարանը մտաւ, բայց չկարողացաւ փակել, որովհետև մէջը փայտ կար արդէն: Այդ չորս մարդիկը ուժով դուռը կրնկահան արին և մի վայրկեանում ճրագը ձեռին ու հետները մի շուն՝ սենեակուճի էին. տանուտէրի կատուն սեղանի վրայից փախչելով՝ գնաց իր տիրոջ մօտ, վառարանը մտաւ: Սա չիմանալով թէ ի՞նչ էր այդ, ողորմելի աղաղակ բարձրացրեց: Ահա՛ տանուտէրը, կանչեցին այդ մարդիկը, լուսաւորեցին նրան և վառարանից դուրս քաշելով՝ ստիպեցին նրան իր մօտ եղած փողն իրենց տալ, որ տեսած կատակը չտարածեն:

Վերջը Արները հրամայեց Միխէլին երկու օրուայ ընթացքում պատրաստել այն բոլոր իրեղէնների ցուցակը, ու

րոնք գողացուած և այժմ դեռ գիւղացիների մօտ են գըտ-
նըւում, ապա թէ արձակեց նրան բարեկամաբար:

135.

ՈՐՈՎՀԵՏՅԵՒ ՆԱ ԲՈՒՈՐԻ ՀԱՅՐՆ Է, ԱՅԴ ՊԱՏՃԱՌՈՎ ԱՄԵ-
ՆԻՑ ԱՌԱՋ ԱՆԴՐԱՆԻԿ ՈՐԴՈՒՆ Է ՍԱՆՁԱՀԱՐՈՒՄ

Հէնց որ Միսէլը գնաց՝ եկաւ տանուտէր Մայերը՝ Ար-
ներին ներկայացնելու գիւղացիների պահանջները: Նա Ար-
ներին բարեւելոց ու ձեռք տալուց յետոյ իրեն այնպէս
փոխուած ու վախկոտ զգաց, որ Արներն իսկոյն նկատեց այդ
և ինքն իրեն ասաց, սա հազիւ թէ ութ օր է տանուտէրի
պաշտօնը վարում և այժմեանից արդէն ա՛յնպիսի տպաւորու-
թիւն է անում, կարծես թէ վաղուց ի վեր ուղում է կա-
խուել կամ երկիրն ու մարդկանցը մատնել:

Տանուտէրը շուտով սկսեց Արներին հասկացնել՝ որ
շա՛տ մեծ դժուարութիւնների կհանդիպէ արօտը բաժանե-
լիս և իր նշանակութիւն չունեցող կարծիքով աւելի լաւ
կլինէր եթէ առաջ փորձէին բաժանել մի փոքր կտոր, օրի-
նակ անտառի մէջ եղած անկիւնը և ապա տեսնել թէ ի՞նչ
կլինի վերջը:

Արներ: Այդ ի՞նչ անկիւն է:

Տանուտէր: Այդ անկիւնը գտնուում է արօտի վերին
մասում, ուր եղենիների միջով սարն ի վեր է տարածւում:

Արներ: (Ուղղակի նրա երեսին նայելով) Այն կտորը:

Տանուտէր: Այո՛, կամ մի ուրիշ տեղ, եթէ Ձերդ
ողորմածութիւնը ցանկանում է:

Արներ: (շարունակ նրա երեսին նայելով) Բայց դու
այն կտորի մասի՞ն ես խօսում:

Տանուտէր: Այո՛:

Արներ: Լրջօրէ՛ն ես ասում այդ:

Տանուտէր: Գիւղացիներից շատերն էլ նոյն կարծիքի են:

Արներ: Բայց դու է՛լ:

Տանուտէր: Այո՛:

Արներ: Դու լա՛ւ գիտես այդ անկիւնը:

Տանուտէր: Այո՛, մասամբ:

Արներ: Մի՛թէ կարող ես ասել՝ թէ լաւ չես ճանա-

չում այդ կտորը, չէ՞ որ ինքդ այդ կտորին սահմանակից հողեր ունես:

Տանուտէր: Ես ճանաչում եմ, ես գիտեմ այդ կտորը, ողորմած տէր:

Ն. Արններ: Բայց դու կարծում ես թէ ես չե՞մ ճանաչում:

Տանուտէր: Այդ մասին չէի մտածել:

Արններ: Ինչի՞ մասին:

Տանուտէր: Թէ դուք չէք ճանաչում:

Արններ: Մ'թէ կարող էիր այդ կտորը բաժանելու առաջարկել ինձ, եթէ իմանայիր, որ ես գիտեմ նրա յատկութիւնները:

Տանուտէր: Ցաւում եմ:

Արններ: Ինչի՞ վրայ ես ցաւում:

Տանուտէր: Որ ես այդ կտորն առաջարկեցի:

Արններ: Ինչո՞ւ է քեզ ցաւ պատճառում այդ:

Տանուտէր: Որովհետեւ դուք, ինչպէս երևում է, գիտէք, որ այն հողն անպէտք է:

Արններ: Իսկ դու անպէտք չե՞ս համարում:

Տանուտէր: Ես չեմ կարող գովել այդ կտորը:

Արններ: Հապա ինչո՞ւ հէնց այդ կտոր հողն առաջարկեցիր:

Տանուտէր: Գիւղի բոլոր իշխաններն այդ կարծիքի էին:

Արններ: Ինչո՞ւ:

Տանուտէր: Չգիտեմ:

Արններ: Արդեօք կարո՞ղ եմ հաւատալ ասածիդ թէ չէ, այժմ մի կողմը դնենք, բայց ինչպէս որ խոստացել են, այժմ պէտք է բաժանուի ո՛չ թէ միայն սյդ անկիւնը, այլ ամբողջ արօտը:

Տանուտէր: Չերդ ողորմածութիւնը հօ չի՞ բարկանայ՝ եթէ մի խօսք էլ ասեմ:

Արններ: Ո՛չ, ամենևին:

Տանուտէր: Այս ամառ գրեթէ անկարելի կլինի արօտը բաժանել:

Արններ: Ինչո՞ւ:

Տանուտէր: Գիւղացիներից ոչ ոք այժմ պաշար չունի, որ անասուններին գոմում կերակրէ և արօտ չտանէ:

Արններ: Մի՛թէ գիւղում խոտ չկայ:
Տանուտէր: Այո՛, ասում են, որ խոտը քիչ է, իսկ
անասունները շատ:

Արններ: Ի՛նչ կնշանակէ ճասում են, ինքդ հաստա
չգիտե՞ս:

Տանուտէր: Բոլորովին հաստա չգիտեմ, ողորմած տէր:

Արններ: Հա՛. բայց ինքդ ինչքան խոտ ունես, այդ գիտե՞ս:

Տանուտէր: Այդ գիտեմ:

Արններ: Այնքան ունի՞ս, որ կարողանաս անասուննե-
րիդ գոմում կերակրել:

Տանուտէր: Այո՛, այդ չեմ կարող ժխտել:

Արններ: Ի՛նչը ժխտել:

Տանուտէր: Ուզում եմ ասել թէ՛ «ոչ» չեմ
կարող պատասխանել:

Արններ: Դու ինքնուրոյն լեզու ունիս: Աերջին տարին
այնքան աղատ էր խոտի հունձը, որ կարելի էր կարծել թէ
բոլորն էլ քեզ պէս բաւականաչափ պէտք է ունենային:
Բայց կարճ կտրելու համար—լաւ որ կարելի է անասուն-
ները համարել և խոտն էլ չափել և այդ պէտք է կատա-
րուի—գու հէնց այսօր Այրէլի հետ միասին պէտք է հա-
մարես բոլորի անասունները և չափես բոլորի խոտի քանակու-
թիւնը. այն ժամանակ կերևայ թէ այդ առարկութեան ե-
տևն ինչ կայ թաղնուած և թէ որչափ կարիք կայ արօան
ամբողջ ամառն անբաժան պահելու:

Տանուտէրն այս բանի վրայ սաստիկ վախեցաւ, բայց
այնուամենայնիւ սկսեց քահանայի մասին խօսել և ասաց,
որ նա երբ ցանկանում է, Հուսէլին գիշերները բանտից
արձակում է:

Այդ բ՞ կողմից ես ասում, թէ ուրիշները պատուի-
րեցին քեզ ասելու, պատասխանեց Արնները, նրա շփոթու-
թիւնից նկատելով՝ որ ստիպուած է ասում այդ բանը:

Տանուտէրը չգիտէր թէ ի՛նչ պատասխանէ, բայց վեր-
ջապէս ասաց. նրանք հրամայեցին ինձ ասել այդ:

Արններ: Ո՛վքեր:

Տանուտէր: Գիւղի առաջաւորները:

Արններ: Ո՛րոնք, ի՛նչպէս է դրանց անունները:

Տանուտէր: (դողալով ու սփրթնած). Բոլորն էլ:

Արններ: Դրանց անունները:
Տանուտէր: ԿինՏօլց, Կարէրլէդէր, Մօօսբաուէր, Բաբ-
ղէր, Կինասա, Հիւգի և այլն:

Արններ: Ի՞նչ գործ ունէիր այդ պարոնների հետ:

Տանուտէր: Ինչպէս որ միշտ լինում է:

Արններ: Հէնց այդ եմ ուզում իմանալ՝ թէ ի՞նչպէս
է լինում. դու նրանց մօտ գնացի՞ր, թէ նրանք բեզ մօտ
եկան. ամեն մէկին առանձին պատահեցի՞ր, թէ բոլորն էլ
միասին էին այդ հրամանը տալու ժամանակ:

Տանուտէր: Բոլորը միատեղ էին:

Արններ: Ո՞ւր մօտ և ի՞նչ առիթով:

Տանուտէր: ԿինՏօլցի մօտ:

Արններ: Ի՞նչ առիթով:

Տանուտէր: Ճիշտը չգիտեմ, ես միայն մի վայրկեան
էի այնտեղ:

Արններ: Այն հօ կարող ես գիտենալ՝ թէ բո այնտեղ
եղած վայրկեանին ինչ էին անում նրանք:

Տանուտէր: Այդ կարող եմ ասել:

Արններ: Եւ շատ լաւ կանես:

Տանուտէր: Նրանք ուզում էին արօտի բաժանելը
յետաձգել:

Արններ: Եւ դու յանձգ առար այդ նպատակին հաս-
նելու համար ստե՞ր ասել ինձ:

Տանուտէրը կանգնած էր ողորմելի յանցաւորի նման,
աչքերը գետին գցեց և ոչ մի խօսք չպատասխանեց:

Արնները տեսնելով նրան այդ դրուժեան մէջ, խղճաց
նրան ու ասաց. Մայեր, այս առաջին անգամն է և նե-
րում եմ բեզ. միայն տե՛ս, որ երկրորդ անգամ այդպիսի
բան չանես: Մի վայրկեանից յետոյ նա շարունակեց. բայց
նրանք ինչու էին ուզում բահանալից գանգատուել, այդ
ի՞նչ կապ ունի արօտի հետ:

Տանուտէր: Իմ կարծիքով նրանք դրանով ուզում էին
Ձեզ բահանալի հետ կռուեցնել:

Արններ: Յետո՛յ:

Տանուտէր: Եւ յետոյ գուցէ յոյս ունէին, որ այդ-
պիսով արօտի բաժանումը չի գլուխ գայ:

Արններ: Հա՞. և դու այդ էլ պէտք է նիւթէիր, եթէ կարողանայիր:

Տանուտէր: Ցաւում եմ, որ այդպէս է:

Արններ: Ես բեզ ներեցի, բայց տեսնում ես, որ աւրածո գիտեմ. ուրեմն մտածիր: Այժմ երկար չեմ պահում. բեզ պատեղ. կատարի՛ր Վայբէլի հետ այսօր, ինչ որ հրամայեցի և ցուցակը վաղն ինձ ներկայացրո՛ւ:

Եւ ապա թէ արձակեց նրան:

136.

ՆՈՐ ՏԱՆՈՒՏԷՐՆ ԻՐ ԳԻՒՂԱՑԻՆԵՐԻ ՄՕՑ

Երևակայեցէ՛ք այժմ թէ ի՞նչպէս դուրս գնաց տանուտէրը, և ի՞նչպէս ընդունեցին նրան գիւղացիները: Նա պէտք է Արններին համոզէր՝ թէ անտառի մէջ եղած անկիւնը յարմար է բաժան. բաժան անելու և այժմ պատասխան է բերում. թէ Արներն ասում է, որ այդ կտորն անպէտք է բաժանելու համար: Նա պէտք է համոզէր նրան, որ իրենք շատ անասուն ու բիչ խոտ ունին և այժմ նա պատասխան է բերում՝ թէ ինքը անասունները պէտք է համարէ և խոտը չափէ: Նա պէտք է Արներին բահանայի դէմ գրգռէր, իսկ այժմ Արներն այդ ղեկուցման վրայ է գըրգռուած: Նա պէտք է նրան յիմարացնէր, բայց Արներն այնպէս է անում, որ իրենք խաբեբաներ են դուրս գալիս:

Գիւղացիներն ապշեցան և սկսեցին մէկ միմեանց հետ կուռել, մէկ տանուտէրի հետ. բայց սա նրանց նստած թողեց ու ինքը գնաց Վայբէլին որոնելու, որ նրա օգնութեամբ խոտը չափէ:

Երբ նա դուրս գնաց, Հիւգին ասաց. մենք այժմ միմեանց մօտ մնացինք նստած, ինչպէս այն անձրևային տարին: 1759 թուին հնձի ժամանակ չորս շաբաթ շարունակ անձրևում էր, այնպէս որ դաշտում եղած ցորենը համարեա՛ նորից սկսել էր ծլել: Այդ միջոցին գիւղացիները յաճախ ժողովում էին և ամեն ըրպէ միմեանց հարցնում. արդեօք երբ պէտք է դադարէ անձրևը: Արդեօք ուրիշ ոչինչ չե՞նք կարող անել:

Այդ բանը յիշեց այժմ Հիւգին:

137.

ՏԱՆՈՒՏԷՐԸ ՎԱՅՔԵԼԻ ԱՂՋԿԱՅ ՄՕՑ

Տանուտէրը Վայքէլին տանը չգտաւ. դրան մօտ նրան պատասխանող երեխան ասաց, հայրս գիշերուանից առաջ տուն չի գայ, տօնավաճառ է գնացել:

Տանուտէրը գիտէր, որ Վայքէլը սովորաբար միշտ տանն է լինում և երբէք անձամբ տօնավաճառ չէ գնում, այդ պատճառով կարծում էր, որ տանն է, բայց արդէն բանից հոտ առնելով՝ չէ ուզում երևալ:

Եւ այդ ճշմարիտ էր: Գիւղի առաջաւորները հէնց որ իմացան խոտը չափելու և անասունները համարելու լուրը, շուտ իմաց տուին Վայքէլին, որ ուրիշ տեղ գնայ և արեւի մայր մտնելուց առաջ տուն չվերադառնայ:

Տանուտէրը, որ ինքն ըստ ինքեան արդէն դժգոհ ու նեղացած էր, երեխային ասաց. ս՛ուտ ես ասում, հայրդ տանն է:

Սակայն աղջիկը, որ աներկիւղ էր և Վայքէլի ամբողջ ընտանիքի հետ միասին չէր սիրում տանուտէրին, պատասխանելու փոխարէն, սկսեց ծաղրել նրան և ասաց. այնպէս է թւում, որ պարոն տանուտէրը լաւ տրամադրութեան մէջ չէ:

Տանուտէր: Հօրդ ասա՛ որ ցած գայ, խօսելու բան ունեմ նրա հետ:

Աղջիկը: Եթէ այժմ նոյն իսկ Արնհայմի իշխանն անձամբ առաջս կանգնած լինէր, պարոն տանուտէր, այնուամենայնիւ պէտք է սպասէի մինչև որ հայրս սանդուխքից վեր բարձրանար, որ ես նրան կարողանայի ասել թէ՛ ցած արի:

Տանուտէր: Ճիշտ նա վաճառանոց գնաց:

Աղջիկը: Այո՛, ճիշտ:

Տանուտէր: Մորթազերծ պէտք է անել նրան:

Աղջիկը: Չե՛մ կարծում:

Տանուտէր: Վա՛ղ գնաց, ե՛րբ կվերադառնայ:

Աղջիկը: Նա հէնց այժմ դուրս գնաց և միայն գիշերը տուն կգայ:

Տանուտէր: Եթէ հէնց այժմ գնաց, մարդ ուղարկի՛ր ետևիցը:

Աղջիկը: Ահա՛. նա ձիով գնաց, ու ես էլ չգիտեմ՝ սարի վրայով թէ դաշտով:

Տանուտէր: Աստուած է վկայ, նա իմացել է ուղածըս, որ հէնց այժմ է գնացել:

Աղջիկը: Նա հօ կախարդապետ չէ՞:

Տանուտէր: Չգիտեմ թէ ի՞նչ անեմ:

Աղջիկը: Գուցէ հայրս կարողանար ձեզ ասել, եթէ այստեղ լինէր, բայց ամսոս որ տանը չէ:

Այսպէս վայրէջի դատրիկը ճանապարհ ձգեց նոր տանուտէրին և սանդուկքը բարձրանալիս լիաբերան ծիծաղում էր այդ նոր իշխանաւորի վրայ, որ համարեա՛ թէ լաց էր լինում իր առաջ՝ իր հօրը վառարանի ետեւը չգտնելով:

138.

ՏԱՆՈՒՏԷՐԸ ՆՈՐԻՑ ԿԻՆՀՕԼՑԻ ՍԵՆԵԱԿՆ Է ԳՆՈՒՄ ԵՒ ՅԵՏՈՅ ՓՈՂՈՑԻ ՎՐԱՅ ՊԱՅԱՀՈՒՄ ԶԻ ՆՍՏԱԾ ՎԱՅԻԷԼԻՆ

Տանուտէրը կրկին յետ գնաց կինհօլցի բնակարանն ու ասաց առաջաւորներին, որ իրենցից մէկն օգնէ իրեն, որովհետեւ վայրէջը տանը չէ:

Բայց ոչ դք չէր ցանկանում. կինհօլցն ասաց. աւելի լաւ կ'լինի, որ այդ գործը դու ութ օրից յետոյ անես. կարծես թէ շա՛տ ուրախ ենք արածովդ, որ դեռ օգնենք էլ:

Տանուտէրը պատասխանեց. դուք գիտէ՞ք թէ ի՞նչ է անում Արները, երբ նրա հրամանը ժամանակին չէ կատարում:

Սակայն նրանք ուշագրուծիւն չդարձնելով նրա ասածների վրայ, կարճ պատասխանեցին՝ թէ չեն կարող օգնել:

Նա երկար այս և այն անկիւնում խօսեց, բայց լսող չեղաւ: Վերջապէս Հիւգին նրան խորհուրդ տուեց, եթէ անպատճառ պէտք է ցուցակագրես և ոչ ոք չէ ցանկանում բեզ օգնել՝ համրելն ու չափելը թող և ամեն մէկին հարցրու թէ նա ի՞նչքան անասուն ու խոտ ունի: Այդպիսով առ սակաւն կարողացածիդ չափ արած կ'լինես:

Տանուտէր: Այն ժամանակ պէտք է ամենքդ երդուէր, որ ճիշտը կասէք:

Հասկանալի է, իհարկէ կերդուենք, ասացին գիւղացիներն ու սկսեցին ծիծաղել:

Տանուտէր: Ես հէնց այժմ կսկսեմ. ամենքէ էլ տանը կլինէ՞ք, երբ գամ:

Ուրիշ կերպ ի՞նչպէս կհամարձակուենք, պատասխանեցին մի քանիսը, որ ճիշտ հակառակն էին մտածում:

Հիւզի: Ո՛չ, ոչ ոք թող զանցառութեան չտայ այդ:

Բայց լաւ էր որ գիւղացիների մէջ բարեխօս ունեցաւ տանուտէրը, եթէ ոչ նրանցից մի քանիսը նրան տասն անգամ ամբողջ գիւղը մանածել կտային և էլի լոյս չէին ընկնի: Այսպիսով վերջապէս տանուտէրը կարողացաւ վերջացնել ցուցակագրելը:

Տուն վերադառնալու ժամանակ նա ճանապարհին պատահեց Վայրէլին, որ վաճառանոցից տուն էր գնում:

Սա ձիու վրայից ասաց. այդ ի՞նչ ահագին բանակութեամբ թղթեր ունիս կոնատակիդ:

Տանուտէր: Ես կցանկայի որ քո ձին այսօր մեխով ընկած լինէր, որ տանը մնացած լենէիր և կարևոր օգնութիւնը ցոյց տայիր ինձ:

Վայրէլ: Ի՞նչ բանում:

Տանուտէր: Ես պէտք է գիւղի անասուններն ու խոտը ցուցակագրէի:

Վայրէլ: Ինչո՞ւ համար. պատերազմ կա՞յ:

Տանուտէր: Ո՛չ, միայն արօտի առիթով:

Վայրէլ: Հա՞:

Տանուտէր: Երանի՛ր թէ այստեղ լինէիր:

Վայրէլ: Ինչո՞ւ առաւօտը չապսպրեցիր. ես ճաշին դուրս եկայ տանից:

Տանուտէր: Հէնց տասերկուսը խփելիս բեզ մօտ էի և անձամբ էի ուզում ասել բեզ:

Վայրէլ: Ա՛յ անյաջող դիպուած. ես հէնց նոր էի մեր տան անկիւնից ծռուել՝ լսեցի որ մէկը դուռը ծեծում է և աղջկանս հետ խօսում. իհարկէ դո՞ւ կլինէիր:

Տանուտէր: Գո՞ւ էլ. ինչո՞ւ չվերադարձար:

Վայրէլ: Չէի կարող երազել՝ թէ դու ես և թէ ի՞նչ ես ուզում, եթէ շուացնէիր, կլսէի ու յետ կգայի:

Բայց նա հազիւ էր կարողանում ծիծաղը զսպել և

ասաց. ձիս բրտնած է, պէտք է ախոռը տանեմ:

Ես էլ եմ բրտնած, ասաց տանուտէրը. և նրանք բա-
ժանուեցան միմեանցից:

139.

ՔԱՋ ՏՂԱՄԱՐԴ ՌԷՆՕԼԻՆ ԱՍՊԱՐԷՋ Է ԳԱԼԻՍ

Այդ միջոցին գիւղում մեծ իրարանցում էր տիրում. գիւղացիներն անտառում յարձակման ենթարկուող գնչու-
ների նման այս ու այն կողմն էին ընկել: Գիւղի առա-
ջաւորներն ուզում էին ուժով ամենքին իրենց հետ համա-
ձայնեցնել և ծեր Ռէնօլիի մօտ երեք անգամ մարդ ու-
ղարկեցին նրան խնդրելու, որ այսպիսի հանգամանքներում
նա էլ իրենց կողմն անցնի և թող չտայ, որ աւելի դժ-
բաղդու թիւններ տեղի ունենան գիւղում:

Բայց նա երկու անգամ պատասխան ուղարկեց՝ թէ
ի՛նչ կողմից որ խնդրի վրայ նայում է, այն եղբակացու-
թեան է գալիս, որ ամենից լաւը խոնարհելն ու ներողու-
թիւն խնդրելն է:

Բայց ոչ որ չէր ուզում լսել նրան: Ամենքը, նոյն իսկ
գիւղի վարժապետը, պնդում էին թէ խոնարհելու ժամա-
նակը չէ:

Երրորդ անգամ մարդ ուղարկեցին Ռէնօլիի մօտ՝ խընդ-
րելու, որ նա գոնէ, ի սէ՛ր Աստուծոյ, լռէ և վաղը մի
անդգոյշ խօսք չասէ:

Քնս կցանկանայի որ վաղը ո՛չ թէ միայն բերանս, այլ
և աչքերս ու ականջներս էլ փակէի, եթէ կարողանայիս.
այս էր նրա վերջին պատասխանը:

Բօնալի բոլոր բնակիչները վախենում էին յաջորդ օ-
րը տեղի ունենալիք դէպքից. բայց Արնեբը շտապեց իրենից
վախեցող ժողովրդի մօտ՝ երկնքի պէս ջինջ ու անկեղծ հայ-
րական սրտով:

Երբ երկար շոգերից յետոյ երկիրը ծարաւում և բո-
լոր բոյսերը պապակում են և յետոյ երկնքի վրայ փոթո-
րիկ է բարձրանում, խեղճ գիւղացին դողում է երկնքի
վրայ բարձրացող ամպերից, մոռանում է դաշտերի ծարա-
ւը և այրուող գետնի մէջ եղած բոյսերի պապակուելը և
մտածում է միմիայն կայծակի հարուածի, կարկուտի աւե-

րուսի, այրող շանթի և երկիրը ջրով ծածկող հեղեղի վրայ: Բայց երկնքում ապրողը չէ մոռանում դաշտի ծարաւը և այրուող գետնի մէջ եղող բոյսի պապակը և նրա փոթորիկը ջրում է օրհնութեամբ խեղճ մարդկանց դաշտերը, որոնք կէս գիշերին փայլատակելիս ու որոտալիս՝ դողալով դէպի այն սարերն են նայում, որոնցից տարածուում է փոթորիկը: Յետոյ խեղճն առաւօտը տեսնում է իր հնձի յոյսը կրկնապատկուած և ձեռքերը տարածում դէպի երկնային Հայրը, որի փոթորիկից նա վախենում էր:

Այս է ահա՛ իրենց տիրոջից վախեցող խեղճ մարդկանց և Արնբրի պատկերը, որ այժմ՝ դէպի Բօնալ էր շտապում՝ նրանց մխիթարելու և օգնելու:

140.

ԴԱՏԱՍՏԱՆԻ ՕՐԸ ԱՐՆԵՐԻ՝ ԲԱՀԱՆԱՅԻ ՀԵՏ ՄԻԱՄԻՆ ԱՆՑԿԱՑՐԱԾ ԱՌԱԻՕՏԵԱՆ ԺԱՄԸ

Արնբրն արդէն այնտեղ էր: Նա սովորականից աւելի լուռ ու լուրջ էր այդ օրը՝ ծանրաբեռնուած տալիք վճիռներով և անբուն անցկացրած գիշերուայ տեսիլներով: Նա այժմ զգում էր առաջիկայ օրուայ ծանրութիւնը և այն մարդու հոգսերը, որի մանուկներն իրենց հօրից ծածկում են իրենց յիմարութիւնները: Արդէն արևը ծագելու ժամանակ նա կանգնած էր քահանայի հետ միասին, նրա բակում: Արևի առաջին ճառագայթները փայլեցին այդ մարդու արտասուքի վրայ, որ մեղմ ու բնբոյշ կերպով նայեց դէպի վեր ու ասաց, ա՛ս՝ Աստուած, որ ես այսօր թեթևացած սրտով տեսնեմ քո մայր մանկը:

Աստուած ա՛ս, կրկնեց քահանան. նա էլ էր արտասուում:

Յետոյ նրանք խօսեցին այդ օրուայ գործերի և Հուլի մասին, թէ ի՞նչպէս բոլորովին փոխուել է նա այժմ և ինչպէս նրա փորձառութիւնը—իւր գործած յիմարութիւնների և յանցանքների մէջ—այնպիսի մեծ ճշմարտութիւններ է նրա գիտակցութեան մէջ մտցրել, որ քահանան հարիւր անգամ առիթ է ունեցել ապշելու:

Նրանք խօսեցին և այն պաղատու ծառերի մասին, որ դեռ 20 տարուց աւելի առաջ ծեր իշխանը տնկել էր

տուել Բօնալի ճահճային մասում և համայնքին ընծայել.
բայց դրանք բոլորը չորացել էին:

Երէկ Հումէյն ասել էր քահանային՝ թէ ծառերի շո-
րանալու պատճառը ոչ թէ գետինն էր, այլ հողագոյու-
թեան բացակայութիւնը. եթէ ծառերը բաժանուէին պողի
կարիք ունեցող մարդկանց, նրանք շուտով կաճէին ու կը-
գեղեցկանային:

Արները զարմացած էր մնացել այն ծախսերի վրայ,
որ իւրաքանչիւր տարի համայնքի ելքի մէջ հաշոււմ էր
այդ ճահճային տեղի համար և այն ձրի ծառայութեան
վրայ, որ անում է համայնքն ամեն տարի այդտեղ:

Սակայն քահանան ասաց, որ այդ բոլորը պատահում
է միայն ըստ երևոյթի, որպէս զի գիւղի առաջաւորները
տարուայ ընթացքում մի երկու օր աւելի կարողանան հա-
մայնքի հաշուով լրիւն ու կոնծելը եւ նրանք չեն ուզում
խեղճերին պողատու ծառ տալ, ինչպէս որ չեն ուզում ա-
րօտից բաժին հանել նրանց. և այդ պատճառով եթէ ծա-
ռերն այդ դրութեամբ մնան, ոչինչ չի դուրս գայ:

Այդ առիթով Արներն ասաց, որ իր հպատակները
նստակեաց կեանք վարելով շատ և անխառը գետնախնձոր
են ուտում, հէնց այդ պատճառով պէտք է պողատու ծառեր
անկելուն ամեն կերպ նպաստել:

Քահանան նոյնպէս ցաւեց, որ շատ մարդիկ ստիպուած
են միայն կաղամբով, ճակնդեղով և գետնախնձորով կերա-
կրուել:

Արներ: Աստուած է վկայ, դժուար չէ այնպէս անել,
որ ամենաչքաւոր ընտանիքն անգամ միշտ մօտ տասն և եր-
կու պողատու ծառ և մի կաթնատու այծ ունենայ:

Քահանան: Բայց և այնպէս ոչ մի տեղ այդպէս չէ:

Ա՛խ, աղքատների համար ոչ մի տեղ կարգադրու-
թիւն չեն անում, մինչև հիւանդանոց տանելը, ասաց Ար-
ները և նոյն բոլորին խոստացաւ՝ ոչ թէ միայն ճահճային
տեղի պողատու ծառերը բաժանել և աղքատներին ընծա-
յել, այլ նոյն իսկ իր բոլոր հպատակների համար իր ծա-
ռերի տնկանոցում այնքան փոքրիկ ծառեր աճեցնել, որ-
չափ կարևոր կլինի նրանցը: Նա աւելացրեց. ես ամեն մի-
ջոցի կգիմեմ, որ նրանք սիրով վերաբերուեն դէպի ծառերը

և շատ պտուղ ստանան նրանցից: Ես մտածում եմ, որ նրանց հարսանիքի կամ կնուների առիթով ծառեր ընծայեմ:

Քահանան: Նրանց կեանքի ամենանշանաւոր և ամենաուրախ րոպէների յիշատակը բարի ազդեցութիւն կունենայ թէ իրանց սրտի ու բաղնի և թէ նոյն իսկ ծառերի վրայ:

Արններ: Աստուած տա՛, որ այդպէս լինի:
Քահանան: Ի՞նչ է միտս ընկնում, իշխան. դուք պէտք է նաև առաջին անգամ ճաշակուող երեխաներին այդպիսի ծառեր ընծայեք:

Արններ: Սիրով:

Քահանան: Ծառերի վերաբերմամբ ձեր ծրագիրն անյրան գրաւեց ինձ, որ արդէն երազում եմ՝ թէ ի՞նչ կլինի իմ մահից բա՛ն տարի յետոյ:

Արններ: Ի՞նչ էք երազում:

Քահանան: Այժմ կարող եմ երևակայել թէ ի՞նչ պէս դուք ապագայում, եթէ Աստուած կամենայ, ինձնից աւելի լաւ և ուժեղ յաջորդիս հետ ձեր մարդկանցը կը բերէք այս ճահճային տեղը, որ արդէն մի սիրուն ու հիանալի պարտէզ կլինի դարձած չքաւորների համար և նրանց հետ միասին ժողովրդական հանդէս կաօնէք:

Արններ: Ի՞նչ ժողովրդական հանդէս:

Քահանան: Այդ կլինի մի չքաւորութեան հանդէս, որի ազդեցութիւնը դուք կմղմացնէք այս ծառերով:

Արններ: Դուք ինձ էլ էք երազել տալիս:

Քահանան: Երևակայեցէք թէ ի՞նչպիսի հանդէս կը լինի, երբ ձեր հպատակները՝ հրաշալի եղանակին, այս հասուն պտուղներով ծանրաբեռնուած ծառերի ստուերի տակ, այս հիանալի տեսարաններով շրջապատուած վայրում, երկնքի և երկրի դիմացը, վերանորոգեն իրենց մկրտութեան ու հաղորդութեան յիշատակը և իրենց հարսանեաց ուրախութեան օրերի հանդէսը կրկնեն:

Արններ: Մի՞թէ ես մարդ կլինեմ, եթէ այդ տօնի մասին մտածեմ միայն և չհիմնեմ:

Քահանան: Դուք կհիմնեմ:

Արններ: Այո՛, ես կհիմնեմ, և բանի որ իմ ժողովուրդը կաօնէ այդ հանդէսը, ձեզ կյիշէ:

Քահանան: Այն ժամանակ թոյլ տուէք, որ ժողո-

վուրդը ասնձ ու խնձոր վայելէ և յիշէ, որ իրենց ծնող-
ները զուրկ էին արանից: Այդպէս պատասխանեց քահանան և կրկին շարունա-
կեց. հին ժամանակներն ամեն ժողովրդական տօներին աղ-
քատին կերակուր և ըմպելիք էին տալիս և նոր ուխտի տօ-
նին նոյն ինքն թերը հաց ու գինի տուեց իւրայիններին:
Աւ հասարակ աստուածապաշտութեան ոգին է՝ ճնշուածին
առքի կանգնեցնելը և չքաւորների կերակրի համար հո-
գալը:

Ես այդ տօնն անպատճառ կհաստատեմ, կրկնեց Արները —
Մի վայրկեան նրանք լուռ ապշած էին այդ մեծ մաքի վրայ.
յետոյ Արներն ասաց, բայց ա՛խ, մեր երազածի նման գե-
ղեցիկ բան երբէ՛ք չի լինի երկրի վրայ:

Ճշմարիտ է, ասաց քահանան, բայց առաքինութեան
հասուցումն այն չէ, որ երկրի երեսից որո՞մն ոչնչացնուի:
Երկիւղած մարդու համար բաւական է, որ աշխատասէրի
սրտում բարի սերմն աճում է և նա ուրախանում է, որ
իր անկած ծառերը պտուղ կանն երբ ինքն արդէն վաղուց
մահացած կլինի:

Արներն ու քահանան շնորհակալ եղան Աստուծոց, որ
տանուտէրը յիշեցրեց նրանց Բօնալի ճահճային տեղի ծա-
ռերը և մի րոպէ կրկին այդ դժբաղդ մարդու մասին էին
խօսում:

141.

ԱՐՆԵՐՆ ՍԿՍՈՒՄ Է ԻՐ ԱՅՍՈՐՈՒԱՅ ԳՈՐԾԸ

Այդպէս անցաւ ահա՛ այսօր Բօնալի իշխանի ու քա-
հանայի առաջին ժամն արևի ծագելուց յետոյ:

Մօտ ժամի ութին եկաւ տանուտէր Մայերը և ներ-
կայացրեց գիւղի անասունների ու խոտի բանակութեան ցու-
ցակը: Նա ներողութիւն խնդրեց, որ ցուցակը կարողացաւ
կազմել միայն գիւղացիներին երգուեցնելով, որովհետև Այ-
բէլը, որ պէտք է օգնէր իրեն համարելու և չափելու ժա-
մանակ, տօնավաճառ էր գնացել:

Արները Ինչո՞ւ նրա փոխարէն մի ուրիշ իշխան մարդ
չվերցրիր հետո:

Տանուտէր: Ոչ որ չկամեցաւ գալ:

Արններ: Դու ասացի՞ր, որ իմ պատուէրով նրանցից
մէկը պէտք է օգնէ բեզ:

Տանուտէր: Ի հարկէ, ասացի:

Արններ: Եւ պնուածմնայնիւ ոչ ոք չկամեցաւ գա՞լ:

Տանուտէր: Ո՛չ, իմ ասածները զուր անցան, ոչ ոք
ուշադրութիւն չդարձրեց:

Արններ: Ուրեմն հետո՞ ոչ ոք չկար և այդ ցուցակն
էլ ոչ ոք չստորագրե՞ց:

Տանուտէր: Ո՛չ:

Արններ: Ուրեմն ցուցակը կրկին վերցրու և որքան կա
րող եւ արագ գնա՞ իւրաքանչիւրի առաջ կարդալ իր ասածը
երկու իշխանների ներկայութեամբ և ցուցակը յետ բեր
այդ երկու վկաների ստորագրութեամբ: Բայց շտապի՞ր, որ
այդ գործը վերջացնես համայնքի ժողովն սկսուելուց առաջ:

Տանուտէր: Ես նրանց լուրրին կգանեմ Կինհօլցի մօտ
ժողովուած:

Արններ: Հա՛, ի՞նչ են շինուած նրանք պնտեղ միասին:

Տանուտէր: Առանձին ոչինչ: Նրանց սովորութիւնն է,
որ համայնքի ժողովից առաջ հաւաքուած են միասեղ:

Արններ: Ո՞վքեր:

Տանուտէր: Ամենքը, որոնք կարծուած են թէ իրենք
էլ մի բան են:

Արններ: Լաւ է, որ այդ իմացայ, մի ուրիշ անգամ
գուցէ կտեղեկանամ թէ ի՞նչ են շինուած նրանք միասին:

142.

ԻՐԵՆՑ ՏԻՐՈՋ ՄԱՍԻՆ ԽՕՍՈՂ ԳԻՒՂԱՑԻՆԵՐԸ

Տանուտէրը գնաց Կինհօլցի տուն և միասեղ հաւա-
քուած բոլոր գիւղացիներին ասաց, որ նրանք նորից պէտք
է ասեն իրենց անասունների թիւը և խոտի չափը:

Ինչո՞ւ համար, ասացին այդ անպիտանները և պստե-
ղից ու պնտեղից մի բանիսներն այնպէս էին նայուած նը-
րան, որ կարծես թէ ուզուած էին նրան կլանել:

Եթէ չեմ սխալուած, նա կարծուած է թէ ես կամ
դուք սխալուել ենք, պատասխանեց տանուտէրը:

Նա միշտ մի բան է կարծուած, ասաց մէկը:

նա կարող է անձամբ գալ և թուել ու չափեր, ասաց մուսը:

Ո՛չ, պէտք է նրա բլի վրայ կշռենք, նա այնպիսի բլի ռանի, որ մեր գիւղի ամենակար կշռալծակից էլ երկար է, ասաց ԱինՏօյցի տղան:

Լո՛ւր, ասաց նրա հայրը:

Ո՛չ, լուրջ եմ ասում, ասաց Մայէրը, ես պէտք է ամենքին իր ասածը կարդամ և յետոյ առաջաւորներից երկուսը պէտք է ստորագրեն, թէ բոլորը հաստատում են այդ:

Հիւզի: Այդ բանի մէջ սատանայ կայ, այն ժամանակ էլ ոչ ոք կարող չէ ասել՝ թէ դու սխալ ես գրել կամ թէ չես հասկացել:

Տանուտէր, Ձե՛մ կարող օգնել:

Բայց ոչ ոք չէր ցանկանում նորից ասել կամ ստորագրել, մինչև որ վերջապէս ամնուտէրը ցուցակը կրկին կունտակը դրեց, թանաքամանը գրպանը ու ասաց. ինձ համար միւսնոյն է. եթէ չէք կամենում, կերթամ նորից այդ կասեմ Արնեբին և նա թող անէ իր ուշածը:

Այդ ժամանակ նրանք մտածեցին, որ աւելի լաւ կլինի եթէ իրենց ասածը նորից հաստատեն և օրինաւոր կերպով ստորագրել առին: Եւ թէև սաստիկ երկիւղի մէջ էին, բայց այնուամենայնիւ նրանցից մի քանիսը յիմարութիւններ էին անում. Մօսբաուէրը բարձրաձայն ասաց, եթէ իմ կողմ ծնի այսօր, այն ժամանակ ես մի անասուն աւելի կունենամ, այդ կարող ես բերանացի հաղորդել իշխանին:

Վայրէ՛լը, որ իբրև վկայ ստորագրեց և ինչքան որ ատում էր ամնուտէրին, այնուամենայնիւ նենգ բաների մէջ չէր խառնուում երբէք, ասաց նրանց. լաւ կլինի որ գօրծը գրելով վերջանայ, որովհետև եթէ բանը խօսելուն հասնի՝ ծուռը կերթայ:

Երբ ամնուտէրը գնաց, Հիւզին աղաղակեց նրա ետևից. այնպէս արա՛, որ Արնեբը գոհ մնայ:

Նրա հետ էլ այնքան կարող եմ անել, որքան ձեզ հետ, ասաց Մայէրը:

Այն ժամանակ արածդ շա՛ւ քիչ կլինի, մտածեց Հիւզին և թողեց որ գնայ:

ԱՐՆԵՐԸ ԴՌՈՒԹԸ ՓԱԿՈՒՄ Է

Այժմ ես հաստատ գիտեմ նրանց ասածը, բայց պէտք է իմանամ՝ թէ ո՞րքան ճշմարիտ է այդ Այսպէս ասաց Արները և երբ տանուտէրը յետ բերեց հաստատուած ցուցակը, հրամայեց նրան որ իսկոյն Վայրէջի հետ անէ-տուն ման գայ և մի նոր ցուցակ կազմէ ո՛չ թէ նրանց ասելով, այլ անասունները հոգացողութեամբ համբելով և խոտը չափելով: Յետոյ նա հրամայեց զանգահարել, նշան տալու համար, որ համայնքը ժողովուրի և ասաց. ես ուզում եմ, որ տան տէրերը տանը չլինեն՝ անասունները համարելու և խոտը չափելու ժամանակ, և եթէ մի կին կամ ծառայ չթողնէ այդ անելու՝ ասելով թէ տանտէրը տանը չէ, բըռնել տուր, ուղարկիր այստեղ, ով կուզէ լինի, և ձեր գործը շարունակեցէք առանց ժամանակ կորցնելու: Ձեզ հետ ուղարկում եմ այստեղի Միսէլին և Արնհայտի հաւ ծախողին՝ ձեզ օգնելու համար:

Տանուտէր: Աւելի լաւ կլինէր և աւելի նշանակութիւն կունենար, եթէ գիւղի իշխաններից մէկը մեզ հետ լինէր:

Արներ: Ես ցանկանում եմ, որ այժմ միայն դրանցը վերցնէք հեռներդ:

Տանուտէր: Այս շաբաթ ամեն տեսակ խօսակցութիւններ են եղել հաւ ծախողի մասին և նրա ամեն մի տուն մտնելը դժկամակութիւն կպատճառի:

Արներ: Հէնց այդ պատճառով պէտք է նա գնայ և եթէ մէկը չկամենայ նրան ներս թողնել, արդէն գիտէք թէ ի՞նչ պէտք է անէք:

Յետոյ Արները համայնքի ժողովատեղին գնալու բուր ձանապարհների վրայ պահպաններ կարգեց և հրամայեց նրանց՝ որ ոչ մի պատրուակով ոչ որին չթողնեն այդ տեղից հեռանալու, մինչև որ համայնքի ժողովը փակուի:

ՆՐԱՆԻ ԱՅԺՄ ՇՈՒՑ ԿԴԱԴԱՐԵՆ ԻՐԵՆՑ ԻՇԽԱՆԻ ՈՒ ԻՐԵՆՑ ՓՐԿՈՒԹԵԱՆ ԴԷՄ ԽՈՐՀՐԴԱԿՑԵԼ

Համայնքը ժողովուրդը լորենու մօտ, բայց Բօնալ գիւղի հիմնուելու օրից սկսած երբէք գիւղացիներն այսօրուայ պէս զարմանալի չեն երևացել: Շատերը, որ սովորաբար գլուխները միշտ բարձր էին պահում և ոտքերը զինուորների նման դարսոււմ, այժմ գլուխները ցած էին գցել, ոտքերը թուլացրել և պառաւ կանանց նման էին քայլում: Միմեանց ատող մարդիկն այժմ միմեանց կողքի էին կանգնել և միմեանց սկանջում փսփսում էին. այն մարդիկը, որոնց բերաններն առաւօտից մինչև երեկոյ երբէք չէին փակուում, այժմ մի խօսք էլ չէին արտասանում. այն մարդիկը, որ համայնքի ժողովին ներկայանալիս կիրակնօրեայ զգեստ էին հագնում, այժմ ամենօրեայ հագուստով էին եկել: Մեծամասնութիւնն այնպէս էր նստած, որ կարծես չգիտէին թէ միմեանց հետ ինչ խօսեն. ոմանք էլ հարցնում էին իրենց դրացուն երկու երեք անգամ, այս երեկոյ անձրև չի՞ գայ: Հիւզին ու մի բանի առջաւորներն այս նկատելով և կարծելով թէ լաւ չէ, որ բոլորն էլ ախուր երևան, սկսեցին խօսել և այնպէս ձևացնել՝ իբրև թէ չեն վախենում: Ոմանք զուարճանալով խօսում էին խոտ չափող իշխանի և կով համարող տիրոջ մասին. միւսներն էլ երդւում էին, որ նա ոչինչ չի կարող անել դրանով: Որովհետև, ասում էին նրանք, եթէ համայնքը միաձայն և լուրջ գործէ՝ կարող է ամեն բոլոր գիմարեւ այդպիսի իշխանին:

Հարակնոպֆն ամենից շատ էր բերանը բացանում և հաստատում՝ թէ սատանայի համար չպէտք է այդպէս հեշտութեամբ յայտնակել տանք մեր մարմնաւոր և հոգևոր ազատութիւնը. յետոյ աւելացրեց. այժմ մենք անկողնակալ վկաներ ունենք, որ նրա հաւ ծախողն ինքն է խոստովանել՝ թէ սատանայի հետ ընկերակցել է. և աշխարհում ո՞վ կարող է ստիպել մեզ կատարելու մեր խոստովանքը՝ որ առեւ են մեզինց այնպիսի սատանայական արուեստով:

Խաբեբաները հաւանութիւն տուին նրա ասածին բարձրաձայն և հաստատում էին, որ այդտեղից պէտք է սկսեն

և որքան կարելի է պնդեն իրենց ասածի վրայ: Եղայ՝ յամ

Միմայն երեսասարդ Ռէնօլդը հակառակեց ու ասաց. իմ կարծիքով Արնենը որտեղից որ կամենայ, այնտեղից կոկոսե և ոչ մի անաչառ վկայ չունիք դուք, որովհետև երբ դանգատուողը համայնքն է, նրա անդամները չեն կարող անկողմնակալ վկայութիւն տալ:

Ապասենք, տեսնենք ի՞նչ կլինի, ասաց Ռազէրբաուէրը և այդ լսողներէց շատերն ասացին, այսօրուայ բոլոր խօսածներէց ամենից խելացին այդ է:

145.

ԾԵՐ ՏՐԻԻՄՊԻՆ ՎԱՅ ՀԱՄԲԱՒ Է ԲԵՐՈՒՄ

Նրանց խօսակցութեան միջոցին եկաւ ծեր Յրիւմպին, որ իր կեանքում միշտ և ամեն տեղ ուշանում էր, և համբաւ բերեց թէ տանուտէրն ու վայրէջը Միլեէլի ու հաւ ծախողի հետ դէպի գիւղն են գնում և հետները թողնում, գրիչ ու թանաք ունեն:

Այս լուրը փայլակի պէս տարածուեցաւ լորենու տակի բոլոր նստարանների վրայ: Բոլոր նստարաններից ու անկիւններից ձայն տուին Յրիւմպին. ի՞նչ ես ասում, ի՞նչ կայ, ի՞նչ ես ասում. թէ առաջաւորներն ու թէ հասարակ գեղջուկները վիզները Յրիւմպիի կողմն էին երկաթացնում և Յրիւմպին իր կեանքում երբէք այժման տուած պատասխանների տամներող մասն էլ չէր տուել: Ուրիշ բան չի լինի, ասացին գիւղացիները միաբերան, երևի այդ անիծուած կով համբելն ու խոտ չափելն է կրկին սկսուած, և այժմ հասկացան թէ իրենց տուած տեղեկութիւնների նորից հաստատելն ի՞նչ հետևանք կարող է ունենալ: Ամենքն էլ այնպէս շփոթուեցին, որ կարող եմ ասել՝ թէ այդ բոլոր հաստատուած գիւղացիներից ոչ մէկն իր բնական գոյնը չունէր, բացի հաստամորթ Ռաբզէրից ու աղբագոյն Աինաստից. բայց դրանց ունեւորից էլ երևում էր, որ այնպէս կգունատուէին, եթէ երբևիցէ կարողանային գունատուել:

Մի քանի վայրկեանից յետոյ մէկի միտն ընկաւ թէ մոռացել է իր թաշկինակը, երկրորդը՝ ծխախոտը, երրորդը՝ թէ իր կնոջ հետ անհրաժեշտ բան ունի խօսելու, չորրորդը՝ թէ մի բան է դուրսն ընկած թողել, որ կարող են գողա-

նալ. կարճ նրանցից մի մեծ խմբի միտն ընկաւ, թէ տուն պէտք է գնալ. Շպեկմովիսը մինչև անգամ այնպես արեց տուն գնալու համար, որ բթից արիւն եկաւ:

Բայց լորենու փողոցում կանգնած պահապանը բոլորին յետ ուղարկեց և խորհուրդ տուեց նրանց՝ ծխախոտն ու թաշկինակն իրենց դրացիներից փոխ ուղել և այս անգամ բթի արիւնը՝ լորենու ջրհորի ջրով լուանալ ու կարել տալ: Կարճ նրանք պէտք է յետ դառնային և իրենց նստարանների վրայ սպասէին՝ թէ ինչ բարի կամ չար բան կանեն տանուտէրը, Վայրէջը, հաւ ծախողն ու Միխէլը տանը, իրենց կանանց մօտ:

146.

ԳՈՐԾՆ ՍԿՍՈՒԾ Է ԼՈՒՐՔ ԿԵՐԳԱՐԱՆՔ ՍՅԱՆԱԼ

Գիւղացիների երկիւղը մի վայրկեան աւելի սաստկացաւ, երբ լորենու տակ հրաման ստացուեց՝ թէ գիւղի առաջաւորներն ու մեծամեծները, ընդամենը 17 հոգի, խկոյն պէտք է քահանայի տուն գնան, Արնների մօտ:

Ի՞նչ պէտք է անէ նա միայն մեզ հետ, ասում էին այդ մարդիկը:

Ես ի՞նչ գիտեմ, պատասխանեց պահապանը:

Բայց նրանք դուրս գնացին թէ չէ, գիւղացիներն սկսեցին ուրախանալ, որ Արնները միայն նրանց է կանչում:

Հանսն ու Հայնին մրթմրթում էին նստարանների վրայ. եթէ նա խաբեբաներ է որոնում, այդ դէպքում հենց նրանք են իր ձեռքում:

Լայլին ասում էր. լաւ կլինէր՝ եթէ նա իր գործը միայն դրանց հետ տեսներ ու մեզ արձակէր:

Մէկը, որին նրանք Հալլեօրի էին կանչում, ասաց. նրանց մէջ մի քանիսը կան, որ Աստուած է վկայ, տանուտէրից էլ վառ են:

Շափկէջատուէր անուով մէկն ասում էր իր դրացու աւանջում. արօտի մի կոտորը վառ չէր լինի մեզ համար:

Նրա դրացին պատասխանեց. եթէ այդ տասնեօթը չլինէին, Ձեռքածների մէջ հաղիւ թէ վեցը լինեն, որոնք նոյնը չցանկանան:

Խեղճ Միխէն ասում էր բարձրաձայն. թող մենք մեր սեպհական հացի պատառի դէմ չլինենք:

Մի քանիսը պատասխանեցին նրան. եթէ նրանք կրկին յետ չեկան, մեզնից ոչ մէկը քեզ չի հակառակի:

Բայց Հարակնոպֆներն ու գնացող տասնուեօթն անձանց պատուոյ ազգակիցներն այնպէս վեղեցրը ձկեցին այդպէս խօսողների դէմ և այնպէս աչքերը չռեցին, որ նրանցից շատերի խօսքերը կոկորդներումը մացին:

Այդ միջոցին Արները բարեկամաբար աշխատում էր քահանայի տանն այն տասն և եօթն անձանց կամաւոր խօստովանութեան սփայել, բայց իզուր: Ընդհակառակը նրանք կարծում էին թէ նա այժմ վախենում է, որ այդ ոճով է խօսում—դէս ու դէն ընկնելով—և կալբերլէդերը մինչև անգամ համարեաւ ընդհատեց նրան, երբ դեռ խօսքը չէր վերջացրել ու ասաց. մենք չգիտենք և չենք էլ ըմբռնում թէ ի՞նչ էք ասում և ինչի՞ մասին էք գանգատում:

Արներ: Ո՛վքեր են այն «մենքը», որոնց անունով դու խօսում ես:

Կալբերլէդէր: Հա՛, ոչ ոք. ես միայն իմ կողմից եմ խօսում:

Արներ: Ո՛չ, կալբերլէդէր, դուք դաշնակցութիւն էք կազմել և այդ պատճառով դուքս թռաւ բերանիցդ «մենք» խօսքը: Բայդ այդ մասին խօսք չեմ ուղղում ծախսել: Դուք ուղղում էք իմ գանգատն իմանալ. ահա՛ այդ. դուք համարնքի կալուածքը յափշտակում էք, համայնքի հաշիւները կեղծում և ձեր ձեռքն եղած ամեն բանի հետ վարւում էք սուա երդուող և անհաւատարիմ տղաների նման:

Այժմ արդէն իրենց սպասածից աւելի պարզ ու խիստ էր նրանք միմեանց նայեցին և մի րոպէ ոչ ոք չխօսեց: Բայց շուտով Մօսբառուէրն ասաց. ես իմ կողմից արդարութիւն և դատաստան եմ ցանկանում այդ գանգատի դէմ ամեն ձեւականութեամբ ու կարգով: Միւս գիւղացիներն էլ թէև վախեցան, բայց մտաբերան նոյնը ցանկացան. և Արներին մերժեցին Հումելի ասածներին մի խօսքով անգամ պատասխանելու: Արները մի անգամ էլ զգուշացրեց նրանց, բայց նրանք հաստատուն մացին իրենց ասածին և ասում էին թէ անմոլ են:

Բաւական է, ասաց Արները, այս վայրկեանից դուք բանտարկուած կհամարուէք և միմիայն պահապանի ուղեկցութեամբ ձեր տեղերը կըռնէք համայնքի ժողովում: ձեզ արգելուում է այստեղ որևէ մէկի հետ խօսել: Հեռացէ՛ք: Պահապանը հետևեց նրանց և նրանց վրայ հսկելու խիստ հրամաններ արուեց:

Բայց Ռէնօլբը, որ նրանց հետ էր, ամենից ետևը և դռնից դուրս էր կանգնել: Միւսներն աշխատում էին նրա առաջը կտրել, որ նա Արներին շատ մօտ չլինի կանգնած և որովհետև քահանայի սենեակը փոքր էր, ետևն եղողները չկարողացան ներս մանել և Ռէնօլբը, որ եթէ կարողանար հարկւր վերստ նրանցից հեռու կփախէր, կանգնած էր դռնից հեռու մի անկիւնում և դեռ պատահածից ոչինչ տեղեկութիւն չուներ, երբ լսեց Արների բարձր ձայնը, որ պատուիրում էր պահապանին՝ ուղեկցել նրանց:

Երբ այդ մարդիկը պահապանի ուղեկցութեամբ համայնքի ժողովք եկան, յանկարծ խորին լուռութիւն տիրեց: Նրանց բարեկամներն ու ազգականները շղթապատեցին նրանց և հարցնում էին թէ ի՞նչ է պատահել, բայց նրանց՝ լսօսելու իրաւունք չուներք պատասխանը վախեցրեց իրենց համախոհներին: Հարակնրոպքը ինչպէս որ անցեալ անգամ քահանայի դէմ, այս անգամ էլ հաւ ծախողի դէմ մի ձառ էր բերան արել, իր դրացուն ասաց. այսօր բարոզելը լաւ չէ:

147.

ԻՇԽԱՆԱԻՈՐՆԵՐԻ ԱՆՀԱՍԿԱՑՈՂՈՒԹԻՒՆԸ ԺՈՂՈՎՐԴԻ ՄԷՋ ՍՑԵՐ Է ՍԵՐՄԱՆՈՒՄ, ԻՍԿ ՆՐԱՆՑ ԻՄԱՍՏՈՒԹԻՒՆԸ՝ ՄԱՐԴԱՆՑ ԺՇՄԱՐՑԱՍԻՐ Է ԴԱՐՉՆՈՒՄ

Այդ միջոցին Արներն եկաւ ու հրամայեց բոլորին նըստել՝ բացի այն 17 ամբաստանեալներից, որոնք կանգնած պէտք է մնային: Յետոյ նա պատմեց, որ այդ 17 մարդիկը, որոնց մասին եղած նշանաւոր գանգատներն ինքը բարեկամբար յայտնել է նրանց քահանայի ատան՝ իրենց անմեղ հրատարակեցին և մինչև անգամ մորժեցին Հուսէլի ներկայութեամբ պատասխանել, այդ պատճառով այժմ ինքն ամբողջ համայնքի առաջ կամենում է ցոյց տալ թէ ի՞նչ

մարդիկ են դրանք: Այս նա պատուիրեց գրագրին՝ դղեակի գողացուած իրերի ցուցակից կարգալ այն իրեղէնների անունները, որոնք գանուում են այդ 17 մարդկանց մօտ:

Գրագիրը կարգաց հետևեալը.

Ռիխտեր Կինաստի սայլի գլխի երկու անիւները դղեակից են գողացուած:

Կալքերլէդերի սայլակը դղեակից է գողացուած:

Կիրխմայեր 400ըլախերի նորաբոյս ծառերը դղեակի սայլուցն են:

Մօօսբաուէրի տակառը դղեակիցն է. նա տասն և հինգ մար է տանում և № 44 է կրում:

Շպէկմօլեր մի արօր ունի, որի բոլոր երեսներն այժմ էլ դղեակի գողացն են կրում:

Ռաբերի բակուաճ եղող մեծ գեղձը (բեռնաձիգ) դղեակիցն է:

Հիւգիի կովի մեծ զանգակը դղեակիցն է:

Գրագիրն այսպէս համարեա թէ մի քառորդ ժամ կարողում էր դղեակից գողացուած և այդ մարդոց տանն եղած իրերի անունները: Այդ տասն և եօթը մարդկանցից մի միայն Ռէնուլդի անունը գուրս չեկաւ. միւսները շատ վախեցան այդ բանի վրայ, որովհետև դրանք հաստատ բաներ էին և եթէ իրենք ուրանային, Արները կարող էր այդ իրերն իրենց տանից բերել տալ:

Արները Գլխաւոր բանն այս չէ, բայց հարց է թէ արդեօք դուք կուրանա՞ք այս:

Մի վայրկեան ոչ ոք չպատասխանեց. յետոյ տեղից վեր կացաւ Կինհօլցն ու ասաց. Ողորմած տէր, մի քառորդ ժամ մտածելու ժամանակ կարո՞ղ ենք խնդրել:

Կինհօլցին բանս տարէք, պատասխանեց Արները, որ և իսկոյն կատարուեց:

Միւսները չգիտէին թէ ի՞նչ անեն և ինչ ասեն. բայց բոլոր նստարանների վրայ սկսեցին բարձր ձայնով խօսել. բարեկաճներն ու աղքատները կանչում էին նրանց. Ի սէ՛ր Աստուծոյ, տեսնում էք որ նա ամեն բան գիտէ, ինչո՞ւ չէք խոստովանում. բայց նրանք համրացածների նման կանգնել էին և ձայն չէին հանում:

Բայց ծեր Ռէնուլդը, որ ամենից ետևը կանգնօղնելից

մէկն էր, առաջ եկաւ, ընկաւ Արնների ոտքերն ու ասաց. ողորմած աէր, ես մի ծեր, ալևոր մարդ եմ. Աստուծոյ յայտնի է, որ մեր մէջ տիրող վատութեանն ու շարութեանն մասնակից չեմ եղել և հաւանութիւն չեմ տուել, բայց ինչ որ դուք գանգատուում էք, ճիշտ է:

Արները պատասխանեց. ծեր ալևոր, ցաւում եմ քեզ վրայ. ես գիտեմ որ բոլորի մէջ դու ամենից քիչ յանցանքն ունիս և ցաւում եմ, որ ընկերացել ես այնպիսի մարդկանց հետ, որ բազմաթիւ յանցանքներ ունին և մինչև անգամ քեզ պէս չեն ուզում խոստովանել:

Ռէնուլդ: Ողորմած աէր, մեր հանգամանքների մէջ եղողը սիրան ու միաբը կորցնում է:

Արներ: Ի՞նչ հանգամանքներ:

Ռէնուլդ: Յանցանքը ճանաչելու, բայց երկիւղից խոստովանել չհամարձակուելու հանգամանքը:

Արները բարկացած դիմեց միւսներին և ասաց. ինչո՞ւ չէք ընդդիմախօսում այս մարդուն, որ ձեր դէմ է վկայում:

Այդ մարդիկն այլ ևս ուրանալու արիութիւն չունեցան, ընկան նրա ոտքերն ու գթութիւն էին խնդրում:

Երբ Արները նրանց այդ դրութեան մէջ տեսաւ, մի արցունք ցայտեց նրա աչքից: Բոլորի առաջ սրբեց նա իր արցունքն ու ասաց. սրանից աւելի տխուր տեսարան չեմ կարող երևակայել. յետոյ նա կրկին դէպի Ռէնուլդը դարձաւ ու ասաց. ծեր մարդ, վեր կաց, ես բոլոր դէմ ոչինչ գանգատ չունիմ, բացի նրանից, որ դու այս բոլորը տեսնելով լռել ես: Բայց ինչո՞ւ էիր այդպէս անում և քսան ու աւելի տարիներից հետէ քեզ յայտնի յանցանքները իշխանութիւնից թագցնում:

Ռէնուլդը սկզբում չէր ուզում ուղղակի պատասխանել ու ասաց. ողորմած աէր, եթէ ասեմ՝ կնեղանաք կամ կկարծէք թէ՛ այժմ երբ արդէն ստիպուել եմ խոստովանել, ներողութիւն հայցելու համար կլինեն ասածներս:

Արները հրամայեց նրան խօսել, բայց Ռէնուլդը խընդրեց նրան մի երկու քայլ մի կողմը քաշուել ու ասաց. ձեր պապի իշխանութեան ժամանակ անկարելի էր այս բոլոր անկարգութիւնների մասին գանգատուել, հակառակ դէպքում մարդ իր ձեռքով իրեն կանաղդացներ:

Արնեըը հարցրեց թէ՛ կարո՞ղ է նա մի օրինակ մասնացոյց անել. և Ռէնօլթը սուեց Բամբերգերի և պլոց անունները:

Այդ միջոցին վերադարձան խոտը չափեւու և անասունները համարելու գնացողները:

Արնեըը տեսաւ նրանց ու ասաց Ռէնօլթին. ես այսօր դեռ շատ կեսօսեմ քեզ հետ: Յետոյ վերցրեց նրանց նոր կազմած ցուցակը և կամաց ու ճշտութեամբ սկսեց համեմատել գիւղացիների ցուցմունքով կազմուած հին ցուցակի հետ: Համեմատելուց յետոյ ասաց. ձեզնից քսան և երկու հոգի իրենց խոտի չափն ու անասունների թիւը ճիշտ չեն ասել. իսկ ձեր տանն ու վեցից, որ աւելի ծանր յանցանքների համար չըբել էք պոժմ պոստեղ, ոչ մէկը չկայ, որ ճիշտն ասած լինի: Այս ասելով նա հառաչեց:

Այդ քսան և երկու մարդիկը հետևեալներն են. երգուեալ դատաւոր Կալբերլեդերը, նրա եղբայր Քրիստօֆ Կալբերլեդերը, Յակոբ Կալբերլեդերը, հաստը, երդուեալ Կինաստը, մագործ Եօգլի Կինաստը, երդուեալ Կինհօլցը, Քրիստօֆ Մօօսըսուէրը, Հանս Մօօսըսուէրը, Ռարզէր-Բուէրը, նրա եղբայր Ռարզէր Կուրին, երդուեալ Շպէկմօլխը, նրա քեռայր Ջէննըսուէրը, երդուեալ Մայէրը, Ֆրէսմօլխ կօչուած Մայէրը, երդուեալ Հիւգին, լուսարարը, վարժապետը, Ռիւսիբաուէրը, Լինդէնբերգերը, անասնավաճառ Շաօֆղէլը, Շտիրինբաուէր Հայնրիխը, Բօսրիւսչէրի նեօպպին:

148.

ԼՈՒՍԱՐԱՐՆ ՈՒ ՎԱՐԺԱՊԵՏԸ—ՀՈԳՈՒՈՎ ՈՒ ԾԱՐՄՆՈՎ ԵՐԿՈՒ ԵՂԲԱՅՐՆԵՐ

Լուսարարն ու վարժապետը երկրագործ չէին, այլ մէկը դերձակ էր, միւսը կօչակար. բայց նրանք միւս գիւղացիներին նայելով մեծամտութեամբ իրենց քիչ խոտով ու անասունով էլ խաբեբայութիւն արին: Բայց նրանց բանը շատ վատ գնաց: Կատակի համար թէ տարաբաղաբար երկուսն էլ տանն էին, երբ ասնուտերն իր մարդկանցով գիւղն եկաւ, մէկը դպրոցի առիթով, միւսը զանգահարելու: Նրանք եղբայրներ էին և միատեղ էին բնակուում:

Լուսարարը դեռ պահած ունէր Տանգասարանում Տնձած
խոտը և որովհետև անասուն չունէր՝ իւրաքանչիւր տարի իր
խոտը ծախում էր կանխիկ փողով: Նա սաստիկ վախեցաւ,
երբ տանուաէրը գիւղն եկաւ, որովհետև ընդամենը մէկ
գրկաչափ խոտ էր գրել տուել, իսկ իր ունեցածը երկուսից
էլ աւելի էր: Ըստպով խոտի մէկ անկիւնը ծածկեց իր ու-
նեցած յարգով և երբ չափողները նրա դուռն եկան, գրչ-
խարիչը կոնաստակին դնելով ու ձեռքերը արօրելով ասաց.
դուք գիտէք, պարոններ, որ ես ուրիշ խոտ չեմ Տնձում,
բացի եկեղեցու քահուճ եղածից. այդ էլ մօտ մի գրկաչափ
է անում, ինչպէս որ գրել եմ տուել:

Շաւ ծախողը Դու առճասարակ իւրաքանչիւր տարի
երկու գրկաչափ ես ծախում:

Լուսարարը երկու գրկաչափ չի վնի:

Վայրէջէ՛ր Պէտք է չափենք:

Լուսարարը Աչքով էլ կարող էք տեսնել, որ այս խո-
տը երկու գրկաչափ չէ:

Միխէլէ՛ր Իսկ այս յարդի տակ խոտ չկայ:

Լուսարարը Ո՛չ մի ծիղ, կարող էք ապահով վնել,
մէ մի ծիղ այդ արդէն երկու տարուայ յարդ է:

Ձե՛մ կարող չաւատալ, ասաց Միխէլը և մի փոքր
յարդը յետ քաշելով տեսաւ որ տակը խոտ է:
Եկեղեցուն ծառայողի արարք չէ այս, ասաց Միխէլը.
Վայրէջը չափեց խոտն ու ասաց, երկու գրկաչափից շատ
աւելի է:

Լուսարարը վախեցաւ և կծու կերպով պատասխանեց.
Եթէ դուք այդպէս ամեն մէկի մօտ բոլոր անկիւնները փրնա-
ռէք, շատե՛րը մէկ գրկաչափ սխալուած կլինին:

Տանուտէրը Եթէ դու քսան գրկաչափ ունենայիր, նը-
շանակութիւն չէր ունենայ՝ եթէ մէկ գրկաչափ սխալուէիր:
Լուսարարը Ինդրե՛մ շնորհ արէք և այդ աւելորդ
գրկաչափի մասին ոչինչ մի գրէք:

Միխէլէ՛ր Անկարելի է, ամեն մէկի հետ մի տեսակ պէտք
է վարուել:

Լուսարարը Մի՛ հպարտանայ Միխէլէ՛ր, չէ՞ որ դու մի
պատուաւոր մարդ ես:

Միխէլէ՛ր Դու էլ լուսարար ես:

Տանուտէր: Անկարելի է, մենք պէտք է գրենք:

Յետոյ գնացին վարժապետի մօտ. սա մէկ կողմի փոխարէն երկուսն էր սսել և այդ պատճառով չէր ուզում տանուտէրին ու իր մարդկանցը թողնել, որ գոմը մանեն. բայց երբ վերջը ստիպուեց, ասաց. Այո՛, ես այժմ միայն մի կով ունեմ, միւսն երէկ ուղարկեցի:

Հաւ ծախող: Ես դեռ ութ օրից առաջ տեսայ, որ կովդ տանում էին:

Վարժապետ: Դու ուրիշի կողմն երևի իմ կովի տեղն ես ընդունել: Դեռ չորս օր էլ չկայ, որ իմ կողմն ուղարկուել է և այդ ես էլ չգիտէի, որովհետև գոմը կնջա ձեռքին է:

Տանուտէր: Այդ միւսնոյն է. մենք այժմ միայն մի կով կգրենք, որովհետև մէկն ունես:

Վարժապետ: Բայց մի երկու օր է միայն, որ միւսն ուղարկել ենք:

Միխէլն ու տանուտէրը: Այդ մեր գործը չէ:

Վարժապետ: Դուք շատ քիչ գաղափար ունիք գթասրտութեան մասին:

Միխէլ: Ի հարկէ այդ չէ նշանակում՝ թէ մի խնթի համար պէտք է խաբեբայութիւն անել:

Վարժապետ: Ի՞նչ է նշանակում այդ:

Միխէլ: Այդ նշանակում է՝ դու յիմար ես, որ միայն մի կով ունենալով՝ հետևում ես առաջաւորների օրինակին և խաբում:

Վարժապետը գլուխը կախեց:

Տանուտէր: Գնանք այժմ:

Եւ որովհետև դասերը վերջացել ու կէսօրի զանգն էլ տուած էր, վարժապետն ու լուսարարը մտածեցին, որ այժմ կարող են համայնքի ժողովին գնալ ու Արներից ներողութիւն խնդրել կամ առ սակաւն այնպէս անել, որ նա չկարծէ թէ իրենց խաբեբայութեան պատճառով են ժողովից բացակայ: Եւ ճիշտ որ նրանք տանուտէրի ու իր մարդոց հետ, որոնք արդէն վերջացրել էին իրենց գործը, դէպի ժողովատեղին գնացին:

Բաւականին հեռուից, արդէն Եկեղեցու փողոցից, լուսարարը տեսաւ այն տասնևեօթը մարդկանցը չորած: Նա

միայն Արնեբրին ճանաչեց, չտեսաւ թէ ինչ են անում միս-
ները և ասաց վարժապետին. ինձ այնպէս է թւում, որ
կարծես թէ տասնեակ մարդիկ նրա առաջ խոտ են գլչում:

Վարժապետը նոյնպէս այն կողմը նայեց և առանց մը-
տածելու, որ հաւ ծախողն իր կողքին է կանգնած, ասաց,
խենթ, կարծեմ նա կախարդական փորձեր է անել տալիս:
Թէ և լուսարարը նշան արեց նրան, որ լուէ, բայց այդ խօսքն
տրդէն արտասանել էր և հաւ ծախողն էլ կատարելապէս
հասկացել: Վերջինս թէ և ոչինչ չպատասխանեց, բայց այն-
պէս նայեց նրան, որ կարծես թէ նրա առաջը կանգնողը
ոչ թէ վարժապետ, այլ աշակերտ էր:

Այդ միջոցին նրանք աւելի մօտեցան լորենուն և ճա-
նաչելով Արնեբրի առաջը չորած առաջաւորներին, սկսեցին
կաղի պէս դանդաղ առաջ գնալ և յանկարծ ուղում
էին մինչև անգամ յետ դառնալ: Բայց հաւ ծախողն
այդ նկատելով՝ պահապանի ակնջում փսփսաց և նա էլ
չթողեց որ յետ գնան: Նրանք հարկից ստիպուած առաքի-
նուծութիւն գործեցին ու ամենավերջին նստարանների վրայ
նստեցին լուռ ու մունջ:

149.

ԱՐՆԵՐԸ ՀԱՐԹՅԵԼՆ ԱՒԵԼԻ ԼԱՒ Ի ՀԱՍԿԱՆՈՒՄ ՔԱՆ ԹԷ
ՆՐԱՆՔ՝ ՍՏԵԼԸ

Արները նոր և հին ցուցակները միմեանց հետ համե-
մատելուց և խոտի չափն ու անասունների թիւը սխալ ցոյց
տուող մարդկանց անունները յիշելուց յետոյ՝ Վայբէլին հրա-
մայեց, որ այդ տասնուվեցի մօտ կանչէ նաև մնացած
վեցին:

Վայբէլը կանչեց և նրանցից չորսն իսկոյն առաջ եկան,
բայց լուսարարն ու վարժապետը դանդաղում էին:

Դրանք ներկայ չէն, ասաց Արները:

Ինչպէս չէ, այստեղ են, կամաց ասաց Մայէրը:

Ի հարկէ այստեղ են, ասացին բարձրաձայն ետևի նըս-
տարանների վրայ նստողներից շատերը:

Ո՛վ է ոչ ասում, պատասխանեց լուսարարը և վար-
ժապետի հետ նոյնպէս առաջ եկաւ, յարգանքով կանգնեց
Արների առաջ, ըստ կարգին գլուխ տուեց ու ասաց՝ ձեռ-

բերը կցած և աչբերը շրջելով. Ա՛խ, ողորմած իշխան, ես մի բուռը խոտ էլ չեմ հնձում, բազի եկեղեցու գաւթում եղածից և այժմ դժբաղդութիւն ունեցայ այդ մի կտոր թշուառ խոտի առիթով մոլորուելու և եղածից պակաս ցոյց տայու:

Արններն այնպէս նայեց նրան, որ կարծես ուզում էր ասել թէ՛ դու կցանկանայիր ստել, բայց չես կարողանում. նա թողեց որ նա մի քանի վայրկեան այդպէս կանգնի ու քրտնի և վերջապէս ասաց. ուրեմն սխալուե՞լ ես, լուսարար:

Լուսարար: Այո՛, իհարկէ, արժանապատիւ տէր հայր^{*)}:

Արններ: Ի՞նչ քան:

Լուսարար: Մէկ գրկաչափ:

Արններ: Եկեղեցու բակից ո՞րչափ խոտ ես ստանում:

Լուսարար: Նրանք այժմ ասում են թէ երկու գրկաչափ է և ես պէտք է համաձայնեմ:

Արններ: Հա՛, բայց նրանց ասածը հօ ճի՞շտ կլինի:

Լուսարար: Այո՛:

Արններ: Քո ցուցմունքով ո՞րքան էր:

Լուսարար: Մէկ գրկաչափ:

Արններ: Ուրեմն ունեցածիցդ մէկ գրկաչափ պակաս:

Լուսարար: Աստուած է վկայ, որ սխալուել եմ:

Արններ: Ներկայ եղող խաբեքաներից ոչ մէկը քեզ պէս իր ունեցածի կիսէ չափ չէ սխալուել:

Լուսարար: Ցաւում եմ:

Արններ: Չայնդ կարիր:

Երբ նա լռեց, վարժապետն սկսեց ու ասաց. դուք բարկացած էք, ողորմած տէր, բայց խոնարհաբար խնդրում եմ թողլ տուէք որ մի խօսք ասեմ:

Արններ: Երկուսը, եթէ կամենում ես, մինչև անգամ չորսը, միայն թէ ճշմարտութիւնն ասա՛, եթէ սիրում ես ճիշտ խօսել:

Օ՛, ի հարկէ ճշմարիտը կասեմ, ասաց վարժապետն ու պատմեց թէ ինչպէս մի քանի օր առաջ. առանց իր գի-

*) Խօսողը վախեցած լուսարարն է, այդ պատճառով ընթերցողը պէտք է ներէ նրան, որ նա այդ գրուածեան մէջ Արներին «արժանապատիւ տէր հայր» է կոչում:

առութեան մէկ կողմն ուրիշ սեղ են ուղարկել:

Արններ: Հա. ուրե՞նք դու էլ կովը համարելիս ես սխալուել, ինչպէս եղբայրդ խոսը չափելիս. երկուսդ էլ լաւ պատուներ էք:

Վարժապետ: Ցաւում եմ, բայց մոռացել էի, որ Բէքը-
սայի մտադործը կովը սարել էր:

Արններ: Երևի յիշողութիւնդ շատ թոյլ է:

Վարժապետ: Վերջին ժամանակներս այո՛, շատ թոյլ է:

Արններ: Բո մասին առհասարակ ես լսել էի, որ շատ
լաւ յիշողութիւն ունես, բայց խելք չունես:

Վարժապետ: Այժմ այնպէս չէ, ինչպէս որ էր մի
ժամանակ. բայց սովորաբար իմ կիներն է միայն գոմով զբաղ-
ւում, ես միշտ ուսումնարանում եմ:

Արններ: Այդ դէպքում քո կիները պէտք է յայտնէր
թէ քանի կով ունէք:

Վարժապետ: Ճշմարիտ է, բայց...

Արններ: Բայցերդ պէտք չեն: Գու Վարժապետ ես և
գիւղի մանուկները քո ձեռքին են, իսկ դու սառնարիւն
կերպով երկու անգամ հաստասել ես սուս երդումդ:

Վարժապետ: Բայց ի սէ՛ր Աստուծոյ, չի կարելի մի
բան մոռանալ:

Արններ: Լբի՛ր և Աստուծոյ անունով մի՛ խօսի, ան-
պիտան. եթէ խաբել չկամնայիր՝ գոմը կերթայիր և կտես-
նէիր՝ մէկ թէ երկու կով ունէք. դու պէտք է գիտենաս,
որ երբ մի բան երդումով ես հաստասում, պարտաւոր ես
աչքերդ գործ դնել:

Վարելի էր կարծել, որ այս արդէն բաւական էր բո-
լորի վերաբերութեամբ, բայց կով ծախող Շառֆէլն այդպէս
չէր մտածում: Նա առաջ եկաւ ու ասաց. իշխան, ես
կատարելապէս անմեղ եմ, ես ամեն օր սպասում եմ իմ
թուած անասունների գալուն:

Արններ: Բայց բեղ չեն հարցրել՝ թէ քանի անասունի
ես սպասում, այլ թէ քանի՛սն ունես:

Շառֆէլ: Այդ ճշմարիտ է, բայց որովհետև ես ամեն
րոպէ սպասում էի թէ կը բերեն, այդ պատճառով ա-
րօտի համար նրանց էլ հաշուեցի:

Արններ: Դու ունեցածիցդ ութը հաս աւելի ես
ասել, այնպէս չէ՞:

Շտոֆէլ: Այո, Ձերդ ողորմածութիւն:

Արններ: Այդ ութը հասն էլ ճիշտ գնե՞լ ես:

Շտոֆէլ: Այո, ի հարկէ, Ձերդ ողորմածութիւն:

Արններ: Ո՞ւրից ես գնել:

Շտոֆէլ: Ջանազան տեղերից են ուղարկում ինձ:

Արններ: Մինչև ե՞րբ ես սպասում նրանց:

Շտոֆէլ: Ամենաուշներք օրուայ ընթացքում կտանամ:

Արններ: Բոլոր ութ հասը միասին:

Շտոֆէլ: Այո:

Արններ: Յուսով եմ, որ այստեղ ասածներդ բոլորը
ճիշտ են:

Շտոֆէլ: Եթէ այդ ութ հասն երեք օրուայ ըն-
թացքում չտանամ, պատրաստ եմ իրաւացի հասուցու՞նք ապա:

Արններ: Քո պատճառաբանութիւնն օրինաւոր է, եթէ
ճիշտ է:

Այդ վայրկեանին տեղներից վեր կացան միւսներից
չորսն էլ ու ասացին՝ թէ իրենք էլ անասուններ են գնել
և սպասում են նրանց դալուն. բայց մեծամասնութիւնը
լուսեց և չուզեց այդ պատճառաբանութեամբ իրեն արդա-
րացնել: Արժապետն ընդհակառակը, որ առաջ բացատրել
տուեց այն հնգի ասածները, նորից վեր կացաւ ու ասաց,
թէ ինքն էլ սպասում է մի կով ստանալու, որովհետև
իր կովը չէ ծախել, այլ փոխել է մէկ ուրիշի հետ:

Արններ: Չէ՞ որ դու ասացիր՝ թէ մագործին ծախեցի:

Վարժապետ: Այդ միւսոյնն է, նա ինձ մի ուրիշը
խոստացաւ:

Հա՛, ասաց իշխանն ու նայեց նրան հեզնութեամբ.
բոլոր նստարանների վրայից լսելի եղաւ գիւղացիների ծի-
ծաղը՝ մագործի փոխած կովի առիթով:

Բայց միւսները, որ նրանից առաջ ասել էին թէ ա-
նասունների են սպասում, վախենում էին, որ նա իր յի-
մարութեամբ կարող է նրանց խաղը փչացնել:

Արններն սկսեց կրկին խօսել ու ասաց. ես ընդունում
եմ ձեր առարկութիւնները, եթէ ճշմարիտ են, բայց զգու-
շացէ՛ք ստելուց:

Նրանք կրկին հաստատեցին, որ իրենց ասածը ճիշտ է։
Արններ: Դուք ասում էք, բայց ինձ համար այդ բա-
ւական չէ: Ես ձեզ բոլորիդ էլ դղեակում կպահեմ՝ մինչև
որ ճիշտն իմանամ թե դուք ճշմարիտ էք ասել, թե ստել էք:

Այսպիսի մի խօսք չէին սպասում նրանք և սկսեցին
երբեք իրար չտեսածների նման մոեանց նայել:

Բայց ինչո՞ւ չէք ուզում թողնել մեզ, որ առն գնանք,
ասաց Շափէլ անասնավաճառը:

Արններ: Միմայն այն պատճառով, որ եթէ ես ձեզ

թողնեմ, որ առն գնաք, բսան և չորս ժամուայ ընթաց-

բում կարող էք մի ամբողջ հօտ անասուն հաւաքել՝ առանց

մի հատ անգամ այժմեանից գնած ունենալու:

Խորին լուռութիւն տիրեց:

Արններ: Ի՞նչ է նշանակում այս լուռութիւնը:

Մի վայրկեան ոչ որ չպատասխանեց. յետոյ Շափէլն

ասաց. իմ կովերի առևտուրը դեռ վերջնականապէս վերջա-

ցած չէ:

Արններ: Դու հէնց այժմ ասացիր, որ բո գնած անա-

սունները — ութը հատ, այնպէս չէ՝ — երեք օրուայ ընթաց-

բում կստանաս:

Շափէլ: Այո, եթէ առն գնալ կարողանամ, ապա-

հով եմ, որ բողբոջ էլ կստանամ:

Արններ: Բայց որովհետև այժմ բեզ չեմ թողնի, որ

առն գնաս, կնշանակէ որ ութն էլ չե՞ս ստանայ:

Շափէլ: Ո՛չ, այդ գէպքում ապահով չեմ, որ ութն

էլ կստանամ:

Արններ: Բայց եթէր հօ ապահով կերպով կստանամ,

եթէ այստեղ մնաս:

Շափէլը ոչ մի խօսք չասաց:

Արններ: Ցե՛ս, եթէ վեց հատ էլ ստանաս, գոհ կը

լինեմ:

Բայց կրկին ոչ մի պատասխան չկար:

Արններ: Բայց հինգը հօ հաստատ կստանամ:

Կրկին պատասխան չկայ:

Արններ: Ձե՛ս պատասխանում. չորսը կամ առ սա-

կան երեքը հօ հաստատ կստանամ:

Շտոֆէլ: Բոլոր ութն էլ կտանամ, եթէ կարողանամ.
Լուր ուղարկել:

Արննր: Ի՞նչ լուր:

Շտոֆէլ: Միայն այն, որ ուղարկեն, ուրիշ ոչինչ:

Արննր: Բայց լաւ, առանց այդ լուրի ո՞չ մի հատ էլ
չես չտանայ:

Շտոֆէլ: Ո՛չ, չեմ՝ կարծում:

Արննր: Ես էլ չեմ՝ կարծում և երբէք էլ չհաւատացի, ինչպէս որ չեմ հաւատում, որ վարժապետն իր կովը փոխել է մսագործի կովի հետ: Վարժապետ, եթէ դու դղեակումը մնաս՝ մսագործի փոխած կովը կտանաս:

Վարժապետը ոչինչ չպատասխանեց, իսկ Արննրը շարունակեց. խօսքս կարծ կտրելու համար միւսներին էլ եմ ստում. ձեր գնած ու սպասած ամբողջ հօսք սուտ է, այնպէս չէ՛. դուք շուտ ուզում էիք տուն վազել և առաջին պատահած ջնուդից կամ քրիստոնէից անասուններ գնել՝ պահասը լրացրելու համար: Շատ ակուր բան է, եթէ կարծում էք թէ ձեր իշխանութեանը խաբելով՝ ամեն բան լաւ կերթայ: Ամաչեցէք: Ես գիտեմ, որ այս բոլոր նստարանների վրայ եղողներն մէջ ո՞չ միմարդ չկայ, որ ներբուստ համոզուած լինի, թէ ձեր բոլոր ասածներից մէկ խօսքը գոնէ ճշմարիտ է. բայց այնուամենայնիւ դուք ամբողջ համայնքի առջ ամբողջ կէս ժամ համարձակութիւն ունեցաք պնդելով՝ իբրև թէ զուտ ճշմարտութիւնն էք ստում. և եթէ ձեզ թողնէի տուն գնալու, կուրախանայիք և կծաղրէիք ինձ: Բայց մի՛ կարծէք թէ ձեր գիւղում և ընտանիքում բաղդաւորութիւնն ու Աստուծոյ օրհնութիւնը տիրող կհանդիսանայ, եթէ իշխանութիւնից խղս տաք:

Այժմ բոլոր նստարանների վրայ ամբոխն սկսեց զայրանալ ու առել թէ նրանք այդպէս չպէտք է վարուէին: Նոյն իսկ Հարսիկոսպօր նրանց մեղադրում էր և պնդում, որ եթէ ինքը հարիւր գրկաչափ խոտ էլ ունենար, ճիշտ թիւը կստայանէր: Նա ի հարկէ մի քայլաչափ հող էլ չուներ և գուլպայ գործող էր: Բայց այնուամենայնիւ նրա դրացիները պատասխանեցին, որ նա վերարկուն միշտ քամու կողմն է շրջում. նա դեռ հէնց այս առաւօտ ասում էր՝ թէ Աստուծոյ կամքն է, որ առաջաւորները բաղդաւոր լի-

նեն և ոչինչ չպատահի նրանց. այդտեղից պարզ երևում էր, որ նա գիտէր նրանց գաղտնի դիտաւորութիւնները:

150.

ԲՕՆԱԼ ԳԻՒՂԻ ԷՀԷԳԱՌԻՄԷՐ ՈՒ ՇՏԻԼՇՏԷՆԻԷՐ ԵԱԿՈՐ
ՔՐԻՍՏՕՖ ՖՐԻԴՐԻԽ ՀԱՐՏԿՆՈՊՖԻՆ ԿԱՏԱՂԵՑՆՈՒՄ ԵՆ

Նստարանների վրայ եղողների աղմկալի խօսակցութիւնից Արները նկատեց, որ ամբոխն իր դժկամակութիւնն է ուզում արտայայտել իր առաջը չոքած ողորմելի յանցաւորներին:

Արներ: Ուրախ կլինէի, եթէ կարողանայի մտածել թէ նստարանների վրայ նստողներն աւելի լաւ են առաջս կանգնողներից, բայց շատ ցաւում եմ, որ պէտք է ասեմ՝ թէ գիւղի վերևն ու ներքեւը, բոլոր անկիւններում ամենքը միատեսակ են և համարեա՝ թէ առն չկայ գիւղում, որտեղ թագկացրած չլինեն դղեակից գողացուած պարաններ, քսակներ, սայլակներ և դրանց նման իրեղէններ: Եւ ես գիտեմ, որ մինչև անգամ ներկայ եղողների մէջ կան այնպիսիները, որոնց զգեստի աստաւը գողացուած քսակներից է կարած:

Հաղիւ թէ նա այս խօսքերն արտասանել էր, որ Հարակնոպֆն իր զգեստը վարտիկի վրայ ծալեց, այնպէս որ աստաւը հազիւ կարելի էր նշմարել և կրակի պէս կարմրեց: Բայց նա ա՛յնպէս աչքի ընկնող կերպով արեց այդ, որ նրա աջ ու ձախ նստած դրացիները նկատեցին և նրա առաջևի ու ետևի փեշերը բարձրացրին՝ աստաւը տեսնելու մաքով: Նա սաստիկ կատաղեց և գիտէր թէ ինչո՞ւ. շուտով դրացիները նկատեցին, որ մէկ փեշի աստաւը ճիշտ որ դղեակի դրոշմ է կրում: Այդ բանը մի ա՛յնպիսի աղմկալի բռնիք բարձրացրեց նրա շուրջը, որ Արները հարցրեց թէ ի՛նչ կայ:

Հարակնոպֆի զգեստի աստաւի վրայ դղեակի դրոշմը կայ, աղաղակեց մէկը:

Հարտկնոպֆ: Այդ զգեստի աստաւն ես տաս տարի առաջ եմ գնել:

Բայց դղեակի դրոշմը նոր քսակներինն է, հինգ տարի էլ չկայ դրա գոյութիւնը. հին քսակները միայն գծեր էին

կրում, աղաղակեց կրկին նստարանների վրայ նստողներից մէկը:

Արններ: Եթէ քո տեղը լինէի, այժմ այդ զգեստը տուն կտանէի, որպէս զի խաղաղութիւն տիրէ:

Հարտկնոպֆ: Ուրախութեամբ, բայց չեմ գողացել:

Արններ: Կարող է պատահել, որ այդ կտորն արդարութեամբ ես ձեռք բերել, որովհետեւ չես ճանաչում զղեակի դրոշմը:

Հարտկնոպֆ: Ես չգիտեմ թէ դերձակն ի՞նչպիսի կըտոր է վերցրել իմ զգեստի համար:

Արններ: Հա՛, ուրե՛նք դերձակն է տուել քեզ այդ զգեստի աստառը:

Հարտկնոպֆ: Այո՛, ճշմարիտ, ողորմած տէր:

Արններ: Ո՞ր դերձակը:

Հարտկնոպֆ: (մտածում է) Չգիտեմ, չեմ կարող մըտաբերել, բայց հա՛, Վիլտուի դերձակը կարեց այս զգեստաւ:

Արններ: Ճշմարիտ է. բերել ասմ նրան:

Հարտկնոպֆ: Նա մեռած է:

Արններ: Բայց մի՞թէ Բօնալի դերձակը, որ նստած է պստեղ, քո սանահայրը չէ:

Հարտկնոպֆ: Ճիշտ է, բայց այդ զգեստը նա չէ կարել:

Արններ: Ուրե՛նք նա զուր կարմրեց, երբ խօսքը քո զգեստի մասին էր. բայց այժմ ես ոչ քո և ոչ էլ նրա պատասխանն եմ ուզում լսել. ես այժմ միայն կուզէի, որ դու քո զգեստով վերկենաս ու գնաս, որ հանդարտութիւն լինի:

Հարտկնոպֆը գնաց, բայց եկեղեցու փողոցում պահապանը չէր ուզում նրան թողնել որ գնայ—որովհետեւ նա չէր ուզում պահապանի հետ վերադառնալ Արներին հարցնելու թէ կարող է թողնել նրան որ տուն գնայ—ստիպուած եղաւ պահապանի մօտ սպասել, մինչև ժողովի վերջանալը:

Նա նստեց Կինհօլցի մեծ կեռասնեղու տակ, պահապանին պատմեց իր քամբաղղութիւնն և մի ծխամորթի ծխախոտ խնդրեց նրանից, որովհետեւ ինքը սրամտութիւնից իր բըսակը նստարանի վրայ էր թողել:

ԱՐՆԵՐԻ ԴԱՏԱՎՃԻՌԸ

Մի ըստեղծից յետոյ, երբ նորից հանդարտութիւն տիրեց, Արնեբն այն տասն և վեց մարդկանցը, որոնց քահանայի տուն էր կանչել տուել, դատապարտեց, որ նրանք իրենց մէջ վիճակ ձգեն և այն երկուսը, որոնց վիճակն ընկնի, յաջորդ կիրակի օրը եկեղեցում տանուտէրի հետ միասին համայնքին ներկայացունին՝ իբրև տանուտէրի բոլոր արածներին յանցակիցներ: Ռէնսլդին, որ այն տասն և եօթից մէկն էր, ներեց և ամեն պատժից ազատեց: Իսկ այն քսան և երկու մարդկանցը, որոնք խաբել էին իրենց խոտի ու անասունների բանակութիւնը ցուցակագրելիս, նա ասաց. այդ յանցանքն իմ դէմ ուղղուած չեմ համարում, բայց որովհետև այդ արարմունքի նպատակը չբաւորներին փեսան էր, այդ պատճառով ահա դուք էլ պէտք է պատիժ կրէք: Յետոյ նա հրամայեց Վայրէլին, որ համայնքի ամենաչքաւոր մարդկանցից տասն և երկուսին առաջաւորների տեղը նստեցնէ՝ պատուիրելով, որ այն քսան ու երկու մարդիկն, իրենց համայնքի դէմ գործած յանցանքի համար, հրապարակաւ չորեն այդ տասերկուսի առաջ և ներողութիւն խնդրեն:

Այդ հրամանն իսկոյն կատարուեց: Վայրէլը մտեցաւ նստարաններին և յայտնեց այդ ծերերին. նրանցից մի քանիսն ուրախութեամբ եկան, մի քանիսն էլ խնդրում էին, որ ուրիշներին որոնէ և իրենց նստած թողնէ իրանց տեղը: Կրիխէրն առանց հրաւիրուելու առաջ վազեց՝ կարծես թէ մի կտոր հաց էին առլիս նրան:

Վայրէլ: Դ՞ո՞ւ էլ ուղում ես գալ:

Կրիխէր: Ինչպէս կամենաք:

Վայրէլ: Արի՛, եթէ ցանկանում ես:

Նա էլ հօ երեսին ամօթ չունի, ասացին նրա դրացիները: Երբ այդ տասնևերկու մարդիկը մի տեղ հաւաքուեցան, Արնեբը հրամայեց ամբողջ համայնքին գլխարկները հանել, իսկ 12-ը գլխարկները գլխին նստեցին: Բայց որովհետև նրանցից շատերը գլխարկ չունէին, նա պատուիրեց նախկին առաջաւորների գլխարկները տալ դրանց: Վայրէլը տասներկու առաջա-

ւորների գլխարկները նրանց ձեռքից առնելով, տուեց չքաւորներին՝ ծածկելու:

Այն քսան և երկու մարդիկը երեսները դէպի նոր առաջաւորները դարձրած, չոքեցին: Յետոյ Արնները հրամայեց, որ ամեն մէկի համար առանձին կարդան երդումով հաստատած թուերը՝ խոտի ու անասունների վերաբերութեամբ և նրանց ունեցածի իսկական քանակութիւնը. նրանցից իւրաքանչիւրն երկու թուերն էլ կարդալիս պէտք է բարձր ու պարզ, ամբողջ համայնքի առաջ, խոստովանէր, թէ կարդացածը ճիշտ է:

Գրագիրը կարդաց. երդուեալ կալքէրէդէրն առաջ ասաց թէ տասը գրկաչափ խոտ ունի, բայց իսկապէս նրա ունեցածը տասնևութն է: Այդպէս չէ՞:

Կալքէրէդէր: Այդպէս է:

Գրագիր: Նա առաջ ասել էր թէ տասնևեօթն անասուն ունի, բայց իսկապէս նա տասն ունի: Այդպէս չէ՞:

Կալքէրէդէր: Այդպէս է:

Գրագիր: Նրա եղբայր Քրիստօֆ կալքէրէդէրը տասն և երկու գրկաչափ խոտ ցոյց տուեց, իսկ նրա ունեցածը տասնևինն է: Այդպէս չէ՞:

Քրիստօֆ: Այդպէս է:

Գրագիր: Նա առաջ իր ունեցած անասունների թիւը տասնևչորս ասաց, բայց ինն ունի: Այդպէս չէ՞:

Քրիստօֆ: Այդպէս է:

Գրագիր: Նրա եղբայր հաստ Յակոբն իննը գրկաչափ խոտ ցոյց տուեց, բայց տասնևհինգ գրկաչափ ունի: Այդպէս չէ՞:

Յակոբ: Այդպէս է:

Գրագիր: Նա տասնևերեք անասուն ասաց, իսկ յետոյ երևաց, որ ութն ունի միայն: Այդպէս չէ՞:

Յակոբ: Այդպէս է:

Գրագիր: Երդուեալ կինասան առաջ տասնևերեք գրկաչափ խոտի ցուցմունք արաւ, բայց բանից երևաց, որ նրա ունեցածը քսան և երկու գրկաչափ է և այլն: Եւ այդպէս շարունակ նա կարդաց մասգործ Եօզգէլ կինաստի, Քրիստօֆ Մօօրլաուէրի, Հանս Մօօրլաուէրի, երդուեալ Ռաբբէրի, Ռաբբէր կուրիի, Շպէքմօլխի, նրա բեռայր Չէննրաուէրի, եր-

դուեալ Մայերի, Ֆրէսմայի կոչուած Մայերի, երգուեալ Հիւգիի, լուսարարի, վարժապետի, Բիւտիբաուէրի, երգուեալ Լինդէնբերգերի, նրա եղբայր Մարքսի, Նիրէնբաուէր Հայնրիխի, Բօսրիւաշէր Շաօֆելի անունները և վերոյիշեալի նման հարցրեց. «այդպէս չէ՞»։ Երբ այդ բան և երկու մարդիկը վերջացրին իրենց «այդպէս է՞»-ները, տասն և երկու աղքատները — իւրաքանչիւրից առանձին — ներողութիւն խնդրեցին։

Այդ վերջացնելուց յետոյ Արները փակեց ժողովը, որովհետև արդէն մէկ և կէս ժամ էր և հրամայեց, որ հէնց ժամի երեքը խփեց թէ չէ, համայնքը նորից ժողովուի։

152.

ՆՐԱ ԿԵՐԱԿՈՒՐՆ ԱՅՆ Է, ՈՐ ԼՄԷ ԵՒ ԿԱՏԱՐԷ ԵՐԿՆԱՅԻՆ
ՀՕՐ ԿԱՄՔԸ

Ճաշելիս Արները պատուիրեց իր մօտ կանչել Ռէնօլդին և խնդրեց նրան, որ Բամբերգերի պատմութիւնը մանրամասն պատմէ իրեն։

Արների այդ պահանջի վրայ Ռէնօլդի աչքից արցունքի կաթիլներ ցայտեցին, որովհետև Բամբերգերը մանկութիւնից սիրելի էր նրան և չկարողացաւ իրեն զսպել։ Յետոյ պատմեց թէ ինչպէս Բամբերգերը մանկութիւնից սկսած հաւատարիմ ու ճշմարտախօս մարդ էր և այդ պատճառով նրան շարունակ խենթի տեղ էին դնում։ Բայց նա մինչև իր երեսուն և հինգամեայ հասակն ապրել է խաղաղ ու առանց որևէ մէկից վիրաւորանք կրելու. այդ տարին հանգուցեալ ծեր իշխանը նրան առաջաւոր կարգեց։ Այդ ժամանակից նա ոչ մի բան չկարողացաւ այլ ևս խաղաղ ու հանգիստ ձեւ և շարունակ վէճի մէջ էր միւս առաջաւորների հետ, որովհետև երբէք չէր ցանկանում ծուռը ճանապարհով գնալ և ուրիշների գնալուն էլ հակառակում էր։ Նրա վրայ կատաղած էր նա մանաւանդ Հոմէլը, որ ամեն կողմից սրամտութիւն և վիշտ էր պատճառում նրան. նա մինչև այնտեղն էր հասցրել, որ նոյն իսկ դղեակի սպասաւորները, Հոմէլի գրգռելով իրենց շանը Բամբերգեր անունն էին տուել, որ նրան ամեն մի անկիւնում ծաղրի առարկայ շինեն։ Այդ բոլորը նրա վրայ այնպէս են

ազդում, որ իր տուն ու տեղը թողնելով՝ գնում է կայսերական երկիրը և այնտեղ մի երկու տարուց առաջ վախճանուում է չքաւորութեան մէջ: Նա իր մահից մի քանի շաբաթ առաջ ապապրել էր իր մի հայրենակցի բերանով, որ ինքն աւելի լաւ է համարում տաճիկների մէջ մեռնել, քան թէ վերադառնալ հայրենիք, ուր այնպիսի անկանոնութիւններ են տիրում:

Յետոյ Արները Ռէնօլդի հետ խօսեց նաև Հուլիէ մասին. սա առանց ծածկելու ասաց՝ թէ այդ շարիքը տանուաէրից առաջ արմատացած էր և եթէ դղեակում կարգ ու կանոն լինէր, Հուլիէն էլ արդէն գոյութիւն ունեցող և անգործ մանկեղոջ հարիւրաւոր մարդկանց թւումը կլինէր: Նա կամ երկրից պէտք է հեռանար, կամ թէ չէ կարիքից ստիպուած պէտք է սովորէր աղօթել ու աշխատել: Նա դեռ ուրիշ շատ բաներ էլ ասաց. թէև այդ խօսքերը Արների սիրաւ կարտում էին, բայց թոյլ առեց նրան խօսելու, որովհետև տեսնում էր, որ ճշմարիտ է ասում:

Արները մինչև անգամ մի փոքր ժամանակով ասանուաէրին իր մօտ կանչեց և Ռէնօլդը բարեկամաբար նրա ձեռքը սեղմեց, մխիթարեց ու սիրտ տուեց նրան: Նոյնն արին նաև Արներն ու բահանան:

Եւ որովհետև շուտով ժամի երեքը պէտք է լինէր, Ռէնօլդը խնդրեց Արներին, որ այն ասան և վեց մարդկանց ներէ վիճակ ձգելը, կամ թէ իրեն էլ նրանց թւում դնէ, որ նրանք չկատաղեն իր դէմ: Տանուաէրն էլ խնդրեց ներել նրանց ու ասաց հետևեալ զարմանալի խօսքերը. նըրանք ինձ նման նախապատրաստուած չեն իրենց պատիժը կրելու, այդ պատճառով կմոլեգնեն մայն: Արները մի րոպէ մտածեց թէ ի՞նչ անէ և յետոյ ասաց, ես ներում եմ նրանց ձեր միջնորդութեան պատճառով: Ռէնօլդն ու տանուաէրը սրտանց շնորհակալութիւն արին նրան:

Այս զրուցատրութեան ժամանակ Արները համարեա. թէ բոլորովին մոռացել էր ճաշը: Նա ծանրաբեռնուած էր այն բարւոյ զգացմունքով, որ դեռ ևս իշխում էր այդպէս բոլորովին ընկած մարդոց սրտերում, բահանայի ձեռքից բռնեց և մի վայրկեան պարտէզ գնաց նրա հետ միասին: Նրանք խօսում էին թէ ի՞նչպէս մարդիկ միմեանց նման են,

և թէ ինչպէս ամենաբարին կարող է ամենից չարը դառնալ և ամենաչարն՝ ամենից բարին: Քահանան ասաց Արնե-րին. ես յաւիտեանս չեմ մոռանայ, որ ինքս էլ այնպիսի շաղով եմ ման եկել, որ կարող էի այն դառնալ, ինչ որ դարձաւ ասնուտէրը: Այո՛, սիրելի իշխան, այն ժամանակ, երբ ես չորս տարի առանց հացի, առանց աշխատանքի և անօգնական թափառում էի և մուրացկանի պէս ձեր պապի դղեակն եկայ, սովորեցի թէ ի՞նչ է մարդը և ինչ կարող է դառնալ:

Արները գրկեց քահանային. բայց սա մի վայրկեանից յետոյ, մի տեսակ հիացմամբ ասաց. մենք ամենքս էլ այն թշուառութեան ակունքից ենք խմում, որ փչացրեց այս մարդուն. և միայն Աստուած է, որ մէկին վաղ, միւսին ուշ է փրկում այդ ակունքի թոյնից: Նրա թոյնը մէկի համար կեանք է, միւսի համար մահ. և եթէ մենք հանդերձեալ կեանքի յոյսը չունենայինք, միլիօնաւոր մարդոց գրուութիւնը, որոնք այնպիսի հանգամանքների մէջ են ապրում, որ նրանց ոչնչացնում են համարեա թէ անդարձ կերպով, Աստուծոյ արդարագառութեան գաղափարի հետ չէր կարելի կապել և մարդս բոլոր արարածների մէջ ամենաթշուառը կլինէր:

Այո՛, սիրելի տէր-հայր, ասաց Արները, միշտ պէտք է հանդերձեալ կեանքի յոյսն ունենանք. բայց եթէ մենք մարդ ենք և ուզում ենք մարդ մնալ, պէտք է երկրի յանցաւոր կոչուած խեղճ արարածների հետ ուրիշ կերպ վարուենք և նրանց ուղիղ ճանապարհի վրայ դնելն ու փրկութիւնը մարդկութեան ամենավսեմ գործը համարենք:

Այս խօսակցութիւնից յետոյ Արները կրկին գնաց համայնքի ժողովը:

153.

ԱՆՍԱՆՁ ՍՐՏԻ ՀԵՑԵՒԱՆՔԸ

Համայնքի ժողովում նրա արածը պատմելուց առաջ՝ պէտք է մի բանի խօսքով ասեմ թէ ի՞նչպէս անցաւ այսօրուայ ճաշը Բօնալի գիւղացիների համար:

Նրանց կանայքը, նա մանաւանդ առաջաւորներինը, հազիւ կարողացան մինչև ժողովի վերջը համբերել և նըրանց քալը հեռուից տեսնելով՝ գոմերից ու խոհանոցներից առաջ վազեցին: Բայց առաջաւորները և առհասարակ այն

բասններկու մարդիկն ու նրանց համախոհները լաւ պատասխան տալու տրամադրութեան մէջ չէին:

Կալքերլէդէր, Շան նման վարուեց մեզ հետ Արները: Մօօրլաուէր, Խե՛նթ, եթէ մեզ հետ գայիր՝ այն ժամանակ կտեսնէիր:

Ինձ այնպէս է թւում, թէ դժոխքից եմ փախել, ասաց ծեր Մայէրը:

Շպէքմուլիս Թո՛ղ մի դեռ շունչ բաշեմ, յետոյ խօսեցրու:

Կինաստ: Աւելի սիրով անկողին կմանեմ, ուտել չեմ ուզում:

Եւ այսպէս ամենքն էլ մօտաւորապէս այդպիսի պատասխաններ տուին իրենց կանանցը: Բայց ի հարկէ այդ չօգնեց. շունչ էին ուզում բաշել նրանք թէ անկողին մըտնել, միւսնոյն է, ստիպուած էին պատմել. և հազիւ կէս ժամ անցնելուց յետոյ կանայքն արդէն ամեն բան դիտէին մանրամասնաբար. նրանցից շատերը կատաղեցան:

Նոյն իսկ Ռաբզէնթաուէրի ամուսինը, որ ծառերի տակից փթած տանձ ժողովող էր, ասաց. հարկւր գուրդէն տուգանքն ինձ այդ վարմունքի պէս չէր ցաւեցնի:

Կին Տօյցի կինն երդուեց տարիներով եկեղեցի չգնալ և ոչ ոքի չերևար:

Շպէքմուլի կինը ողբում էր. նա յաջորդ կիրակի օրը կնքամայր պէտք է լինէր, իսկ այժմ իմացաւ, որ նոյն օրն իր ամուսինը տանուտէրի հետ միասին գուցէ կանգնած կլինի բեմի առաջ:

Կալքերլէդէրի կինը հէնց այդ միջոցին կերակրում էր խոզերին: Բարի անասունները սովորականի նման մսուրից գլուխները հանեցին ինչքան կարող էին և դէպի կերակուրն առաջ տարան. բայց տանտիկինը շերեփով ա՛յնպէս խփեց նրանց, որ խեղճերն արիւնյուսայ եղան:

Մօօրլաուէրի կինը վերցրեց իր ամուսնու գլխարկը, որ այսօր ծածկել էին մուրացկան Բիգգէլի գլխին և ուղղակի կրակի մէջ ձգեց: Թէև նա չէր ուզում, որ իր արարմունքն իմացուի, բայց խանձի հոտն այնպէս տարածուեց, որ դրանց տանը մօտեցողները գայիս ու հարցնում էին թէ ի՛նչ հոտ է: Ցան ետևը Էլզէլին ճիշտ իրողութիւնը յայտնեց Հանս

Լեօլին: Տան առաջևից երեք թէ շորս մարդ հարցրին թէ ի՞նչ հոտ է: Խենթեր, ի՞նչ պէտք է լինի, պատասխանեցին ամուսինները, կրակի մէջ ձգած ոտք է. բայց հէնց այդ րոպէին եկաւ Լեօլին ու ասաց. ես աւելի լաւ դիտեմ, բո գլխարկի հոտն է, որ կինդ կրակի մէջ ձգեց: Ո՞վ ասաց այդ, աղաղակեց Մօօրլաուէրի կինը: Չեր Ելզէլին, պատասխանեց Լեօլին: Կինը բարկացած յետ խփեց պատուհանն և Ելզէլիի բերանին մի լաւ հարուած տալով՝ այնպէս արիւն լուսյ արեց երեսայի բերանը, որ Կալբերլէդէրի խոզերից էլ վատթար: Բայց մի րոպէից յետոյ նա մտաբերելով որ իր ամուսնուն ժամի երեքին դարձեալ գլխարկ է հարկաւոր, հրամայեց Ելզէլին, որ դեռ հազիւ շունչ էր քաշում, որ շտաղով վազէ գլխարկ կարողի մօտ և մի գլխարկ բերէ: Բայց գլխարկ կարողն էլ դեռ ատնավաճառից տուն չէր եկել. կինը երկիւղից չգիտէր թէ ինչ անէ:

Նա երեսային ուղարկեց ճախարակագործի մօտ, որ իրենց փող էր պարտ և խնդրեց, որ բարի գանուի և իր գլխարկը փոխ ասյ. բայց սա էլ արդէն համայնքի ժողովներ գնացել և Մօօրլաուէրը ստիպուած էր թասակով համայնքի ժողովի գնալ և ծիծաղի առարկայ դառնալ՝ այրուած գլխարկի պատճառով:

154.

ԱՆՍԱՆՉ ՄԻՐՏՆ ՈՒՇԱԹԱՓՈՒԹԻՒՆ Է ՊԱՏՃԱՌՈՒՄ

Այս նորութիւնները Բօնալի առաջաւորների և մեծամեծների կանանցը շատ շփոթեցին: Մի առ ժամանակ նրանք սրտամութիւնից չէին կարողանում պատմել թէ իրենց ինչ էր պատահել այդ ժամանակամիջոցում, բայց յետոյ սկսեցին պատմել որ այն անիծուած կախարդ հաւ ծախողին ստիպուած էին տուն թողնել:

Ամենից շատ գանգատում էր այդ դժբաղդութեան մասին երիտասարդ Կալբերլէդէրի կինը: Նա երկար տարիներ մեծ հաւատ ունէր Եօհան Եակոբ Քրիստօֆ Քրիդրիխ Հարակնոպֆի վերաբերմամբ, որին գիշեր ցերեկ իր տանն էր պահում: Այդ կինն ասաց իր ամուսնուն՝ թէ ինքն անիծել էր հաւ ծախողին, բայց այժմ ստիպուած էր նրան իր տունը դուռնել, արդեօք այդ բանը չի՞ վնասի իրեն: Այդ մասին

Հարսկնոպֆին հարցրո՞ւ, ասաց ամուսինը: Այդպէս էլ մտադիր եմ, ասաց կինը: Հաւատում եմ բեղ, պատասխանեց մարդն ու պատմեց նրան թէ ինչպէս իր մարգարէն—այդպէս էր կոչում նա Հարսկնոպֆին—խայտառակուել է համայնքի առաջ՝ զգեստի գողացած աստուծի պատճառով և աւելացրեց թէ ինքը նրան շան նման տանից կհալածէ, եթէ համարձակուի նորից գալ:

Կինն այդ պատմութիւնը լսելով՝ գրեթէ ուշաթափուեց և իմանալով մարդու սպառնալիքը՝ թէ նա էլ չպէտք է համարձակուի իրենց տուն գալ, բոլորովին մոռացաւ մտածելու թէ արդեօք մեղք չէ՞, որ ինքը չկարողացաւ հաւ ծախողի վերաբերութեամբ իր երդմանը հաստատ ձեռն:

Ուրիշ շատ կանայք էլ հարցնում էին— մի քանիսը մե՞ծ երկիւղով— թէ արդեօք կիրակի ամեն բան կվերջանայ, թէ Արներն էլի պէտք է շարունակէ հետադասել: Մի քանի մեծամիտներն էլ քննում էին, թէ արդեօք այժմ հաւ ծախողին պատուաւոր մարդ պէտք է համարեն և արօտի բանն ու վերջին համայնքի ժողովում եղածներն ընդունեն ինչպէս որ կայ և ինչպէս որ ուզում են Արներն ու մի քանի մուրացկաններ:

Բայց շատ հասարակ գիւղացիներ տանը զուարճանում էին: Ցասնեակ ընտանիքներից աւելի՝ ամա դուռն ու պատուհանը փակելով՝ իրանց կանանց առաջը ծաղրում էին առաջաւորներին՝ թէ ինչպէս նրանք մուրացկան Բիգէլից և իր ընկերներից ներողութիւն խնդրեցին, ի՞նչպէս նրանց խաբեբայութիւններից ցանկը կարդացին և ի՞նչպէս նրանք «այդպէս է», «այդպէս է», ասացին, ինչպէս մէկը լեզուն է կծել, միւսը քիթը կախել, երրորդը դողացել, չորրորդը ոտքով արոփել: Շատերը խմում էին Արների կենացը յուսալով, որ եթէ իշխանն այդպէս շարունակէ և Աստուած կամենայ, իրենք իրենց հացը հանգիստ ձեռք կբերեն և կը վայելեն. շատ կանայք ու մանուկներ էլ այդ պատմութիւնը լսելով՝ ուրախութիւնից արտասուում էին:

ԳՈՐԾՈՎ ՄԱՐԴԻԿԸ ԿԱՌԱՎԱՐԵԼՈՒ ԻՄԱՍՏՈՒԹԻՒՆ ԴՈՒՆԻՆ

Ճաշից յետոյ Արնելը համայնքին ներկայացրեց արտը բաժանելու վերաբերմամբ իր կազմած ծրագիրը, ցոյց տուեց նըրանց, որոնք բողոքովին չգիտէին ու չէին էլ մտածել, թէ իսկապէս ճահիճների մէջ եղող ակունքներով կարելի է արօտի երրորդ մասից աւելին մարդագետին դարձնել և առհասարակ այս բաժանումով համայնքի ամեն մի անդամը մինչև հինգ հարիւր գուլգէն արժողութիւն ունեցող սեպհականութեան տէր կդառնայ: Նա ջրաբաշխութեան ծախքը, որ առ ձեռն հաշուով մօտ 7-ը կամ 8 հարիւր գուլգէն էր անում, իր վըստ առաւ և դրա փոխարէն գետնի հարկ որոշեց ամեն մի կէս օրավար մարդագետնին չորս արասի—իր առաջուց տուած եօթը հարիւր գուլգէնի տոկոսը վերցնելու համար—: Նա ապահովացրեց համայնքին, որ նրանք այդ հողի համար ուրիշ հարկ չեն վճարելու: Այս կէտի վերաբերութեամբ որոշ ասաց. գետինը ձերն է և ձեր նախնիքը թողել են ձեզ համար իբրև համայնքի սեպհականութիւն, որ հարկի չէ ենթարկուում և ես չեմ ուզում ձեր իրաւունքը խախտել: Մարդուս առաջին պարտականութիւնն է, որտեղ կարող է, իր կենակից մարդկանց աղքատութիւնը վերացնել, որպէս զի ամեն մէկն առանց հոգսի ու կարօտութեան կեանքի կարիքները լրացնէ. մարդուս այդ առաջին պարտաւորութիւնն առաւելապէս այն մարդոց պարտքն է, որոնց Աստուած ուրիշների հայր է կարգել: Յետոյ ասաց, որ ճահճային սեղում իր պապի ժամանակ անկուած ծառերըն ինքը ցանկանում է նոյնպէս բաժանել և ամեն մարդ կարող է նորատունկ ծառեր ստանալ դրեակի պարտիզից:

Ժողովուրդը ճանաչեց իր հօրը և բարձրաձայն շնորհակալութիւն յայտնեց. բայց նա մի վայրկեան թողեց նըրանց, որ ուրախանան:

ՄԻ ԳԱՆԳԱՑԱԻՈՐ, ՈՒՒՆ ԲԱՂԴԸ ԺՊՏՈՒՄ Է

Հնորհակալութիւն յայտնող ժողովրդի ցնծութեան մի-

Չոցին առաջ եկաւ Արնհայտի հաւ ծախողը և Արները կան-
չեց. լուռթիւնս Ամբոխը լոեց և Քրիստոֆը գանգատուեց՝
որ ինքն իր կեանքումը ոչ որի ցաւ չէ պատճառել և յի-
տուն տարուց աւելի է, որ ամենքի հետ հաշտ ու խաղաղ
է պարել, բայց այժմ յանկարծ իրեն համարում են կա-
խարդապետ և իր ամենալաւ բարեկամներն անգամ փախչում
են իրենից, ինչպէս ժանտախտից:

Արները մի ըոպէ իր հայեացքն այս ու այն կողմը
շրջեց՝ տեսնելու թէ այս գանգատն ինչ տպաւորութիւն կը
թողնէ: Գիւղացիները գլխները միմեանց մօտեցրին և մի բա-
նիսն ասացին բարձրաձայն. կախարդութիւնն այժմ շուտով
մոռացութեան կտրուի, քանի որ համայնքի արօտը բաժան
բաժան եղաւ: Արները չլսելու դրեց այդ խօսքերն ու սպառ-
նաց նրանց, որ հաւ ծախողին եկեղեցու լուսարար կհարգէ,
եթէ նրանք շարունակեն նրան կախարդապետ անուանելով
օրական հագից զրկել: Չեզնից ամեն մէկը կարող է կամեցա-
ծը հաւատալ, բայց ուրիշին ձեր հաւատով վիրաւորելուց
և նրա հետ անարդար վարուելուց զգուշացնում եմ ձեզ,
ասաց նա և աւելացրեց, եթէ դուք այդ մարդուն առաջուայ
նման թղլ չէք տալ՝ մանել ձեր սենեակն ու ախոռները,
այն ժամանակ ես կպատուիրեմ, որ նա ձեր կնունքներին ու
հարսանիքներին ներկայ լինի:

Այլ ևս ոչ որ բան չի անիլ նրան, ասացին բոլոր
նստարաններից գիւղացիները:

Յետոյ խօսեց Արները. այդ գործում ես չեմ ուզում
ձեզ վրայ ձնշում գործ դնել և անարդար վարուել. եթէ
ձեզնից մէկը նրա դէմ գանգատ ունի կամ թէ նրա մասին
վատ ու անպատուարեր բան գիտէ, թող առաջ գայ և ա-
սէ, ես նրան չեմ պաշտպանի:

Բայց ոչ որ նրա դէմ ասելու բան չունենի:

Այդ տեսնելով Արներն ասաց. զարմանում եմ, որ ա-
ռաջաւորներից և միւս մեղադրեալներից ոչ մէկը չէ զգում,
որ այժմ ժամանակ է առանց ծածկելու խոստովանել՝ որ հաւ
ծախողի վերաբերմամբ պայմանաւորուած դաւադրութիւն էր
սարքուած՝ արօտի բաժանումը դժուարացնելու համար:

Առաջաւորները միմեանց էին նալում և նրանց մէջ նըս-
տած Ռէնսօլըն ալ և ձախ խնդրում էր, որ ասեն թէ բանն

ինչու՞ն է. և նրանք այժմ, առաջին անգամ իրենց կեանքում, լսեցին այդ բարի մարդու խորհուրդը: Նրանք այդ յաջող վայրկեանի առաւելութիւնն զգացին՝ կրկին Արների աչքին դուր գալու, քանի որ իրենք չկարողացան նրա վրայ իշխել: Նրանցից չորսը տեղից վերկենալով՝ խոստովանեցին. այո՛, ճշմարիտ է, մենք ուզում էինք արօտի բաժանման արգելք լինել և սրտով երբէք հաւ ծախողին կախարդապետ չէինք համարում:

Արներն ուրախացաւ, որ նրանց խաբեբայութեանց դիմակը վայր բերեց, իսկ ամբողջ բերանաբաց կանգնած էր և նրանց դէմ գրգռուած: Յետոյ Արները ժողովրդին պատմեց յոյսպէս Հօօրլախէրի ուրուականի պատմութիւնը և պատուիրեց Հիւգիին, Վալէրլէդէրին, պահապանին ու Միխէլին առաջ գալ և խոստովանել, որ իր բոլոր ասածներն ամենայն մանրամասնութեամբ ճշմարիտ են:

157.

ԿԵՂԾԻՄՄՈՎ ԲԺԻՇԿԻՆ ԱՆԿՈՂՆՈՒՄ ԵՒ ՁԵՌՆԱՍԱՅԼԻ ՎՐԱՅ

Այդ միջոցին քահանայի տանից եկաւ Հանսը և յայտնեց տէր-հօրը, որ տանուտէրի կինը շուտ շուտ ուշագնաց է լինում և խնդրում է՝ թող տալ ամուսնուն իր մօտ գալու:

Քահանան պատմեց Արներին նրա հիւանդութեան հանգամանքներն ու «երկնից կաթիլների» ազդեցութիւնը. Հանսն էլ չկարողացաւ իրեն պահել և աւելացրեց թէ տանուտէրի կինն այժմ ինքն էլ զգում է, որ այդ «կաթիլներից» է թունաւորուել:

Բարկացած Արները հարցրեց շուտով թէ այդ դահիճը ներկայ է:

Նա տանն է, ասացին նրա դրացիներից մի քանիսը. Արներն իսկոյն Վայրէլին ուղարկեց նրա մօտ՝ հրամայելով որ նրան բերէ:

Յրոյժանգը պատուհանից պատասխանեց Վայրէլին ու հարցրեց թէ ինչ են կամենում իրենից: Բայց հէնց որ հասկացաւ թէ խնդիրը տանուտէրի կնոջն է վերաբերում, չկամեցաւ Վայրէլի հետ գնալ և ասաց, դու գիտես, որ երբ սկսում

է երեկոյանայ, ես չեմ կարող այլ ևս խօսել ու պատասխանել և այսօր էլ այնքան խմել եմ, որ եթէ համայնքի փողովին գամ, կարող եմ աղբիւրի մօտի փայտի ծայրին եղած խրտուիլակն Արների տեղ ընդունել: Այդ պատճառով աւելի լաւ է, որ տանը մնամ: Բարի՛ եղիր և սոս' Արներին, որ հիւանդ եմ և անկողնում պառկած. բայց եթէ նոցանկանում է, ես վաղը կամ միւս օրը դղեակ կերթամ:

Տրոյֆանգին ատող Վայբէլը նրա պատասխանը բառացի յայտնեց Արներին, այսինքն որ նա կեղծծամով պատուհանից իրեն ասաց, թէ անկողնում պառկած է ու հիւանդ և այլն. բայց աղբիւրի խրտուիլակի մօտին ոչինչ չասաց:

Արները վաղուց արդէն մտադրուել էր առաջին պատահած առիթով ծաղրել նրան. նա կանչեց Ֆլինկին, որ հիւանդին անկողնի մէջ մի ձեռնասայլի վրայ դնի և այնպէս բերէ. ինչ կուզէ թող ասէ նա, միևնոյն է, միայն այդ դիրքով պէտք է բերես, ասաց Արները:

Բայց Տրոյֆանգն էլ զգաց, որ իր պատասխանից լաւ քան չի դուրս գալու. հէնց որ Վայբէլը գնաց, նա վերցրեց իր հին հեռադիտակն և ուղղեց դէպի համայնքի փողովատեղին՝ տեսնելու թէ Վայբէլն ինչպէս է խօսում Արների հետ: Նա տեսաւ՝ թէ ի՛նչպէս է նա կանգնած նրա առաջը և նրա բերանից իսկոյն նկատեց, որ ծաղրում է իրեն. նա ջերմ ունեցողի պէս դող զգաց, նկատելով՝ որ Վայբէլն անհաւատարիմ հերեփկոսի նման դաւաձանում է իրեն: Բայց երբ տեսաւ, որ թուանքչին էլ Արների առաջն եկաւ, քիչ մնաց, որ դիտակը ձեռքիցն ու պատուհանիցը դուրս ընկնէր: Երկիւղի մէջ նա մտածեց, որ պէտք է անկողնի մտնէ, որպէս զի եկողը նրան պառկած տեսնէ: Սակայն անկողնի մտնելուց առաջ հեռադիտակը մի անգամ էլ ձեռքն առաւ և տեսաւ, որ Արների մօտ ձեռնասայլեր ունեցող շատ մարդիկ են կանգնած:

Երիտասարդներին շատ զուարճակի թուաց պարոն դոկտորին անկողնով լռենու տակ բերելը, նրանք տասնեակներով տեղից վեր թռան և մի քանի ձեռնասայլեր բերին:

Այդքան ձեռնասայլերն ուրիշ բանի համար պէտք է լինեն, մտածեց դոկտորը, աւելի ազատ շունչ քաշեց և անկողնի չմտաւ, այլ գնաց նկուղը՝ մի շէշ գինիով իր եր-

կիւղը փարատելու: Բայց հազիւ թէ շէջը բերել և սեղանի վրայ էր դրել, Ֆլինկն ու ձեռնասայլ բերող երիտասարդները բաղնեցին նրա դուռը. դոկտորի աչքերը մթնեցին՝ առանելով դրանց իրանց դռանը: Ի՞նչ բան ունիք այստեղ ձեր ձեռնասայլով, կակազելով աղաղակեց նա պատուհանից: Մենք պէտք է բեզ գրանով Արնների մօտ տանենք, պատասխանեցին նրանք և նրանց հետ եկող տղաները բարձրաձայն ծիծաղեցին:

Բայց Ֆլինկը լուրջ կերպով ասաց. դուռը բացէ՛ք, դուք պէտք է մեզ հետ դաք: Տրոյֆանգը գրեթէ առանց իմանալու թէ ինչ է անում, բացեց դուռը:

Նրանք վեր բարձրացան և Ֆլինկը հաղորդեց նրան որոշ ձևով ու կարգով՝ թէ ինչ պէտք է անեն:

Նա սկսեց անիծել ու ասել, որ ինքը կարող է հազար և աւելի գուլդէն վճարել եթէ մի յանցանք է գործել, բայց թոյլ չի տալ, որ այդպէս վարուեն իր հետ:

Երիտասարդները պատասխանեցին, թէ Արները բժշկին խնայելու համար է այդպէս անում, որովհետև լսել է թէ հիւանդ ու անկողնում պառկած է: Ֆլինկն ասաց, որ նա խելք բանեցնի և իր կամքով անի այն, ինչ որ այլ ևս կարելի չէ փոխել: Սակայն Տրոյֆանգը կատաղածի նման անիծում էր ու ասում, որ չի թոյլ տալ, որ իրեն հետ այդպէս վարուեն ու սայլակով տանեն: Վերջապէս Ֆլինկը յոգնեց ու ասաց, որ եթէ կամաւ չի կամենում գալ, կապել կապ:

Թող մէկը համարձակուի փորձել ու մօտենալ ինձ, նա կտեսնի թէ ի՞նչ կպատահի իրեն: Բայց Ֆլինկն առանց պատասխան տալու՝ նրա թուից պինդ բռնեց:

Ո՞վ Յիսուս, ո՞վ Յիսուս, ձեռքս ցաւում է, ես կգամ, ասաց դոկտորը, ողբալով ու լալով նստեց ձեռնասայլի վրայ և համբերութեամբ թողեց, որ վերմակը վրան ծածկեն ու այնպէս բաշ տան սայլակով:

158.

ԼՈՒԾՈՒԱԾ ՀԱՆԵԼԼՈՒԿԸ ԵՒ ԱՐՆԵՐԻ ԴԱՑԱՎՃԻՌՆ ԼՐՏՕՎՆԵԼ ՄԵՐԴԱՍՊԱՆԻ ՎԵՐԱԲԵՐՄԱՄԲ

Երիտասարդները՝ ծաղր ու ծանակի համար, սայլակն

ամենաերկար ճանապարհով, գերեզմանատան մօտով, տարան: Կուռի Ֆրիդէլին և Բիւտիհանսն էին քաշ տալի սայլակը: Բայց նրանք դեռ շատ քիչ տեղ էին գնացել, յանկարծ Կուռի Ֆրիդէլին կուռը ցուեց: Դոկտորը նրան առաջուանից տասն անգամ անելի ծանր թուաց: Նա սպառնալիքներ էր արտասանում իրեն դիպչողներին դէմ և կարծում էր թէ մինչև մահ ձեռքն էլ չի կարող բանեցնել: Գրեթէ ուշագնաց լինելով նա ցած բերեց դոկտորին լուսնու տակ և բուռն կերպով բռնելով թևի ցաւող տեղը՝ տեսաւ որ իր բաձկոնակի մի արուրեայ կոճակն ընկել է սայլաքաշի և ուստկրի միջավայրում և սեղմել թևը:

Արներն արդէն մի քանի անգամ արգելել էր Տրոյֆանդին՝ իր ազահի կաթիլները գործածել, բայց այժմ էլ չարգելեց նրան: Այսուհետև գործ դիր նրանից ինչքան կամենաս և ինչքան կարողանաս. թող խնթերը վճարեն քեզ դրա համար. այդ կողմից ոչ մի արգելք չեմ դնում քո առաջ: Իմ պահանջը քեզնից միմիայն այս է. երբ այսուհետև մէկը վախճանուի քո բժշկութեամբ, դու պէտք է նրա գերեզմանը փորես: Բայց որովհետև դու ծեր, արբեցող, հազից չարչարուող ես, չես կարող անձամբ փորել, այդ պատճառով ուզում եմ խնայել քեզ: Բայց երբ ուզենաս փորել ալ, կարող ես մի մշակ վարձել և քո շատ կոճակներով մոխրագոյն վերարկուն ու սև կեղծծամդ նրան տալով՝ բանեցնես. նա այդ զգեստով կարող է քո փոխարէն ննջեցեալների համար գերեզման փորել: Բայց դու էլ պէտք է նրա կողքին մի աթոռի վրայ նստես՝ ըլունգի առաջին հարուածից սկսած մինչև վերջը. այդ պէտք է կատարուի: Իսկ եթէ քո ձեռքով բժշկուողներից մէկը մեռնի և դու չյայտնես ինձ, ես քեզ անյայտի մի տեղ կբանտարկեմ, ուր ոչ արև տեսնես և ոչ լուսին:

Այս ասելով Արներն երեսը դարձրեց նրանից և թողեց որ գնայ:

ԱՐՆԵՐԸ ՎԱՅԵԼՈՒՄ Է ԴԱՐՉԵԱԼ ԻՐ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊՏՈՒՂԸ

Այդպիսով վերջացաւ Արների համար այս արդարագաստ օրը: Նա համայնքն արձակեց ու իր ձին քշելով՝ տուն գնաց:

Մայր մանող արևի ճառագայթներն ընկել էին Արնե-
րի դղեակի աշտարակի վրայ: Արները յիշեց այսօրուայ ա-
րևի ծագումն ու իր առաւօտեան աղօթքը և իր հայեացքը
ձգելով դէպի արևը, ասաց, փա՛ռք Աստուծոյ, ես կարող
եմ ուրախ սրտով դիտել նրա մայր մանկը:

Այս օրուայ վերջին ժամերը նա հազուագիւտ զուար-
թութեամբ անցկացրեց: Երբէք նա իր ամուսնու գրկում
և երեսայոց հետ այսօրուայ նման մեծ ու աշնիւ չէր զգա-
ցել իրեն, որովհետև այսօրուայ նման շատ բարի գործեր
չէր արել:

160.

ՄԵՐՉԻՄԱՀ ՀԻՒԱՆԻԸ

Թողնենք դրան և դիմենք մերձիմահ հիւանդի խրճիթը:
Նրա ամուսինը լուռ ու մունջ ընկաւ նրա անկողնի առաջ.
ձեռքը բռնեց, մխիթարեց, հրաժեշտ տուեց, Աստուծոյ օր-
հնութիւնը հայցեց նրա համար և վերջը ներողութիւն
խնդրեց նրանից:

Տանուտէր: Աստուած իմ, ես պէտք է ներողութիւն
խնդրեմ քեզնից. ե՛ս եմ քո թշուառութեան պատճառը:

Տանուտէրի կինը: Ես էլ իմ կողմից պատճառ եմ
եղել քո թշուառութեան:

Նրանք երկուսն էլ սկսեցին ջերմ արցունքներ թա-
փել: Մի քանի վայրկեանից յետոյ բահանան էլ եկաւ նա
նստեց նրանց կողքին և արտասուք էր թափում. մի խօսք
չէր արտասանում և ուշադիր էր հիւանդի վայրկենական
պահանջներին: Այդպէս էր նա բոլոր հիւանդների մօտ, ո-
րովհետև կարծում էր թէ պէտք է զուտ մարդկային մըտ-
քերով հիմք դնել սրբազան ուսուցման և ապա թէ աւե-
տարանի խօսքերով խօսել: Առհասարակ շատ խօսել չէր
սիրում նա և ասում էր թէ խօսքերը ծխի պէս կրակի
նշանն են և ոչ թէ կրակ. և որքան մաքուր լինի կրակը,
այնքան քիչ ծուխ կունենայ. որչափ մաքուր լինի մարդկա-
յին ուսումը, այնչափ քիչ խօսքեր պէտք է պարունակէ:
Շատ խօսքեր գործածելը հասարակ մարդու բանը չէ: Որ-
չափ շատ խօսքեր գործ դնենք, այնքան թոյլ կարտայայտենք
մեր միտքը կամ սրտինը: Շատ խօսքերը շփոթում են մար-

դուն և հարկւրաւոր երկրորդական բաներ առաջ բերում, իսկ գլխաւորը մնում է: Բայց մեր ժամանակի մարդիկ մանկութիւնից սկսած սովոր են շատ բառեր գործածելուն և գրեթէ հասկացողութիւն չունին, որ կարելի է առանց բառերի, մարդոց ներքին արժանաւորութիւնն և երկիւղածութիւնն արտայայտել:

Բարի բաճանան տարիներով շարունակ իր գիւղացիներից ներողութիւն էր խնդրում, որ ինքը միշտ սենեակը մանելու վայրկեանին բարձր ձայնով չէ աղօթում. բայց նրանք հետզհետէ ընտելացան սյդ բանին: Մերձիմահ հիւանդների անկողնի մօտ նրա պահպանած թախժալի լուութիւնը, սրտագին ցաւակցութիւնը և նրա սիրով ու հաւատով լի դէմքը խօսքերից աւելի էր արտայայտում նրա ուսուցման ոգին՝ այս կեանքի բաղաւորութիւնն ու պարտականութիւնն և հանդերձեալի երջանկութիւնն ու յոյսերը: Նրա սկզբունքն էր. ով ուշադրութեամբ է վերաբերւում մարդկանց հանգամանքներին ու կարիքներին այս աշխարհում, նա կարող է միայն հանդերձեալ կեանքի ուսուցումը նրանց սրտումը տպաւորել: Այդ պատճառով իր կարողութեան չափ աշխատում էր լինել այն և տալ այն, ինչ որ իր կարծիքով ամեն վայրկեան ամենից լաւն է. և սովորութիւն ունէր շատ երկար լսել ու տեսնել՝ ինչ որ մարդս որոնում, ցանկանում, մտածում և հասկանում է:

Այդպէս նա իր ժողովրդի մէջ և նա մանաւանդ հիւանդների ու մերձիմահների մօտ, սովորաբար ներկայ եղողների մէջ ամենից քիչ էր խօսում և կարծես բոլորովին ուրիշ մարդ լինէր: Բայց երբ սկսում էր խօսել, ամբողջ հոգուով զգացուած էր արտասանում ամեն մի խօսքը. կարծես թէ մեռնողի հոգին է թափանցում, իր խօսքերն այնտեղից հանում և նրա լեզուի ծայրին դնում իր կամեցածը: Այն ամեն ընտանիքներում, որտեղ նա ներկայ էր լինում, մեռնողների անկողիններն անմոռանալի էին մնում:

Նրա ներշնչմամբ տանուաւերի կինը ցանկութիւն արտայայտեց, որ այն բոլոր չքաւորները, որոնց հետ նա անարդար էր վարուել՝ իր մօտ գան:

Քահանան այնտեղից գնաց Տրդաֆանգի մօտ, առաջուց խօսք տալով, թէ Արներին կենդրէ, որ տանուաւերին թղլ

տայ այս երեկոյ իր մօտ հրաւիրելու այն շքաւորներին,
որոնց նրա կինը կամենում էր տեսնել:

161.

ԲԱՐԵՍՒԻՏ ՄԱՐԴՈՒՆ ՅԱՋՈՂՈՒԹ Է ԻՐ ՈՒԶԱԾԻՆ ԱՆԵԼ
ՅԱԼ ՈՒՐԻՇՆԵՐԻՆ

Տրոյֆանգը քահանային տեսնելով՝ բարևելու փոխա-
րէն հարցրեց՝ թէ ի՞նչ գործ ունի այսօր իր մօտ:

Միմիայն ձեզ բարի գիշեր ցանկանալու համար եմ ե-
կել, եթէ կարող էք տանել այդ, պատասխանեց՝ քահանան
և ուղղակի նրա երեսին նայեց:

Դոկտորն իսկոյն աւելի ուրախ դէմք ցոյց տուեց, մէկ
աթոռի վրայից հաւաքեց զանազան խոտեր ու արկղիկներ
և աթոռն առաջարկեց քահանային նստելու:

Քահանան իսկոյն սկսեց տանուտէրի կնոջ մասին խօ-
սել. դոկտորն էլ առանձին եռանդով սկսեց հաւատացնել,
որ ինքը մեղաւոր չէ և իրեն դէմ յանցանք են գործում.
Վերջն ասաց՝ մահուան դէմ ոչ ոք չի կարող բան անել և
ուրիշ դոկտորների մօտ բժշկուողներից էլ շատերը մեռ-
նում են:

Քահանան: Ձեր դեղորայքը մարդոց կեանքի և մա-
հուան մէջ տեղն են գցում:

Տրոյֆանգ: Դուք խօսում էք այն բանի մասին, որից
ոչինչ չէք հասկանում: Բոլոր լաւ դեղերը պէտք է հիւժեն:

Քահանան: Դուք խիղճ չունիք և ինքներդ ամենից
քիչ էք հասկանում թէ դեղորայքն ի՞նչպէս և ինչ տեղ
պէտք է ազդեն:

Տրոյֆանգ: Միւսներն ինձնից աւելի չեն հասկանում
և իմ խիղճն էլ այնպիսի արկղի մէջն է, ինչպէս ուրիշ-
ներինը:

Մի առ ժամանակ նրանք շարունակեցին այդ ձևով
խօսել, մինչև որ վերջապէս քահանան տաքացաւ ու ասաց.
տանուտէրի կնոջ հանգամանքներն այնպէս են, որ եթէ նրա
դիակը կտրեն, ցերեկուայ լուսի պէս պարզ կերևայ, որ
դուք թունաւորել էք նրան:

Հէնց որ քահանան «դիակը կտրեն» արտասանեց,
Տրոյֆանգը սարսափեց. նա լեղուն փոխեց և խոնարհ կեր-

պով ասաց. ես արեւ եմ ինչ որ կարողացել եմ և եթէ իմ կեանքն էլ վառնգի ենթարկուէր, աւելի չէի կարող անել և արածիցս էլ աւելի լաւ չէի կարող:

Բայց քահանան այդ խօսքերին էլ ընդդիմախօսեց ու ասաց. երեք օրից աւելի է, որ հիւանդի մօտ չէք եղել. դուք նրան թողել էք անխնամ. նոյն իսկ պատուաւոր անասնաբոյժն անգամ երբ յանձն է առնում մի անասուն բուժել, այդպէս անխնամ չէ թողնում նրան:

Տրոյֆանզն ուզում էր ամեն տեսակ պատճառներ առաջ բերելով բացատրել թէ ինչու երեք օրուայ ընթացքում տանուտէրի տուն չէ գնացել, բայց կակազում էր:

Քահանան: Միակ պատճառն այն է, որ տեսաք դեղի աղդեցութեան հետեանքը:

Այսպիսով քահանան նրան այնպէս նեղը լծեց, որ նա վերջը ո՛րինչ չկարողացաւ պատասխանել ու ասաց. տէր-Տայր, դուք լաւ չէք վարում ինձ հետ:

Քահանան: Դուք այլ ևս բժշկութիւն չպէտք է անէք, եթէ կամենում էք որ պատուաւոր մարդիկ սրտանց լաւ լինեն ձեզ հետ և բարեկամ մնան:

Տրոյֆանզ: Ես այնպիսի մարդկանց եմ օգնութիւն հասցրել, որոնց ոչ ոք չէր օգնում. և այնպիսի դեղորայք ունեմ հարկաւ, որ ուրիշները չունեն և լաւ են: Արդեօք ես այդ բժշկութեան միջոցները ծո՞վը գցեմ, կամ ինձ հետ գերեզման տանեմ:

Քահանան: Ո՛չ, ես այդ չեմ ասում:

Տրոյֆանզ: Ուրեմն ձեր կարծիքով ի՞նչ պէտք է անեմ:

Քահանան: Դուք պէտք է մի հասկացող բժիշկ գրտնէք, ձեր փորձառութիւնը նրան հաղորդէք և ձեր բժշկութեան միջոցներն ու դեղերը յայտնէք:

Տրոյֆանզ: Այդ նշանակում է՝ որ ես անձամբ իմ մի կտոր հացը բերանիցս կարեմ և ուրիշին տամ. մի՞թէ կարծում էք, որ ես այդպիսի յիմարութիւն կանեմ:

Քահանան: Նայելով թէ գործի վրայ ի՞նչ տեսակէտով էք նայում:

Տրոյֆանզ: Ի՛նչ էք ուզում ասել:

Քահանան: Ահա՛ այսպէս. իմ կարծիքով դուք արդար խղճով Աստուծոյ առաջ չէք կարող ասել, որ ձեր արհեստը

գործ էք դնում՝ առանց ուրիշ մարդկանց կեանքը վտանգի ենթարկելու. եթէ դուք այդ չէք կարող, կամ պէտք է թողնէք այդ արհեստը կամ թէ դադարէք պատուաւոր մարդ լինելուց: Իսկ եթէ ստիպուած լինիք թողնել ձեր արհեստը, ինչու չպէտք է ձեր ձեռքումն եղող այդ բարիքը մի ուրիշին տաք, որ աւելի լաւ գործագրելով՝ կարող է օգնել մարդկութեանը:

Տրդֆանգը լուում է և քահանան շարունակում. սիրելիս, մասծեցէք, թէ արդեօք ձեր մահուան ընկերն չէ՞իք ցանկանալ բարիք անել մարդկանց, որոնց դուք ձեր անդգոյշ և անխելք բժշկութեամբ գերեզման էք իջեցրել. չէ՞իք ցանկանալ ուրիշների կեանքի և բարօրութեան համար մի լաւ բան էլ գոհել:

Տրդֆանգը մինչև այժմ աչքերը գետին ձգած՝ ո՛չ մի խօսք չէր արտասանել, բայց այժմ գլուխը բարձրացրեց, նայեց քահանային ու ասաց. այո՛, եթէ ինձ հետ այդպէս վարուէին և այդպէս խօսէին, գուցէ ես ձեր ասածներից այնքան էլ հեռու չիտայէի: Մասծեցէ՛ք ինչ որ կամենաք. ես հարկաւ սրտով հրէշ չեմ և կարող եմ առանց գրան էլ ապրել և մնալ այն՝ ինչ որ եմ:

Գիտեմ այդ, ասաց քահանան, այդ պատճառով էլ աւելի արիութիւն ունեցայ ասածներս պահանջելու ձեզնից: Յետոյ նա խօսեց տանուտէրի կնոջ մասին՝ թէ ինչպէս նա յաջորդ առաւօտը կամենում է հրաժեշտ տալ այն բոլոր չքաւորներին, որոնց հետ ինքն անարդար է վարուել:

Ես էլ կուզէի այդ ընկերն ներկայ լինել, ասաց Տրդֆանգը և քահանան որոշեց, որ նա կողքի սենեակից ահանատես լինի այդ հրաժեշտին. յետոյ բարեկամաբար մնաս բարև ասաց նրան՝ յուսալով որ տանուտէրի կնոջ մահուան անկողնի մօտ աւելի կմեղմանայ նրա սիրտը: Յուն գնալիս ճանապարհին քահանան շատ չքաւորների տուն մտաւ և խնդրեց, որ վաղն առաւօտեան ժամի ութին տանուտէրի կրնոջ մօտ լինեն և իրենց մանուկներին էլ հեռանքը տանեն:

Տանուտէրն էլ գնացել էր բոլոր չքաւորների մօտ. շատերի սիրտը յուզւում էր, երբ տանուտէրն ասում էր նրանց իր ցանկացածը. նրանք արտասուում էին:

Ասա՛ կնոջդ, որ մեր մասին չմտածէ և հանգիստ մեռնի, ասաց մէկը:

Այժմ ամեն բան անցել է, իսկ ինչ որ անցել է, նըրա մասին չեմ մտածում ես, ասաց մէկ ուրիշը:

Այդ կարևոր չէ, թող նա հանգիստ լինի, ես ցանկանում եմ նրան սրտանց ամեն բարիք և արքայութիւն:

Երկիրս վշտի հովիտ է. մենք ամենքս էլ միատեղ շատ չարիք ենք անում: Թող նա մեր պատճառով նեղութիւն չկրէ:

Նա երբեմն երբեմն ինձ բարութիւն էլ է արել և կարիքի ժամանակ, Աստուած է վկայ, մի երկու անգամ էլ առանց բեղ իմաց տալու է օգնութեան հասել:

Այսպէս բարեկամաբար էին պատասխանում չքաւոր մարդիկը տանոււէրին, որ խոնարհ կանգնած էր նրանց առաջ և ասում. այո՛, այո՛, եթէ այդ ուրախութիւն կպատճառէ նրան, վաղը սիրով կգանք. բոլորն էլ ցանկանում էին, որ նա հանգիստ ու թեթևութեամբ անցկացնի գիշերը և եթէ Աստուած կամենայ, առողջանայ: Միայն շատ քչերն այնպիսի խօսք ասացին, որ վիրաւորէր տանոււէրին. բայց նա այնպէս համբերող էր և այնպէս թախծալի պատասխաններ էր տալիս, որ այդպիսի խօսք ասողներն էլ զըզւում էին:

Հօօրլաւերի կինը պատասխանեց նրան. Ա՛խ Աստուած իմ, սիրով կնեւրէի ձեզ, եթէ իմ երեխաների կարիքը չը յուսահատեցնէր ինձ:

Ցանոււէրը կանգնած էր անխօս նրա առաջը և չէր կարողանում պատասխանել:

Նոյն վայրկեանին Հօօրլաւերի կինը յետ վերցրեց իր ասած խօսքն ու ասաց. բերանիցս թռաւ այդ խօսքը, առանց իմ կամքի. այդ մասին մի մտածի, Աստուած կօգնէ մեզ:

162.

ՄԱՐԴԻԿ ԲԱՐԻ ԵՆ ԵՒ ՀԱՃՈՒԹԵԱՄԲ ԵՆ ԲԱՐԻ ԼԻՆՈՒՄ

Արդէն հասաւ տանոււէրի կնոջ մահուան առաւօտը: Նա արթնացաւ թարմացնող քնից յետոյ և զարմանքով նայեց իր անկողնից արևին, որ այժմ վերջին անգամն էր

ծագում նրա համար այս աշխարհում: Այդ վայրկեանին նա մտածում էր. միև աշխարհում ինձ աւելի լաւ արեգակ է սպասում:

Գերարուզը նրա զարթելուց առաջ արդէն այնտեղ էր և սփոփում էր նրա ցաւերը. մէկ սրբում էր նրա ճակատի քրտինքը, մէկ ուղղում էր բարձը, մէկ աջից ձախ և ձախից աջ կողքի վրայ շքջում նրան: Նա հիւանդի սենեակի ոտը թարմացրեց քացախով և տանը գտնուող բոլոր աթոռներն ու նստարանները կարգի բերեց, որպէս զի եկող չքաւորները կարողանան նստել: Երբ Գերարուզը մեռնողին միանգամ այդպէս քնքշաբար մէկ կողմի վրայ էր շքջում, նա ասաց. անաստուած վարդու ձեռքն ամեն տեղ կոշտ է, իսկ դու, եթէ սրտանց չանէիր՝ չէիր կարող ինձ այնպէս շքջել, որ այդքան քիչ ցաւ պատճառէր ինձ. ես զգում եմ, որ ամբողջ կեանքումս սխալուած եմ եղել:

Երբ քահանան Տրոյֆանդի հետ եկաւ, նշանացի արեց Գերարուզին. Գերարուզը դոկտորին տեսնելով վախեցաւ և դրանք միմեանց չբարևեցին. նրա լեզուի ծայրին էին հետևեալ խօսքերը. այս մարդը կրկին ինչու է ուզում անհանգըստացնել խեղճին:

Քահանան նրա շրթունքների վրայ կարդաց նրա մտքինը և ձեռքը բռնելով ասաց. մենք ձեզ չենք անհանգըստացնի:

Նրան տեսնելը հարկաւ հիւանդին անհանգստութիւն կպատճառէ, որովհետև հէնց այն ժամանակն է գալիս, երբ նա սպասում է չքաւորներին, պատասխանեց Գերարուզը բուռն կերպով:

Նա միայն կողքի սենեակից ուղղում է տեսնել չքաւորների գալը, պատասխանեց քահանան և Գերարուզը տարաւ նրան այն սենեակը:

Ժամի ութը խփեց և չքաւորներն եկան: Նրանք տան առաջը միմեանց սպասում էին, որ միասին ներս մտնեն և հիւանդին նեղութիւն չպատճառեն՝ անդադար դուռը բաց ու խուփ անելով:

Քահանան գնաց նրանց մօտ, սրտանց բարևեց բոլորին, շնորհակալութիւն յայտնեց, որ ուրախացրին հիւանդին և

խնդրեց, որ սենեակը մտնելիս ըստ կարելոյն հանդարտ ու լուռ լինեն:

Չբաւորների մեծ մասը, այր մարդիկ ու կանայք, փողոցում հանեցին իրենց կօշիկները և ձեռքերին բռնելով համարեա՛ թէ ոտքի մատների վրայ էին դնում, որ աղմուկ չանեն, Դրանք բոլորը՝ թէ մարդ, թէ կին և թէ երեխայ՝ քառասուն հոգուց աւելի էին:

Երբ նրանք ներս եկան, տանուտերի կինն ամեն մէկին նայում էր և գլուխը շարժում: Բոլոր չքաւորներն էլ նրա բարևին պատասխանեցին բարեկամական նշաններ արտայայտելով. շատերի աչքերն արտասուքով լի էին. ոչ ոք չէր խօսում: Հօօրլախերի կինը մահուան արտայայտութիւն ուներ:

Ցանուտերի կինը տեսաւ նրան՝ երկու երեխաները ձեռքին, որոնք քաղցի և կարիքի պատկերն էին կրում, մաշուած կօշիկները ձեռքին բռնած, իր առաջը կանգնած՝ համբերութեամբ իրեն նայելիս և յետոյ աչքերը դէպ երկինք ուղղելիս: Նա դողաց այս տեսարանից և մարդու ձեռքը բռնեց. վերջինս իր դէմքը ծածկեց հիւանդի վերամկոյ: Բայց հիւանդը հանդստացաւ կրկին: Նա՛ ամբողջ գիշերը և զարթելուց յետոյ շարունակ նրա վրայ էր մտածում՝ թէ ի՞նչ պէտք է ասէ այդ դժբաղդներին:

Այժմ նա խնդրեց ամենքին նստել. ամեն մէկն էլ լուռ աշխատեց իրենից մօտիկ եղող տեղը բռնել. աղամարդիկն ու կանայք երեխաներին իրենց գիրկն առան:

163.

ՄԵՌՆՈՒ ԽՕՍՔԵՐԸ

Հիւանդն ասաց. բարև ձեզ, սիրելի, չքաւոր և յաճախ մեղանից ծնշուող բարեկամներ. Աստուած վարձարէ ձեզ, որ խղճացիք ինձ և այժմ, երբ ինձ պէտք էիք, եկաք ինձ մօտ: Ես արժանի չէի դրան: Երբ դուք կարիքի և թշուառութեան ժամանակ ինձ մօտ էիք գալիս, ես սիրտս փակում էի ձեր ցաւերի առաջ: Ես ուշադրութիւն չէի դարձնում ձեր աչքերի մէջ փայլող սովի ու պակասութեան վրայ և աչքերս չուում էի միայն ձեր ձեռքն եղած կոպէկի:

վրայ: Ձեզ պատկանող կաթիլը ես պահում էի բաժակում. ես լաւ չէի դատարկում այն չափը, որի մէջ ձեր ալիւնն էր. բաշում էի ձեր երեխայոց համար ձեր գնած կաթիլ ները: Հացն ու իւղը, գինին ու միսը կշռեիս պակաս էի տալիս ձեզ և ստիպում էի ձեզ ինձնից թանկ գնով առնել այն, ինչ որ ուրիշից աւելի արժան կարող էիք գնել: Մեր մեղաց համար գիւղի երեխաներն իրենց ծնողներից էին գողանում, ծառաները վարպեաներից, կանայքն իրենց մարդկանցից և գողացածը մեր տուն էին բերում: Այդ պատճառով մենք բոլոր մարդկանցից էլ թշուառացանք: Ձեզնից շատերին գողութեան համար պատժել են, իսկ դուք գողացածը մեզ համար էք բերել. շատերը ձեզնից անհնազանդ որդոց անկէքն են կրել, իսկ նրանք մեր պատճառով են անհնազանդ դարձել. շատերն էլ մեզ մօտ մոլորուելով՝ յուսահատուել են: Ձեզնից շատերի որդիքը մեր երկրից փախել են, որովհետև փչացել են մեր ձեռքին և աղջիկներն էլ դժբաղդացել են, որովհետև մեր տանը նրանց համար որոգայթներ են լարել:

Դեռ էլի՜ շատ բան կայ, բայց չեմ կարող ասել և որ գլխաւորն է՝ չեմ կարող փոխել: Աւելի ոչինչ չեմ կարող ասել. օրինակ առէք և ի սէ՛ր Աստուծոյ, ձեզնից տմեն մէկը թող իր տանը և իւրայինների մօտ մնայ: Ատենցէք և մի կոպէկի անգամ ոչինչ մի՛ գնէք, եթէ չէք կարող իսկոյն վճարել:

Այստեղ նա մի փոքր կանգ առաւ և ապա շարունակեց.

Ես աւելի ոչինչ չեմ կարող ասել. ի սէ՛ր Աստուծոյ, ներեցէք ինձ, ներեցէք իմ ամուսնուն, ես այժմ մի խեղճ մեղաւոր եմ և սպասում եմ մահուան: Ամեն մէկիդ խընդրում եմ, ի սէ՛ր Աստուծոյ, ինձ համար հաւատով լի՞մի՞ք «հայր մեր» աղօթեցէք: —

Այս խօսքերն արտասանելով՝ տանուաւրի կինն երեսը միւս կողմը դարձրեց և ուշագնաց ընկաւ բարձրի վրայ:

164.

ԱՅՍՏԵՂ Է ՃՇՄԱՐԻՑ ԱՍՏՈՒԾՈՅ ՏՈՒՆԸ ԵՒ ԵՐԿՆՔԻ
ԴՈՒՌԸ

Ես էլ այդ մարդկանց մէջն էի նստած, բայց չեմ կարող արտայայտել ու նկարագրել թէ ինչ զգացիմք մենք բոլորս, երբ հիւանդը մեր առաջ ուշագնաց ընկաւ:

Սուրբ հոգի, որ հոգմի պէս սաւառնում ես և կրակի պէս արում՝ մարդկանց սրտերին ուղղութիւն տալու, դու օրհնեցիր և սրբագործեցիր մեռնողի խօսքերը, որովհետև այն խեղճերի խումբը, որ դեռ երէկ վրէժխնդրութիւն էր գոչում և դառնապէս խօսում, այժմ ցաւում ու ողբում էր նրա վրայ, ինչպէս իր սիրելու վրայ և նրա օրհնութիւնն էր ցանկանում, ինչպէս հարազատ մօր օրհնութիւնը:

Սուրբ հոգի, դու որ օրհնում ես մարդկանց խօսքը, որ նրանք էլ Աստուծոյ խօսքին նմանուին, սաւառնի՛ր յաւիտեան այս մեռնողի խօսքերի վրայ, որ նրա ճրագը չմարի և նրա ոյժը չոչնչանայ, քանի որ հարուստները կճնշեն երկրիս վրայ և աղքատները կչարչարունն: Իմ հոգին փառաբանում է Աստուծուն և գովաբանում է նրա անունը՝ որովհետև նա գթաց մեռնողին, ներեց նրա մեղքերը և ոչնչացրեց նրա չարագործութիւնները: Նրա աղքատները աղօթում են նրա համար և նրանք, որոնց նա ճնշել է, լայի՛ս են նրա համար. նոյն իսկ նրանց գրկի անչափահասների արտասուքները աղաչում են Տիրոջը նրա համար: Փառաբանիր, իմ հոգի, Աստուծուն և գովաբանիր նրա անունը:—

Բոլոր չքաւորներն ոտքի ելան և միաբերան ներողամտութեան ու սիրոյ խօսքեր էին արտասանում. քահանան չքաւորների մէջ աեղը չոքեց, աչքերն երկինք բարձրացրեց և աղօթում էր լուռ, որ այս ժամի օրհնութեան տպաւորութիւնը չքաւորների սրտում անջնջելի մնայ, մինչև որ բոլորն էլ իրենց երկրաւորը կնքեն:

Երբ քահանան վեր կացաւ, Գերտրուդն ասաց, որ այժմ հիւանդին հանգստութիւն է հարկաւոր: Քահանան էլ նոյնը չքաւորներին ասաց ու նրանք էլ մէկը միւսի ետևից լռելեայն դուրս գնացին:

Միւս սենեակումն եղող Տրոյֆանդն այնպէս զգացուել էր այս տեսարանից, որ երբ բաճանան նրա մօտ գնաց, պարզ ու ինքնաբերաբար յայտնեց, որ ինքն այսուհետեւ այլ ևս ոչ ոքի դեղորայք չի տալ: Նա խնդրեց բաճանային՝ իրեն համար էլ ներողութիւն խնդրել և վերջինս բոլորովին ապահով կերպով իր նպատակին հասնելու համար՝ դուրս տրին միւս օրն իր մօտ ճաշի հրաւիրեց:

165.

ԵԹԷ ԴՈՒՔ ԶԵՐ ԱՐԴԱՐՈՒԹԵԱՄԲ ԴՊԻՐՆԵՐԻՆ ԵՒ ՓԱՐԻՍԵՑԻՆԵՐԻՆ ԶԳԵՐԱԶՆՑԷՔ՝ ԵՐԿՆԷՒ ԱՐՔԱՅՈՒԹԻՒՆԸ ԶԷՔ ՄՏՆԻ

Տուն վերադառնալու ժամանակ Հօօրլախէրի կինը Ռէնօլդի մօտից անցաւ: Նա մտքերի մէջ խորասուզուած նըստած էր տան առաջը: Երէկուայ տպաւորութիւնը դեռ ևս ծանրացած էր նրա սրտի վրայ: Իր կեանքի ամբողջ ընթացքն ու այդ միջոցին իր արած սակաւ բարութիւնները ներկայացան նրա աչքի առաջ. հէնց այս միջոցին անցաւ նրա մօտով այն կինն իր երեք մանուկներով և ողջունեց նրան: Նա գիտէր, որ նա տանուակերի կնոջ մօտիցն է գալիս ու ասաց. դու է՛լ կարողացար սիրտդ պնդել նրա մօտ գնալու, չնայելով որ նա բեզ ու մանուկներին այդպէս քամաղդացրեց:

Եթէ նա սրանից էլ աւելի թշուառացներ ինձ, էլի շնորհակալութիւն կ'այայտնէի Աստծուն, որ ես այժմ նրա մօտ էի, պատասխանեց կինը:

Ռէնօլդն աչքերը չուեց նրա վրայ ու ասաց. շատ բան կստանաս այ՝ թէ նրա մօտ գնացիր: Այդ ընտանիքի թշուառութիւնն այնպէս վիրաւորում էր նրա սիրտը, որ նրա բերանից թուաւ այդ անգգոյշ խօսքը: Եւ յանդիմանութեան էլ արժանի չէ նա, որովհետեւ մանուկները կիսամերկ էին: Հօօրլախէրի կինը պատասխանեց. Ռէնօլդ, ես այժմ փորձեցի, որ երբ մարդ սրտով արի ու հանգիստ է, աւելի լաւ է զգում իրեն, քան թէ կուշտ ժամանակը:

Ռէնօլդն ամաչեց ու ասաց. Փ՛ռք Աստուծոյ, որ նա բեզ մի լաւութիւն է արել:

Ռէնօլդ, պատասխանեց կինը, եթէ բոլոր չքաւորները

նրա հետ անարդար վարուած լինէին և նրան թշուառացրած, ինչպէս նա մեզ է թշուառացրել, մենք նրա անկողնի առաջ այժմեանից աւելի չէինք կարող խոնարհել:

Այդ շատ տարօրինակ բան է, ասաց Ռէնօլդը և պատմել տուեց նրան հիւանդի բոլոր ասածներն ու բոլոր պատահածները: Երբ նա վերջացրեց իր պատմութիւնն և ուզում էր ճանապարհը շարունակել, Ռէնօլդն ասաց. սպասի՛ր մի րոպէ էլ, ես քեզ կարծեմ մի բան ունիմ ասելու: Նա տեղից վեր կացաւ, գնաց սենեակը, իր կնոջ մօտ և ասաց. կի՛ն, ես մտադիր եմ Հօօրլախէրին օգնել, որ նա կրկին իր տունը ձեռք բերէ:

Կի՛նը: Եթէ մտադիր ես, կարող ես չորս—հինգ հարիւր գուլդէնից ձեռք վերցնել:

Ռէնօլդը: Այո՛, գիտեմ որ այդքան պարտք կայ այդ տան վրայ:

Կի՛նը: Եւ այնուամենայնիւ կամենում ես:

Ռէնօլդը: Այո՛:

Կի՛նը: Այդ այնպիսի մի ողորմութիւն է, որ կարելի էր հարիւր մասն անել:

Ռէնօլդը: Այս ամենից շատ է ճնշում սիրտս:

Կի՛նը: Ձե՛մ կարող ասել՝ թէ հաճելի է ինձ արածդ:

Ռէնօլդը: Կի՛ն, տանուտէրի տանը ես յաճախ խղճիս դէմ եմ գործել. ես նրա հետ կերել ու խմել եմ, երբ չը պէտք է ուտէի և խմէի, լռել եմ, ուր պէտք է խօսէի. այժմ հաճութեամբ կուզէի ցոյց տալ թէ ինչպէս եմ այդ մասին մտածում: Դու գիտես, որ եթէ փոխանակ չորս հարիւրի, չորս հազար գուլդէնի բան էլ լինէր, էլի կանէի:

Կի՛նը: Ի սէ՛ր Աստուծոյ, արա՛ ինչ որ կամենում ես և ինչ որ լաւ ես համարում:

Ուրախ եմ, որ ընդդէմ չես. հակառակ բո կամքի ես էլ այնքան հաճութեամբ չէի անի, ասաց Ռէնօլդը, սեղմեց նրա ձեռքը, նորից դուրս գնաց ու Հօօրլախէրի կնոջը յայտնեց իր մտադրութիւնը:

Երբ վերջինս լալով շնորհակալութիւն էր յայտնում նրան, Ռէնօլդն ասաց. ամաչի՛ր, փողոցում չի կարելի այդպէս լալ: Յետոյ ինքը շտապով սենեակը մտաւ. Հօօրլախէ-

րի կինը հետևեց նրան իր մանուկներով ու շնորհակալու-
թիւն էր յայտնում շարունակ:

Ի՞նչ օգուտ պղբան խօսելուց, ասաց Ռէնօլդը, արդէն
լսեցի: Տո՛ւն գնա այժմ, Ասածուն շնորհակալութիւն յայտ-
նիր, օրինաւոր, խնայողութեամբ ապրիր և սուն ու տեղդ
կարգի բեր: Ռէնօլդի կինն էլ նրան ու զաւակներին հաց,
չորացրած տանձ և մի քիչ կաթ տուեց, որովհետև նա էլ
ուրախ էր այժմ:

Ցանուակերի կինն իր վերջին ժամերին լսելով այդ բա-
նը, ասաց. այդ միակ ուրախութիւնն է, որ հետս երկինք
եմ տանում: Այս էր նրա վերջին հասկանալի խօսքը: Հա-
մարեա՛ կէս ժամ առաջ նա ասել էր. ուրախ եմ, որ շու-
տով իմ զաւակի մօտ կլինեմ: Քանի որ նա կենդանի էր,
մենք էլ աղօթում էինք և չար բան անելուց քաշում, բայց
նրա մահից յետոյ էլ ոչնչեց չէինք քաշում՝ ոչ երկնքում
և ոչ երկրիս վրայ:

Յետոյ լռեց և նրա կեանքի վերջին կայծը մոմի պէս
մեղմ մարեց: Գերտուղն ամեն հոգս քաշեց և պատրաստեց
նրան գերեզման իջեցնելու. մահագոյժ զանգակները խիտ-
լիս գիւղացիները մեծ մասամբ լաց էին լինում: Նրա մա-
հուանից բառորդ ժամ անցնելուց յետոյ՝ տանուտէրը կըր-
կին բանս գնաց:

166.

Երբ քահանան լսեց, որ Յակոբ Քրիգրիս Հարակնոպֆը
խոնարհել և ամենքի ծաղրի առարկայ է դարձել, հէնց նոյն
գիշերը գնաց նրա մօտ:

Ողորմելին չգիտէր, որ մարդս իրեն պատահած ամեն
մի բամբաղդութիւնից կարող է ամենամեծ օգուտը քաղել,
եթէ կարողանայ իրեն զսպել ու հետազօտել իր մեղաւորու-
թեան պատճառը: Նա միայն կատաղում էր, որ ամեն մարդ
ծաղրում է իրեն և չէր մտածում, որ իր յիմարութիւններն ու
յանցանքներն են այդ ծաղրի պատճառը: Բայց մարդս ա-
մեն տեղ պղպչեւ է, նա կարծում է՝ թէ ինքն իրաւունք
ունի քսան, երեսուն և քառասուն տարի խենթ կամ խա-
բեքայ լինելու, բայց միւսնոյն ժամանակ ոչ ոք իրաւունք չու-
նի մինչև անգամ նրա վրայ բերան բաց անելու, երբ նրա

խաբեբայութիւնը յայտնուի: Բայց իզ՞ուր: Աշխարհը ծիծաղում է ընկնող յիմարների և խայտառակուող խաբեբաների վրայ: Բայց միշտ լինում են և այնպիսի մարդիկ, որ չեն ծիծաղում, այլ ցաւակցում են: Բարի քահանան էլ հարկաւ այսպիսիներից էր, թէև Հարտկնոպֆին սյդ հաւանական չէր թուում և կարծում էր թէ՛ նա դալիս է միայն իրեն ծաղրելու: Բայց քահանան ա՛յնպէս սրտանց էր վարում նրա հետ, որ նա շուտով իր սխալն ուղղեց:

Քահանայի ասած նշանակութիւն ունեցող խօսքերից մէկն էլ հետևեալն էր. Հարտկնոպֆ, ևս ուզում եմ այժմ ցոյց տալ բեզ՝ թէ ի՛նչպէս կարելի է աշխարհում ապրել առանց վիրաւորանքի:

Հարտկնոպֆ: Սիրով կուզէի իմանալ:

Քահանան: Մարդ պէտք է միշտ ուղիղ ճանապարհով գնայ:

Հարտկնոպֆ: Բայց ո՞րն է այդ ուղիղ ճանապարհը:

Քահանան: Այն ամենը, ինչ որ ուզում էք, որ մարդիկ անեն ձեզ, դուք էլ նրանց արէք:

Հարտկնոպֆն ուզում էր հարցից շեղուել և զանազան առարկութիւններ անել, բայց քահանան թոյլ չտուեց և ասաց, որ նրա դժբաղդութեան պատճառը հէնց այն է, որ այդ ուղիղ ճանապարհով չէ գնացել և ո՛չ մի բանում ուրիշ մարդկանց հետ սիրով և բարեացակամ չէ եղել: Յետոյ նա աւելի խորը թափանցեց նրա կեանքի հանգամանքների մէջ և ի միջի այլոց ասաց. Հարտկնոպֆ, դու կարծիքների խենթ էիր և միշտ մոռանում էիր, որ բոլորս կյոյր ենք երկրիս վրայ և այդ պատճառով կարծիքների վրայ չք պէտք է տաքանանք ու չափից դուրս բորբոքուենք: Գու այնպէս էիր յարել կարծիքներիդ՝ կարծես թէ Աստուած լինէին նրանք. այդ կռակաշուութիւն է: Գու կարծում ես թէ՛ ով որ բեզ պէս չէ մտածում, Աստուծն սիրելի չէ. և այդպիսով մեր համեստ, խաղաղ, աստուածաշարտական հաւատը դարձրել էիր բանակուռի ուսումն. մարդիկ Աստուծոյ խօսքն ու Աւետարանը գործ էին ածում միմեանց կեանքը դառնացնելու և արիւնը եղունգների տակից դուրս ճնշելու նպատակով: Այդպիսի կեանք անցկացնելով՝ ողորմելի մարդ դարձար և եթէ զաւակներ ունենայիր, չէիր կարող նրանց

պատուով դաստիարակել: Եթէ չփոխուես և աշխատասէր չը
լինես՝ կարճ ժամանակ անցնելուց յետոյ համայնքի վզին
բեռը կդառնաս. որովհետև հանգամանքներդ յայտնի են
ինձ և գիտեմ, որ շատ տեղերում կարողութիւնիցդ աւելի
պարտքեր ունիս:

Հարսկնոպֆի մեծամտութիւնը չէր թոյլ տայ նրան
պարզ խօսքերով խոստովանելու բահանայի ասածների ճշ-
տութիւնը, եթէ վերջինս չյիշէր նրա պարտքերը. պարտքի
անունը լսելով, նա վախեցաւ ու ասաց. այո՛, ճիշտ է, և
ես հաճութեամբ կցանկայի, որ այդպէս չլինէր: Նա գանգա-
տուեց մագիստրոս Հայիլիգէնցանի մասին՝ ասելով թէ բսան
տարուց առաջ նա է իրեն այդպիսի բաներ սովորեցրել և
գրքեր կարդացրել:

Քահանան: Մագիստրոս Հայիլիգէնցանը գիտե՞ր, որ
դու գուլպայ գործող ես:

Հարսկնոպֆ: Այո՛:

Քահանան: Ուրեմն նա մեղաւոր է. պէտք է թողնել,
որ ամեն մարդ իր արհեստով պարապէ և երբէք այնպիսի
բաների մէջ չխառնուի, որ բոլորովին նման չեն իր երիտա-
սարդութեան ժամանակ սովորածի հետ և որով նա իր հա-
ցը պէտք է վաստակէ: Մտածիր այժմ ինքդ, եթէ դու աշ-
խատասէր, քաջ գուլպայ գործող մնայիր և ուշք ու միտքդ
շարունակ քո գործիքի մօտ ունենայիր, մի՞թէ աւելի պա-
տուաւոր, հարուստ և գոհ չէիր լինի. մի՞թէ քո հոգին ու
մարմինն այժմեանից աւելի առողջ չէր լինի:

Հարսկնոպֆ, մարդս եթէ այն, ինչ որ իր հասկացո-
ղութիւնից բարձր է, չկամենայ հասկանալ ու գիտենալ՝ լաւ
կապրի, հանգիստ իր դաւանանքը կպաշտի և զուարթ գե-
րեզման կիջնի. իսկ ով ամենից շատ գիտէ, միշտ գիտէ, որ
ինքը գրեթէ ոչինչ չգիտէ:

Հարսկնոպֆն այժմ այնպիսի դրութեան մէջ էր, որ
այս խօսքերն աղբեցին նրա վրայ. նա վերջն ինքն ասաց,
թէ հարկաւ կցանկանար, որ իր արհեստով պարապած լի-
նէր միշտ, ուրիշ գործով չզբաղուէր և շատ այնպիսի խօս-
քեր. երկու օր առաջ ոչ ոք չէր կարող կարծել՝ թէ Հարս-
կնոպֆի բերանն այդպիսի խօսքեր կարտասանէ. այն Հարս-

կնոպֆի, որ երևակայում էր՝ թէ ինքը եօթը քահանայից
աւելի շատ բան գիտէ.

167.

ՏՐՈՅՖԱՆԳԻ ԽՕՏ ԷԼ ԻՄԱՍՏՈՒՆ Է ՆԱ

Բարի քահանան այժմ շատ գործ ունէր. նա ուզում
էր յաջող հանգամանքներից օգտուելով՝ երևան հանել եր-
կար ժամանակ գաղտնի ֆացած ծշմարտութիւններ:

Յաջորդ օրը Տրոյֆանգն իր խոստման համաձայն՝ ճա-
շին քահանայի տանն էր: Նա էլ Հարախնոպֆի օրն էր ըն-
կել. մարդիկ ուշադրութիւն չէին դարձնում նրա վրայ կամ
ծաղրում էին: Նա սովոր էր շարունակ իր սենեակը մարդ-
կանցով լիքը տեսնել, որոնք եթէ ոչինչ էլ չէին ցանկա-
նում, գոնէ խօսում էին նրա հետ. այժմ նա մենակու-
թիւնից ձանձրանում էր, որովհետև ոչ ոք չէր գալիս մօտը:

Քահանան իր ունեցած ամենալաւ գինիներից մի շիշ
նրա առաջը դրեց և Տրոյֆանգն այնպէս մտերմացաւ նրա
հետ, որ չգիտէր թէ ի՞նչպէս վարուէ: Նա մի բանի ան-
գամ միմեանց վրայ խոսանցաւ այլ ևս դեղորայք չտալ և
իր բոլոր գիտեցած բժշկական միջոցները յայտնել ուսեալ
պարոն դոկտոր Միւլլէրին, որին նա ճանաչում էր իբրև
բաջ և հոգատար մարդ, պայման դնելով, որ Արնբըրը կըր-
կին լաւ վարուի իր հետ. իրաւունք տայ կրկին առաջուայ
նման սյցելել դղեակն և գիւղացիներն էլ իր հետ սովո-
րականի պէս վարուեն:

Քահանան ամեն բան տեղեկացաւ նրանից: Նա խոս-
տովանեց, որ իր դեղորայքի բժշկող ազդեցութեան մասին
ինքն էլ էր կասկածում: Իսկ ինչ վերաբերում է ուրուա-
կաններին, նա սկզբում դրանց հաւատում էր, ինչպէս որ
հաւատում է Ասածուն: Հետզհետէ սկսել էր հարկաւ նը-
կատել, որ իր պապի գրքի մէջ գրուածներից բոլորը ճիշտ
չեն, բայց ինքը շարունակել է նախկին եղանակով իր գործն
առաջ տանել, որովհետև ոչ ոք իրեն մի կոպէկ անգամ
չէր տալ, եթէ հաւատացած չլինէր թէ նա մի բան կարող
է անել չար մարդկանց դէմ: Եւ հետզհետէ այդ բանը նրա
համար սովորութիւն և արհեստ դառնալով՝ ստիպուած է
եղել ամեն անգամ այդ ձևականութիւններն անել, առանց

նրա մասին մտածելու՝ թէ արդեօք դրանք մի բանի պէտք են թէ ոչ, ինչպէս որ ուրիշ հարիւրաւոր մարդիկ օգտակարի հետ անօգուտ բաներ էլ անում են, ինչպէս օրինակ ծխնելոյղ սրբողները կարծում են՝ թէ իրենց գործը չի վերջանայ, եթէ խողովակի միջից դէպի վեր չերգեն: Յետոյ նա քահանային պատմեց բազմաթիւ դէպքեր, թէ ինչպէս է ինքը մարդկանց յիմարացրել և նրանք էլ իր բոլոր ասածները հալած իւղի տեղ են ընդունել: Մի անգամ, ասաց նա, մի երեսխայի սիրտ թափելու դեղ տուի և պնդում էի թէ՛ տաշտի մէջ ընկած աղիւսի ահագին կտորը, որ ես էի փցել, նրա բերանից է ընկել: Երեսխայի հայրը, մայրը և այնտեղ եղող ուրիշներն ասում էին՝ թէ աղիւսի կտորը շատ մեծ է և չէին հաւատում, որ այդ կտորը կարող էր նրա որկորից դուրս գալ: Այդ գրեթէ անհաւատալի է, ասում էին նրանք: Եւ պատասխանեցի. Ո՛վ դուք պարզամիտ մարդիկ, ի՛նչպէս կարող էք այժմ էլ չհաւատալ և սյդպէս խօսել. դուք գիտէք հօ թէ՛ ճրքան մեծ է լինում երեսխան՝ աշխարհ գալիս: Նոյն բոպէին այդ մարդիկը հաւատացին ասածիս և նոյն իսկ իրենք բացատրում էին թէ սատանայի համար անկարելի բան չկայ և քանի որ աղիւսի կտորը տաշտումն է, ուրեմն պէտք է եզրակացնել, որ երեսխայի բերանից է ընկել:

168.

ԱՊՈՑՈՅՑ, ՈՐ ՄԱՐԴՄ ԿԴԱՌՆԱՅ ԱՅՆ, ԻՆՉ ՈՐ ՆՐԱՆԻՑ
ՊԱՏՐԱՍՏԵՆ

Այս մի երկու օրուայ ընթացքում ամեն բան գիւղում ա՛յնպէս էր փոխուել, որ հազիւ կարելի էր շանաչել: Այժմ ամեն մէկն ուզում էր քահանայի լաւ բարեկամը լինելը Կանայքն ամենից աղմկալի՝ էին արտայայտում այդ ցանկութիւնը. երբ քահանան անցնում էր փողոցով, նրանք աղաղակելով ասում էին իրենց զաւակներին. տեսնո՞ւմ ես արժանապատիւ քահանային, ձեռք տուր նրան: Տղամարդիկն առհասարակ աւելի հանդարտ ու զուարթ էին, բայց գրեթէ ամենքն էլ ամաչում էին՝ այս կամ այն բանի համար: Մէկը սրան էր մեղադրում, միւսը նրան, բայց ամենքն էլ խոստովանում էին, որ իրենք անարդար, իսկ Արներն ար-

դար էր: Ամենքն էլ պատրաստ էին այժմ իրենց ծառայու-
թիւնը մատուցանելու որմադրին ու իր կնոջը և ամենքն էլ
ուշադրութիւն չէին դարձնում Հարսկնոպֆի, Կրիստերի և
մինչև անգամ լուսարարի վրայ: Մինչև անգամ Լիպսը պետք
է իր արածների փոխարէնը հատուցանէր: Հիւնի, Հիւնի,
դու լաղ ձու ածեցիր, ասում էին նրան աջ ու ձախ, մեծ ու
փոքր: Հաւ ծախողն ամեն տեղ իր ուղածի չափ հաւ ու
ձու էր գնում. նոյն իսկ երիտասարդ Կալբերլէզերի կինը,
որ երկու օր առաջ իր հոգու փրկութեան համար մեծ հոգ-
սի մէջ էր ընկել—որովհետև ստիպուած էր եղել հաւ ծա-
խողին ախոռը ներս թողնել—այժմ ծիծաղելով դռնից կան-
չում էր նրան ու ասում. երեք զոյգ սիրուն ու չաղ աղա-
նի ունինք ծախու:

Բայց առհասարակ նկատելի էր, որ Արները լուր գիւ-
ղացիներին, եթէ կարելի է այսպէս ասել, իրենց էր մօտեց-
րել. այժմ գրեթէ ամեն մարդ աւելի քիչ հետաքրքրու-
մ էր ուրիշի գործով, իսկ աւելի շատ՝ իր գործով:

169.

ՄԻ ԲԱՐԻ ՆՊԱՏԱԿԻ ՀԱՍՆԵԼՆ ԱՒԵԼԻ ԼԱՒ Է, ՔԱՆ ՇԱՏ
ՃՇՄԱՐՏՈՒԹԻՒՆՆԵՐ ԱՍԵԼԸ

Մօտենում էր այն օրը, երբ քահանան տանուտէրին
պետք է համայնքին ներկայացնէր և նրա մասին քարոզ խօ-
սէր: Ցանուտէրի բանտարկութեան հէնց առաջին երեկոյեան,
երբ քահանան կամեցաւ նախապատրաստել նրան այդ պատ-
ժի համար, Հուսէլը վերին աստիճանի վրդովուեց և ուղ-
ղակի ասաց. աւելի մեծ հաճութեամբ երկրորդ անգամ կա-
խաղանի տակ կկանգնեմ, քան թէ եկեղեցու բեմի առաջ: Քա-
հանան չկարողանալով ըմբռնել նրա վերին աստիճանի զը-
զուանքի պատճառը, կամեցաւ յանդիմանել նրան ու ասաց.
սարսափելի բան ասացիր: Ցանուտէրը պատասխանեց. այ-
լպէս չէի կարող: Կախաղանի տակ կանգնելով ես գիտեի,
որ դահճի ձեռքուճեմ եմ. այդտեղ իմ գործած յանցանքները
յիշեցի և դրանց ազդեցութեան ներքոյ համարեմ թէ ու-
շագնաց լինելով չէի գիտակցում թէ ի՞նչ է կատարում
ինձ հետ և իմ շուրջը: Իսկ եկեղեցում լուրջովին այդպէս
չի լինի. ինձ չի թուսյ՝ թէ պատիժ եմ կրում, այլ թէ

ինձ ծաղրում են. իսկ եկեղեցում կանգնած սառնարիւն և չարամտութեամբ ինձ նայող հարիւրաւոր մարդիկը հաղաբաւոր բանե՛ր կ'ոխշեցնեն ինձ, որոնցից ոչ մէկն էլ չէի ցանկանալ յիշել մինչև գերեզման իջնելու:

Քահանան մի քանի ժամ շարունակ ամեն ջանք գործ գրեց՝ այդ պատժի սարսափն ու զղուանքը նրանից հեռացնելու, բայց անկարելի եղաւ: Երբ քահանան սկսում էր այդ մասին խօսել, տանուտէրի աչքերից արտասուք էր հոսում: Մի անգամ նա ուղղակի ասաց. մտածեցէք, տէր-հայր, թէ ի՞նչ կղզամ ես, երբ գիւղի առաջաւորները, որ մաղաչափ անգամ ինձնից լաւ չեն և նրանցից շատերը—եթէ ներանց գործերն աւելի հետազօտուին—ինձ հետ միասին կատաղանի տակ պէտք է կանգնէին, սրբերի պէս բաղմած կլինեն իրենց աթոռների վրայ, իսկ նրանց կանսյքը՝ որոնց կատաղած դէմքերը շատ անգամ եմ տեսել իմ տանը, փոխանակ ձեր բարոզը լսելու, հայեացքները շարունակ ինձ վրայ կլինեն ուղղած: Ցէր-հայր, մտածեցէ՛ք, թէ այս բոլորն ի՞նչ ազդեցութիւն կունենայ ինձ վրայ և գոնէ ցաւակից եղէք ինձ, եթէ չէք կարող փոխել այդ պատիժը: Այդ է պատճառն ահա, թէ ինչո՞ւ ես աւելի սիրով նորից կատաղանի տակ կկանգնէի, քան թէ եկեղեցու բեմի առաջ:

Քահանան ծի՛շտ որ գթաշարժուեց այս խօսքերից, մի քանի անգամ կրկին փորձեց համոզել նրան, բայց տեսնելով որ անկարելի է այդ, տանուտէրի բանտարկութեան երկրորդ շաբաթուայ վերջերում հետևեալ նամակը գրեց Արներին. Ազնուածնունդ, ողորմած տէր.

Ես կրկին ստիպուած եմ ձեզ խնդրելու, որ շնորհ անէք և ազատեք տանուտէրին՝ եկեղեցու բեմի առաջը կանգնելու պատժից, ինչպէս որ խնդրեցի՝ ազատել ՅրոյՖանգին գերեզման փորելու պատժից: Երբ Հովմէլին բանտարկեցին իմ տանը, ես իսկոյն խօսեցի նրա հետ և կամենում էի այդ պատժի համար նախապատրաստել նրան, բայց նա աւելի լաւ համարեց կրկին կատաղանի տակը կանգնել, քան թէ այդ պատիժը կրել: Սկզբունք ես այդ պատասխանը նրա կողմից անամօթութիւն համարեցի և չէի կարողանում ըմբռնել նրա միաբը, բայց նա այնպիսի՛ եռանդով ու վառ գոյներով նկարագրեց այդ պատժի ներգործութիւնն իր վը-

բայ, որ ես համոզուեցի՝ թէ այդ պատիժը փոխանակ բարի ազդեցութիւն ունենալու տանուտէրի և ժողովրդի վրայ, պէտք է երկու կողմի վրայ էլ այնպիսի վայրագ ազդեցութիւն ունենայ, որ ոչ մի եկեղեցական ծիսակատարութեան վայել չէ: Ուրեմն կամենալով համոզմանս հետեւել՝ խնդրում եմ Ձերի ողորմածութեան թղլաւութիւնը, որ կիրակի օրը տանուտէրը բանտումը մնայ և ես նրա բացակայութեամբ խօսեմ իմ համայնքի հետ և այլն:

Արներն անմիջապէս պատասխանեց.

Արժանապատիւ Տէր.

Դուք իմ բոլոր նշանակած պատիժներն անպիսի մարդասիրութեամբ և մարդաձանաչութեամբ էք քննում, որ ես մտածում եմ, թէ գրեթէ դրանցից ոչ մէկն էլ չեմ կարող գլուխ բերել՝ առանց նախապէս Ձեր քննութեան ենթարկելու, թէև միևնոյն ժամանակ բոլորովին այն կարծիքի չեմ, որ քաղաքացիական դատավճիռները շատ աւելի օգտակար կլինէին եթէ միմիայն եկեղեցական հրամանով ընդունելի և կատարեալ ձանաչուէին ու գործադրուէին: Բայց սոյն գործի մասին Ձեր հայեացքն այնպէս ճիշտ և աչքի ընկնող է, որ ես գրեթէ չեմ կարողանում ըմբռնել թէ ինչպէս է եղել, որ այսպիսի պատիժներ կարողացել են դարերով գոյութիւն ունենալ և ոչ մի անգամ հրապարակաւ նրանց անյարմարութեան մասին խօսք չի եղել: Մնա՞ք բարև, սիրելի Տէր-հայր և այլն:

Քահանան գոհ սրտով գնաց իր առանձնասենեակը և պատրաստուեց վաղուան քարոզի համար: Նա երկու օր առաջ արդէն քաղաքից ստացել էր տանուտէրի ապագրուած կենսագրութիւնը և գիւղացիներին բաժանել տուել:

Ահա՛ այդ գրուածքի բառացի բովանդակութիւնը.

170.

ՏԱՆՈՒՑԷՐ ՀՈՒՄԷԼԻ ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Հումէլը ծնուել էր 1729 թուին և նոյն տարուայ խոտհարքին Բօնալի եկեղեցում մկրտուել: Մկրտութեան վրկաներն էին երդուեալ Կինհօլցը և աիկին Այսբերգէրը: Բայց նա չէր յիշում, որ այդ երկուսից երբևիցէ լսած լինի քրիստոնէական ուսման վերաբերեալ մի խօսք կամ թէ

բարի և օգտակար գործ անելու քաջալերութիւն. ընդհակառակը ԿինՏօյցի մօտ գնալիս պատմում էր նրան՝ դաշտում և անտառում գործած իր աղայական չարութիւնները: Նրա ծնողները՝ Քրիստօֆ Հումէլը և Մարգարիտա ԿինՏօյցը, վերին աստիճանի անմիտ ու անհոգ մարդիկ էին՝ թէ իրենց և թէ իրենց միակ որդու վերաբերմամբ:

Հայրն ինքը ծոյլ լինելով՝ նրան էլ չէր ստիպում աշխատելու:

Ինքն իր արհեստից և ընտանեկան գործերից անտեղեակ լինելով՝ հարկաւ նրան էլ ոչինչ չէր կարող տալ:

Ինքն անմիտ ու թեթեւօտիկ լինելով՝ չէր կարող որդուն մտախոհ և ուշադիր դարձնել:

Մայրն էլ նոյնն էր, ինչ որ հայրը՝ թէ արտաբուստ և թէ ներքուստ:

Նա այնքան անկարգ էր, որ ուր գնում էր, նոյն իսկ եկեղեցում, ուրիշների ծիծաղի առարկայ էր դառնում:

Բայց նրա ծումուած գլխածածկից ու աղտոտ զգեստ. ներից աւելի վատ էր նրա մեծամտութիւնն ու նախանձոտ սիրտը:

Երբ մէկի մասին մի բարի բան էին ասում, նա սովորաբար գլուխը մէկ կողմն էր թեքում կամ թէ պատուհանից դուրս նայում:

Եթէ նրան մի ճշմարտութիւն էին ապացուցանում, նա դարձեալ չէր ուզում համոզուել. նա կարող էր իր սենեակում նստած՝ ժամերով չարաբանել իր երեխայի առաջ այն մարդկանցը, որոնց ուղարկած բարիքն իր սեղանի վերայ էր դրուած: Նա միշտ կարծում էր՝ թէ այդ քիչ է և աւելի շատ բան պէտք է ուղարկեն իր համար:

Այսպիսով երեխան հօր օրինակին հետևելով՝ դարձաւ ծոյլ, թեթեւօտիկ ու անփոյթ, իսկ մօրը հետևելով անշնորհակալ ու անձնասէր:

Արդէն չորս, հինգ տարեկան հասակում նա այնպէս էր աչքերը չուում, որ հասկացող ծնողներն այդ տեսնելով՝ պէտք է երեսները խաչակնքէին:

Նա այդ հասակում կարողանում էր՝ ժամերով ո՛չ մի խօսք չասել ու լռել, եթէ նրա ցանկացածը նոյն վայրկեանին չէին կատարում. եթէ սիրելի էլ լինէիր նրան՝ իր ցան-

կացած ժամանակը այնպէս կվարուէր Տետր, որ կարծես թէ միշտ ատելիս լինէր քեզ:

Նա այնպիսի պատասխաններ էր տալիս և այնպիսի բաներ ասում, որ պատուաւոր մարդկանց երևալի բերանից չպէտք է դուրս գան: Եւ ի՞նչ ծնողները ծիծաղում էին նրա ամենայանդուգն պատասխանների վրայ՝ նրա խելացիութեան նշան համարելով այդ և չգիտէին, որ յանդգնութիւնն ու անամօթութիւնը սխալեցնում են մարդուն, նոյն իսկ ամենակարևոր դէպքում:

Նրանք թող էին տալիս նրան խօսելու՝ ո՛ւր որ լինէր և ի՛նչ որ կամենար և որչափ քիչ էր գործածում իր խելքն ու ձեռքի աշխատանքը, այնքան անպատկառ էր նրա լեզուն:

Նա մանկական հասակից արդէն շատ կրակոտ էր, իսկ երբ իր այդ եռանդն ի չարն էր գործ դնում, ծնողները փոխանակ զսպելու նրա եռանդը, աւելի ոյժ էին տալիս:

Երբ նա եօթը տարեկան դարձաւ, ծնողներն արդէն նկատեցին՝ թէ ի՛նչ տեղ են հասցրել նրան: Պարագ մանգալն ու անհնազանդութիւնը մարմնացել էր նրա մէջ. ինչ որ ասում էին նրան հնազանդելու, աշխատելու և արդարութեան մասին՝ նրա մէկ ականջից մտնում՝ միւսից դուրս էր գալիս: Նոյն իսկ ծեծը ոչինչ չկարողացաւ օգնել:

Սիրելի՛ ժողովուրդ, Հումելի մասին ասածներս այստեղ պէտք է ընդհատեմ և դաստիարակութեան մասին մի քանի խօսք ասեմ իմ համայնքի հայրերին ու մայրերին:

Ձեր զաւակներին պատրաստեցէք, իրենց ապագայի համար, երբ նրանք դեռ աջը ձախից չեն զանազանում:

Եթէ դուք նրանցը մանկութիւնից դէպի բարին դաստիարակէք և աղքատ կեանքի լծին սովորեցնէք, նրանք մինչի մահ շնորհակալ կլինեն ձեզնից:

Երբ հայրն ու մայրը նրան մի բան էին ուզում ցոյց տալ, նա ամեն անգամ ասում էր. «Ինքզ էլ չգիտես» — նա ծաղրում էր նրանցը, «այո՛, այո՛», — «այդպէս, այդպէս», — «այնպէս չէ՛» և այն խօսքերով: Երբ ծնողները նրան լուրջ կերպով մի բան էին ասում, նրա սովորական պատասխանն այդ էր լինում:

Նա այնպիսի սուր յիշողութիւն ունէր, որ սովորելը

ոչինչ էր նրա համար, բայց նա միայն ցուցամուտութեան համար էր սովորում, ծիծաղում էր ուրիշների վրայ՝ եթէ լաւ չգիտէին և շատ ուրախանում էր՝ նրանց խայտառակութիւնը տեսնելով:

Մի անգամ մի երեկոյ հարցրեց նրան՝ թէ ո՞վ էր օձի գլուխը ջաղջախողը. նա պատասխանեց. «ստանան»: Երբ մանուկը նոյն պատասխանը տուեց բահանային, վերջինս սաստիկ բարկացաւ և հայհոյեց խեղճին. յետոյ հարցրին Հուսէլին. այդ չարածճին կարողացաւ առանց ծիծաղելու պատասխանել՝ օձի գլուխը ջաղջախեց մեր Տէր ու Փրկիչ Յիսուս Բրիտանուր:

Նա իր կարողացածին չափ վիրաւորում էր ծեր վարժապետին՝ թէ խօսքով և թէ գործով: Մի անգամ մօտակայքում հրդեհ պատահեց և այդ օրից ծեր ուսուցիչը սաստիկ վախենում էր կրակից: Երբ Հուսէլը դասերը պարտասած չէր լինում, կրակի մէջ զանազան իրեր էր գցում և խանձահոտ տարածում. ծերուկն ահ ու դողով տանքունջ ու պուճախն էր ընկնում, որ տեսնի թէ արդեօք հրդեհ է ծագել: Նա մինչև անգամ լուցկի էր վառում քսակի մէջ և ուշադրութիւն չէր դարձնում քսակի այրուելուն՝ միայն թէ վախեցնի վարժապետին:

Ծերուկը շատ ծանր էր լսում և անպիտան տղան կամ այնպէ՛ս ցածր էր խօսում, որ նա ոչ մի խօսք չէր հասկանում, կամ այնպէ՛ս բարձր, որ փողոցում անցնողները կանգնում էին, որ լսեն՝ թէ ի՞նչ աղաղակ է սենեակում. այդ աւելի էր դառնացնում վարժապետին:

Մի անգամ նա երկու շաբաթ շարունակ իր ուսման վարձը չէր բերում և երբ վարժապետը պահանջեց, նա պատասխանեց. եթէ չես կարող սպասել, իսկոյն տուն կը վազեմ և սայլակով կբերեմ:

Տասնևերեք տարեկան հասակում նա տանից փախաւ և Վալդրիւտիում հովիւ եղաւ: Բիւտիբաուէրը նրան անասուններից էլ ստոր էր համարում. նրա պահանջը միայն այն էր, որ ամեն երեկոյ հօտն անվնաս տուն բերէ:

Հովուական կեանքն իր այժմեան վիճակով սաստիկ փչացած է: Սարերի վրայ հաւաքւում են մուրացիկներէրից ժո-

ղովուած մի քանի հովիւներ և ամեն տեսակ չարիքներ են գործում:

Հումէյն ա՛յնպէս յարմարուեց հովուական կեանքին, ինչպէս ձուկը ջրի մէջ: Նա թափ էր տալիս բոլոր ծառերի խակ պտուղները, կողովներով հաւաքում և անասունների ետևից շարտում կամ ճահիճների ու փոսերի մէջ էր ածում: Թէ անտառի և թէ պտղատու ծառերի վրայից վերցնում էր թռչունների բները և խեղճերին չարչարելով՝ սպանում: Որտեղ կարողանում էր, սարերի ջրի ուղղութիւնը փոխելով դէպի դաշտն էր ընթացք տալիս նրան և ցանքները փչացնում: Յանկապատների մէջ ճանապարհ էր բացանում անասունների համար և վերջինները ներս մտնելով միաս էին տալիս: Բոլոր անցնողների ետևից խայտառակ խօսքեր էր արտասանում: Սարերի վրայ եղող փոքրիկ հովիւներին չարչարում էր և ստիպում նրան իր հօտը պահել՝ երբ ինքը կամ ծառի տակ քնած էր լինում, կամ անտառում թռչունների ետևից ընկնում, կամ հասակաւոր հովիւների հետ խաղում և կամ գողացած գետնախնձորը խորովում: Երբ խեղճ փոքրիկները չէին ուզում նրա ասածն անել, մտրակով հարուածում էր նրանց և ստիպում: Արօտատեղիներում կատարուող ամօթալի և անպարկեշտ իրողութիւնների մասին չեմ կարող խօսել:

Հարկաւ մեր նախնեաց ժամանակ այդպէս չէր: Նրանք օտար մարդ չէին ընդունում ծառայութեան և թղլ չէին տալիս իրենց հովիւներին միմեանց մօտ վազելու: Ով նրանց տանն էր ապրում, նրա համար էլ հոգում էին ամեն կերպ: Նրանք այնպէս էին տնօրինում, որ հովիւները հօտի մօտ մնան և միևնոյն ժամանակ իրենց օրական աշխատանքն ունենան: Հովուահին բուրդ էր գզում, իսկ հովիւը չոր ձիւղեր հաւաքում ու փայտի խուրձեր կապում: Այն ժամանակ հովուական կեանքը լաւ էր: Երկիւղած հովիւներն առաւօտն ու երեկոյեան աղօթում էին ծնկաչոք և ստուերներում, իրանց հօտի մօտ, սուրբ գիրք էին կարդում:

Հումէյի ժամանակ դեռ ևս ծերերը սովորութիւն ունէին՝ երեկոյեան իրենց հովիւներից հաշիւ պահանջելու, բայց որովհետև բոլորն էլ չէին հեռւում այդ սովորութեանը, հեռւողներն էլ ոչինչ չէին կարողանում անել:

Որոնք չէին աշխատում՝ հետները գործ բերողներին էլ հալածում էին։ Նրանք նրանց անասուններին հեռու էին քշում ու մոլորեցնում, փչացնում էին մալած թելի կծիկները և նրանց աշխատանքը ոչնչացնում, այնպես որ նրանցից ոչ ոք այլ ևս գործ չէր ուզում վերցնել հետը։ Այդ հին ու լաւ սովորութիւնն էլ այդպիսով ոչնչացաւ։

Յաջորդ ձմեռը Հումէլը պէտք է Աալդրիւտիում բամբակ մանելով զբաղուէր, բայց փախաւ և կրկին տուն գնաց։

Թէև տանը նրան լաւ չէին պահում, բայց այնուամենայնիւ այդտեղ աւելի լաւ էր, քան թէ ուրիշի մօտ։ Նա միջատներով լցուած՝ վայրենի գազանի նման վերադարձաւ տուն։ Խեղճ ծնողները տեսնելով այդ չար անպիտանի վերադարձը, ուրախացան, բայց նա այնպէս ի չարը գործ դրեց նրանց բարութիւնն ու թուլութիւնը, որ ամբողջ ձմեռը մի կոպէկի գործ չշինեց և սփայեց, որ խեղճ ծնողներն իրենց աղքատ միջոցներով նրա համար նոր զգեստ գնեն։

Այդ և դրան յաջորդող ձմեռները ճաշակուեց և իր բերան արած դասերով քահանային գրաւեց, թէև նրա սենեակում ամէն տեսակ չարութիւններ էր անում։ Նա երբեք առանց խաղաթղթի և վէզի ուսման չէր գալիս, քահանայի պարտէզից դեղձ ու սալոր էր գողանում և կորիզները երէցկնոջ պատուհանի առաջն ածում, իսկ երբ վերջինս դուրս էր գալիս տեսնելու թէ ո՞վ էր այդ անողը, ոչ ոքի չէր տեսնում։

Նա ձիւնի գնդակները սառը ջրի մէջ էր դնում, քարի նման սառեցնում, գցում քահանայի հաւերի ու փոքրիկ շների վրայ և դրանցից մէկին կաղացնելով՝ մեծ ուրախութիւն էր զգում։

Նրա ընկերները յաճախ ասում էին նրան, եթէ այդպէս շարունակես, քահանան սուրբ հաղորդութիւնից կզրկէ բեզ. բայց նա պատասխանում էր, եթէ քահանան եօթն աչք ունենար, ես տասն և չորսը դուրս կփորէի։

Նոյն իսկ իր ճաշակուելու օրերը նա պանդոկում գինովացաւ՝ շրջապատուած զինուոր գրաւողներով ու ասաց նրանց բարձրաձայն, ութ օրից յետոյ ինձ էլ կարող էք որսալ։

Հաղորդութիւն առնելու օրը տասն անգամից աւելի

փորձեց՝ թէ ի՞նչպէս բռնէ գլխարկը կռնատակին, որ ժապակէն երևայ, և թէ ի՞նչպէս պահէ իրեն քահանայի առաջ: Եկեղեցու առաջը նա պայմանաւորուեց նոր զգեստ ունեցողների հետ, որ իրենք ամենից առաջ կանգնեն և ինքն էլ իրրև ամենից մեծը՝ առաջին տեղը բռնէ:

Աստուած մարդուս այս հասակում մեծ ոյժ և ուրախ սիրտ է տալիս. և երկիւղած ծերերն էլ այդ երիտասարդներին հարիւրաւոր զուարճութիւններ էին թողլ տալիս, որով նրանց ուրախութիւնն աւելի կրկնապատկուելով՝ հեռու էին մնում շուսյտութիւններից: Երիտասարդները գիշեր ցերեկ միատեղ էին, միայն թէ աղջիկներն առանձին էին հաւաքուում, տղայքն առանձին. և երկու սեռի սյդ առանձին մնալն էր պատճառը, որ թէ տղայքը ու թէ աղջիկներն աւելի երկար ժամանակ անմեղ էին մնում: Թէպէտ երիտասարդներն ընթերթից յետոյ էլ ժողովուում էին, բայց ծնողները, ազգականները, պատուաւոր մարդիկ ու կանայք միշտ դրանց հետ էին լինում և մասնակցում էին նրանց ուրախութեանը. իսկ երբ նշանածն իր հարսի մօտ էր գնում, մինչև պսակուիլը միշտ նրա մօտ գտնում էր հարսի մօրը, քրոջը կամ մի փոքրիկ տղայ:

Առհասարակ հին ժամանակ երիտասարդները ամեն բանով ցոյց էին տալիս, որ պատիւ ունեն և շատ յաճախ իրենց զուարճութեան համար պիսպիսի բաներ էին անում, որ բարի սրտի ապացոյց էր և սյդպիսով նրանք սիրելի էին դառնում մեծին ու փոքրին և խաղաղ ու երկիւղած մարդկանց համակրանքն էին վայելում: Այսպէս օրինակի համար շատ վաղուց սովորութիւն էր, որ եթէ մի սյրի կին աղջիկներ էր ունենում և երիտասարդներն ուզում էին դրանց պատուել, լուսնեակ գիշերով հնձում էին նրանց ամենամեծ արտը. միւս առաւօտը մայրն աղջիկների հետ մանգաղը ձեռին գալիս էր և իր արտը հնձած ասեսում. այդ միջոցին երիտասարդները ցանկապատների ետևը թաքնուած՝ ականջ էին դնում թէ արդեօք նրանք կգուշակեն՝ թէ ովքեր են հնձել և երբ գուշակութիւնը ճիշտ էր լինում՝ նրանք ուրախութիւնից ցնծում էին:

Բայց Հումէլի ժամանակակից երիտասարդները միայն ամօթալի չարութիւններ էին անում, վնասներ էին տալիս,

ուր որ ոտք էին դնում և հին սովորութիւններին հետևող-
ների անմեղ զուարճութիւններն էլ խանգարում:

Երբ երիտասարդները վերոյիշեալի նման հնձում էին
այրի կնոջ արտը և վերջացնում, լուսինը մայր մանկուց
յետոյ գալիս էին այդ անպիտան չարածինները, հնձած ու
կապած խուրձերը ցրում և վայրենի խողբեր պէս այս ու
այն կողմն էին ածում: Առաւօտը բարի հնձուորները գա-
լով՝ տեսնում էին իրենց բոլոր աշխատանքը ոչնչացրած ու
աւերուած. նոյնն էին տեսնում և արտի աէրերը: Հնձողնե-
րը բարկութիւնից կատաղում էին, աղջիկները գունատուում,
իսկ այրին ձեռքերը գլխին էր խփում՝ աւելի Աստուծոյ
տուածն այսպէս աւերելու համար, քան թէ իր կրած վը-
նասի ու խայտառակութեան: Պատանի Հումէլը հեռուից նա-
յում էր այդ կնոջն ու զուարճանում: Նա չորս տարի շա-
րունակ այդպէս արեց և երբ Բօնալում իմանալով նրա ա-
րարքը՝ լրտեսուում էին, որ բռնեն, նա մերձակայ գիւղերուսն
էր անում նոյնը:

Ամենքն էլ Հումէլի վըայ էին կասկածում և վերջին
տարին Հերցաուի պատանիները քիչ մնաց որ նրան սպանէին:
Մի գիշեր այդպէս ուրիշների հնձածն աւերելով՝ առաւօտը
գնաց գիւղի պանդոկն օղի խմելու: Երիտասարդները նրա
վըայ կասկածելով՝ կատաղածի նման յարձակուեցան վրան և
եթէ ծեր ու պատուաւոր մարդիկը նրանց ձեռքից չխլէին՝
ծեծելով կմեռցնէին նրան: Հումէլին երիտասարդների ձեռքից
ազատողները գանգատուեցին իշխանին, բայց ոչինչ չկարո-
ղացան ապացուցանել և իշխանը հրամայեց ամեն տեղ ար-
գիլել գիշերով արա հնձելը՝ այդպիսի չարութիւնների առաջն
առնելու համար: Բայց այս հրամանը մեծ ու փոքրին ցաւ
պատճառեց և երբ քահանան եկեղեցում կարդաց այդ, ա՛յն-
պիսի ընդհանուր դժգոհութեան բացառանչութիւններ լը-
սուեցան, որ կարծես թէ քահանան նոր հարկ աւելացնե-
լու հրաման լինէր կարդացած: Ամեն մէկն ասում էր. ար-
դարացի չէ, որ մենք սյդ չար անպիտանի պատճառով կորց-
նենք մեր հին զուարճութիւններից մէկը: Եւ տանուաէր Լին-
դէնէրգէրը, որ մի ալևոր ծերունի էր, եկեղեցու դրան
մօտ պատահելով Հումէլին, շատերի ներկայութեամբ ասաց.
աւելի լաւ կլինէր, որ իշխանը քեզ կախաղան բարձրացնել

տար, բան թէ մեր բոլոր երիտասարդներին այդ զուարճու-
թիւնից շրկէր:

Այդ միջոցներին վերացան նոյնպէս գիշերային պատուա-
ւոր ժողովները, որովհետեւ վայրենացած տղաներն սկսեցին
ամեն տեսակ չարութիւններ անել այն պատուաւոր մարդ-
կանց լուսամուտների առաջ, որոնց երեխաները հրապարա-
կաւ և ծնողների աչքի առաջ ժողովուում էին միատեղ, նրանք
ամեն կերպ աշխատում էին խանգարել այդ հրապարակա-
կան ժողովների պատճառած զուարճութիւնը:

Այդ բանը մեծ վնաս էր գիւղի համար. բայց ուրիշ
տեսակ էլ չի կարող լինել: Երբ ժողովրդի մէջ վատութիւն-
ները շատանում են, նրա ուրախութիւնն ու բաղդաւորու-
թիւնն էլ պակասում է:

Ա՛խ. կարծես թէ ամեն բան պէտք է հէնց այդ ժա-
մանակամիջոցում պատահէր՝ նախնեաց սիրելի, խաղաղ,
հանգիստ ու բաղդաւոր կեանքը հիմքից ի վեր ոչնչացնելու:

Բամբակ մանելը, որ այն ժամանակ նոր էր մուտք
գործել այդ տեղերը և միանգամից տարածուել, նոյնպէս
նպաստեց այդ բանին:

Մեր կողմերում առաջ ամենահարուստ մարդիկն էլ փող
չունէին. նրանց հարստութիւնն այն էր, որ նրանց ուտե-
լու, խմելու, հագնելու և գործածելու բոլոր իրերը մեծ քա-
նակութեամբ ու աւելորդով բուսնում էր նրանց կալուածք-
ներում: Նրանք բաւականանում էին դրանով և փողով շա-
քիչ բան էին գնում:

Իսկ նոր բամբակ մանողներն ընդհակառակը քսակնե-
րով լի փողեր ունէին. և որովհետեւ այժմեան փողատէր
մարդիկն առաջ ոչ կալուածք և ոչ կարողութիւն ունէին,
հետեւապէս և խնայողութեան մասին գաղափար չունէին, աշ-
խատածներն ուտում ու հագնում էին և ա՛յնպիսի հարիւ-
րաւոր իրեր մտցրին գիւղը, որի մասին առաջ ոչ ոք գա-
ղափար չունէր: Շաքարի ու սուրճի գործածութիւնն ընդ-
հանրացաւ: Մի ակոս երկիր անգամ չունեցող մարդիկը և
նրանք, որ գիշերը չգիտէին թէ առաւօտն ի՞նչով պէտք է ապ-
րեն, անամութաբար իրենց զգեստների վրայ թաւշեայ ժա-
պաւէններ էին շարել տալիս և ծիրանի բաճկոններ հագ-
նում: Կալուածատէրերն այդ չէին կարողանում անել և ժա-

մանակ էլ չունէին մանելով փող վաստակելու, բայց չէին էլ ուզում աւելի չբաւոր երեւալ քան բամբակ մանողները, որոնք մի փոքր առաջ իրենց տուած մի բուռը ճակնդեղի կամ գետնախնձորի համար շնորհակալութիւն էին յայտնում: Այդ էր պատճառն ահա, որ գիւղական հին ընտանիքներից շատերը կործանուեցան. նրանց տներուսն էլ սուրճ և շաքար երևացին, նրանք էլ մանրավաճառին զգեստի փող պարտ անցին, այլ ևս չբաւականացան իրենց դաշտերում բուսածով, որ բաւական կլինէր ոչ միայն իրենց, այլ և իրենց որդոցն ու թոռներին, ինչպէս իրենց նախնիքը հարիւրաւոր տարիներ բաւականացան և երջանիկ էին ապրում:

Մեր գիւղում ամենից առաջ ծիրանի բաճկոն հագնողը Հուսէն էր: Նա թէև բամբակ մանելով չէր վաստակել, որովհետև չէր աշխատում, բայց այդ փողը ստացել էր իր խաղակից և բամբակ մանող սրիկաներից: Այդ դրամով նա նորաձև զգեստներ գնեց, որ կարողանայ մի հարուստ գիւղացու աղջիկ առնել, բայց այդ այնքան էլ հեշտ չէր: Խաղի մէջ տարած թալէրներն իր փեսայ դառնալուց աւելի շուտ գնացին: Բացի դրանից՝ շուտով իմացուեց, որ նա խաղի մէջ խաբբայութիւն է անում և այլ ևս ոչ ոք չէր կամենում նրա հետ խաղալ. և որովհետև մանկութիւնից նա սովոր չէր իր զգեստի մասին հոգալ, շուտով նոր զգեստներն էլ, կօշիկից սկսած մինչև գլխարկը, մաշուեցին և նա օտար թափառականի էր նմանուում: Այդ զգեստները օտար տարազով էին կարուած. իսկ այդպիսի զգեստները հնամաշ լինելուց յետոյ՝ տեղական հասարակ զգեստից աւելի տգեղ ու ցընցոտի են երևում:

Նրա մեծամտութեան համար անտանելի էր այդպէս մանգալը, որովհետև իր ծաղկած դրութեան ժամանակը, այսինքն երբ մի քանի թալէր փող և նոր զգեստ ունէր, զուարճանում ու ծաղրում էր իրեն պէս լաւ չհագնողներին: Այժմ ծաղրելու հերթը նրանց եկաւ. տղայ ու աղջիկ ծիծաղում էին նրա վրայ:

Հանգուցեալ Կիրևմայէր ԼեոյաՏօլդի կնոջ դէմ ունեցած ոխն մինչի մահ պահեց Հուսէլը, որովհետև երբ վերջինս մի տասնեակ աղջիկների ներկայութեամբ մտերմաբար ուզում էր նրա թեւը բռնել՝ նա ասաց. ի՞նչ գործ ունիս

մեղ հետ. պատերազմի համար զինուոր վարձուիր, ուրիշ ոչնչի պէտք չես: Օրիորդները երկար ժամանակ, երբ Հուլիան օգուտ էր նրանց հետ բարեկամանալ, պատասխանում էին. ի՞նչ գործ ունիս մեղ հետ, վարձուիր պատերազմի համար, ուրիշ ոչնչի պէտք չես:

Եւ իսկպէս այդպէս էլ կլինէր, եթէ նա 1751 թ. ծննդեան տօներին մի կենդանի եղջերու չբռնէր և իբրև կաղանդի ընծայ, Արնբուրգ չտանէր իշխանի երեսայոց համար: Այդ հանգամանքի առիթով նա կարողացաւ դղեակը մուտք գործել և շուտով կրկին քսակներով լի ոսկու տէր եղաւ:

Այս կէտի վերաբերութեամբ ասածներս մեր ողորմած իշխանի բացարձակ հրամանովն եմ ասում, որ չէ կամենում իր ընտանիքի պակասութիւնները թագցնել և իր հպատակների մոլորութեան ու դժբաղդութեան պատճառ լինել:

«Այն ժամանակը դղեակում տիրող անկարգութիւններն են միակ և ճշմարիտ պատճառը, որ Հուլիան իր թեթևամիտ, պարապ ու անպիտան վարքով չաքսորուեց երկրից ու կրկին փողի, կարողութեան տէր դառնալով նշանակութիւն ստացաւ. բայց միևնոյն ժամանակ մինչև այժմ նա այնքան փող ունէր, որքան կարող էր ունենալ ընտանեկան աշխատանքով, չնայելով իր գործած անկարգութիւններին, յանցանքներին և իրեն պատահած դժբաղդութիւններին»:

Հուլիան դեռ նոր էր դղեակում բուն դրել և ահա նրա բարեկամները կրկին շատացան. կաղանդին փոքրիկ եղջերուն դղեակը տանելուց յետոյ այլ ևս ոչ ոք չէր ծիծաղում նրա վրայ, որովհետև երկրորդ շաբաթն արդէն ամենքը գիտէին, որ նա ամեն օր այնտեղ է լինում և իր ուզածն անում:

Ծեր գրագիրը տեսնելով, որ Հուլիան իրեն պէտք կը գայ, շատ շուտ ընկերացաւ նրա հետ. և այնուհետև ով որ դղեակում բան ունէր, Հուլիան էր դիմում՝ արդարը ցերեկով, իսկ մեղաւորը գիշերով: Այլ ևս ոչ ոքից ծածուկ չմնաց, որ դղեակում ամեն մարդ իր ուզեցածը կարող էր անել, եթէ Հուլիան վճարէր:

Գրենբախի բնակիչ Միւլլերն ամենից թանկ վճարեց նրան. նա իր աղջիկը տուեց նրան, որովհետև արժան գնով

գինի և պտուղ էր ձեռք բերում: Այս մարդն ուրեմն իր սարսափելի ժլատութեան պատճառով՝ իր աղջիկն անբաղդ կին դարձրեց, որովհետև նա դժբաղդ էր իր պսակի վայրկեանից մինչև իր մահը, որ երեկ չէ, առաջի օրը տեղի ունեցաւ:

Այժմ նա փոշի ու մոխիր է, մի քանի օր առաջ ձեր արտասուքները ներուճն էին խնդրում նրա համար և իմ սիրան էլ զգացուած է նրա մահուամբ:

Խաղաղութիւն նրա ոսկրներին և մեռելներին յարութիւն տուողը թող նրան զարթեցնէ յաւիտենական կեանքի համար:

Սակայն հայրն իր ժլատութեան պատճառով աղջկանը տուեց այդ չարանենդ մարդուն, որ կնոջը չէր սիրում և թշուառացրեց նրան:

Այդ հայրը նրա կեանքի չարչարանքը նկարագրած կանսնի մի օր, երբ իր աղջկայ փոխարէն ստացած գինու և պողի արժէքն ուրիշ կերպ կգնահատէ, քան թէ այն անմտութեան ժամանակը, երբ նա իշխանութեանը խաբելու համար՝ Հուսէլին միջոց տուեց իր աղջկանը մոլորեցնելու: Ես ասեսայ Միւլլէրին մեռնելիս, նա իր արարքի վիշաք գերեզման տարաւ իր հետ: Նրա մահուան րոպէն այժմս էլ աչքիս առաջն է և անմոռանալի կմնայ իմ սրտում այն միտքը թէ՛ ճեթէ մարդս ինքն իրեն համար երկիւղած ու հաւատարիմ չէ, գոնէ իր որդոց համար պէտք է այնպէս լինի:

Հուսէլին ամուսնանալուց յետոյ կամենում էր կալուածք ունենալ, բայց գիւղացի չէր: Եւ ի՞նչպէս կարող էր գիւղացի լինել, քանի որ այնպէս ծոյլ, անկարգ ու անփոյթ էր: Միմիայն սնտփառութեան համար էր ուզում կալուածք ունենալ: Նա անհոգ էր և ունեցածիցն էլ դրացիների չափ օգուտ չէր ստանում:

Աւելի սիրով պարապում էր կովի առևտրով և այդպիսով շատ ընտանիքների զրկեց իրենց ունեցածից ու կալուածքից: Աղքատները շուտով նրա պարտապանները դարձան և ստիպուած էին նրա հետ առևտուր անել, ում համար որ դղեակում մի բան էր շինում, նա պէտք է նրանից մի կով առնէր կամ փոխէր: Աղքատ մարդկանցը շատ

անգամ տարին երեք-չորս կով էր տալիս, բոլորն էլ մի-մեանցից վատթար:

Ամուսնութիւնից յետոյ մեծամիտ Հումէլը կարողացաւ իր հօրը համոզել՝ որ տունն ու տեղը պարտքերի հետ միասին իրեն թողնէ: Նա հօրը խոստացաւ թէ, քանի կենդանի ես՝ պատուով ու յարգանքով կապրես ինձ մօտ, բայց հէնց որ կալուածքը ձեռք բերեց, ա՛յնպիսի չքաւորութեան մէջ ձգեց խեղճ ծերուկին, որ բոլոր դրացիները ցաւակցում էին նրան: Հանգուցեալ Կիրիմայէր Կինաստը պահպանում էր խեղճ մարդուն՝ հաց ու կաթ տալով և երբեմն իր սեղանին մասնակից անելով: Նա գրեթէ ամեն օր գալիս էր և արտասուելի աչքերով գանգատում՝ թէ ինչպէս որդին անաստուած է վարւում իր հետ. երբ այդ նկատում էր Հումէլը, կատաղում էր և հարիւր անգամ կրկնում, որ եթէ նա ուրիշի տանը կհամարձակուի մի պատառ հաց դնել բերանը, գետինը կդնէ նրան: Նա չէր քաշւում նաև հրապարակաւ ասելու թէ՛ ամենից լաւն այն կլինի, որ այդ ծեր մուրացիկը միւս աշխարհը գնայ, այս աշխարհում նա այլ ևս բանի պէտք չէ:

Այս բոլորն այնպէս վախեցրել և շփոթել էր խեղճ մարդուն, որ նա կասկածում էր թէ որդին ուզում է թունաւորել իրեն և առանց երկիւղի մի գողալ ապուր էլ չէր ուտում՝ եթէ կերակուրն եփելիս որդին ներկայ էր լինում և ամեն անգամ ահ ու դողով հետևում էր՝ թէ արդեօք որդին էլ ճաշակո՞ւմ է նոյն կերակրից:

Ուրիշները խորհուրդ էին տալիս ծերուկին, որ դղեակը գնայ և գանգատուի որդու արարքից: Այդպէս էլ արեց նա և աղի արտասուքով խնդրեց իշխանին, որ իր որդուն խրատէ և քանի որ ինքը կենդանի է՝ գոնէ քրիստոնէաբար վարուի իրեն հետ: Իշխանը պատուիրեց, որ վաղն իր որդու հետ միասին գայ իր մօտ, որ նրա ասածներն էլ լսէ:

Ծերուկը դեռ տուն չէր վերադարձել, որ Հումէլն արդէն իմացաւ նրա դղեակ գնալու պատճառը, բայց ուրախ տրամադրութեամբ խօսեց հօր հետ և ասաց թէ սիրով կերթայ, որովհետև ինքն էլ է ցանկանում, որ արդարութիւն լինի: Բայց նա տանն ու ճանապարհին համոզեց խեղճ ծերուկին, որ կեռասօղի խմէ, մտերմաբար ասելով թէ՛ օ-

ղին սիրտ ու արիութիւն է տալիս մարդուն՝ իշխանաւորի առջ խօսելու: Յունուար ամիսն էր ու ցուրտ. ծերը հաճութեամբ խմեց և որդին վճարեց: Բայց երբ նա դրսի ցրտից իշխանի տաք սենեակը մտաւ և ուզում էր գանգատուել, հարբած մարդու նման սկսեց տատանուել, կակաղել և խմած օղու հոտը փչում էր նրա բերանից: Հուժէն ընդհակառակը խոնարհ կանգնած էր և այնպէս էր ցոյց տալիս՝ իբրև թէ կամենում է լալ և ասաց. աւելի տխուր բան չի կարող լինել, քան երբ զաւակներն իրենց ծնողների հետ իշխանութեան են ներկայանում գանգատուելու և իր կեանքում ոչինչ իրեն այդպիսի ցաւ չէ պատճառել. բայց որովհետև այժմս այդպէս է եղել, ինքը պէտք է ճշմարիտ ասէ՝ թէ բանն ինչու՞ն է: Եթէ ինքը թողլ տար, որ իր հայրն առաւօտուանից մինչև երեկոյ պանդոկներում հարբէ և ինքը վճարէ նրա արած ծախսերը, հարկաւ նա չի գայ և գանգատուի. բայց ինքը չի թողլ տալիս, որ նա այդպէս անէ և այն. մի խօսքով Հուժէլը կաշաղակի նման շաղակրատում էր և ամեն բանին իր ցանկացած գոյնը տալիս. իշխանն էլ ստիպուած էր հաւատալ նրա ասածներին, որովհետև ծերուկի բերանից օղու հոտ էր փչում: Իշխանը բարկացաւ նրա վրայ և ասաց. ծեր, հարբած մուրացիկ, տեսնում եմ, որ որդիդ ճիշտ է ասում և տանջում է քո ձեռքին: Իսկոյն դձուրս գնա սենեակիցս և այնպէս պահիր քեզ, որ նա էլ չգանգատուի քո մասին: Տուն վերադառնալիս Հուժէլը գրեթէ քսան անգամ ասաց իր հօրը. ծեր, հարբած մուրացիկ, ի՞նչպէս եղաւ այժմ. էլի ե՞րբ ես ուզում ինձ հետ միասին դղեակը գնալ: Եւ բանի հայրը կենդանի էր ու գանգատուում էր, նրա պատասխանը միշտ այդ էր լինում:

Այդ միջոցին Հուժէլի բարեկամութիւնը ծեր գրագրի հետ աւելի սերտանում էր: Վերջինս հետզհետէ ցոյց էր տալիս նրան՝ թէ ի՞նչ կարգով ու ձևերով կարելի է ժողովրդին հարստահարել՝ առանց վտանգի ենթարկուելու: Ներքեւ երկար ժամանակ միաբան ու խաղաղ գործ էին դնում այդ արուեստը և միմեանց օգնում՝ մինչև ծեր Վայրէլի մահը, որի պաշտօնի վրայ էին գցել իրենց աչքը:

Վերջապէս Վայրէլը մեռաւ և գրագիրն իշխանին ա-

ուջարկեց նրա պաշտօնը տալ Հուսէլին. նա էլ համաձայնեց:

Այդ նոր պաշտօնով նա մուտք գործեց Թշուառների խրճիթները. բանտարկեալները նրա ձեռքումն էին: Այժմ նրա արհեստը դարձաւ գրաւ առնելն ու Թշուառացիները, իսկ կոչումը՝ սովալլուկ կոչեց հօրը, լացող մանուկներից մօրը խելը և հարիւրաւոր խրճիթներում Թշուառութեան դռներ բանալը:

Սիրելի ժողովուրդ, իշխանների զօրութիւնը սուրբ է և նրանց պաշտօնն էլ սուրբ պաշտօն է. բայց հէնց այդ պատճառով էլ իշխանաւորները չպէտք է անզգամներին պաշտօն տան և մոռանան, որ գիւղում Վայրէլի ստորին պաշտօնն էլ՝ իրենց պաշտօնն է: Ո՛վ մարդիկ, աղաչենք Աստուծուն, որ նա իշխանների միտքը լուսաւորէ, որ նրանք երկրիս վրայ եղած պաշտօնների թիւը սահմանափակեն և բոլոր տեղերն էլ խաղաղ, խոնարհ և բարեսիրտ մարդկանց տան: Սարսափելի է թէ ի՞նչպէս երկիրն ու մարդիկ աւերւում են, երբ իշխանները թող են տալիս, որ այդպիսի պաշտօնները յանձնուին անզգամ և ամենից առաջ իրենց գլուխն առաջ տանող մարդկանցը:

Ոչ ԼեոյաՏօլդն իր տասն և երկու զաւակներով, ո՛չ ԲիւաիՏօֆ Բաուէրը և ոչ էլ Հազէլբերգէրն ստիպուած չէին լինի աճուրդի հանել իրենց ունեցածը, եթէ Վայրէլ Հուսէլը գրագրի հետ միասին չաշխատէր, որ աճուրդի ծախսերն իրենց ձեռքն անցնեն:

Այդ աճուրդից մինչև այժմ քսան տարուց աւելի է անցել, բայց դրանից առաջացած Թշուառութիւնն այժմ ևս շարունակւում է և դեռ էլի երկար կաւի, մինչև որ մեզնից ոչ ոք կենդանի չի լինի: Իմ ժողովրդի երեսուն և հինգ մուրացկաններից տասն և չորսն այդ աճուրդով աղքատացածներն են. բացի դրանցից չորսն էլ գողութեան համար են բանտարկուած, հինգ աղքիկ և եօթը աղայ էլ Թափառում են մի կտոր հացի համար:

Իբրև Վայրէլ Հուսէլն ա՛յնքան մարդ բանտարկել տուեց, որ մեր մէջ այլ ևս ոչ ոք չէր կարողանում պատուաւոր կերպով ապրել: Առաջ շատ ընտանիքներ կային, որոնք ուրախ էին և իրենց համար պատիւ էին համարում, որ հարիւրաւոր տարիների ընթացքում իրենցից ոչ ոք չէր բանտար-

կուել. բայց նա բանն այնտեղը հասցրեց, որ դրանով էլ ոչ ոք չէր կարող պարծենալ: Ա՛խ. կարծես թէ իր ծառայութեան միջոցին Հումէլը մեր սերունդն ու ժողովուրդը թունաւորել էր, այնպէս ոչնչացրեց՝ նա մեր մէջ մնացած ամօթի ու պատուոյ զգացման վերջին հետքն անգամ: Հարուստները կ'նստում և թղթախաղով էին պարապում բանտերում, իսկ աղքատներն ապականուում:

Իր վայրէջութեան եօթներորդ տարին նա գնեց պանդոկն ու ջրաղացը և կարողացաւ 4500 Փլօրին կանխիկ փող վճարել՝ առանց հաշուելու նրա մնացած կարողութիւնը:

Սակայն անկարելի է խօսքերով արտայայտել այն թըշուառութիւնը, որ պատճառեց գիւղին՝ Հումէլի պէս մարդը պանդոկապետ և ջրաղացպան դառնալով: Երևակայեցէք, որ նա յարգուած է դղեակում, փող ունի, Վայրէլի իշխանութիւն ունի, ժլատ ու խորամանկ է, ճանաչում է բոլորի ընտանեկան հանգամանքները. երևակայեցէք — մի՞թէ կարող էր ուրիշ տեսակ լինել, ամբողջ գիւղը նրա գերին էր:

Ա՛խ, ինչպէս որ ջրի մէջ եղած ձուկը սահանքի մէջ է ընկնում՝ երբ ուրիշ ճանապարհ չունի, ինչպէս որ օդի մէջ եղած թռչունը խճրճուում է ցանցի մէջ՝ երբ նրա ճանապարհը կտրուում են, ինչպէս որսի կենդանին փոսի մէջ է ընկնում՝ երբ այնտեղ կերակուր դնելով՝ գրաւում են նրան — այնպէս էլ մեր ժողովուրդը Հումէլի ձեռքն ընկաւ, երբ նա պանդոկապետ և ջրաղացի տէր դարձաւ:

Նա գիտէր կեանքի հանգամանքներից առաջացած ուրիշների անբաւականութիւնը՝ յօգուտ իւր գործ դնել և պատճառներն իմանալով ու թողլ կողմերից բռնելով՝ իր ձանկն էր գցում նրանցը:

Նա կարողանում էր թէ երեխաների, թէ ծառաների և թէ ծնողների հետ խօսել և նրանց հաւատարմութիւնը գրաւել:

Յամառ երեխային նա ասում էր. ինչո՞ւ ես մօրդ խօսքը լսում:

Մնապարծին ասում էր. հայրդ չէ՞ ամաչում, որ քեզ չէ տալիս այն, ինչ որ ուրիշներն ունին, չէ՞ որ նրանք քո հօրից շատ պակաս կարողութիւն ունին:

Աշխատասէրին ասում էր. խենթ ես, որ այդքան աշխատում ես և փոխարէնը մի դատարկ շնորհակալութիւն էլ չես ստանում:

Շահախնդիրներին ասում էր. օտարութեան մէջ տասն անգամ աւելի կաշխատես, քան պստեղ:

Ծոյլերին. ինչու պէտք է սայլին լծած ձիու նման առաւօտից մինչև երեկոյ աշխատես:

Խորթ որդուն ասում էր. սարսափելի՛ բան է, ծնողներդ ի՞նչպիսի խարուժիւն են անում քո և միւսների մէջ:

Բարի տէր ունեցող ծառային. իշին ծառայելը թէպէտ լաւ է, բայց ոչ միշտ:

Խիստ տէր ունեցող ծառային. եթէ սատանայի մօտ ծառայէիր, աւելի վատ չէր լինի բանդ:

Եւ այդպէս ասում էր նա թէ իր տիրոջը գովող և թէ վատաբանող աղախինն. թէ ամուսնուն գովող և թէ վատաբանող կնոջը:

Բայց ամեն անգամ, երբ նրանք մտերմանում էին, նրա վերջին խօսքը լինում էր. դու խենթ ես, որ ինքդ բեղ չես օգնում. եթէ ես քո տեղը լինէի, կծիծաղէի և այս ու այն կանէի—այս նշանակում էր թէ. «գողացիր, ինչ որ բեղ չեն տալիս և ինձ մօտ բեր»:

Ա՛խ, նրա ասածներն ա՛յնպէս լաւ հասկացուեցան, որ մեր ժողովուրդը խաբեբայ դարձաւ և մեր ընտանիքները թշուառացան: Բպրոցական մանուկները գողանում էին ծնողներից, ինչ որ կարող էին և նրա մօտ տանում: Ամուսինները միմեանցից գողանում և նրա մօտ էին տանում: Ծառաները գողանում էին իրենց տէրերից, ինչ որ կարող էին և նրա մօտ էին տանում:

Այսպիսով նա իր նպատակներին էր ծառայեցնում թէ՛ ստահակների տենչանքը և թէ՛ չքաւորների կարիքը: Նա մոլորեցնում էր նրանցը կերակրով, խմիչքով և փողով, որ նրանց փոխ էր տալիս և յանկարծ սափպում էր վճարել, երբ նրանք չունէին: Այդ պատճառով խեղճերը գողանում էին և նրան տալիս:

Այդ հանգամանքներում ուրիշ տեսակ չէր էլ կարող լինել—մարդկանցն երջանկացնող սէրը, հաւատն ու խաղաղութիւնը բոլոր բնակարաններից անյայտացան. ծնողների ու

ղաւակների, եղբայրների ու քոյրերի, մարդու և կնոջ մէջ ամեն տեղ պառակտման սաղմն էր սերմանուած: Իսկ պառակտման սաղմը մոլութեան ու դժբաղդութեան սաղմն է:

Ամեն տեղ մոլութիւնն աճում էր՝ աղբի մէջ եղած պողի նման: Թէև բոլոր եղածների հարիւրերորդ մասը հազիւ իմացուեց, բայց այնուամենայնիւ այդ ժամանակամիջոցում ապաշխարողների ցանկում և ոճրագործների դիւաններում գրուած անունների թիւը կարելի չէ ասել: Նրանց գործերն այս դժբաղդ մարդու ցանած սերմերի պտուղներն էին. շատերն էլ գանգատուում էին նրանից:

Խեղճ Ուլին կախաղանի տակ ասում էր. որքան Հուճէն ինձնից խեց, նրա տասներորդ մասն էլ չեմ գողացել: — Եւ այդ ճշմարիտ էր. Հուճէլը նրա ամենալաւ հողը խըլեց՝ արժէքի երրորդ մասից պակաս վճարելով. և այդ ուղորմէլին մի կոպէկի բան էլ չէր գողացել, բանի որ Հուճէլը նրան բոլորովին չէր ծծել և աղբատացրել:

Լիամերգրիտէն նոյնպէս նրա տանը քամաղդացաւ. և երբ իր երեխային ոչնչացնելուց յետոյ նրա տանը բանտարկուեցաւ՝ շատերի ներկայութեամբ Հուճէլին ասաց. եթէ դու մի անգամ արդէն ինձ այստեղ փակած չլինէիր, այժմ ես այստեղ չէի լինիւ— Եւ իսկապէս նա իր ձեռքով էր այն ննջարանի դուռը բանալիով փակել, որտեղ նրան բռնաբարեցին: — Ի՞նչ փակել, ի՞նչ ես ասում, պատասխանեց Հուճէլը՝ նա ասաց. դու ես իմ դժբաղդութեան պատճառը: — Իմ պանդուկում պարողներից ու խմողներից ամեն մէկն էլ կարող է ասել այդ, եթէ յետոյ քո արածն անէ, պատասխանեց Հուճէլը, դուռը փակեց ու դուրս գնաց:

Նրա մօտ ծառայողներից շատերն էլ նրա տունը թողնելով՝ գողութեան համար ստիպուած են եղել իրենց երկրից փախչել: Ուրիշ տեսակ էլ չէր կարող լինել. նրանք նրա տանն այդ էին սովորել: Քանի որ Հուճէլը ջրաղացի տէր էր, նրա ծառաներն իրենց յաճախորդ կանանցից, երեխաներից ու ծառաներից գողացուած պտուղներն էին հաւաքում: Նրանք բոլոր ցաքուաներում և անկիւններում որոշ տեղեր ունէին, ուր դատարկում էին գողացուած քսակները:

Քրիստօֆը, որ երկար ժամանակ Հուճէլի մօտ էր ծառայում, բայց այժմ փախստական է, քսան տարի առաջ

փոքր մնաց որ սպանուէր: Բիւտիբաուէրն իր սնանկանալուց առաջ նկատեց, որ իր ցորենը պակասում է և որովհետև կասկածում էր արբեցող կնոջ վրայ, երկար ժամանակ հետեւում էր նրան և մի առաւօտ տեսաւ, որ պարկը լցրած ցորենը շալակած՝ տանից դուրս է տանում: Նա մի կողմնակի ճանապարհով հետևեց նրան ցանկի տակից և տեսաւ, որ կինը ցորենի պարկը ջրաղացի ճանապարհի վրայ եղած թփերի մէջ թաղցրեց. առանց մի խօսք ասելու նա կնոջը թողլ տուեց կրկին տուն վերադառնալ և սպասում էր թփի ետևը՝ տեսնելու թէ ո՞վ կգայ պարկը տանելու: Հազիւ կէս ժամ անցնելուց յետոյ եկաւ ջրաղացի ծառան և թփի միջից ուրիշ երկու սյդպիսի քսակներ էլ հանեց: Բայց երբ ուզում էր Բիւտիբաուէրի քսակն էլ վերցնել, վերջինս ցանկի ցցով ա՛յնպէս խփեց նրան, որ նա ուշաթափուեց և մի քառորդ ժամ փողոցի մէջ տեղն ընկած մնաց, մինչև որ ջրաղացում իմացան այդ և տարան նրան: Այդ ժամանակից սկսած Բրիստօֆն այլ ևս առանց իր մեծ շան՝ տնից չէր դուրս գալիս:

Հումէլի վայելելութեան երրորդ տարին վախճանուեց նրա տանաւնայ միակ որդին, որ միշտ հիւանդ ու թոյլ, բայց միևնոյն ժամանակ բարի ու երկիւղած տղայ էր: Նա շարունակ Աստուածաշունչ էր կարդում և աղօթում: Նա աշխատելու ոյժ չուներ, բայց նկատում էր իրենց տան մէջ տիրող անարդար վարմունքը. թէպէտ նա դեռ պատանի էր, բայց յաճախ արտասուք էր թափում և պարզ ասում՝ թէ սիրաս ճմլում է, երբ տեսնում եմ այդ բաները:— Հայրն ատում էր նրան և անուանում վաղամեռուկ ու լալկան կին, իսկ կոնծած ժամանակը ծաղրում էր մինչև անգամ նրա սրտանց աղօթելը: Երեսայի ննջարանում քնող աղախինը ներա մեռնելու ժամանակ վկայեց, որ տղան ամբողջ գիշերներով լալիս ու ողբում էր և մի րոպէ աչքը չէր փակում, երբ լսում էր թէ իր հայրը մէկին ճնշել ու դժբաղդացրել է: Իր մահուանից մի քանի օր առաջ նա քահանային խոստովանեց, որ իր հօր արարքը ճնշում է իր սիրաբ և խնդրեց, որ իր մահուանից յետոյ այդ մասին խօսէ հօր հետ: Քահանան կատարեց նրա խնդիրը, բայց հայրը պատասխանեց. ինչպէս երևում է, տղաս մինչև մահն էլ յիմար է

մացել, ինչպէս որ էր և իր ամբողջ կեանքում: Բայց այնուամենայնիւ մանկան մահուան շարժին նա աղքատներին ճակնդեղ և գեանախնձոր բաժանեց իբրև ողորմութիւն:

Հուլիէն իննը տարի արդէն Վայբէլլութիւն էր անուամբ, երբ ծեր տանուտէրը մեռաւ: Թէև իշխանը բարեհաճ էր դէպի Հուլիէլը, բայց սկզբում նրա մտքովն էլ չէր անցնում տանուտէրի պաշտօնը նրան տալ: Նրան յայտնի էին դրամի քանի պահասութիւնները, օրինակ խմելն ու սուտ երդուելը և չէր կարծում, որ նա լաւ տանուտէր կլինի, բայց Վայբէլլը շատ բարեխօսներ ունէր դղեակում՝ գրագրից ու վեկարից սկսած մինչև այգեպանը, որոնք ազդեցութիւն կարող էին ունենալ իշխանի վրայ: Հուլիէլը կարծում էր թէ ամբողջ գիւղն էլ իրեն ձայն կտայ: Բայց բոլորն էլ քսուներ էին և Վայբէլլն ամբողջ գիւղում հինգ ձայն չէր ունենայ, եթէ խղճմտանքով գործէին. բայց, կարճ ասենք, իշխանին հաւատացրին՝ թէ նա հաճելի է բոլորին—և նա տանուտէր եղաւ:

Այժմ նա իբրև իշխանաւոր ա՛յն էր անում—թէև խիստ է ասածս, բայց ճշմարիտ—ինչ որ անում էր իբրև խաբեբայ: Հէնց որ տանուտէր դարձաւ, նրա առաջին գործն եղաւ Բամբերգերին բոլորովին ոչնչացնել. որովհետև գիտէր, որ քանի նա իր տեղումն է, ինքը չի կարող ապահով կերպով իր ուղածն անել: Եւ շուտ հասաւ իր նպատակին: Միւս բոլոր առաջաւորներին հետ նա կարողանում էր համաձայնել, որովհետև գիտէր այնպէս վարուել, որ նրանք ստիպուած էին լինում նրա ուղածն անել:

Նա միջամտեց նոյնպէս իշխանի ընտանեկան՝ գործերում և ազդեցութիւն ձեռք բերելով՝ այնպէ՛ս էր գործն առաջ տանում, որ իշխանը չէր նկատում այդ հետազհետէ, ժամանակի ընթացքում, Հուլիէլը դղեակում ա՛յնքան կարևոր մարդ դարձաւ, որ առանց նրան գրեթէ ոչինչ չէր կատարում: Եւ մի երկու անգամ էլ Հուլիէլն այդ բանը զգացնել տուեց իշխանին. մի անգամ խոտհարքի միջոցին, միւս անգամ էլ հողերը տասանորդով վարձու տալու ժամանակ՝ ութն օր դղեակը չգնալով:

Նա աշխատում էր, որքան կարող էր, բոլոր պաշտօնեաներին, ամենաստորինից սկսած, միաբան պահել: Իրեն

Համար դրանցից վերցնում էր ինչքան կարող էր և միւսնեքի համար էլ հոգում էր, որ իրեն հաճելի մարդիկ լինեն կամ թէ առ սահաւն պարզամիտ լինեն: Մինչև անգամ լուսարարի և վարժապետի պաշտօնների համար իր մարդկանցն էր առաջարկում և իբրև տանուտէր ամեն բան անում էր շատ համարձակ և ապահով կերպով, ինչ որ առաջ, իբրև Վայրէջ, բանտի և աւելի մեծ պատիժների երկիւղով էր անում:

Խաբեբայի և խաբեբայ տանուտէրի մէջ եղած տարբերութիւնն այս է. իր և իր ստորագրեալների երդումը մի վահան էր տանուտէրի համար, որով ծածկում էր բոլոր յանցանքները. ուր որ նա այս վահանն էր առաջը բռնում, նրա ստութիւնները ճշմարտութիւններ էին դառնում իսկ հակառակորդների ճշմարտութիւնները — ստութիւններ:

Այս վահանի արժէքն անգնահատելի է այն բռնադատ և անարդար մարդկանց համար, որոնք գիւղերում պատիւ ու յարգանք ունին. այդ վահանը գործ են դնում նաև մեծապատիւ տղուկներն՝ որչափ երկար ժամանակ, այնչափ անամութաբար: Հարցրու աջ ու ձախ և կլես. եթէ հասարակ մարդիկ, ամեն տեղ, աւելի սիրով անարդար պատիժ ու վիշտ են կրում, քան թէ գործն երդման հասցնում, ընդհակառակն առաջաւորներն ամեն բանի համար, նոյն իսկ հարբած միջոցին խօսածի համար, ա՛յնպէս շուտ և առանց մտածելու երդւում են, որ մարդ սարսափում է:

Եւ այդ է գլխաւոր պատճառն այդ մարդկանց բազմութիւ թշուառութիւնների, վշտերի և ընտանեկան դժբաղդութեան, որով շատերն են ապրում և դեռ իրենց զաւակներից շատերն էլ կընկնեն: Որովհետև նրանց երդման պատճառով կարելի չէ իմանալ նրանց արած խաբեբայութիւնները և նրանց կանայքն ու երեխաներն ամեն օր տեսնում են, որ ամենքն էլ իրենց ստերը պէտք է հօրն ասեն իբրև ճշմարտութիւն, այդպիսով իրենք էլ դառնում են բռնաբարոզ ու անարդար և մոռանում են իրենց մերձակաների հետ հաւասար մարդու նման վարուելու եղանակն ու կերպը. այդ պատճառով ամեն տեղ, ուր այդպիսի մարդկանց որդիքը տանուտէր չեն դառնում կամ թէ պաշտօններ չեն

ստանում, որ կարողանային իրենց անհոգութիւնն ու ընտանեկան արատները պաշտօնական զգեստով և երդումով սքողել, ստահակներ են դուրս գալիս. իսկ աղջիկներն էլ եթէ հասարակ ընտանիքի հարս են դառնում և աշխատելու ստիպւում՝ ամենահարուստ ընտանիքն անգամ հիմնադատակ են անում:

Բայց ես շաղակրատում եմ. ժամանակն անցնում է, իսկ ես դեռ շատ քիչ բան եմ ասել:

Երբ Հումէլը հաստատուեց իր պաշտօնում, սկսեց իր սահմանակից անտառի ու դաշտի տէրերի հետ կռուել ու պահանջներ անել: Եթէ նրա ուզածը չէին տալիս, դատարանի հետ պէտք է գործ ունենային կամ թէ ամեն ըոպէ երկիւղ կրէին՝ տանուտէրի լարած դարանի մէջ ընկնելու: Նա ամբողջ համայնքը մի անձի պէս իր ձեռքն էր առել: Բայց որտեղ որ այսպիսի մի տանուտէր է իշխողը, այնտեղ այլ ևս համայնք չկայ: Համայնքը մինչև անգամ ստիպւում էր կնիքով և վաւերութիւնով հաստատել տանուտէրի վրայ այն, ինչ որ ինքը հաստատ գիտէր թէ գողացուած է իրենից: Այդպէս էլ արին Հումէլի արտի սահմանի վերաբերմամբ, որ այժմ էլ դեռ կոչւում է ճիշտուած արտ: Արտի երրորդ մասից աւելին, ըստ երկարութեան, համայնքի արօտից խլուեց և տանուտէրին յատկացուեց: Բոլոր ծերերը գիտէին, որ առաջուայ սահմանաբարը յիսուհ քայլ աւելի ցած էր դրուած, բան տանուտէրի դրած նոր սահմանաբարը. բայց հին սահմանաբարը չկար և ոչ ոք չգիտէր՝ թէ ի՞նչ եղաւ: Համայնքն առանց հակառակելու՝ սահմանաբարը նրա ուզած տեղը դրեց: Եւ երբ նա շինութիւններ էր անում, նոյնն էր լինում. նա անտառից վերցնում էր ցանկացածը և երբ տախտակներն արդէն իր տան առաջն էին, այն ժամանակ միայն համայնքի մէջ ձայներ հաւաքելով՝ իրաւունք էր ստանում և ապահովութեան համար գիւղական մատենի մէջ գրել տալիս:

Հանգուցեալ ծեր Մեռնահեօֆլէրը չէր կարողանում մարտել այդ և բարձրաձայն ասում էր. հին ժամանակը գողերը գոհ են ձագեցել, եթէ թոյլ ենք սուել գողացածը տանել, բայց այժմ պէտք է մի վկայութուղթ էլ տալ՝ թէ ընծայում ենք:— Բայց ամենքն էլ այնպէս էին ձևացնում,

իրբւե թէ չեն լսում նրան. մինչև անգամ հէնց իր որդին մի կողմը քաշեց նրան ու ասաց. լռի՛ր, ի սէ՛ր Աստուծոյ. եթէ ոչ մի բոպէ էլ ապահով չենք կարող լինել, նա կարող է մեր տունն ու տեղը քանդել: Ցանկանալով ել չլսելուն էր տալիս և այնպէս անում, որ առաջաւորները ստորագրեն վկայաթուղթը և թուականը երկու ամսով առաջ դնեն:

Հասարակաց արդարադատութիւնն այժմ նրա ձեռքին էր և նա համարեա՞ թէ միշտ այդ գործ էր դնում յօգուտ անարդարների, որ կարողանայ իր կողմը գրաւել այնպիսի մարդկանց, որ իրենից երկիւղ ունենան և ինքն էլ դրանց միջոցով իր հակառակորդներին ճնշէ:

Ո՛չ մի տեղ այնչափ գողութիւններ չէին պատահում, որչափ մեղ մօտ. բայց նրա տանուտէրութեան միջոցին ոչ ոք չէր պատժուում — այդ բանով նա պարծենում էլ էր: «Եթէ նա հինգ տարի առաջ տանուտէր լինէր, հարկաւ Ուլիին և միւսներին պատահած դէպքերը տեղի չէին ունենալ:» Նա դժուարացնում և արգելք էր լինում, որ փաստուածն ապացուցանէ գողի յանցանքը, թոյլը՝ բռնադատողի և յափշտակուածը՝ յափշտակողի արարքը: Նա բռնում էր գանգատուողին մինչև որ գողը փախչում ու թագնւում էր: Եթէ գանգատուողն ամբողջ օրն էլ սպասէր նրան, նա կրկին տանը չէր լինում, իսկ ամբողջ գիշերը նրա տանը խաբեբաների խորհրդատեղին էր: Ինչ որ աչքովդ տեսնում էիր, ճիշտ չէր և եթէ գողին ամառ բռնէիր էլ, դեռ պէտք է ներողութիւն խնդրէիր, որ գանգատուել ես նրա մասին:

Այս հանգամանքից առաջացաւ այն, որ ամեն մարդ էլ իր ձեռքով էր դատաստան անում: Շատ անձինք ծեծուելով մնուել են, որովհետև գանգատուելուց քաշում էին. հէնց այդ պատճառով էլ Կրումհօլցն իր գողացած խաղողի բեռնն աակը խեղդուեց: Լեոյահօլցն ու ծեր Հիւգին նրան իրենց այգում պատահելով սանդուղքի վրայից ցած գլորեցին: Նրանք լսեցին, որ նա ներքէն օգնութիւն է կանչում, բայց չմօտեցան և թողին նրան այնտեղ, որովհետև դատ չէին ուզում բանալ և վախենում էին, որ եթէ իրենք օգնութեան հասնեն, նա կձանաչի իրենց և տանուտէրն էլ նրան կօգնէ ապացուցանելու՝ թէ ինքը խաղող չէ գողացել:

Եւ ճշմարիտ որ ոչ մի դէպքում կարելի չէր կրած անիրաւութիւնն ապացուցանել: Ցանուտէրն իր ուղած կողմէ կը արդարացնուամ: Սուան ու ճիշտը նրա համար միւսնոյնն էր: Ինչ որ նա կամենում էր՝ այո՛ էր, իսկ ինչ որ չէր կամենում՝ ոչ: Գաղտնի խօսակցութիւնը նրա պահանջամբ յայտնուամ էր, իսկ հրապարակաւ, համայնքի մէջ ասածներն ուրանում էին, եթէ նա կամենում էր, որ ուրանային: Ինչ բանի համար էլ որ վիճէր, միշտ իր ասածի համար վկաներ ունէր, եթէ բանը նոյն իսկ երդման և խղճի դէմ գործելուն հասնէր, նրանք կրկին պատրաստ էին:

Ես չեմ կարող այս թշուառ երգեցողներին մասին երկար խօսել. դուք գիտէք թէ ո՞վքեր էին նրանք և նոյնպէս թէ՛ ի՞նչպէս տանուտէրը նրանց այն անզը հասցրեց՝ որ նրանք—ինչպէս որ նրանցից մի քանիսը յետոյ հրապարակաւ ասում էին—իրենց մարմինն ու հոգին սատանային պէտք է վաճառէին, երբ նա պահանջէր այդ նրանցից: Կարկաւ նա որքան կարողանում էր՝ քաղցրացնում էր նրանց կուլ տուած դեղատաները և մինչև անգամ անբաղդ փոխանորդին համոզեց, որ քնացնէ նրանց խղճմասանքը:

Շատ անգամ էլ նրան յաջողուամ էր այնպէս անել, որ իր վկաները չերդուեն, որովհետև յաճախ անմեղները տեսնելով, որ նա այդպիսի վկաներ է առաջ բերում, թողնում էին դատը և զրկանք կրում՝ առանց երդումի տալու վկաներին: Այդպիսի դէպքերում տանուտէրն ասում էր այդ բամբաղըներին. ձեր տուած վկայութիւնը միմիայն հասարակ սուտ է, ինչպէս որ ամեն օր և ամեն անկիւններում հարիւրաւոր ստեր են խօսուում, բայց երգեցողութիւն չէ: Դրանք էլ հաճութեամբ հաւատում էին նրա ասածին: Բայց երբ բանն այնտեղն էր հասնում, որ վկաները պէտք է երդուէին, նրանք այնպէս ծումուում էին երդման խօսքերը, որ բաւական էր լինում տանուտէրի գործը տանելու, բայց իսկապէս այդ երդման խօսքերն ամբողջովին սուտ չէին, այլ ծումուած ու յեղաշրջուած ճշմարտութիւններ էին երևում: Այս երդման ձևն այնքան յայտնի կաւ, որ մօտակայքից մի պարոն՝ Կայբակէրին նկարել տուեց տանուտէրի պատկերն այդպիսի մի գործի համար վկայութիւն տալիս և պղնձի վրայ փորագրել տուեց: Պատկերը շատ յաջող դուրս ե-

Վաւ. նրա մաղերը վայրենի խողի սաւեի նման ցցուած են պղնձի վրայ. գփռքի երկիւղը, երդուելու անպիտան սիրտը և դրա համար ստանալիք վարձատրութեան ակնկալութիւնը՝ արտայայտուած են նրա հայեացքի մէջ: Նա հենց բերանը բաց է արել և այնպէս է թւում՝ թէ մարդ տեսնում է, որ նա սրտի բաբախումից հազիւ կարողանում է շունչ բաշել և թոյլ պէտք է խումփացնէ: Աչքերը կիսաբաց են, ճակատի խորշոճները հաւաքուում են դէպի քիթը. նա բարձրացնում է երեք մատը և ձեռքն էլ (տեսնողին թւում է թէ գողում է) թանաքոտ է, որովհետեւ մի խաբեբայական թղթի վրայ, ստորագրելու տեղ, խաչ է դրել: Այս պղնձի փորագրութեան տակ գրուած է. «Բօնայի վկայ»:

Հազիւ թէ կարելի լինէր այս ստորագրութիւնից մի աւելի զղուելի արձան կանգնել մեր գիւղի ապականութեան համար:

Վերջին ձմեռը, երբ մեր իշխանն այդ փորագրութիւնը տեսաւ, ասաց. ես աւելի սիրով կալուածքս կծախեմ և հեռու տեղ կերթամ, քան թէ այստեղ կմնամ, եթէ այդ նրկարը չորս կամ հինգ տարուց յետոյ կրկին կյարմարուի մեր գիւղին ու ճշմարիտ կլինի: Բայց փառք Աստուծոյ, նա էլ չի գնայ, այդ թշուառութեան օրերն արդէն անցան մեզ համար:

Ես կրկին դառնում եմ տանուտէրի պատմութեանը և իշխանի հրամանով առանց ծածկելու, խօսում եմ այդ երկարատեւ թշուառութեան պատճառների մասին:

Իշխանի ընդունարանում տանուտէրն էր իշխում, գրագիրը, Վայբէլն ու նա մի ձեռքի երեք մասներն էին կամ թէ երգեհոնի երեք շուկները: Ցանուտէրը հիմնաւորապէս գիտէր՝ թէ ո՞ր ժամին ինչ գործ պէտք է ներկայացնել իշխանին՝ այժ կամ ո՞չ պատասխանը ստանալու համար. և վարպետութեամբ գիտէր՝ իր բանն աղոթեցնելու համար նրա պատուար հանգամանքներ առաջ բերել նոյն րոպէին: Իսկ եթէ ուզում էր, որ մի բան չիրագործուի, այնքան շատ էր խօսում այդ բանի մասին, կամ այնպէս յիմար ու յեղաշրջած էր խօսում, որ ապահով էր թէ իր ասածի հակառակը պէտք է լինի: Իսկ եթէ ուզում էր մի բան ստիպելով անել տալ, մեծ մասամբ այդ մասին չէր խօսում, բայց

այնպէս էր անուճ, որ ուրիշները խօսեն և հարիւրաւոր հանգամանքներ էր առաջ բերում, որոնք իր ուզածը յաջողեցնում, իսկ չկամեցածն արգելում էին: Օրինակ՝ երբ չորս տարի առաջ Ելսբէթ Միւլլէրը Ռինհայդէնի տանուտէրի որդու դէմ գանգատուեց՝ և ցոյց տուեց թէ նա խոսացել էր ամուսնանալ իր հետ և իշխանն էլ զայրացած էր յարգելի տանուտէրի որդու դէմ, Հուլիէն, իբրև թէ պատահմամբ, իշխանի սեղանի վրայ թողեց պատժագիրքը և բացեց այն էջը, որի վրայ գրուած էր՝ թէ մի Ելսբէթ Միւլլէր գիշերային շրջագայութեանց և արգելուած պարը պարելու համար՝ հինգ ֆունտ արծաթ վճարելու պատժի է ենթարկուել: Ի հարկէ դա բոլորովին ուրիշ Ելսբէթ Միւլլէր էր, բայց այդ ոչինչ: Երբ միւս առաւօտն իշխանը գրագրին հարցրեց թէ այդ նոյն Ելսբէթ Միւլլէրն է, նա պատասխանեց. այո՛ — և տանուտէրի որդին գանգատուող աղջկան հազիւ այն գումարի կէսը վճարեց, որ իշխանի հրամանով կ'վճարէր, եթէ այդ գիւղում ուրիշ Ելսբէթ Միւլլէր կ'ամ թէ երդմահար պաշտօնեաներ չլինէին:

Տանուտէրն այդպէս էր վարուում այն դէպքերում, երբ չէր ուզում գործի մասին անձամբ խօսք բանալ իշխանի մօտ: Եթէ վերջինս երբեմն ճշմարտութեանը վերահասու էր լինում, տանուտէրը կարողանում էր նրան նորից սխալեցնել: Նա իր անսածներն էլ ուրանում և հաւատացնում էր իշխանին, թէ սխալ է հասկացել՝ նոյն իսկ իր ականջով լրսածը. և երբ, այսպէս ասած, ճշմարտութիւնը նրա առաջն էր կանգնած, տանուտէրը կարողանում էր այնպէս անել, որ իշխանը կ'ոնական էր դարձնում նրան: Բայց Հուլիէն աշխատում էր նոյնպէս, որ նա ոչինչ չտեղեկանայ և այնպիսի տեղ չգնայ, ուր կարող էր իրեն աննպաստ բան լսել կամ տեսնել:

Հինգ տարի առաջ, մի անգամ աշնանը, երեկոյեան, Հերցհաուից տուն էի գալիս. երբ զաւիւյսրին մօտեցայ, ճանապարհից մի բանի բայլ հեռուից լսեցի մի որսորդի անէծքը. նա անիծում էր, որովհետև իր ընկերը շներին շատ էր դէպի Բօնալ հարածել: Եթէ սատանան, ասում էր որսորդը, այժմ իշխանին այստեղ բերէ, տանուտէրն ինձ կ'ըբարկոծէ. այս սիրուն խօսքերի պատճառը հետևեալն էր.

այդ միջոցին ջրի վեճի տաք ժամանակն էր և տանուտէրը զգուշանում էր, որ իշխանն արօտի կողմերը չգնայ, ուր կարող էր իր աչքով տեսնել անիրաւութիւնը. այդ պատճառով որսորդներն ու շներն էլ այն կողմերում որսալու իրաւունք չունէին:

Այդ վեճը հարուստ գիւղացիները տարան. թէև հակառակորդներն էլ միասին նոյնքան արօտ ունէին, որքան արանք և նրանք էլ ուրեմն նոյնքան ջուր պէտք է ունենային՝ բայց միայն երրորդ մասը ստացան և գոհ պէտք է լինէին, որ բոլորից էլ չղքկուեցան, որովհետև այդպէս էին սպառնում նրանց և ասում. ջուրը մեծ արօտինն է և տասանորդին կվնասէ, եթէ մանր մասերի բաժանուի:

Բայց ես պէտք է շարունակեմ և մէկ բան ասելիս, հարկւրաւորները թողնեմ:

Տանուտէրի պատմութեան մէջ միայն մի բան չեմ կարողանում ըմբռնել. աղքատ մարդիկը շարունակ խաբուելով նրանից, կրկին միշտ նրա մօտ էին վազում՝ խորհուրդ հարցնելու: Բայց ե՛նչ եմ ասում: Երբ մարդս երկիւղի և կարիքի մէջ է ու հալածոււմ է, ինքն էլ չգիտէ թէ սարսափից ո՛ւր է վազում՝ օգնութիւն խնդրելու: Երբ կենդանուն հալածոււմ են, նա ջրի մէջն էլ է ընկնում և խեղաւում, թէև ազատուել էր ուզում:

Նա խորհուրդ էր տալիս թէ նրանցը, ում ուզում էր խորխորատը գցել և թէ նրանցը՝ ում կամենում էր այնտեղից ազատել: Նա իշխանի մօտ գանգատի գնացողներին ա՛յնպիսի խօսքեր էր սովորեցնում նրան ասելու, որ անպատճառ ի վնաս ասողի էր լինում և գերազանցում էր Դաւիթ արքային, որ խեղճ Ուրիասի գրպանը նամակ դրեց և ոչ թէ բերանը խօսքեր:

Եւ երբ խեղճ մարդիկն իրենց ասած խօսքերով իրենց գործը փչացնում էին կամ աւելի բարդում ու խճճում՝ կարծելով թէ բացատրում են, նրանց խորհուրդ տուողը գալիս էր իշխանի մօտ և ասում. ես գիտեմ, որ այդ մարդիկն արդէն ձեզ մօտ եկած կլինեն և այսպէս ու այնպէս ասած, բայց այդ բոլորն էլ սոււա ու յեղաշրջած է. գործն ահա այսպէս ու այնպէս է: Եւ նա այդ այնպէս լաւ էր հաղորդում, որ ծշտութեամբ կարողանում էր նոյն իսկ

նրանց ձայնով խօսել. նրանց ձեռքերը շարժելու, գլուխը դէս ու դէն ծռելու, ձեռքերը կցելու, ունիւր կախելու, լեզուն կծելու, աչքերը չռելու, մի խօսքով նրանց կանգնելու և խօսելու բոլոր ձևերն ա՛յնպէս էր օրինակում, որ իշխանը յաճախ ասում էր նրան. կարծես թէ այդ մարդկանց մէջն էս եղել, այնպէս լաւ գիտես՝ թէ ի՛նչպէս են անում նրանք և ի՛նչ են ասում:

Բայց նրա ամենազօրեղ միջոցը, որով գիւղացիների արդար գործը փչացնում էր իշխանի առաջ, այն էր, որ ինքն ամեն դէպքում իր հակառակորդների վատ կողմերը չէր յայտնում, այլ այնպէս էր անում, որ իրենք իրենց երեւային: Եւ դժբաղդարար շատ դէպքերում այդ շատ հեշտ էր, որովհետեւ նա գիւղի ընտանիքների մեծ մասն ապականել էր արդէն և մուրացիկների ու խաբեբանների ամբողջարձրել, այժմ էլ նրանց խայտառակութիւնը ծածկելու համար՝ իր ուզածն էր անում: Բայց դրանց հետ էլ էր ուղածի պէս էր վարուում: Միւսնոյն մարդու համար այսօր ասում էր թէ մուրացիկ, խաբեբայ ու անպէտքի մէկն է. իսկ երբ միւս օրն այդ մարդու կինը կամ հայրը գալիս էին նոյնն ասում նրա մասին և չափաւորել ու խնամակալութեան տակ էին ուզում գցել նրան, նա բոլորովին այլ կերպ էր խօսում և հաստատում՝ թէ նա այնքան էլ վատ չէ, ինչպէս ասում են և եթէ երբեմն անշնորհք բան է անում, դրա համար նրան չի կարելի խնամակալութեան տակ ձգել: Նա ասում էր. եթէ դրան և դրա նման յիմարութիւններ անողներին պատժենք, անվերջ տանուտէրներ պետք է պահենք. շատերը հարիւր անգամ արդէն կրկնում են՝ ինչ որ մի անգամ եղել է և եթէ հաշուենք տանուտէրի վարձատրութեան չափը և տնտեսութեան մէջ յառաջացնող ապականութիւնն, երբ օտարն է այնտեղ բուն դրնում, կտեսնենք, որ խնամակալութիւնից առաջացած վնասն աւելի մեծ է, քան թէ շատերի գործած անպիտանութիւնների հետևանքը: Կարճ ասենք, նա միշտ հակառակ էր՝ երբ վատնող մարդու ծախքերն ուզում էին սահմանափակել: Այդ պատճառով շարունակ հակառակ խնամակալութեան էր խօսում և հարիւր անգամ պատմում, թէ ինքը պաշտօնով իշխանի ունկնդրութեանը ներկայ էր միանգամ, երբ երիտա-

սարդ, հարուստ Տրոյբէլին իր խնամակալի հաշիւը բննեց: Փողը, ասում էր նա, մի բանի հազար գուլղէնով պահասել է. Տրոյբէլին ոչինչ չէր ուզում հասկանալ իր առաջը կարգացածներից և պահասորդն էր պահանջում: Աերջապէս իշխանը հարցրեց նրան՝ թէ ի՞նչ ունի ասելու այս հաշուի դէմ: Ինձ թւում է, պատասխանեց Տրոյբէլին, որ եթէ սատանան խնամակալութեան տակ ընկնի, դժուարեց կզրկուի: Այդպէս է, Աստուած է վկայ, ամեն տեղ խնամակալութեան բանը, ասաց Հումէլը: Նա իր փորձառութիւնից էր խօսում և ես կարիք չունիմ ձեզ պատմելու թէ ի՞նչպէս էր վարւում նա որբերի ստացուածքի հետ, ինքնեորդ էլ գիտե՞ք այդ: Նա խնամակալութեան դէմ էր խօսում, որովհետև նրա բարձրագոյն նպատակն էր միշտ՝ հարստահարել բոլորին՝ բանի որ միջոց ունին. իսկ այդ նպատակի համար ամենից օգտակէտ էին անպիտան ու փչացած մարդիկը: Այդ պատճառով նա ո՛չ մի ընտանիք չ[թողեց խաղաղ. չափաւոր, պատուաւոր հանգստութեան և առանձնութեան մէջ, որ այնքան երջանկացնում էր մեր նախնեացը: Եթէ մի ընտանիք դեռ այդպիսի կեանքով էր ապրում, նա չէր հանգստանում մինչև որ վէճ ու շփոթութիւն չէր առաջացնում այնտեղ և հրապարակաւ ասում էր. ուր որ խաղաղութիւն է տիրում և ամենքն էլ միմեանց հետ լաւ են վարւում, այնտեղ իշխանաւորը միայն կիսով չափ է տիրում:

Այս անիծեալ խօսքի ոչ մի կէտն էլ ճիշտ չէ. և եթէ իշխանաւորն այդպէս է հասկանում, կոյր է և ոչ իր օգուտն է տեսնում, ոչ երկրինը: Բայց երբ սյդպիսիներն իշխանաւորի մասին են խօսում, իրենց են հասկանում միայն. և այն իշխանութիւնը, որի մասին խօսում են, այնքան մօտիկ է նրանց սրտին, որքան հովուի սրտին մօտ է այն ծառի բունը: որի վրայ բարձրանալով՝ գողանում է նրա պըտուղը: Երբ այդ հովիւն իր քսակը լցնում է ծառի վրայ, բնի վրայից կրկին ցած է գալիս, պառկում է ծառի ստուերում և բնի խոռոչի մէջ կրակ վառում՝ խնձոր խորովելու համար: Բայց որ այդպիսով այդ ծառը կորանայ և այլ ևս պտուղ չի տայ, նոյնչափ հոգացողութիւն է պատճառում հովուի սրտին, որչափ Հումէլի նման տանուաւորին հոգս են պատճառում իշխանութեան օգուտները:

Ո՛չ, ով որ խաբեբայ, գող, անարդար ու խտաօտրա մարդ է՝ նրա սրտին մօտ չի կարող լինել ոչ մի իշխանաւորի օգուտը. և Հուսէնն այդ անունը տալով՝ ուզում էր նրա պաշտպանութեամբ խեղճ, թղլ և անօգնական մարդկանցը քամարողդացնել:

Մի օրինակով պարզեմ թէ ի՞նչպէս էր նա մարդկանցը թակարդի մէջ ձգում: Օտար տեղից եկած երիտասարդներին իր տուն էր կանչում և թղլ տալիս, որ խաղան ու խմեն, իսկ եթէ որսը թակարդի մէջ չէր ուզում ընկնել, նա մի կողմն էր քաշում նրան և իբրև տանուտէր տեղեկուծիւններ հարցնում. երբեմն էլ նրանց անցագրերը ճշդելով՝ ա՛յնպիսի լեզու էր բանեցնում, որ կարծես թէ շատ մեծ եռանդ էր ցոյց տալիս երկրի ու իշխանութեան օգտին: Վրու փախտական ու ստահակի մէկն ես, ասում էր նա, Վխաբեբայութեամբ ես ապրում, չե՛ս ուզում թագաւորիդ ծառայել, ծնողներիդ հետևել և աշխատել. այդ պատճառով էլ չես ցանկացել ձեր տանը մնալ և մեր երկրում մուրացկանութեամբ և խաբեբայութեամբ ես ուզում գլուխդ պահել: Այո՛, մեր երկիրն ազատ ու գոված երկիր է, բայց ո՛չ թէ քեզ նման փախտականների ու անգործների համար: Յետոյ նա սպառնում էր ծեծով, բանտարկութեամբ, բարձրագոյն դատարանով, մինչև որ խեղճ ողորմելին ծառայում էր նրան կամ թէ իր ապրանքի մի մասը նրան տալով՝ ազատում էր նրա ձեռքից:

Երբ ուզում էր ամենախիստ կերպով կեղեքել, իշխանութեան անունով էր խօսում: Նա իր գարշելի կեանքով ամենևին չէր հարցնում՝ թէ արդեօք իրեն. շրջապատող մարդիկն էլ ապրելու կարիք ունե՞ն, թէ ոչ, երբ նրա հետ խօսում էին աղքատների կարիքի և սյրիների թշուառութեան մասին՝ նա միշտ պատասխանում էր. աղքատ մարդիկ միշտ եղել են և միշտ էլ կլինեն: Աստուած շատ լաւ գիտէ՝ թէ ինչու մէկին շատ է տալիս, իսկ միւսին ոչինչ: Նա իր սատանայական կեանքի ընթացքում յաճախ Աստուծոյ անունն էր յիշում և սիրում էր մինչև անգամ կրօնից խօսել և երկնքի ու դժոխքի սարօսփների մասին պատմել և լսել: Օրինակ՝ թէ միւս կեանքում ի՞նչ պէտք է անել և ինչ չանել, ի՞նչով պէտք է ուրախանալ ու ժամանակ անցկացնել

և թէ ի նչպէս կարելի է միմեանց ճանաչել. գուցէ կարելի լինի ճանաչել պապերի հայրերին և այնպիսի մարդկանց, որոնց յարդել ենք, բայց աչքով չենք տեսել. խօսում էր դժոխքի մասին, թէ արդեօք երկրի՞ս վրայ է գտնուում, գուցէ կրակ և Հռենոսի մեծութեամբ ծծումբի առուակներ ժայթքող սարի մօտ Երեկոները նա շատ յաճախ էր պղպիսի բաների մասին խօսում և փոխանորդն էլ գինու և ստացած փողի փոխարէն ա՛յնպիսի բաներ էր հաղորդում նրան, որ մարդ չի հասկանում, թէ տանուտէրի նման խելօք մարդը ի նչպէս էր կարողանում ականջ դնել նրան ու հաւատալ: Բայց նրա խելքը միայն խաբեբայութիւնների մէջն էր և միւս բաներում երեխայի պէս էր. կարելի էր ամեն սուտ պատմել ու հաւատացնել նրան: Իր արհեստում նրան ոչ խելք էր պահասում և ոչ խօսք: Նա կարողանում էր բահանալի պէս մոտեցնել ամբաստանեալին, բայց ամենքն էլ գիտէին, որ լրջօրէն չէ անում՝ այդ: Եւ իր սենեակում մենակ լինելիս՝ ինքն իրեն ասում էր. այդպէս էլ պէտք է լինի, իր նման մարդը պէտք է ցոյց ապ իբրև թէ շատ բարկացած ու նեղացած է, եթէ նոյն իսկ ծիծաղը հազիւ զսպելիս լինի:

Եւ այն անպիտաններն էլ, որոնց հետ խօսում էր ունկնդրութիւնից ու դատաստանից մի փօքք առաջ, իրենց այնպէս էին պահում՝ կարծես թէ կատակերգութիւն են խաղում. նրանք փայտի պէս կանգնում և ոչ մի խօսք չէին ասում, բացի անգիր սովորած հետեւեալ բառերից. «Ճշմարիտ չէ, ասացէք ինչ որ կամենում էք»: Նրանք լաւ էին կատարում իրենց դերը, որովհետև տանուտէրն առաջուց ասում էր նրանց, որ ինքը հրապարակով հակառակը կխօսէ, բայց այդ չի մեծասի նրանցը՝ եթէ միայն համարձակ լինեն և տոկունութեամբ ժխտեն իր և միւսների ասածները: Երբեմն նա ա՛յնբան համարձակ էր լինում, որ երբ, չնայելով այդպիսիների ժխտման. յանցանքը պարզ նկատելի էր, առաջինն ինքն էր լինում, որ խորհուրդ էր տալիս՝ թէ պէտք է խիստ լինել և դրանցը բանտարկել, որպէս զի խոստովանեն իրենց յանցանքը:

Բայց այդ էլ կատակերգութիւն էր միայն, որովհետև այդ մասին էլ առաջուց պայմանաւորում էր նրանց հետ, ծիծա-

ղում նրանց վրայ, եթէ բանտից վախենում էին ու ատում, «դուք բանտ մտնողների ոչ առաջինը և ոչ էլ յետինը կլինեք» և բացատրում էր թէ բանտ օր և ժամ նրանց այնտեղ կպահեն ու թէ ի՞նչ կանեն: Նրա վերջին խօսքն էր. «եթէ կարողացար դիմանալ, նրանք դարձեալ առաջուանից լաւ գրութեան կհասցնեն բեղջ:

Այդպիսի մարդկանցը նա շատ յաճախ պատմում էր Լեօբբասի Ռուդիի օրինակը, որին այժմ պահում էին Կատցենշտուլի տէրերը, որովհետև նա իրեն տուած հարկւրաւոր հարցերից ոչ մէկին դրական պատասխան չտուեց: Դա մի կարծահասակ ու բաջ մարդ էր, ասում էր տանուտէրը. ես հէնց իր բերանից եմ լսել, որ տանջանքի ժամանակ, գրանից առաջ ու յետոյ էլ միշտ կարողանում էր մտածել ու ասել. «ոչ բերանից աւելի արագ է դուրս թռչում, քան այն»:

Ասելն աւելորդ է, թէ օրէնքի այսպիսի գաղտնի յեղաշրջմամբ՝ ի՞նչպէս արմատացաւ մեր մէջ խստատրտութիւնը, որ մեր թշուառութիւնն իր գազաթնակէտին հասցրեց: Ա՛խ, նախկին երկիւղած ամօթից կարմրելը, մարդկային խոստովանութիւնը, լացը, աղաչանքը, որ խստատրտութեան առաջն առնում էին և բնականաբար մաքի փոփոխման ու բարեխաւութեան նպաստում, արտաքսուած է մեր ժողովրդի միջից. մինչև անգամ յայտնի առած կայ մեղանում թէ. նա մարդ չէ, ով երեք կամ չորս մարդկանց առաջը չի կարող ուրանալ իր արած ու նրանց տեսած գործը: Բոլոր ժողովուրդը՝ երիտասարդ ու ծեր, կին և մարդ, ծառայ ու աղախին և նոյն իսկ դպրոցի աշակերտներն այժմ մեզ մօտ, բացի իրենց յանցանքն անամօթաբար ուրանալուց, ոչինչ չգիտեն. յաղթուածներն էլ չեն ամաչում և այնպէս են խօսում՝ իբրև թէ իրենց վրայ ճնշումն են գործ դրել ու ստիպել Գուցէ այս անամօթութիւնը մեր գիւղի ամենամեծ գժբաղդութիւնն է, որ տանուաէրն իր վարած կեանքով ներմուծեց մեր մէջ:

Շարունակեմ կրկին այդ մարդու պատմութիւնը:

Հօւմէն ինչպէս որ անում էր այն ամենը, ինչ որ չար, փնասակար ու ապականող էր, այնպէս էլ արգելում ու խանգարում էր այն ամենը, ինչ որ լաւ և օգտակար էր: Նա չէ՛ր ուզում թղլ տալ, որ ուսումնարանը բարեկարգուի և

ասում էր. «այժմ կարևոր չէ, որ ամեն մուրացիկ երեխայ իրենից լաւ կարդալ ու գրել իմանայ»: Նա արգելք էր լինում միշտ, որ գիւղացիները դաշտերի հողը պարարտացնեն և երբ նրան ասում էին՝ թէ այդպիսով գիւղացիք կարող են կրկնակի թուով անասուն պահել և աւելի արդիւնք ստանալ, նա պատասխանում էր. «կարևոր չէ, որ ամենքն էլ հարուստ լինեն», որպէս զի ինքը կարող լինի արժան գրնով արտեր ձեռք բերել:

Նա ամեն կերպ աշխատում էր նոյնպէս, որ գիւղում օտար մարդիկ բնակութիւն չհաստատեն: Եթէ նրանք պատուաւոր մարդիկ էլ էին լինում և պարզ երևում էր, որ փող ու աշխատանք կբերեն գիւղը, այնուամենայնիւ չէր թող տալիս: Գիւղացիներին արգելում էր միշտ գիւղից դուրս, դաշտի վրայ նոր բնակարաններ կառուցանել և երբ համայնքում նրան ասում էին թէ՛ այդտեղ աւելի լաւ կլինի և հրդեհից պահով՝ նա պատասխանում էր. «դեռ ևս ո՛չ մի գիւղ չէ այրուել, իսկ այրուած տները նորից են շինում. և ինչու պէտք է մեր նախնիքներից տարբեր բան ցանկանանք: Բայց միւսնոյն ժամանակ նա իր առնն առանձնացած տեղ էր կառուցել և միւսների չափ վտանգի ենթարկուելու երկիւղ չունէր: Նա այժմ ինքն էլ խոստովանում է, թէ երբ Լայբախի ու Հիրցինգէնի—այս երկու գիւղերն էլ նրա ժամանակ այրուեցան—պանդոկապետներն իր մօտ գալով պատմում էին՝ թէ իրենք ի՛նչ լաւ օրեր են անցկացրել այդ հրդեհներից յետոյ, միշտ մտածում էր. երանի՛ թէ ինքն էլ այդ բաղդին արժանանայ:—Այսինքն իրենց գիւղն էլ այրուի՛:—

Ես արդէն յոգնեցի տանուտէր Հուսէլի մասին խօսելուց, մի փոքր էլ պատմեմ պանդոկապետ և ջրաղացպան Հուսէլի մասին:

Նա ոչ որի հետ պարզ հաշիւ չունէր և իր հաշուետեարի հետ առնչութիւն ունեցող անձանց հետ շարունակ կուում էր: Նա այնպէս էր անում, որ իրեն հետ հաշիւ ունեցողը ճիշտ չկարողանայ իմանալ թէ ի՛նչպէս է իր պարտքն աւելանում: Նրա ընտանեկան հանգամանքներն էլ այնպիսի անկարգ դրութեան մէջ էին, որ եթէ կամենար էլ՝ չէր կարող այդ մարդկանց հետ կանոնաւոր հաշիւ ունենալ. յա-

ճախ պատահում էր, որ մէկի պարտքն ինքը տետրի մէջն էր գրում, կինը պատի վրայ, իսկ շաբաթ օրը պատի վրայ գրածը ջնջելու համար՝ նոյնը բնականաբար կրկին գրւում էր տետրի մէջ:

Եթէ երեւակայութեամբ մտաբերում էր՝ թէ այս ու այն մոռացել է գրել, (և այդ շատ յաճախ էր պատահում, նա մանաւանդ այն գիշերները, երբ լաւ չէր կարողանում քնել), իր տետրի մէջ գրած 0 դարձնում էր 8, 7-ը 9. Կամ թէ մի տասնաւոր էր թուի առաջը գրում կամ 0 ետևը, ինչպէս որ յարմար էր գտնում: Տետրի ու ձեռագրի մէջ դատարկ տեղ էր թողնում, որպէս զի կարողանայ ավելացնել ու կեղծել իր ցանկացածը: Հին ու վճարուած պարտավորահանները չէր վերադարձնում, ուրանում էր և պնդում՝ թէ պատուուել են, պրոուել կամ թէ կորել: Բայց յետոյ, երբ մէկի հետ վէճ էր ունենում, այդ թղթերը նորից հրապարակ էր հանում և իր ստանալիքը կրկին պահանջում:

Աւելի խտուածեամբ ճնշում էր այն մարդկանցը, որոնց մասին մի վատ բան գիտէր և որոնք վախենում էին՝ թէ հրապարակ կհանէ իր գիտեցածը. ով որ կամենում էր նրան խաբել կամ մի բան ժխտել, նոյնպէս ճնշում էր: Այդպիսի մարդկանց պարտքը կրկնակի գրելն ու մի պլազունց բթխտտ վերցնելը մի տեսակ աշխատանք էր նրա համար: Եթէ մէկը կամենում էր գանգատուել, նա պատասխանում էր. «խաբեբա՛, գո՛ղ, երեկուսյ նման՝ ես ուզում անել կրկին, դու կարծում ես թէ ստորագրած թուղթը կորցրե՛լ եմ»:

Եթէ մէկին անիրաւութիւն էր անում, իր սիրտը հանգըստացնելու համար երեւակայում էր՝ թէ անիրաւութիւն կրող մարդը խաբեբայ է և իրեն էլ անիրաւութիւն է արել կամ թէ կամեցել է անել:

Մի անգամ, երբ նա պանդոկի մատակարար Կնիպերշիլդին մի գումար վճարելիս խաբել էր նրան ու յիսուն գուլդէն պակաս տուել, տուն վերադառնալիս ամբողջ ճանապարհին պատմում էր իր ընկերներին՝ թէ ինչպիսի շուն է մատակարարը և ընդունակ՝ մէկի արիւնն եղունգների տակից դուրս ձմելու և թէ ինչպէս ինքը քսան տարուայ

ընթացքում նրանից տոկոսով փող է վերցնում, բայց նա գոնէ մի անգամ մի բաժակ գինի էլ չէ խմեցրել իրեն և այժմ ուզում է ապացուցանել՝ թէ հաշուի մէջ ինքը սխալուել է:

Այդպէս էր նա ամեն դէպքում: Ում հետ էլ որ գործ ունենար, միւսնայն էր, նա դարձեալ ասում էր. նրա այս ու այն, — եթէ ինձ իր ձեռքը ձգէր, ուրիշ կերպ կվարուէր ինձ հետ — այո՛, եթէ մի ուրիշը լինէր, նրա հետ այդպէս չէի վարուի. մէկ խօսքով ում որ ասում էր, մեծ խաբււ-բայ էր հռչակում նրան. և եթէ ուզում էր մէկին հարստա-հարել, ամեն անգամ հարիւրաւոր պատճառներ էր գտնում՝ այդ խաբււբային ու ստահակին հալածելու:

Բայց այնուամենայնիւ նա ամենից քիչ վէճ խաբււ-ների ու անպիտանների հետ ունէր: Թէև պէտք է խոստովանեմ, որ նա մի քանի ազնիւ մարդկանց հետ էլ կարողա-նում էր առանց վէճի ապրել, բայց եթէ աւելի մօտիկից զննենք թէ ի՞նչ մարդիկ են եղել դրանք, կտեսնենք որ դրանք միշտ թոյլ ու զիջող արարածներ են եղել և նրան-ցից մի քանիսն էլ անհոգ և առ սակաւն անճիշտ անարար-ներ: Սրանց հետ նա կրկնակի լաւ էր վարւում, հարստա-հարում էր և միւսնայն ժամանակը պարծենում, որ ինքն ա՛յնքան երկար ժամանակ նրանց հետ առանց վէճի է ապ-րել. իսկ գինի խմելու ժամանակ գովում էր իր ընկերնե-րին ու ասում՝ թէ երկնքում ու երկրի վրայ դրանց նման-ները չկան, շատ բարի են և այլն: Իսկ եթէ այնպէս էր պատահում, որ նրանց հետ էլ էր կուռւմ, իսկոյն նրանցն էլ ուրիշների նման խաբււբայ ու խենթ էր անուանում:

Ամենից շատ Հուսկը հակառակում էր այն մարդկան-ցը, որոնք կարգ ու կանոն էին սիրում, հանգիստ ու մը-տախտ հիրենց գործով էին զբաղւում, կոպէկ վճարելիս եր-կու անգամ շքովում էին, հաւատարմութիւն ու հաւատ էին պահանջում, որովհետև իրենք էլ հաւատարիմ էին ու ի-րենց խօսքի տէրը: Այդպիսի մարդկանց վրայ նա միշտ բար-կացած էր և չէր հանգստանում, մինչև որ չէր ոչնչացնում նրանցը: Այդ կողմից այնպէ՛ս հռչակուած էր նա, որ գիւ-ղում ամենքն էլ հրապարակաւ ասում էին. հրա՛ջք է, որ Հուսկը չկարողացաւ Բաուսմովէն Մայերին յաղթել:

Եւ իսկապէս դրան չկարողացաւ ձեռք ձգել: Բամբակի գործով փող աշխատելը, որ Մայէրի շնորհիւ մուտք գործեց մեր գիւղը, շատ դուր եկաւ Հուսէլին, բանի որ բանուորներն իրենց աշխատանքն ամբողջապէս պանդոկուսեան էին թողնում. բայց երբ նկատեց, որ Մայէրն ուզում է հարստանալ և ուրիշներն էլ սովորում են իրենց վաստակածը խնայել՝ սկսեց Մայէրի հետ թշնամանալ և ամեն տեղ բամբակագործութիւնը հայհոյել՝ թէ մեր երկրի համար ժամատախտ է պոյր և միայն հաշմանդամներ ու վաղահաս մահ է առաջացնում:

Եւ պոյր ճշմարիտ է. ուր որ պանդոկը գիւղի հայրերից ու մայրերից խաբեբաների ամբօս է պատրաստում, այնտեղ նրանց զաւակներն էլ հարկաւ բամբակ մանելիս հաշմանդամ կլինեն և վաղահաս մահով կմեռնեն: Մեր գիւղը տարաբաղդաբար մի կենդանի օրինակ է պոյրպիսի մի մեծ դժբաղդութեան. բայց կարող էր և այլ կերպ լինել: Գերտըուդի զաւակները, որ մեր գիւղում ամենամաքուր մանուածքն են պատրաստում, ամենաուժեղներն ու ամենաառողջներն են. բայց այժ, եթէ տանուակերը յաղթանակը տանէր, կարելի է, որ այդ երեսնաներն էլ բամբակ մանելիս՝ ուրիշ շատերի նման ժամանակից առաջ մեռնէին:

Մայէրը տեսնում էր, որ նոր աշխատանքի արդիւնքի ոչնչացման պատճառը պանդոկն է և ամեն օր գանգատուում էր՝ թէ ոչ ոք փող չէ խնայում և ծերութեան օրերի կամ որդոց ու թոռների համար ոչինչ չէ պահում: Բայց ով պոյրպէս էր խօսում, նշանակում է թէ տանուակերի սրտին էր դիպչում: Այդ պատճառով էլ նա կատաղած էր Մայէրի դէմ և նրա գործաւորներին գրգռեց, որ ուրանան իրենց տալիք պարտքը: Մայէրը ստիպուած եղաւ միանգամից երեք բանուորի մասին գանգատուել, որոնք ուրանում էին իրենց պարտքը: Նա կարճ և ազդու պատասխաններ էր տալիս դատաւորի հարցերին և հիմնուում էր իր հաշուետետրի վրայ: Իշխանին կասկածելի թուաց այն հանգամանքը, որ երեք բանուորներն էլ միատեսակ պատասխաններ էին տալիս. դատը յետաձգուեց և տանուակերն աջ ու ձախ ասում էր բարձրաձայն. երբ մարդ թանաք ու գրիչ ունի ձեռքին, կարող է ամեն բան գրել թղթի վրայ: Մայէրը լաւ

կանէ, եթէ ի չարը չգործ դնէ գրեւու արուեստը. երբ նրանք երեքն էլ միւսնոյն բանն են պսուժ, գրեթէ ապացուցուած կարելի է համարել նրանց ասածը. իսկ այդ դէպքում Մայէրի ամբողջ հաշուեմատեանը կարելի է ոչնչացնել:

Տանուտէրի ասածներից առաջացած ընդհանուր բըրթմընջիւնն ա՛յնպէս գրգռեց Մայէրին, որ նա տասնից աւելի գիւղացիների ներկայութեամբ պատասխան ուղարկեց թէ. ես ճիշտ և անխարդախ հաշուետետր եմ պահում և եթէ հարկւր խաբէրաներ էլ վիճեն դրա դէմ, իմ մատեանը հարկւրի դէմ էլ կարող է անընկճելի մնալ. հակառակ դէպքում ես մի բառ էլ չեմ գրի նրա մէջ— և աւելացրեց. այո՛, եթէ ես էլ իմ հաշուեմատեանը տանուտէրի հաշուետետրերի պէս պահէի, հարկաւ բոլորովին այլ բան կլինէր. այդ դէպքում ես արժանի կլինէի, որ ո՛չ թէ միայն մատեանս ոչնչացնէին, այլ որ նաև կախաղան բարձրացնէին ինձ:

Մայէրի խօսքերն անմիջապէս հաղորդեցին տանուտէրին՝ իբրև պատասխան իր ասածներին. Ո՛չ մի խօսք չէր կարող նրա թոյլ լարերին այնպէս ուժգին դիպչել, որչափ Մայէրի ասածները. նա այնպէս վախեցաւ, որ համարեա թէ պատասխանել չէր կարողանում, բայց զսպեց իրեն, այնպէս ձևացրեց՝ իբրև թէ միայն կիսով չափ հասկացաւ և պատասխանեց՝ «երևի Մայէրն այնպէս չէ ասել, ինչպէս որ իրեն հաղորդեցին»:

Բայց Մայէրն անյողդողդ մնաց ու ասաց, որ ինքը հէնց այդպէս է ասել, ինչպէս որ իրեն հաղորդել են և եթէ կարծում է՝ թէ իրեն անիրաւութիւն է հասցրել, պատրաստ է դատարանումն էլ միւսնոյնը պնդել:

Տանուտէրին ձեռնտու չէր, որ բանն այդտեղ հասնի. նա ստիպուած եղաւ այդ հայհոյանքը մարտել: Այն երեք բանուորներն էլ յետ կանգնեցին իրենց գանգատից և խոստովանեցին Մայէրին, որ տանուտէրն առաջ իրենց գրգռել, բայց այժմ խորհուրդ է տուել՝ գործը դադարեցնել:

Իշխանը շատ զարմացաւ հետևեալ ունկնդրութեան օրը, երբ նրանցից ոչ մէկը չներկայացաւ և հարցրեց տանուտէրին՝ թէ ի՞նչ է պատճառը:

Երևում է, պատասխանեց տանուտէրը, նրանք խաբէրաներ են և իրանց ասածին էլ չեն վստահանում— Բայց

նրանց կողմն էիր, ասաց իշխանը.— Այո՛, ես էլ կարծում էի թէ նրանք երեքն էլ ճիշտ են ասում, պատասխանեց ասնուտէրը:

Բայց ես պէտք է նրա հաշուեմատեանի հարիւր հազարաւոր գործերն և նրա պաշտօնի հարիւր հազարաւոր արարքները մի կողմը թողնեմ, իբրև չեղած և ձեզ պատմեմ թէ այս բոլոր բաներն անող մարդն ի՞նչպիսի վերջ ունեցաւ:

Ես չգիտեմ թէ ինչո՞ւ է այսպէս, բայց այսպէս է.— առհասարակ մեր վիճակի մեծ փոփոխութիւններից առաջ ա՛յնպիսի դէպքեր են տեղի ունենում, որ զօրեղ կերպով պաշարելով մեր զգացմունքները, կարծես թէ մենք նախագուշակում ենք մօտալուտ գալիքը:

Յունիսի տասն և վեցին վեց տարին կլրանայ այն օրից, երբ մի սիրուն առաւօտ ասնուտէրը դաշտը գնաց:

Հասունացած խոտը բուրում էր նրա շուրջը. գեղեցիկ սերմը ալիքամման ծածանւում էր բարձր հասկերի մէջ. աջ ու ձախ, բաւականին տարածութեամբ, նրա սեպհականութիւնն էր: Նա ամբարտաւանութեամբ երգել սկսեց և խոստում ու խրինջում էր՝ առատ արօտի մէջ թողած ձիւռ պէս:

Մինչ նա այդպէս կանգնած՝ գլուխը հպարտութեամբ այս ու այն կողմն էր թեքում, մի բարձրաձայն աղաղակ լսեց. նա տեսաւ, որ մի կին և հինգ մանուկ կաղնու ծառի տակ գետին են թաւալում: Նրանց գլխի վերևը, ծառից կախուած էր ընտանիքի հայրը: Նա իսկոյն ճանաչեց կախուած Շտիխէրէրգէրին, որ դեռ երեկ հաշիւ էր տեսել իր հետ և հեռանալիս կէս յուսահատութեամբ այս խօսքերն էր արտասանել. «Ցանուտէր, ես հրաւիրում եմ քեզ Յովսպատի հովիւր՝ մի ուրիշ հաշուի համար»:— Ցանուտէրը սարսափով յիշեց այժմ՝ այդ խօսքերը և այդ վայրկեանից ոչնչացաւ նրա սրտի բոլոր արիութիւնն ու ուրախութիւնը: Բայց նա մազաչափ անգամ չփոխուեց, այլ առաջուանից աւելի արանջող ու քմահաճ դարձաւ:

Մի տարուայ վրայ հումէլը հիւանդացաւ և սաստիկ գլխացաւ ունէր: Նա բաժակներով լի օղի էր ածում գըլխին՝ ցաւը հանգստացնելու համար և միմեանց վրայ չորս

անգամ այնքան արիւն թողնել տուեց երակից, որ քիչ մնաց թուլութիւնից գերեզման իջնէր:—Բայց մահուան մասին ոչինչ չէր ուզում լսել, օրական քսան, երեսուն անգամ ասում էր, եթէ ոչ ոք էլ չհարցնէր, միայն գլուխս է ցաւում և անդամներս թոյլ են. իսկ սիրտս Ռայնէգլիի (մի փոքրիկ ձուկն է, որ առողջ ու երկար է ապրում) պէս առողջ է: Նա ոչ կարողանում էր կանգնել և ոչ մանգալ, բայց ուժով ամեն օր անկողնից դուրս էր գալիս և եթէ չէր էլ կարողանում խօսել, մէկին կամ միւսին կանչել էր ապիս, որ հետը կուռի:

Նրա հիւանդութեան միջոցին, ի հարկէ, ամենքն էլ լաւ խօսքեր էին ասում նրան, բայց ամենքն էլ աշխատում էին, որքան կարելի է շուտ, հեռանալ նրանից: Ամենքն էլ գիտէին, որ նա կգրգռուի, եթէ ասեն. «սաստիկ լլարել ես», կամ «թէ չդեռ հիւանդ ես», բայց և այնպէս մի օր չէր անցնում, որ այդ չասէին նրան՝ մեծ մասամբ չարամտութեամբ: Հիւանդութիւնից յետոյ էլ եօթը շաբաթ ստիպուած էր գաւազանով մանգալ և առաջուանից աստ տարով ծերացած էր երևում:

Ամենքն էլ հաստատ կարծում էին թէ կազատուեն նրանից և նրա հիւանդութեան սկզբում գիւղաղիններն օրը տասը-քսան անգամ հարցնում էին միմեանց թէ ի՞նչպէս է տանուտէրի առողջութիւնը: Բայց առաւօտները թէ ծեր և թէ երիտասարդ ուսերը բարձրացնում էին՝ լսելով որ նա գիշերը լաւ է անցկացրել և դեռ կենդանի է: Յետոյ աւելի վատ էին խօսում. «ես լսեցի, որ նա առաջուայ նման գոռում էր»,— «բանը վատ է գնում»— «ի զուր իր ասամները ցոյց տուեց մեզ»— «որումը չէ փչանում, աւելի շուտ անձրև է գալիս նրա վրայ»— «ինչ որ թռչուններին է պատկանում, ձկներինը չի կարող լինել»— «ա՜հ այսպէս էին խօսում ծերերն ու պատանիները, երբ տանուտէրն սկսեց առողջանալ: Երբ առողջացաւ և կրկին համարձակ երևում էր դաշտ ու անտառում, եկեղեցում ու դղեակում, գիւղաղիններն այնպէս լուռ ու վշտահար էին, կարծես թէ գիւղին ամենամեծ դժբաղդութիւնն էր պատահել:

Տանուտէրն երևակայում էր թէ մեծ ու փոքր իրեն ձեռք կմկնեն և կշնորհաւորեն իր առողջանալը, բայց ոչ

որ չմտածեց էլ այդպէս անել և նա իր աչքով տեսնում էր, որ կանանց ու մարդկանց հանդիպելու ժամանակ նրանք բայլերն արագացնում էին ու իրենից խոյս տալիս: Նրա հիւանդանալուց առաջ նոյն իսկ այն մարդիկը, որոնց արիւնը ծծում էր, հետը լաւ էին վարում, մօտը հանգիստ կանգնում, ձեռքը սեղմում և այն էին խօսում, ինչ որ նրան գովասանք ու պատիւ էր բերում և ուրախացնում, թէ և նրան տեսնելիս նրանց սիրտը սաստիկ բարախում էր երկիւղից: Բայց այդպիսի ազդեցութիւն ունենալու համար պէտք է առողջ և ամեն վայրկեան նրանց աչքի առաջը լինել և հալածել: առանց սյդ հանգամանքի ոչ մի բռնաւոր չի կարող բռնադատել, որ իրեն մահուան չափ ատող ժողովուրդը միշտ քաղցր խօսքեր ստէ իրեն ու ժպտայ:

Ցանուտէրը հիւանդանալով՝ մի առ ժամանակ գիւղացիների աչքին չէր երևացել. և այդ երեք ամսուայ ընթացքում նրանք այնպէս լաւ էին զգում իրենց, որ այժմ էլ ցոյց էին տալիս թէ իրենց համար աւելի լաւ կլինի, եթէ տանուտէրը հեռու մանգայ իրենցից:

Այդ անիծածներն ինչպէս են համարձակում այդպէս վարուել ինձ հետ, ահա՛ այն խօսքը, որ այժմ համարեա՛ ամեն միբառորդ ժամ անցնելուց յետոյ ուղում էր կրկնել տանուտէրը:

Նա ծեր իշխանին էլ բոլորովին փոխուած գաւաւ. երբ Հումէլը առաջին տեսակցութեան ժամանակ, դղեակում, նախկին ձևով հարցրեց նրան. ի՞նչ կասէիք, եթէ ես գերեզման իջնէի. իշխանը պատասխանեց. հա՛, ես կասէի՝ թէ աշխարհից մի անպիտան պակասեց:— Հա՛, ասաց տանուտէրը. ճիշտ այդպէս, պատասխանեց իշխանը, երբ հիւանդացար՝ կարծես բոլոր վէճերն ու կռիւներն էլ վերմակիդ տակ ծածկեցիր:

Բայց դուք էլ անյայտի գործեր ունեցաք, որ առողջ ժամանակս չունէիք, ասաց տանուտէրը:

Ճշմարիտ է, ասաց իշխանը, բայց այդ աշխատանքի ժամանակ ինձ աւելի լաւ էի զգում, քան երբ դո՛ւ էիր անում այդ գործերը:

Այս արդէն շատ պարզ էր, տանուտէրը լաւ հասկացաւ, հայհոյեց անիծեալ ջերմը, որ իրեն այդ օրը գցեց և ամեն առիթով բարձրաձայն ասում էր. թէ և մեծ ու

փոքր ցանկանում էին ինձ գեանի տակ տեսնել, բայց ես էլի այստեղ եմ, լավ որ այդ առիթով կարողացայ ճանաչել մարդկանց և այժմ գիտեմ՝ թե ո՞վ ինչ կարծիք ունի իմ մասին: Յետոյ նա անիծում էր ու ասում, մեծ ու փոքր անհավատարիմներին ոչինչ օգուտ չի բերի իրենց վարմունքը: Հիւանդուծիւնը Հուլիսին աւելի մեծ համարձակութիւն ներշնչեց:

Այդ ժամանակից առհասարակ նա սկսեց սարսափելի շատ խօսել և ամբողջ երեկոները խօսում էր մի քանի ստահակների հետ և պարծենում զանազան ծրագիրներով. պատմում էր թէ ինքն ո՞վ է, ի՞նչ է արել և էլի ինչքոր ունի անելու:

Չորս տարի առաջ, խոհարար ամսի ութին, այդպէս նստած էր նա իր ստահակների հետ, սեղանի շուրջը և գինի էր լւմում: Այդ միջոցին մեր սարի ետևը խիստ մրկաբեր ամպեր հաւաքուեցան և Հիրցաուի հովտից դէպի մեզ եկան: Պայծառ օրն սկսեց խաւարել: Նոյն իսկ վախեցած կոնծողներն ասացին տանուտէրին. սարսափելի փոթորիկ կլինի. բայց նա պատասխանեց. եթէ տաս ժամ հեռաւորութեամբ էլ բոլոր ցօրենի կէսը ոչնչանայ, միշտ չէ՛ւ— Չնայելով որ այդ մարդիկը սաստիկ գինով էին, բայց կըրկին գլուխները թափ տուին այդ խօսքերի վրայ, իսկ տանուտէրը կրկնում էր նոյնն ու անիծելով ասում, միշտ չի լինի, ամբողջ երկիրը ծանրաբեռնուած է պաղով, իր տունը լի է դեռ ևս երկու տարուայ ցօրենով և ոչ ոք էլ չի գնում իրենից:

Բայց դ՛ու էլ կվախենաս, եթէ փոթորիկը մեր կողմը գայ, ասաց Քրիստէնը:

Ես չեմ սիրում որոտի ձայնը, փոթորիկն ինձ ուրիշ ի՞նչ պէտք է անէ, պատասխանեց տանուտէրը:

Տասն այսպիսի փոթորիկներ էլ ոչինչ չեն կարող անել քեզ, դու հարուստ ես—բայց հապա՞ թող մէկ ուրիշն էլ ասէ նոյնը, պատասխանեցին նրա հետ կոնծող ստահակները:

Հէնց այդ է առաւելութիւնը, ասաց տանուտէրը և բաժակը ձեռքին կապկի նման ժպտալով հեգնեց:

Դեռ խօսքը նրա բերանումն էր, երբ կայծակի մի հարուած, որի նմանը չէին լսել նրանք, անցաւ նրանց գլխի

վրայով: Նրանք բոլորն էլ սփռվեցին, տանուտէրը ձեռքին բռնած բաժակի գինին թափեց, իսկ Քրիստէնն ասաց. այժմ դու էլ վախեցար: Ճշմարիտ է, պատասխանեց նա, ես սարսափելի վախեցում եմ որոտից և խնդրեց, որ մինչև փոթորկի անցնելն բոլորն էլ իր մօտ մնան:

Բայց միայն բչերն ուղեցին մալ: Ինչ ուզում է թող լինի, պէտք է տուն գնալ, եթէ մի դժբաղդութիւն պատահի, փողով էլ չեմ ցանկանայ որ ինձ վրայ խօսեն՝ թէ այդ միջոցին գինեաւանն եմ եղել, ասացին այդ անիդյութ անպիտանները, վախեցած տուն գնացին և իրենց սենեակներում պատմեցին թէ ի՞նչ սարսափելի խօսք էր ասել տանուտէրը՝ մեծ շանթից մի վայրկեան առաջ: Կանայք, երեխայքն ու ծառաները, որ սովոր էին փոթորկի ժամանակ սուրբ գիրք ու աղօթագիրք կարդալ՝ անիծեցին այդ անաստուած մարդուն: Այդ միջոցին հեազհեաէ մթնում էր, շարունակ փայլատակում ու որոտում. ընկղզի մեծութեամբ կարկուտ եկաւ և դրան հեաւեց սարսափելի տարափ: Անտառից վազող առուակը բանդեց ջրաղացի առուի պատուարը և նրա հեա միանալով՝ մաաւ կիրճը: Հեազհեաէ ջուրն աւելանալով բարձրացաւ գիւղի առաջն և կամուրջի մօտ մի լիճ կազմեց:

Տանուտէրը հազար գուլգէն էր առաջարկում նրան, ով սիրա կանէր կամուրջը գըլել և ջրին ընթացք տալ: Այդ կարելի կլինէր, եթէ սկզբուամբ իսկ վճռէին՝ ուժեղ ձիերով ջրի միջով կամուրջին մօտենալ և երկաթէ ճանկերով սկսէին գործը. բայց շնայելով որ հազար գուլգէնը ոչինչ ունեցողի համար շատ մեծ գումար էր, այնուամենայնիւ ոչ որ չէր կամենում յանդգնել՝ ջրի մէջը մտնելու: Տանուտէրը շարունակ աղաչում և գովում էր իր ձիերը՝ թէ ի՞նչպէս լաւ և ուժեղ են նրանք ու սիրով ջրի մէջն են մտնում. բայց նրանց խօսելու և խորհրդակցելու միջոցին ջուրն աւելի ու աւելի բարձրանում էր և աւելի ևս ոչ որ չէր ցանկանում տանուտէրի առաջարկութիւնն ընդունելու: Լինդէնբերգէրը վերջապէս ասաց տանուտէրին. ամենից լաւն այն կլինի, որ ինքդ մի ձի վերցնես և առաջ գնաս: Տանուտէրը չէր կարող հեաւեւ այդ խորհրդին ու հեազհեաէ աւելացնում էր իր առաջարկած գումարի քանակութիւնը: Բայց վտանգը հեազհեաէ մեծանում և ամեն մէկն ասում էր, ի՞նչ օգուտ

նրա տուած փողից, բանի որ ջուրը մտնողը խեղդամահ
կլինի:

Անկարելի է, որ կամուրջը կէս ժամուայ մէջ խորա-
կուռի, սասաց տանուտէրը, որովհետեւ կաղնեայ և մարդու
հաստութիւն ունեցող նոր սեւներու վրայ է կանգնած: Այդ
ասելու միջոցին կամուրջը խորտակուեց և հոսանքն այնպէ՛ս
յանկարծակի վազեց, որ եթէ կամուրջի ետեւը հարիւր ձիա-
ւորներ էլ լինէին, ջուրը բոլորին կ.քշէր, կամներ:

Տանուտէրի տունն էլ այժմ այնպէ՛ս յանկարծակի շըր-
ջապատուեց հոսանքով, որ նա հազիւ ժամանակ ունեցաւ
տուն վազել և փողն ու նամակներն ազատել: Նա աղաղա-
կում էր. ի սէ՛ր Աստուծոյ, եկէ՛ք, օգնեցէ՛ք, որ գոնէ
ամենաթանկագին իրերը տանից դուրս բերենք: Քանի դեռ
ստորին կամուրջը կանգուն էր, թէև բոլորովին վտանգաւոր
չէր նրա տուն մանելը և ետևի կողմից, ուր ջուրը խորը
չէր, իրեղէններն ու անասուններ դուրս բերելը, բայց այդ-
տեղ էլ ոչ ոք չօգնեց նրան: Այն մարդիկը, որ ջրի և
հրդեհի կարիքն ժամանակ ոչնչի տեղ էին դնում իրենց կեան-
քըն ու մարմինը, այժմ վախկոտ կանանց նման անշարժ
կանգնել էին: Նրանք մինչև անգամ կօշիկ ու գուլպայ էլ
չհանեցին՝ փորձելու թէ արդեօք կարելի է՞ ջրի միջով անց-
նել: Նրանք միմեանց ասում էին փոթորկից առաջ տանու-
տէրի արտասանած այն անաստուած խօսքերը և աւելացնում,
որ եթէ մէկը տանուտէրի համար իր կեանքը վտանգի են-
թարկէ, Աստուած նրան էլ նրա հետ միասին կզատէ: Տա-
նուտէրն ինքն էլ փողն ու նամակները վերցնելով՝ տանից
փախաւ և էլ չփորձեց կրկին վերադառնալ:

Սարսափելի տեսարան էր: Քսան և հինգ հաս խոշոր
անասուններ չհաշուելով ոչխարներն ու հորթերը, բառաչում
էին ախոռներում և կէս ժամ անցնելուց յետոյ առուակի
նման սկսեց հոսել ամբարից: Շուտով տունն էլ կործանուեց՝
կայծակի հարուածի նման որոտալով և հէնց այդ վայրկեա-
նին մի մարդ, որ տանուտէրից տասը քայլ հեռու էր կանգ-
նած, աղաղակեց. — մինչև այժմ էլ ոչ ոքի յայանի չէ թէ
ո՞վ էր այդ մարդը — ի՞նչպէս է այժմ, տանուտէր, այժմ
է՞լ կարծում ես՝ թէ տասն այդպիսի փոթորիկներ ոչինչ
չեն կարող անել բեզ: Տանուտէրը սարսափեց, յետ նայեց:

ու ասաց. Աստուած, ներիր ինձ, ես մի խեղճ, դժբաղդ մարդ եմ:

Զուրը կրկին նստեց, բայց գիւղի աներն ու բակերը լի էին փլատակներով ու աւազով: Զրի տեղը Հաղարամեայ անասուավտակի փոսի նման էր: Զանգահարութեան վրայ ամեն կողմից օգնութեան հասան և կանգնած էին աւերման տեղը: Պարզ գիշեր էր: Ամբողջ շինութեան աւերակի մէջ կանգուն էր մնացել դրան կաղնեայ մարդակը: Ցանուտերը փաթաթուեց այդ մարդակին և ողբում էր իր կորցրած հաղարաւոր գուլգէնները: Եօթը համայնքի գիւղացիներ շըրջապատել էին նրան, բայց ոչ մէկի բերանից մի ցաւակցական խօսք չէր լսուում: Ամեն տեղ մրթմրթում էին թէ ի՞նչ պտուղ է նա և արժանի է աւելի մեծ պատժի, ամեն անկիւններում այն զարհուրելի խօսքն էին պատմում, որ ասել էր նա փոթորկից առաջ և ամբոխը խմբով վաղում էր դէպի կամուրջը՝ տեսնելու թէ ի՞նչ հրաշքով Ալաուզէնի աղքատ խրճիթը կանգուն է մնացել, չնայելով որ ամբողջապէս լրցուել էր ջրով: Ամենքն էլ խօսում էին տանուտերի քամբաղդութեան մասին, ինչպէս որ ամեն տեղ էլ լինում է, երբ մի չար մարդու դժբաղդութիւն է պատահում: Մի քանիսը մինչև անգամ ասացին, եթէ ճիշտ է, որ նա այն խօսքն ասել է փոթորկից առաջ, լաւ կլինէր, որ նրան տանը փակէին և չթողնէին որ դուրս գար, մինչև տունը գլխին քանդուէր:

Ո՛չ մի մարդ էլ կամաւ նրան գիշերելու տեղ չառաջարկեց և Աինհօյցն էլ ստիպուած էր գիջանել նրա խընդրին, որովհետև երկու անգամ ասաց. ուրիշ տեղ չես կարող գնալ, ես ուզում էի այս շաբաթ ննջարանս ուրիշ կերպ կարգաւորել:— Եւ այսպէս ամենքն էլ քաշուում էին սյդպիսի մարդուն իրենց երթիկի տակը պատսպարել: Բայց այլ կերպ էլ անկարելի էր: Ցանուտերը տարիներ ընթացքում իր բոլոր գործերով այնպէ՛ս խտասիրտ ու հրեշ էր դարձել, որ ով նրա նման չէր՝ սարսափով էր մատծում նրա մասին:

Հէնց այդ գիշերը նրա բունը չտանելով՝ կռուեց կնոջ հետ. «ինչո՞ւ ես լալիս, այժմ հօ բո ողբով տունը չե՞ս վերականգնի» այս էր նրա ասած առաջին խօսքը. և որով-

Տեսեա կինը չդադարեց լալուց և չէր կարողանում մոռանալ իր վիշտը, տանուտէրն սկսեց կոպիտ խօսքերով յանդիմանել թէ չէ թողնում իրեն գոնէ հանգիստ մտածելու՝ որ մի էլք գտնէ: Այդ անբուն գիշերն էլ նա անցկացրեց՝ մըտածելով միտայն թէ ի՞նչ եղանակով ամեն կողմից մեծաբանակ տուրք ժողովէ: Ժամը չորսից առաջ նա արգէն անկողնից վեր կացաւ, թուղթ, թանաք ու գրիչ պահանջեց և առաւօտից մինչև մթնելը հաշուեց՝ թէ ինչքան դրամ կարող է հաւաքել՝ եթէ ստանայ իր բոլոր պարտքերը, ի՞նչքան փայտ կստանայ իշխանից, համայնքից և դրացի գիւղերից և ի՞նչքան կարող է անտառից բերել և թէ ի՞նչպէս ստիպէ սրան ու նրան՝ որ իր համար ձրի աշխատեն կամ բեռը կրեն:

Տուրք հաւաքելու ժամանակը նա բոլորովին խոնարհ ու կորացած էր ման գալիս, կարծես թէ ուտելու հաց չունէր և թշնամիների ու բարեկամների հետ մեղմ էր խօսում, համբրում էր կոպիտ պատասխաններին, եթէ դրանք նոյն իսկ նրա սիրտը ձմրում էին: Երբ բամբակ մանող Մայերը նրան տասը դուրլօն տուեց և տանուտէրը շնորհակալութիւն էր ուզում յայտնել, նա ասաց. տանուտէր, ես լաւ գիտեմ, որ դու շնորհակալ չես ինձնից և չեմ է՛լ ցանկանում. այդ բամբակի փող է: Միայն թէ ապագայում այլ ևս ամեն օր չասես՝ թէ կցանկանայի, որ աշխարհիս բոլոր բամբակը սատանան տանէր. այդ ասաց և կռնակը շրջեց:

Այս պատասխանն այնպէ՛ս վշտացրեց տանուտէրին, որ նա մի վայրկեան ձեռքին բռնած դուրլօնները չկարողացաւ համարել: Տուն գնալով իր կնոջը գանգատուեց՝ թէ ի՞նչ համբրութիւն պէտք է ունենայ մարդ՝ ուրիշներից բան ուզելիս: Բայց իրեն մտիթարում էր ասելով թէ՛ չորս շաբաթից յետոյ եթէ Մայերի պէս շները պոպոխի խօսքեր ասեն իրեն, հարկաւ առանց պատասխանի չի թողնի:

Եւ իր խօսքը կատարեց: Տուրք հաւաքելու ժամանակը լրանալուց հազիւ քսան և չորս ժամ անցնելուց յետոյ, նա աւելի անամօթաբար էր խօսում, քան իր ամբողջ կեանքում խօսել էր, որովհետեւ հրապարակաւ ասում էր. մի՛ թէ կարծում էք, որ այս աղբատիկ տուրքով իմ վնասը ծածկուեց. ես անքան բան եմ կորցրել, որ ուրիշ տեղ ե-

Թէ երեսուն-քառասուն տուն պրուէր՝ այդքան փնաս չէր լինի — և հարիւրաւոր պոսպիտի օփեղցփեղ բաներ:

Բայց այդ չէր ամենից վատը: Տուրք ժողովելը վերջացնելուց երեք օր յետոյ, նա դատարանով ամենքից լիովին պահանջեց իրենց պարտքը, բայց շատերից ո՛չ թէ փող էր ուզում ստանալ, այլ նորից հաշուել էր կամենում: Եւ եթէ մէկը ճշտապահ էր ուզում լինել և հարցնում էր թէ ինչպէ՞ս, ե՞րբ և ո՞րտեղ է նա իրեն փող տուել, ողբում ու գանգատուում էր թէ՛ իր թղթերի մեծ մասը ոչնչացել է և չի կարող ամեն բան գրաւոր ապացուցանել, իսկ պարտպաններն ուզում են ուրանալ՝ այն ինչ ինքը շատ լաւ յիշում է, որ պարտ են: Նա առաջուց գիտէր, որ շատ շատերը չեն կամենայ խօսակցութեան առարկայ դառնալ՝ թէ մի դժբաղդացած մարդու պարտքն ուրանում են և կստորագրեն իր պահանջածը: Միայն բէրը, որ այդպէս զիջող չէին և հեշտութեամբ չէին ուզում խաբուել ու կողոպտուել նրանից, այնուամենայնիւ վիճելի պահանջի տեղ խոստացան նրա համար մի բանի օր աշխատել կամ թէ մի բանի բերուը կրել:

Հաշուի ժամանակ նա այդ միջոցով կարողացաւ 75 բեռը և աւելի բան 300 մշակ ձրի վաստակել և այդ բոլորն իր հաշուեմատեանի մէջ գրելով՝ պէտք եղած ժամանակը պահանջում էր իբրև իսկական պարտք:

Ամենքն էլ այդ հաշիւը կոչեցին ստիպողական տուրք: Բայց այդ ստիպողական տուրքն աւելի մեծացրեց նրա դէմ եղած ընդհանուր դժգոհութիւնը: Բանն այնտեղ հասաւ, որ տարիների ընթացքում նրա ջրաղացն աղալու ցորեն տանող չէր լինում՝ և մի առ ժամանակ էլ պանդոկը յաճախող չկար. միւս երկու ջրաղացները շարունակ գործ ունէին, և շատ ընտանիքներ էլ շատ բան խնայեցին, բանի որ պանդոկ չկար: Սակայն այս ամենն ոչինչ ազդեցութիւն չէր ունենայ նրա վրայ, եթէ շինութեան համար կարևոր դրամը չպակասէր. իսկ երբ նա ըստ հնոյն շատ դրամ էր ուզում փոխ առնել՝ ամենքն էլ մերժում էին:

Ձրի տուած փնասը նրան շատ ճնշեց. նոր շէնքը նա շատ շքեղ էր սկսել կառուցանել, բայց շուտ տեսաւ, որ սխալուել է և շատերն էլ հրապարակաւ ասում էին, որ նրա բանը

շատ վատ է, թէև նա պարծենում է: Թէև փող չունէր, բայց իր մեծամտութիւնը չէր թող տալիս, որ ծախքը պահասացնէ. ջգրու աւելի շքեղ սկսեց շինել և որովհետև ոչ որ առանց գրաւականի դրամ չէր ուզում տալ նրան, իր կալուածքն ու տունը գրաւ դրեց:

Թէև իր նախկին պարտաւերերին ապահովացրել էր՝ թէ առանց դրանցն իմաց տալու իր տունն ու կալուածքը գրաւ չի դնի, բայց այնուամենայնիւ այդպէս արեց՝ առանց նրանցը մի խօսք ասելու. նրանք իմացան ու յանդիմանեցին տանուտէրին. նա պատասխանելու փոխարէն սկսեց բարձրաձայն ծիծաղել ու ասաց, միայն մի երկու տարուայ համար է այդ պարտքը, շուտով կվճարեմ և կրկին այնպէս կլինի, ինչպէս որ առաջ էր: Բայց իր ասածին ինքն էլ չէր հաւատում, որովհետև տեսնում էր, որ շատ է պարտքերի տակ ճնշուում: Այդ միջոցին նա մի շաբաթուայ մէջ տասը տասներկու անգամ հաշուեց՝ թէ ի՞նչքան կարողութիւն և ի՞նչքան պարտք ունի, բայց, չնայելով որ իր տունն ու կալուածքը թանկ էր գնահատում և ամեն բան իր օգտին հաշուում, այնուամենայնիւ վերջը դուրս էր գալիս, որ պարտքը գերազանցում է իր կարողութեանը: Եւ իսկապէս նա գինու և պղի աճյալ պարտք ունէր, որ չգիտէր թէ իր ժամանակին այդ բոլորը ինչպէս պէտք է վճարէ:

Սակայն այս հանգամանքները նրան չկարողացան ստիպել՝ որ հոգացողութեամբ, չափաւորութեամբ և խնայողութեամբ գոնէ կարողանայ ունեցածը պահել և նոր հանգամանքներ ստեղծելու տեսական հիմքը դնել: Որովհետև մեծամտութիւնն ու յանցանքը վատ մարդոց արգելում են նորից ուղիղ ճանապարհի վրայ կանգնել՝ երբ նրանք ընտանեկան խառնաշփոթութեան մէջ են լինում. իսկ տանուտէրը չէր էլ մտածում այդ մասին:

«Պէտք է նորից ձեռքի մէջ թքել», այս էր տանուտէրի սիրած խօսքը, որով նա այդ հանգամանքներում սիրտ էր տալիս իրեն՝ աւելի անմիտ բաներ անելու: Նա հաստատ համոզուած էր, որ եթէ շարունակէ իրեն հարուստ ձեռքնել, կարճ միջոցում նորից կհարստանայ: Նա չէր էլ երազում, որ հէնց այդպէս ձեւանալով՝ անկարելի է դարձնում երբ և իցէ նորից ոտքի կանգնելը: Նա կարողանում էր,

եօթը տարեկան երեխայի նման, իր և իր հարստութեան մասին ինքն իրեն խօսել և հարիւր անգամ ասել. յիսուն տարիները չէ՛ն կարող ինձ նման մարդուն արգելել՝ նորից ձեռք բերել կորցրածը. չէ՞ որ ես ոչնչով պանդոկապետ, ջրաղացի տէր և տանուտէր դարձայ. մի թշուառ արարած պէտք է լինեմ, եթէ այժմ նորից փողի տէր չդառնամ, իմ նախկին տունը չվերականգնեմ ու ամբօխին առաջուայ նման չընկճեմ:

Նա յոյսն իր ճարտարութեան վրայ էր դրել, բայց մոռանում էր, որ այդ ամենն ոչինչ չի օգնի, որտեղ կարգ ու կանոն և հիմնաւոր բան չկայ:

Ճարտարութեամբ չկարողացաւ իր նոր ու գեղեցիկ ջրաղացի պէտքերը լրացնել և ամեն տեսակ ստատնայական միջոցներ էր գործ դնում իր հարիւրաւոր պարտատէրերին խօսքերով կերակրելու:

Հանգամանքների փոխուելն և իր այն հաստատուն համոզման չիրագործուիլը՝ թէ ինքը կարող է եղած դրութիւնը շուտով փոխել, կատաղեցնում էին նրան:

Աստծուն հաճելի էր այդ թէ՛ անհաճոյ, միևնոյն է, նա կամենում էր նորից հարստանալ և այլ ևս չէր աշխատում թագցնել՝ այդ նպատակին հասնելու համար գործած յանցանքները: Նա կուրօրէն յոյսը դրել էր այն երկիւղի ու սարսափի վրայ, որով մինչ այժմ սանձահարել էր մեծ ու փոքրին և չնայելով նրանց դէպի ինքն ունեցած ասելութեանը՝ նրանց բերանը փակել էր. բայց այժմեան ամբօխն այլ ևս առաջուայ այն բարի ու յիմարացող ամբօխը չէր, որի անմեղութիւնը նա ի չարն էր գործ դնում:

Ուր որ նրա նման մարդը յիսուն տարեկան է դառնում և այդպէս երկար կառավարում, Ժողովուրդը նոյնը չէ մտում: Մեր երիտասարդներն էլ այժմ նրա պէս խարդակ, յանդուգն ու բռնաւոր էին, այդ պատճառով անկարելի էր, որ դրանց թշնամութիւնն ի նկատի ունենալով՝ նա կարողանար յաղթանակը տանել: Մերերն ի հարկէ դեռ ևս դողում էին նրանից և բոլոր ալեւորներն ասում էին՝ թէ իրենք փորձել են և թող ուրիշները չփորձեն նրա հետ գործ ունենալու Բայց շատ պատանխներ էլ հակառակում էին իրենց հայրերին և պնդում—եթէ մենակ էին և

նրանց ոչ ոք չէր լսում—Թէ իրենց յանցանքն էլ պոք է եղել, որ լաւ չեն նրա հետ բան բռնել, ճեթէ ես այսօր նրա հետ այնպիսի գործ ունենամ, ինչպիսին որ ունեցել են սա և նա, կտեսնէին թէ արդեօք այնպէս կլինէր, ինչպէս որ եղել է»։ Ճեթէ նրանք չորքոտանի լինէին՝ դրանից աւելի յիմարաբար չէին կարող նրա ծափով պարելու։— Այսպէս էին խօսում ընդհանրապէս խելք ու սիրտ ունեցող երիտասարդները, երբ խօսք էլ լինում տանուտէրի հին գործերի մասին։

Ոմանք աւելի հեռու էին գնում։ Արդէն երկու տարի է անցել, երբ պատանի Շայլէրը, որին տանուտէրը մի քանի խօսք էր ասել, իր տանը բարձրաձայն ու տանուտէրին լսելի կերպով, ասաց նրա մօտը նստողներին. ճեթէ պոք ծեր անպիտանը մի անգամ էլ ինձ պոքպիսի խօսքեր ասէ, գետին կտապալեմ նրան»։ Մինչև անգամ դէպք եղաւ, որ մի քանի երիտասարդներ ուրացան այն, ինչ որ նրան իսկապէս ասել էին և միւսներն էլ ծիծաղում էին նրա վրայ, երբ գանգատուում էր նրանց մասին և չէր կարողանում ապացուցանել։

Նա յաճախ գանգատուում էր երիտասարդներին, որ նրանք յանդուգն են, բերանն եկածը խօսում և ուրանում են այն, ինչ որ ինքն իր աչքով տեսել ու իր ականջով լսել է։

Աւագ Լինդէնբերգէրը մի անգամ նրան մի խումբ սեղանակիցների ներկայութեամբ ասաց. արժանի ես ինչ որ անում են բեզ. բեզնից առաջ ոչ ոք չէր կարող այստեղ այդպէս ուրանալ իր ասածը, այդ մասին գանգատուելու տեղիք չունիս, դ՛ու ես մտցրել այդ սովորութիւնը մեր մէջ և հազարաւորների դէմ գործադրել, այժմ էլ քո դէմ են այդպէս անում։ Կրտսեր Կիլլէրը, որ մի մեծ կռուի ժամանակ իր խօսքն ուրանալով ազատուել էր պատժից՝ նոյն ժամին և այն բոլոր մարդկանց ներկայութեամբ, որ նրա հետ միասին ունկնդրութեան էին կանչուել, տանուտէրին մէկ թալէր ուսման վարձ առաջարկեց։ Ի՞նչ ուսման վարձ, ասաց տանուտէրը։ Ներկայ եղողներին մէկը բարձրաձայն ասաց. կարծեմ ճշմարիտն ուրանալը սովորեցնելու համար է վարձ առաջարկում։ Ո՛չ, ո՛չ, ասաց Կիլլէրը, միմիայն գործը տանելու արհեստը սովորեցնելու համար։ Բայց հէնց ու-

րանալու արուեստն է, որ տանում է գործը, ասաց միւսը: Այդպիսով սուտ խօսել սովորեցնելու վարձատրութիւնն ընդհանուրի ծիծաղի առարկայ դարձաւ. տանուտէրը բարկութիւնից ուզում էր ոտքերը գետին խփել, բայց չարեց: Գրեթէ մէկ տարի շարունակ՝ տանուտէրին բարկացնել ցանկացողն այդ վարձատրութեան մասին էր խօսում. այնուհետեւ առած դարձաւ հետեւեալ խօսքը. եթէ նա սուտ խօսել սովորեցնելով մէկ թալէր է աշխատել, գողութիւն սովորեցնելով դուռներ աշխատած կլինի:

Կիւմէրլիգի հետ ունեցած վէճի ժամանակ տանուտէրը կարծում էր թէ նա հէնց առաջին շաբաթն անցնելուց յետոյ գործը կդադարեցնէ, ծախքերի պատճառով և երկար ժամանակ չէր կարողանում ըմբռնել՝ թէ ինչպէս է այդ աղքատ մարդը ծախքերին դիմանում ու միշտ էլ փող է կարողանում գտնել և վերջապէս իմացաւ, որ գիւղացիք են նրան փող տալիս իր ջգրու. հումէլը ստիպուած եղաւ վէճը թողնել և ծախքերը վճարեց:

Այսպիսով դէպքերը մէկը միւսի ետևից ցոյց էին տալիս նրան, որ իր դժըր պակասել է և ինքն էլ ոչինչ չի կարող անել, որովհետև հրապարակաւ ու գաղտնի ամենքն էլ թշնամացել էին նրա հետ: Բայց այնուամենայնիւ մեծ մասամբ դեռ քաջուում էին նրանից, թէև ժողովրդի մեջ առաջուայ երկիւղը չկար այլ ևս: Նրա երեսին ծիծաղում էին ու կռնակը դարձնում, երբ բարկանում էր: Նա իր բռնաւոր ուժով էլ նպատակին չէր հասնում և իր ժլատութեամբ ու գողութեամբ չէր կարողանում հարստանալ: Նրա ընտանեկան շփոթութիւնը հեռզհետէ աւելանում էր, այնպէս որ մինչև անգամ իր ծառաները նրան ոչինչ չէին հարցնում, ուզածն անում և կարողացածին չափ գողանում էին նրանից: Բայց հէնց ինքը հումէլն էլ առաջուայ նման չէր: Դատարանին ներկայանալու դէպքում թէև վախենում էր, բայց իրեն այնպէս էր ձեռացնում, որ կարծես թէ աշխարհիս երեսին դրանից աւելի սիրելի բան չկայ իրեն համար. այդպիսով բնականաբար ամեն ըողպէ մի բան էր նկատուում, որ նրան ճնշում, վիրաւորում էր և նրա կեանքը թշուառացնում:

Այն միտքը, որ ինքը կարող է շուտ մեռնել — հիւան-

դուժիւնից յետոյ նա բոլորովին սպիտակել էր—նոյնպէս շատ էր անհանգստացնում նրան: Թէև ծեր գրագիրն ուղում էր նրան հանգստացնել և ասում էր, երբէք մահուան մասին չպէտք է մտածել. մահը գալիս է իր ժամանակին և առաջուց նրա մասին մտածելը յիմարութիւն է, որովհետև երբ մարդ մեռնում է, ամեն բան վերջանում է, ինչպէս որ լինում է անասունի մահուամբ: Բայց,— զարմանալի է այս—հէնց այն ժամանակ, երբ գրագիրը մահուան ու յաւիտենականութեան մասին խօսելով ուզում էր հանգստացնել նրան, տանուտէրն երկու գիշեր միմեանց վրայ երազում տեսաւ իր հանգուցեալ հօրը, որ ասում էր. ի՞նչպէս է, տղաս, եկել է քեզ համար էլ այն ժամանակը, որ մարդիկն ասեն քեզ. «ծեր, արբեցող մուրացիկ, հետս դղեակ կգաս»: Ցե՛ս, եկել է արդէն այն ժամանակը, ինչպէս որ ես մարգարէացայ քեզ համար:— Երբ տանուտէրը մտածում էր գրագրի ասածների վրայ՝ թէ մարդուս մահուամբ ամեն բան վերջանում է, ամեն անգամ իր հայրն էր աչքին երևում այնպէս, ինչպէս որ ինքը կանգնած էր նրա անկողնի առաջ՝ ձեռքերը ցած գցած, մազերը ճակատին թափուած և բուռն կերպով խօսելիս. կրկնում եմ, երբ տանուտէրը մտածում էր գրագրի ասածների վրայ, միշտ իր հայրն էր աչքին երևում, որ իր առաջը կանգնած ասում էր. ի՞նչպէս է տղաս, քեզ համար էլ հասա՛ւ այն ժամանակը... և նա այնպէ՛ս էր վախենում, որ սիրտը բաբախում էր և չէր ուզում հաւատ ընծայել գրագրի ասածներին:

Այդպիսի մի թշուառ ոչնչութիւնից կախումն ունէր այժմ Հումէլի ունեցած հաւատը՝ յաւիտենական կեանքի մասին: Նա գրագրի նման հաճութեամբ չէր հաւատայ այդ կեանքի գոյութեանը՝ և աւելի սիրով յաւիտեան մեռած ձևալը կգերադասէր, բայց չէր համարձակում յուսալ և դողում էր այդ մասին մտածելիս:

Երկրիս բոլոր անաստուածութեան և անարդարութեան թշուառութիւնն էլ հէնց այդ է, որ մարդս իր վախճանին մօտենալով՝ ցանկանում է յաւիտեան մեռած լինել, բայց չի կարողանում յուսալ:

Ո՛վ սիրելիներ, առհասարակ սարսափելի է բռնաւոր

ու անարդար մարդու ծերութիւնն և ուժասպառ լինելը: Ամեն մի նոր արգելք, որ նրա անմիտ ցանկութեանն ու կատաղութեան ձգտմանը սահման է դնում, աւելի է ուժեղացնում այդ կատաղութիւնը և յիմարութեան ու յանցանքի արգելքներն օր ըստ օրէ մեծանում են: Ուրիշ տեսակ չի էլ կարող լինել:

Կեսնքի փորձառութիւնը պէտք է ազատէ մեզ ամեն տեսակ անխելք ու յանցաւոր էութիւնից: Այդ դէպքում միայն մեր ծերութիւնն էլ խաղաղ ու երջանիկ կլինի և նրա թուլութիւնը կնմանուի այն ճրագի լոյսին, որի զուտ իւզը մինչև հանգչելը պայծառ է վառուում, իսկ եթէ այդպէս չէ լինում, յիմարութիւնն քւ յանցանք գործելու ցանկութիւնները վառուում են դեռ մեղանում, երբ նոյն իսկ կեսնքի դոժն անյայտանում է. նրա կրակը փթող աղմի մէջ վառուող կրակի նման հոտած ծուխ է արձակում: Այդ ծխի հոտը իսկապէս աւելի շուտ է տարածուում մեր շուրջը, քան թէ մենք սպասում ենք:

Այդպէս եղաւ և տանուտէրի հետ: Նա դեռ յիսուն տարեկանից աւելի չէր, բայց ամեն տեսակէտից մաշուել էր. նոյն իսկ նրա յիշողութիւնն ու դատողութեան ղորութիւնն էլ պակասում էր ակնյայտի կերպով: Նա ինքը խոստովանեց այդ ծեր իշխանի մահուան ժամանակ և այդ շաբաթ գրեթէ ամեն մի քառորդ ժամ անցնելիս ասում էր՝ որ իրեն այնպէս է թւում, թէ մի նոր երկիր է իջել ինքը: Եւ նա շատ էր գանգատուում այդ նոր երկրի մասին և յաճախ ասում, որ եթէ ինքը սկզբից այդ նոր երկրում սկսէր իր գործը՝ հազիւ թէ խոզարած դառնար, ո՛ր մնաց թէ տանուտէր:

Արդէն ժամանակն էր, որ նա առագաստները հաւաքէր և ձեռք վերցնէր իր բռնաւոր ընթացքից: Ինքն էլ նրկատում էր այդ և եթէ հարստութիւն ունենար ու պարտքերով ծանրաբեռնուած չլինէր, հանգստութիւնը կգերադասէր. — մարդիկ, ի նկատի ունեցէ՛ք այդ հանգամանքը, եթէ դուք էլ նրա յանցաւոր շաւղով էք ընթացել, բայց նրա հետ միասին կախաղանի չէք դատապարտուել. — այո՛, եթէ նա հարստութիւն ունենար և պարտքերով ճնշուած չլինէր՝ չէր փորձի այնպիսի՝ գործեր անել, որ նրան դէպի կախա-

ղան տարան. նա կհանգստանար և իրեն նման հարիւրաւորներին պէս պատուով գերեզման կիջնէր: Բայց որովհետև պարտք ու կարիք ունէր, այդ պատճառով էլ չէ՛ր կարող մտածել, որ հեռանայ իր արդիւնաւոր պաշտօնից:

Այսպիսով նրա արած վերջին գործերի ներքին պատճառն իր հարստութեան ոչնչացմանը հետևող աղքատութիւնն ու կարիքն էր:

Կարիքի ու աղքատութեան խառնաշփոթութիւնը, որ յաճախ մարդկանց յանցաւոր կեանքի վախճանն է լինում, ամեն տեղ էլ սովորական աղբիւրն է այն անմիտ արարքների, որոնք մի քանիսին դահճի ձեռքն են մատնում, իսկ աւելի շատերին զրկում՝ կեանքի հանգստութիւնից, վերջին օրերի ուրախութիւնից և մահուան անկողնի խաղաղութիւնից. նըրանք դառնում են մարդկութեան ժանտախտը, իրենց ընտանիքի անէծքը և նոյն իսկ իրենք զզոււմ են իրենցից: Այդ պատճառով, ո՛վ մարդիկ, եթէ հանգստութիւն, խաղաղ և ուրախ օրեր էք ցանկանում ունենալ, եթէ կամենում էք մահուան ընկնել մերձենալիս՝ ուրախ սրտով ձեր երեսաներին ձեր կրծքին սեղմել՝ սովորեցէ՛ք հետևեալը.

Ո՛վ իր ընտանիքը կարգին չէ պահում, ո՛վ իր ապահով արդիւնքից աւելի է ծախսում և աւելի է ուզում ունենալ, ո՛վ որ ապրելով դէպքերի է սպասում, ո՛վ որ ուժով այնպիսի եկամուտներ է ուզում ունենալ, որոնք էլ հեշտութեամբ և բնական ձանապարհով չեն ստացւում և այդ պատճառով էլ պէտք է մոռացուէին. կարճ, ո՛վ բնական ու դիւրին ձանապարհով ձեռք բերածով չէ բաւականանում և պատահական հարստութիւնից կախումն ունի, նա պէտք է խաբեբայ ու քամբաղդ մարդ դառնայ՝ եթէ հանգամանքները նպաստեն. նա պէտք է կարիքից ստիպուած, գրեթէ հակառակ իր կամքի, խաբեբայ ու անբաղդ միայ՝ մինչև իր կեանքի վերջը:

Հոււմէլն այժմ, համարեա՛ թէ հակառակ իր կամքի, պէտք է այն աղբի մէջ թաղուած մտար, որի մէջ յանդուգն կերպով մտել էր՝ իր կեանքի անկանոնութեամբ:

Այժմ զուր տեղն էր նրան նախազգուշացնում իր սիրտը:

Զուր տեղն էր այժմ նրա խիղճը ճշմարտութիւնը վկայում:

Զուր տեղն էր ամբողջ մարմնով դողում՝ վերջին հաղորդութեան միջոցին:

Ի զճ՛ւր էր երգեցողական սարսափը ցնցում ներան, երբ խեղճ Վիւստին յուսահատուած էր տեսնում:

Ի զճ՛ւր սարսուռ պատեց նրան, երբ Բուդիի պատուհանի տակով անցաւ և մեռնող կնոջ անկողնի մօտ ողբացող երեխաների ձայնը լսեց:

Ի զճ՛ւր երևաց նրան և պայծառ արևը, երբ Մայերի բլրի վրայ նրա վերջին ճառագայթները տեսնելով՝ ապշած մնաց, մինչև որ բլրից իջաւ.—նա տեսնում էր միայն իրեն շրջապատող ստուերը, գիշերն ու սարսուռը. նոյն իսկ արևին նայելիս՝ բացի ատամները կրճատացնելուց ոչինչ չէր կարող անել, նա չէ՛ր կարող այժմ յուսալ Տիրոջ գթութեան վրայ, որ փոշուց հանում և անդունդից փրկում է. նա միայն ատամներն էր կրճատացնում:—

Ի զճ՛ւր էր նրան իր կինը նախազգուշացնում:

Ի զճ՛ւր էր նրան ցոյց տալիս՝ թէ ո՛ւր է հասել և ո՛ւր կտանի նրան իր վարած կեանքը:

Ի զճ՛ւր էր խնդրում նրան, որ աւելի խորը չընկերջմուխ:

Ի զճ՛ւր ինքն էլ զգում էր, որ կինն իրաւունք ունի.—նա այժմ վստրենացել էր. իր անմտութեան և չար ցանկութիւնների կատաղութիւնը բոլորովին կուրացրել ու խլացրել էին նրան՝ ամեն խոհական գործի համար. նա տեսնում էր՝ թէ ո՛րչափ խորն էր ընկղմուել, բայց տղմի միջից էլ կատաղում էր առանց մտածելու՝ թէ իրեն ո՛ւր կտանեն իր արածները:

Բայց երբ մարդ այդքան հեռու է գնում, նշանակում է, որ մօտեցել է իր վախճանին: Տանուտէրն այժմ մի խեղճ որմնադրի հետ գործ ունենալով՝ վրիպեց, այն ինչ առաջ ամբողջ համայնքի հոգին հանում էր:

Ես չե՛մ ուզում նրա կեանքի վերջին պատմութիւնը կրկնել, դուք ամենքդ էլ գիտէք այդ. միայն այս էլ ասեմ, որ իշխանի սահմանաքարը տեղափոխելու միտքը՝ հաղորդութեան ժամանակ ծագեց նրա գլխում. իր այդ արար-

քից մի քանի վայրկեան առաջ նա չէր էլ կարծում, թէ կարող է անել այն, ինչ որ արեց իսկապէս: Նա դեռ այժմ էլ ասում է. «Եթէ մէկը մի քառորդ ժամ առաջ ինձ ասած լինէր, որ ես իմ ամենասիրելի մարդուն զանակով կը հարուածեմ կամ թէ ունկնդրութեան սենեակում կսպանեմ իշխանին, այդ հարիւր անգամ աւելի կարելի կհամարէի, քան թէ գիշերը տասն և երկու ժամին անտառը գնալ և սահմանաքարը տեղափոխել, ա՛յնքան մեծ երկիւղ էր ազդում ինձ վրայ վերջին հանգամանքը»: Բայց այնուամենայնիւ նա արեց այդ և այժմ կրում է այն յանցանքի պատիժը, որ մի փոքր առաջ չէր կարծում թէ կարող է գործել:

Սիրելի ժողովուրդ:

Այդ պատիժը տրուեց նրան, որ ուրիշները տեսնեն և յետ կանգնեն իրենց փաստակար ուղղութիւնից. գոնե՛ մեր որդիքն ազատ լինեն մեր կրած փաստերից:

Տա՛ Աստուած, որ նրան տրուած պատիժը նրա և մեր սրտից արմատախիլ անէ այն յանցանքների սաղմբը, որ այդպէ՛ս թշուառացրին ու անբաղդացրին նրան:

Այժմ՝ նա մի խեղճ ու ողորմելի մարդ է՝ ճնշուած իր գործած յանցանքների ծանրութեան ներքոյ: Նրա պատիժը ծանրացնողն իր վարած անցեալ կեանքն է, որ ամեն տեղ հալածում է նրան:

Դուք տեսաք թէ ի՛նչպէս ուշագնաց եղաւ նա՝ իր վերջին պատիժը ստանալով:

Նա գլխաբաց ու բոկոտն էր, բայց այդ այնքան էլ չազդեց նրա վրայ:

Նրա ձեռքը կապուած էր կախաղանի փայտին, բայց նա չգունաթափուեց դրանից:

Դահճի սուրը փայլեց նրա գլխին, բայց նա չդողաց դրանից:

Այն ժողովուրդը, որի հետ նա ապրում էր, կանգնած էր նրա շուրջը և տեսնում այդ ամենը, բայց այդ էլ ուշաթափութիւն չպատճառեց նրան: Սակայն նրա վարած կեանքի պատկերը, նրա գործերի աչքին երևացող ստուերները պատճառ դարձան, որ նա դողաց, գունաթափուեց և ուշագնաց եղաւ:

Նա իր կանգնած տեղը տեսնում էր խեղճ Ուլիին,

որի մարմինը ագուանների կուր գարձած՝ կախուած էր իր մօտ—նա տեսնում և լսում էր՝ թէ ինչպէս այդ զարհուրելի կմախքը դէպ իրեն դարձաւ և հեգնելով՝ մանրամասն պատմեց իր արարքները:

Լիսմէրգրիտէն նոյնպէս երևաց նրա աչքին. չէ՞ որ նա էլ Հուսէլի ներկայութեամբ, մահուան բրանքի մէջ մըտած, գունատ շրթունքներով իր անունն արտասանեց—նոյն իսկ սրի հարուածի բոպէին—և սարսափելի գանգատներով՝ գլուխը դէպ երկինք բարձրացրեց:

Բայց ո՞վ կկամենայ նկարագրել այն կեանքի պատկերը, որ այժմ երևում էր նրա աչքին. ո՞վ կարող է արտայայտել ու նկարել այդ ժամի սարսափը:

Ես չե՛մ ուզում նկարագրել, արտայայտել և պատկերացնել այդ, ես կամենում եմ միայն իբրև մի մանուկ պատմել՝ թէ ինչե՛ր երևացին նրա աչքին այդ ժամին:

Նա պարզ տեսնում էր վիրաւորուածների արտասուքը, բաղջածների վիշտը և վախեցածների երկիւղը:

Նա որոշ լսում էր կատաղածների անէծքը և յուսահատների հեծկլոցը:

Նա նորից տեսնում էր իր հանգուցեալ հօրը և կըրկին լսում նրա սարսափելի խօսքը. «տղաս, տղաս, մօտեցե՛լ են այն օրերը, երբ բեզ էլ կասեն՝ ծեր, արբած մուրացիկ»:

Տեսնո՞ւմ էր որդուն՝ մեռնելու միջոցին իր ձեռքը բռնելիս ու ասելիս. «հայր, հայր, այլ ևս ոչ ոքի վատութիւն մի՛ անի».—նա տեսնում էր վշտի կաղնին, որ ամենից առաջ խանգարեց իր կեանքի հանգստութիւնը.—նա լսում էր Շախէլբէրդէրի զարհուրելի խօսքը. «Յովսապատի հովտում մի ա՛յլ հաշիւ կունենանք»:

Նա լսում էր այն սարսափելի գիշերուայ փոթորիկն ու որոտը, տեսնում էր կատաղի հոսանքը և մրթմրթող ու օգնութեան չհասնող ժողովրդի զզուանքը. տեսնո՞ւմ էր իր կործանուող տունը և նոր տան պատճառած ծանրութիւնն ու բեռը. տեսնում էր իր հեազհեաէ մեծացող թըշուառութիւնը, Վատարինէի մահուան անկողինը, վերջին հաղորդութեան սարսափը և զգո՞ւմ իր անմտութեան վերջաբանը՝ կէս գիշերին սահմանաքարը տեղափոխելու երկիւղը:

Այն սարսափելի վայրում, երբ նա ձեր առաջ ուշա-
գնաց եղաւ, Հուսէլի աչքին երևում էր նրա կեանքի աջա՝
այս պատկերը, որ ոչ ոք կարող չէ պատկերացնել ու նկա-
րագրել:— Եւ այդ պատկերը հալածում է այժմ նրան ուր
որ գնում է. նա ամեն միանցած ժամից յետոյ աւելի՛ ևս հա-
մողում է՝ թէ ո՞րքան ճիշտ է իր կեանքի այդ պատկերը,
և ո՞րչափ շատ՝ իր թշուառացրած մարդկանց թիւը:

Նա իր յաջողութեան միջոցին երբէք չէր մտածել այդ
մասին և դժբաղդութեան վայրագութեան մէջ նոյնպէս ու
րիշների թշուառութիւնը բանի տեղ չէր դրել: Միայն այն
ժամանակ զգաց ուրիշների թշուառութիւնը, երբ ինքն ան-
դարձ թշուառացաւ և իր հին կեանքի չարութեամբ ու խո-
րամանկութեամբ չկարողացաւ ազատուել այն անդունդից,
որի մէջ ընկել էր:

Նա այդ ժամանակ կարծում էր՝ թէ ամենքն էլ միայն
զգւում են իրենից և երկրիս վըայ ոչ ոք չէ խղճում իրեն: Բայց
այդ դէպքում էլ բոլորովին հակառակը տեսաւ: Աղ-
բատ Բուդին իր ունեցածից բաժին հանեց նրան և ուշա-
դրութիւն չդարձրեց անցեալ վշտի վըայ. նա խսկական բրիտ-
տանէի նման ոչ միայն խօսքով մխիթարեց նրան, այլ և
գործով ցոյց տուեց, որ բարութիւն անելն ու թշնամուն
ներելն աւելի՛ մեծ բաղդաւորութիւն է համարում, քան թէ
ախոռում մի կով աւելի ունենալը:

Ո՞վ մարդիկ, Բուդիի բարութիւնը կասկածող տանու-
տերին ապացուցեց՝ մարդկային սրտի բարութիւնը. այդ
յուսահատեցնող և մարդկային սիրտը վայրենացնող հան-
գամանքների մէջ, Բուդին ազատեց ու պահպանեց Հուսէ-
լին. նա կրկին հաւատաց Աստուծուն ու մարդկանցը և իր
սրտի վայրագութիւնը թողեց. այժմ ես կարող եմ ձեզ ներ-
կայացնել թախծալի սիրտ ունեցող տանուտերին և ինքս էլ
հիմա ամենաչնչին դժկամակութիւն անգամ չունիմ նրա դէմ:

Այո՛, երբ ես նրա բոլոր արածները վերցնում եմ միա-
տեղ և միևնոյն ժամանակ մտածում՝ թէ ի՞նչպէս է ա-
րել, ինչպէս է դարձել այն, ինչ որ է, և թէ վերջապէս ի՞նչպէս
է այն չար մտքերից նորից յետ կանգնել, ես կարողանում
եմ միմիայն այն ասել՝ թէ նա էլ մեզ նման մի մարդ է:

Ես պէտք է կրկնեմ տասն և չորս օր առաջ ձեզ ա-

սած խօսքերս. Թող ոչ որ մեզնից չկարծէ՝ թէ այս դժբաղդուութիւնը չէր կարող և իրեն պատահել:

Բարձրացրէք ձեր աչքերը և տեսէք՝ ինչո՞ւ է նա ձեր առաջը կանգած:—Որովհետև նա մեծամիտ, ժլատ, խստասիրա և անշնորհակալ էր, — ուրիշ ոչինչ: Այժմ ասացէք, ես կրկին հարցնում եմ. կա՞յ մէկը ձեր մէջ՝ որ մեծամիտ, ժլատ, խստասիրա և անշնորհակալ չլինի: Եթէ կայ այդպիսին՝ թող վեր կենայ և մեր ուսուցիչը լինի, որովհետև ես, ո՞վ տէր, մեղաւոր եմ և իմ սիրտը զերծ չէ այն լուրը չարութիւններից, որոնց համար այս խեղճ մարդը պատժւում է:

Եւ ո՞րչափ աւելի եմ մտածում նրա կեանքի մասին, այնչափ ևս աւելի ուրիշ ոչինչ չեմ կարողանում ասել իմ վերաբերութեամբ, քան թէ՛ շնորհակալ պէտք է լինիմ Աստուծուց, որ նա ինձ այս խեղճ մարդու կրած փորձանքների չէ ենթարկել:—Շնորհակալ պէտք է լինեմ Աստուծուց, որ նա ինձ աշխարհի հայր ու մայր է տուել, որոնք ինձ պատուով դաստիարակել և սովորեցրել են՝ աշխատանք և կարգ ու կանոն սիրել: Պէտք է շնորհակալ լինեմ Աստուծուց, որ ես էլ այդպիսի հանգամանքներում նրա նման տանուտէր կամ Վայրէլ չեմ դարձել և ստիպուած չեմ եղել մի կտոր հացի համար այնպիսի պաշտօն վարել, որ ուրիշներին ճնշելով դործն առաջ տանէի: Ես պէտք է շնորհակալ լինեմ Աստուծուց, որ մանկութիւնիցս սկսած աւելի լաւ ու բարեպաշտ մարդկանց մէջ եմ ապրել և երեսայ ժամանակից աչքովս չեմ տեսել յիմարութեան, անկարգութեան, անմտութեան և ստորութեան բաղմամբիւ օրինակներ:

Ո՞վ Աստուած, ծնկաչոք աղօթում եմ և շնորհակալ լինում, որ քո ստեղծած աշխարհն իմ աչքին աւելի մաքուր և պարզ լուսով է երևացել և ինձ աւելի հանդարտ, բաղդաւոր ու երջանիկ է արել, քան այս մարդուն, որ նոյն իսկ ծերութեան և ուժասպառ լինելու օրերում, իբր յիմարութիւնների ու սխալանքների պատճառով, յուսահատութեան սահմանն էր հասել:

Ո՞վ մարդիկ, էլ ի՞նչ պէտք է ասեմ: Սիրտս գթաշարժուած է, սրտանց ցաւակցում եմ նրան և աւելի ոչինչ չեմ կարող ասել. թող ձեզնից ո՞չ որ նրա հետ այն.

պէս չվարուի, ինչպէս որ սովորաբար վարուում են՝ իշխանութեան ձեռքն ընկած դժբաղդների հետ:

Ո՛հ, մարդկային սերունդներն արդար չեն վարուում այսպիսի թշուառների հետ: Նրանք առաջ մասնակցում են նրանց չար արարքներին, իրենց կեանքի խաղը նրա հետ խաղում, գրգռում են նրանց՝ յանցանք գործելու, սերմանում են նրանց մէջ իրենց սովորութիւնների անմտութիւնը և յանցանքի սաղմերով կերակրում նրանց — բայց յետոյ, երբ նրանք անբաղդանում են և իշխանութեան ձեռքն ընկնում՝ երեսի վրայ են թողնում նրանց և թշուառութեան միջոցին նրանց դէմ գործում՝ կարծես թէ էլ չեն ճանաչում նրանց և նրանց հետ միասին չեն արել այն յանդիմանութիւնները, որոնց պատճառով այդ թշուառներն ոչնչացել են: — Ո՛վ մարդիկ, չէ՞ որ այդ անբաղդներն իրենց սրտում կկատաղեն այդպիսի խտասիրտ սերնդի վրայ, կարհամարհեն, կատեն մարդոց ու վրէժխնդրութեան մասին մատնելով՝ առաջուանից տասն անգամ աւելի զղուելի կը դառնան:

Սիրելի ժողովուրդ. ես յաճախ ու սիրով չեմ խօսում ձեզ հետ մարդկային ցեղի կամ թէ իմ հօտից դուրս գանուող ուրիշ մարդկանց մասին. բայց այժմ այլ կերպ չեմ կարող անել. ինձ այնպէս է թւում՝ թէ իշխանութիւնից պատժուած հարիւր հազարաւոր յանցաւորներ եմ տեսնում աչքիս առաջ և թէ ամեն տեղ էլ մարդկային սերունդը խիստ և անիրաւ է վարուում այդ դժբաղդների հետ: — Ես ուզում եմ ձայնս բարձրացնել և երկրիս ժողովուրդներին ասել, խղճա՛ այդ թշուառներին: Ես ուզում եմ ձայնս բարձրացնել և ասել ստորերկրեայ խրճիթներում բնակուող ժողովրդին. խրճթաբնակ ժողովուրդ, դու կարո՞ղ ես այդ դժբաղդներին անել այն, ինչ որ չի կարող անել ո՛չ մի իշխանութիւն, դու կարո՞ղ ես նրանց կրկին մարդ դարձնել, նորից իրենց և ուրիշների հետ հաշտեցնել. դու կարո՞ղ ես նրանց թշուառութեան ու յանցանքների առաջն առնել և քո ձեռքով նրանց այնպէ՛ս առաջնորդել՝ որ խաղաղ նաւահանգիստը հասնին: Ես ուզում եմ երկրիս ժողովուրդին, որի կրճքում մարդկային սիրտ է բարախում, կանչել ու ասել. ո՛չ մի ժամերգութիւն աւելի վսեմ ու ազնիւ չէ, քան այն



մարդկանց ցոյց տրուած բարութիւնը, որոնք իրենց յանցանքների պատճառով շփոթուած, խայտառակութեամբ ստորացած և իրենց կրած պատժով վայրենացած են, դրանք ամենից շատ կարօտ են մարդավարութեան, ներողամտութեան և սիրալիր վարմունքի՝ նման այն ամենավտանգաւոր հիւանդներին, որոնց պէտք է օգնել իրենց ուժով խանգարուած առողջութիւնը և աւերուած գոյութիւնը վերականգնելու:

Բայց ահա՛ ես սթափուում եմ. երկրի ժողովուրդը չէ կանգնած իմ առաջը և մարդկային սերունդները չեն լսում ինձ: Դ՛ուք, սիրելիներ, որոնց հետ ես խօսում եմ, անգլթաբար և անզգայաբար մի՛ վարուէք այս անբաղդ մարդու հետ, այլ ընդհակառակը օգտուեցէք նրա կեանքի պատմութիւնից՝ միմեանց աւելի բիչ չարչարեցէք, զգուշացէք միմեանց դժբաղդացնելուց ու փչացնելուց և այդպիսով միայն մեր մէջ եղած անբաղդութիւնն օրէցօր կպակասի:

Այս թշուառութիւնն ա՛յնքան ճնշող էր, որ ես էլ մինչև այսօր համարեա՛մ թէ ոչինչ չկարողացայ անել դրա դէմ, բացի ձեզ վշտակցելուց և լռելուց:

Բայց թող վկայ լինի Աստուծոյ սուրբ սեղանը, թէ ի՛նչպիսի խորին ցաւ էր պատճառում ինձ ձեր թշուառութիւնը:

Իմ աւելի մեծ վկան է ահա՛ այս սուրբ աւազանի մեռած քարը, որի մէջ արդէն բսան տարուց ի վեր մկրտում եմ մեր մէջ մեծացող նոր սերունդը. այդ քարը վկայ է՝ թէ ի՛նչ տանջանք էր կրում իմ հոգին, երբ ձեր մանուկներին աւազանից հանելով՝ մտածում էի թէ ի՛նչպիսի կեանք պէտք է ունենան նրանք:

Բայց այժմեանից յոյսս կրկին արթնանում է. ուրախութեան արցունքներ հոսեցին աչքերիցս, երբ, տանուաէրի դարձից յետոյ, առաջին մանուկը մկրտեցի: Նրա անունը «Եսթէր» դրի և սովորականից աւելի մեծ տառերով ու կարմիր թանաքով գրեցի. անուան շուրջը պսակ նկարեցի և պսակի տակը միացրի, ինչպէս ժապաւէնի վրայ, յուսոյ խարխուր. պսակի վերևը գրեցի. «Եսպտեմբերի տասն և ութին», որ օրը դուք մեծարում էիք ձեր իշխանին և արցունքներս թափուում էին այն թերթի վրայ, որի

հետ խաղալով՝ սիրտս թեթևացնում էի:

Սիրելիներ, դժուր էլ մի մոռանաք այդ ամսի տասն և ութը և ձեր որդոցն ու թոռներին սովորեցրէք, որ այդ օրը ձեր երջանկութեան վերանորոգման սկիզբը համարեն:

Սիրելիներ, Աստուծոյ առաջ վկայում եմ և չեմ շողորթութում, ձեր տէրը ձեր երջանկութիւնն է ցանկանում և անյայտի հիմքի վրայ է դնում գործը, որ թէ ձեր և թէ ձեր որդոց ու թոռների բարեկեցութիւնն է ապահովում: Նրա նպատակն է վերականգնել ձեր նախկին, բարեպաշտ պարզութիւնը, պատուաբեր և օրհնութիւն բերող ուրախութիւն պատճառել ձեզ, ձեր բնակարաններում երջանկացնել ձեզ, ձեր կեանքի պահանջներն առանց արամութեան ու ստիպման ձեռք բերելու օգնել, անհոգութեան և անկարգութեան առաջն առնել, բռնադատութեան և ամեն տեսակ ճնշողութեանց վերջ դնել և առհասարակ ձեր կրած թշուառութեան պատճառներն արմատախիլ անել ու ոչնչացնել և ընդհակառակը՝ վերականգնել, զտել և ձեզ դարձնել այն բոլոր բարիքների ու օրհնութեան աղբիւրները, որ պակասում էին ձեզ: Այս է ահա՛ ձեր իշխանի նըպատակը. դէպի այդ նպատակն է ուղղում նա իր հոգացողութիւնն, որի համար ցերեկով աշխատում է, գիշերով արնում:

Թող Աստուած սուրբ հոգու շնորհիւ օգնէ մեզ՝ հասնելու այդ նպատակին: Ամէն:

